


ԷԶՄԻԱԾԻՆ




Զ
2015



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ

Յո-նիս

2015
Ս. Էջմիածին



ՀՐԱՄԱՆԱԲ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՆԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

«Էջմիածին»

կրօնագիտական-հայագիտական հանդես

Խմբագրակազմ

Գլխավոր խմբագիր՝ Արշակ Մադոյեան

Խմբագիրներ՝

Ռսկան քահանայ Յովհաննիսեան, Արմինէ Պօղոսեան, Արփինէ Չանթիկեան

Տեխնիկական խմբագիր՝

Անգելինա Ալեքսանեան

Լեզուադասական խմբագիր՝ Վազգէն Սաֆարեան

Խմբագրական խորհուրդ

Վահան Եպիսկոպոս Յովհաննիսեան (Ֆրանսիա), Անուշաւան Եպիսկոպոս Ժամկոչեան (Երեւանի պեպրական համալսարան, Աստրուածաբանութեան ֆակուլտէր), Գէորգ Եպիսկոպոս Սարոյեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Գանիէլ վարդապետ Ֆնտրգեան (ԱՄՆ Նայոց Արեւելեան թեմ), Շահէլ վարդապետ Անանեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Զաքարիա վարդապետ Բաղդումեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Գարեգին արեղայ Նամբարձումեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Նրաչ սարկաւազ Սարգիսեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Գէորգ Տէր-Վարդանեան (Մաշտոցի անուան Մարեկնադարան, Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Գոհար Յարութիւնեան-Թումա (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Պեպրոս Յովհաննիսեան (Երեւանի պեպրական համալսարան, Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Անահիտ Աւագեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Գոհար Մուրադեան (Մաշտոցի անուան Մարեկնադարան), Ազատ Բողոյեան («Վաչէ և Թամար Մանուկեան Մարեկնադարան», ՆՂ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ), Ալեքսան Յակոբեան (ՆՂ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ), Միհր Նաւոյեան (Երեւանի պեպրական կոնսերւատորիա), Աննա Արեւշապեան (Երեւանի պեպրական կոնսերւատորիա), Արամ Մարտիրոսեան (Ֆրանսիա, Փարիզ-Նանսերի համալսարան), Իգարէլ Էօթէ (Ֆրանսիա, Մոնպելիէի համալսարան), Աննա Շիրինեան (Իտալիա, Բոլոնիայի համալսարան)

“Etchmiadzin”

Religious-Armenological Review

Editorial staff

Editor in chief - **Arshak Madoyan**

Editors

Fr. Voskan Hovhannisyan, Armine Poghosyan, Arpine Chantikyan

Technical editor - **Angelina Aleksanyan**

Linguistic-stylistic editor - **Vasken Safaryan**

Editorial Council

Bishop Vahan Hovannisian (*France*), **Bishop Anushavan Zhamkochyan** (*Yerevan State University, Faculty of Theology*), **Bishop Kevork Saroyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Archimandrite Daniel Findikyan** (*USA, Eastern Armenian Diocese*), **Archimandrite Shahe Ananyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Archimandrite Zakaria Baghumyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Rev. Fr. Karekin Hambardzumyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Deacon Hratch Sarkissian** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Gevorg Ter-Vardanyan** (*Matenadaran, Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Gohar Harutiunyan-Thomas** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Petros Hovhannisyan** (*Yerevan State University, Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Anahit Avagyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Gohar Muradyan** (*Matenadaran, Yerevan*), **Azat Bozoyan** (*“Vatche and Tamar Manoukian Library”, Institute of Oriental Studies, National Academy of Sciences of the Republic of Armenia*), **Alexan Hakobyan** (*Institute of Oriental Studies, National Academy of Sciences of the Republic of Armenia*), **Mher Navoyan** (*Yerevan State Conservatory*), **Anna Arevshatyan** (*Yerevan State Conservatory*), **Aram Martirosian** (*France, University of Paris-Nanterre (Université Paris-Nanterre)*), **Isabel Augé** (*France, University of Montpellier (Université Paul Valéry-Montpellier)*), **Anna Sirinian** (*Italy, University of Bologna (Università di Bologna)*)



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ
ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ**

(Սուրբ Էջմիածին, 24 հունիսի, 2015 թ.)

Մեծարգո՛ նախագահ,
Սիրելի՛ հոգևոր հայրեր,
Հարգարժան փոխդեսպան Ամերիկայի Միացյալ Նահանգների,
Սիրելի՛ ներկաներ.

Այսօր համախմբվել ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ մեր հարգանքի տուրքը մատուցելու մեր ժողովրդի արժանավոր զավակ, ազգային բարերար Տիար Քրդ Քրդբորյանի հիշատակին:

Աղոթքով ենք հիշում մեծանուն հայորդուն, ով իր կյանքի տարիները արդյունազարդեց իր համար երկրորդ հայրենիք դարձած Ամերիկայի Միացյալ Նահանգների հասարակական կյանքին բերած նպաստով և տնտեսական ոլորտում արձանագրած հաջողություններով, ինչպես և Մայր հայրենիքին ու հարազատ ժողովրդին մատուցած մեծարժեք ծառայություններով:

Բարեհիշատակ Քրդ Քրդբորյանը ազգային ոգու, հայեցի դաստիարակության սնունդը նախ և առաջ ստացավ Խարբերդից գաղթած ու Ամերիկայում հաստատված իր ընտանիքում: Բազում դժվարություններ հաղթահարելով՝ նա գործարարության բնագավառում իր ջանասեր ու անդուլ աշխատանքի շնորհիվ, Աստծո օրհնությամբ կարողացավ հասնել մեծ արդյունքների:

Ազգասեր ու հայրենասեր հայորդին Աստծուց օրհնված էր նաև բարեգործության շնորհով: Բարեգործությամբ է մեծապես արժեւորվում հարստությունը, երբ գործածվում է մարդասիրության, միմյանց սատարումի եւ համընդհանուր բարիքի նպատակով: Աստվածաշնչյան իմաստունը այսպիսի ծառայանվիրումի, նեղություններն ու մարտահրավերները դիմագրավելուն եւ հաղթահարելուն ուղղված նախանձախնդիր հանձնառությունների մասին է խոսում՝ ասելով. «Լիութեան ժամանակ յիշիր աղքատութեան ժամանակը եւ հարստութեան օրերին՝ աղքատութիւնն ու նեղութիւնը» (Սիրաբ ԺԸ. 25): Հոգելոյս Քրք Քրքորյանն իր բարերարությունները կատարում էր որպէս կյանքի դառնություններին ու դժվարություններին դիմագրաված մարդ, ով գիտեր կարիքի եւ նեղութեան մեջ զորակցության կարեւորությունը: Նա կյանքի իր ուղին սկսել էր նյութկան մեծ դժվարություններով, երիտասարդ տարիքում մուտք գործել մարզական ասպարեզ, Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ծառայել որպէս օդաչու: Նեղության թե լիության մեջ նա իր սրտում միշտ ջերմ զգացումով է կրել հայրենյաց սերը, ազգին ու հայրենի երկրին օգտակար լինելու աստվածահաճո նախանձախնդրությունը: Հոգելոյս Քրք Քրքորյանը սրտաբույլ բարերարություններով իր ավանդն է բերել Սփյուռքի մեր գաղթօջախների բարգավաճմանը: Նա օգնության ձեռք մեկնեց երկրաշարժի աղետից տուժած մեր ժողովրդի զավակներին, այնուհետ հայոց անկախ պետականության վերահաստատումով խանդավառված՝ սատար եղավ Հայաստանի եւ Արցախի առաջընթացին, ներդրում բերեց մեր հայրենիքի զարգացման ծրագրերին: Լուսահոգի բարերարը ավանդ է բերել նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառությանը: Հայրենիքին ու ժողովրդին մատուցած գովարժան ծառայությունների համար բարեհիշատակ Քրք Քրքորյանը արդարորեն արժանցել է Հայաստանի ազգային հերոսի բարձրագույն կոչմանը:

Լուսահոգի Քրք Քրքորյանը բարեգործության պտուղներով զարդարեց երկրավոր իր կյանքը եւ ծառայասեր իր ոգով, իր համեստ նկարագրով մեր ժողովրդի մեջ թողեց բարի անուն ու հիշատակ: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքի համաձայն՝ այսպիսի ընթացքով է նաև մարդը արժանի դառնում հավիտենական հարկերի տակ ընդունելի լինելու (Ղուկ. ԺԶ. 9):

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի նվիրական կամարների ներքո աղոթք ենք վերադառնում առ Բարձրալին Աստված, որ Իր ամենաառատ գթությամբ երկնքի լուսեղեն օթեւաններում հանգչեցնի նո-

րոգ հանգուցյալ Քրրք Քրրքորյանի հոգին, պարգևի երանություն ու խաղաղություն հավիտենության մեջ Իր Սուրբ Աջի ամենալինամ հովանու ներքո: Այլև հայցում ենք, որ Տերը Սուրբ Հոգու մխիթարության շնորհներով սփոփի Քրրքորյան ընտանիքի անդամներին եւ բոլոր վշտացյալներին: Աղոթում ենք նաեւ մեր հայրենիքի խաղաղ, ապահով ու անվրդով կյանքի համար, որի նկատմամբ սիրով ապրեց եւ գործեց հոգեւույս Քրրք Քրրքորյանը:

Տիրոջ բարի եւ հավատարիմ ծառա, սիրելի՛ Քրրք Քրրքորյան, «մոտ յուրախութիւն Տեառն քոյ» (հմմտ. Մատթ. ԻԵ. 21):

Խունկ, աղոթք եւ օրհնություն լուսահոգի Քրրք Քրրքորյանի բարի հիշատակին:



ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

**Տ. ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ**
(07 հունիսի, 2015 թ.)

Յանուն Նոր և Որդույն և Նոգույն Սրբոյ. ամեն:

«Այսօր է գոր արար Տէր, եկայք ցնծասցուք և
ուրախ եղիցուք ի սմա»
(Մաղմ. ճԺԷ. 24):

Սիրելի՛ հավաքացյալներ, ուխտավոր հայորդիներ Հայաստանյայց Առաքելական Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, այսօր միասին հավաքվել ենք, որ պոնախմբենք Կաթողիկեի՝ աստվածաբանի և աստվածակառույց այս սրբազան եկեղեցու՝ Հայոց Հայրապետական Աթոռի, համայն հայության հոգևոր մայր կենտրոնի ծիսական պոնակապարտությունը:

Այս օրը, սիրելիներ, մեր Տիրոջ կողմից է հաստատված. եկե՛ք ուրեմն միասնաբար ցնծանք և ուրախ լինենք Նրա մեջ, Նրանով՝ Տիրոջով, Նրա հաստատված մարմնի՝ սրբազան եկեղեցու խորհրդով:

Սիրելիներ, անցնող շաբաթ Արարարյան այս փարածաշրջանի կարևորագույն սրբավայրերի՝ Ս. Նոյիսիմեի, Ս. Գայանեի, սրբազան կույսերի նահապարհության վայրում կանգնեցված Ս. Շողակաթ վանքի, Ս. Խոր Վիրապի ուխտի օրերն էին: Միասին հաղորդակից եղանք նրանց հաղթական կյանքի ընթացքին և օրինակին, նրանց սրբազան մասունքներին: Երեկ մենք՝ իբրև քրիստոնեական ազգային ընթանիք, իբրև Եկեղեցի Հայոց, պոնախմբեցինք մեր հավաքքի հայր, Ամենայն Հայոց առաջին Հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորչի՝ Խոր Վիրապի անդնդային խավարի մեջ փայտները ու ավելի փայտների չարչարանքից հեքու դուրս գալու և Աստծո յույն ի Հայաստան աշխարհի սփռելու հիշարար: Այ-

սօր արարապայան շաբաթն ավարտվում է Ս. Էջմիածնի այս հնամենի Կաթողիկեի՝ 303 թվականին հաստատված հիշատակով: Մեր հավաքի հայրը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը, ելնելով Խոր Վիրապի խավարյալ գրից, ոչ միայն աղոթքով բժշկեց հայոց Տրդատ արքային, սրբազան կույսերի մասունքները ամփոփելով՝ վկայարաններ կառուցեց, այլ նաև, ու մանավանդ, նորադարձ արքայի հետ միասին լծվեց աստվածային փեսիքի իրականացմանը, որի համաձայն՝ Հիսուս՝ Մեր Տեր և Փրկիչ Աստված, Իր համբարձումից հետո երկիր էր իջել՝ ցույց տալու Կաթողիկե Ս. Էջմիածնի՝ Նայ Եկեղեցու հայրապետության հիմնադրման վայրը. այսպես հայրապետը, թագավորը և համայն ժողովուրդը, միախմբվելով, կառուցեցին այս փաճարը, որի հիմքի վրա դարեր շարունակ հայրապետներ և թագավորներ, իշխաններ ու ռամիկներ եկան՝ իրենց աղոթքն ու արասուքը, իրենց քրքիրներ միախառնելու այս քարեղեն շինվածքին՝ այն վերածելով հոգևոր շինության՝ Տիրոջ և մարդու հանդիպման վայրի: Այն եղավ Հիսուսի ու հայ հավաքացյալի հանդիպման վայրը. հայ հավաքացյալը աշխարհի որ անկյունում էլ ծվարած ապրում է, իր հայացքն ու հոգին, իր միտքը, սիրտը մշտապես հառած է դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Եվ ահա, սիրելիներ, Ս. Էջմիածինը երբեք ու երբեք չեղավ միայն քարեղեն ու նյութական շինություն: Աստված այս ամբողջ փիեզերքը՝ երկինքն ու երկիրը և դրանում ամեն բարիք, արարեց ու փռեց իր արարչագործության թագ ու պսակ մարդուն՝ ասելով. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք, լցո՛ւք երկիրը, փրկեցէ՛ք դրան...» (Ծննդ. Ա. 28): Այս պարգամով է, որ հայ ժողովուրդը նյութեղեն այս շինվածքն աղոթքով կառուցել է իբրև հոգևոր շինություն: Աստծո արարչագործությամբ, սիրելիներ, մարդը դարձավ Եկեղեցի. մենք յուրաքանչյուրս, ըստ Պողոս առաքյալի, «Տաճար Աստուծոյ կենդանոյ» ենք (Բ. Կորնթ. Զ. 16): Աստված է, որ մեր մեջ բնակվում է:

Եթե ուսումնասիրենք գիտական ու մասնագիտական փարբեր ոլորտներ, կրեանենք՝ այնպեղ էլ՝ գիտության փարբեր ճյուղերում, մարդն է կենտրոնը փիեզերքի: Ուստի դուք եք, սիրելի՛ հավաքացյալներ, Եկեղեցին Նայոց, դուք եք կազմում հոգևոր Ս. Էջմիածինը՝ լինեք Նայաստանում թե Սփյուռքում: Էջմիածինն իր առաքելությամբ շարունակական է եղել դարերի ընթացքում. շար հոգևոր ծառաներ ու սպասավորներ, հավաքացյալ շար հայորդիներ են եկել՝ իրենց կյանքն ու գիտելիքը, իրենց նյութական և հոգևոր բարիքը միախառնելու Էջմիածնի առաքելությանը: Եկել են փալու, որ դրանով հարստանան, հոգևոր բարիք առնեն, եկել են, որ իրենց մտքի, հոգու և սրտի Լուստ Սրբազան Խորանը կառուցեն: Այսօր, սիրելիներ, Եկեղեցին և հոգևորականը ներկա են հայ հասարակական կյանքի փարբեր ոլորտներում՝ իրենց աղոթքով, խորհրդով, աստվածային խոսքի գործությամբ մխիթարություն բերելու հայ հավաքացյալին: Սակայն հաճախ, ինչպես երկու հազար և ավելի փարիներ առաջ, այս նույն մարդկությունը մերժեց աստվածային լույսը, Աստծո խոսքի ճշմարտությունը, Նրան իր կյանքից վանելով ու հեռացնելով՝ դավաճանեց, չարչարեց և խաչին գամեց.

այդպես եւ մեր օրերում՝ Եկեղեցին իր առաքելությամբ, հայ հոգեւորականն իր ճշմարիտ խոսքով շար հաճախ հեռացվում են, մերժվում: Սակայն, սիրելիներ, մենք ամենքս, որ Էջմիածնի գավակներն ենք, այս նյութեղեն փաճարում պիտի կազմենք մեր հոգեւոր փաճարը, յուրաքանչյուրս Նայաստանյայց Եկեղեցում մեր փեղր պիտի գրնենք, քանզի հավատում ենք, որ Եկեղեցին աղոթքի փուն է, գիտակցում՝ մեր մեղքով, սայթաքումով, կյանքի սխալ ընթացքով հիվանդացել ենք եւ բժշկության կարիք ունենք. եւ այս է փաճարն ու դարմանափունն համայն հայության հոգեւոր մեղաց: Ուրեմն այս փաճարում եւ այս փաճարի միջոցով Նայ Եկեղեցում մեր փեղր պիտի գրնենք, որ կազմելով հոգեւոր Եկեղեցի՝ նաեւ երկնքի արքայության մեջ մեր փեղր ունենանք: Եկե՛ք ուրեմն, սիրելիներ, Է. դարի մեծանուն Նայրապետ Սահակ Ձորափորեցու շուրթերով միասնաբար արտաբերենք «Էջ Միածինն ի Նօրէ» շարականի խորիմաստ փողերը. «Եկայն շինեսցուք Ս. գիտրանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ յոյս ի Նայաստան աշխարհի»:

Այսօր միասին պիտի նորոգենք մեր ուխտը՝ հանդէպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, մեր հավատարմությունն ու անկեղծ սիրո զգացումը՝ հանդէպ Ամենայն Նայոց Նայրապետի, ով շառավիղն է այս փաճարի հաստատության եռամեծ խոսքովանող Ս. Գրիգոր Լուսավորչի: Ինչպես Ե., Է. դարում (նաեւ հետագա բոլոր դարերում)՝ Վահան Մամիկոնյանը, Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոսը, Փիլիփոս Ա. Աղբակեցի Նայրապետը, Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցին եւ ուրիշներ, այս փաճարը շնորհագարդել, պայծառացրել են ու դարձրել դաստիարակ, ծնող եւ կատարելագործիչ «համայն գաւակաց Նայաստանեայց Եկեղեցու», այնպես եւ այսօր մեր սիրելի Նայրապետը լծված է Սուրբ Էջմիածնի առաքելությանը եւ մեզ ամենքիս՝ այս Սուրբ Խորանի սպասավորներին, իր անձնական օրինակով ուղղորդում է, որ ծառայությամբ, քրտինքով, խոսքով ու աղոթքով, հավատացյալի հանդէպ սիրով պայծառագարդենք Աթոռ Նայրապետական եւ այս սրբազան Եկեղեցին՝ Ս. Էջմիածինը: Եկե՛ք այդ ուխտի նորոգությամբ աղոթենք, որ Տերը մշտապես գործի Իր շնորհներով այս սրբազան փաճարի մեջ, հաստատուն պահի այս Աթոռի միաբաններին, միշտ գորացած պահի թե՛ հոգեւոր, թե՛ աշխարհիկ գավակներին հայոց, որ Աստված երկար կյանք, կենաց արեւշատություն պարգևի Նայոց Նորը:

Շնորհավորում եմ ամենքիս այս սրբազան փունի առթիվ եւ ասում՝ հա՛յ ուխտավոր, ուխտդ կատար՛, թող Տիրոջ սերը, խաղաղությունը, մխիթարությունը եւ Սուրբ Աջի պահպանությունը մշտապես ճառագայթեն այս Կաթողիկեից եւ համայն հայ եկեղեցիներից՝ փարածյալ ի ծագս աշխարհի. այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:



Տ. ՏԱՃԱՏ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԵԱՐՏԸՄԵԱՆ

**ՍՈՒՐԲԵՐԸ ԵՒ ՍՈՒՐԲԵՐՈՒՆ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ
ՅԱՐԳԵԼՈՒ, ՄԵԾԱՐԵԼՈՒ ԵՒ ՍՈՒՐԲԵՐՈՒՆ ԱՂՕԹԵԼՈՒ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱԻԱՆԴՈՅԹԸ**
(Համառոտ ակնարկ)

Սուրբերը. Եկեղեցին կը ճանչնայ իր մէջ եղող Աստուծոյ Սուրբ Հոգիին եւ Անոր սրբութեան զօրութիւնը ու բոլոր հաւատացեալները կը հրաւիրէ հասնելու «սրբութեան» կամ «հոգեկան կատարելութեան»՝ «սուրբերը» իբր տիպար օրինակներ տալով անոնց: «Սուրբերը» անոնք են, որ քրիստոնէական հաւատքը եւ անոր սորվեցուցած առաքինութիւնները հերոսաբար կը գործադրեն եւ «Աստուծոյ հետ» կ'ապրին: Եկեղեցւոյ պատմութեան մէջ «սուրբերը» միշտ ալ եղած են հոգեկան վերանորոգումի սկզբնական աղբիւր: «Սուրբը» եւ «սրբութիւնը» միշտ ալ եղած են կրօնական չափանիշը Եկեղեցւոյ բովանդակութեան, անոր առաքելական գործունէութեան եւ քարոզական թափին:

Մենք կը պաշտենք Յիսուս Քրիստոսը՝ իբր Տէր, իբր Աստուած եւ իբր Փրկիչ, իսկ «սուրբերը» կը սիրենք իբր Տէր Յիսուսի հաւատարիմ հետեւորդներ, Անոր նմանողներ եւ եզակի հաւատացեալներ... Եւ մեր սէրը եւ յարգանքը անոնց հանդէպ՝ աւելի քան արդար արտայայտութիւն է, որովհետեւ «սուրբերը» իրենց երկնային Վարդապետի՝ Յիսուս Քրիստոսի հանդէպ ունեցան աննման ինքնասնուիրում, հաւատքի ուժեղ կեանք... մինչեւ իսկ արիւնի նահատակութիւն:

«Սուրբերը» անոնք են, որոնք իրենց կեանքի օրինակով, յաճախ՝ արիւնի վկայութեամբ (նահատակութեամբ) արժանացած են Եկեղեցւոյ հաւատացեալներու հիացումին, յարգանքին ու մեծարանքին, որովհետեւ անոնք Քրիստոսի «չարչարանքներուն մասնակից դառնալով՝ իրենց անձերը Քրիստոսին նուիրեցին» (Շարական Մարտիրոսներու):

Անոր համար ալ «նահատակութեան» դերը Եկեղեցւոյ կեանքին եւ հաւատքի վկայութեան մէջ՝ բացառիկ նշանակութիւն ունեցող երեւոյթ է:

«Սուրբերը» մեզի կը խօսին իրենց հաւատքի ու գործի կեանքով, իրենց պայքարով, նաեւ՝ իրենց արիւնով:

Յարգանք եւ մեծարանք սուրբերու մասունքներուն հանդէպ. «Մասունք» կը կոչուի ինչ որ «սուրբ» անձնատրութեան մը մահէն ետք կը մնայ՝ ոսկորներ, մազ, չորցած արիւն, զգեստներ, թաշկինակ, մինչեւ իսկ անոնց գերեզմանէն ալի մը հող:

Այս մասունքները կը յարգուին, կը մեծարուին հաւատացեալ մարդոց կողմէ, որովհետեւ սուրբերն իրենց հաւատքի հերոսական կեանքով, արիւնոտ նահատակութեամբ եւ կեանքի օրինակով վկաները դարձան քրիստոնէական հաւատքի, եւ անոնց յիշատակը մահէն ետք, կը շարունակէ ապրիլ իբր սրբազան արժէք:

Քրիստոնէութեան առաջին դարերուն, հաւատացեալներու կեանքին մէջ, հաւատքի համար մարտիրոսացած կամ նահատակուած սուրբ անձնատրութիւնները փաստօրէն հիմը կազմեցին անոնց մասունքներու մեծարանքին:

Առաջին դարերուն մարտիրոսներու մասունքներուն յարգանքն ու պատիւը ո՛չ միայն կրօնական պարզ արտայայտութիւն մը դարձաւ նահատակներուն ու վկաներուն կամ սրբութեան համբաւով մահացած ճգնաւորներուն եւ եկեղեցականներուն, այլեւ յաջորդաբար զարգացաւ նաեւ իբր կրօնական բարեպաշտութիւն եւ մեծարանք, այնքան որ Հռոմի Դիոկղետիանոս կայսրը, համաձայն Ագաթանգեղոսի վկայութեան, Հայոց Տրդատ թագաւորին յղած իր նամակում կը խորհէր, թէ քրիստոնէաները «սպանուածներուն ոսկորները կը պաշտեն»՝ փոխանակ ըսելու «կը մեծարեն»¹:

Սուրբերու մասունքներուն յիշատակութիւնը մեզի հասած է քրիստոնէութեան սկզբնական դարաշրջաններէն:

Սուրբերու մասունքներուն հանդէպ յարգանքի ու մեծարանքի ձեւերն էին՝ հաւատքով եւ երկիւղով կատարուած աղօթք, խնկարկութիւն, ծնրադրութիւն, երկրպագութիւն ու համբոյր²:

Հոն, ուր քրիստոնէաները կը նահատակուէին, հոն կը փութային հաւատացեալները՝ ամփոփելու համար անոնց մարմինը յատուկ դամբարաններու մէջ, նաեւ անոնց մարմինէն մաս մը ցրելու քրիստոնէայ ուրիշ համայնքներու մէջ՝ ընդհանրացնելու համար անոնց սուրբ յիշատակը եւ հաւատքով ցայտուն օրինակին ազդեցութիւնը:

¹ Ագաթանգեղոս, Պատմութիւն, Դ. տպ., Վենետիկ, 1983, էջ 121:

² Տէն Վարդան վրդ. Հացունի, Սրբոց նշխարները. «Բազմավէպ», Վենետիկ, 1907, թիւ 1, էջ 6, 11-12:

Հաւատացեալներուն կողմէ սուրբերու մասունքներուն հանդէպ ցոյց տրուած կրօնական մեծարանքին շարժառիթները, ժամանակի ընթացքին, Եկեղեցւոյ հայրապետներու եւ վարդապետներու կողմէ յատուկ ուշադրութեան արժանացան: Դարերու ընթացքին նահատակ կամ մարտիրոս սուրբերու մասին ճոխ գրականութիւն մըն ալ գոյացաւ՝ գրուած կամ խօսուած այն կամ այն սուրբի յիշատակի տօնակատարութեան առիթով: Քրիստոնէական հաւատքի հերոս նահատակները արժանի դարձան բարձր գնահատանաց՝ քրիստոնէական կեանքի ցայտուն օրինակ դառնալով բոլոր հաւատացեալներուն: Սուրբերուն մարմինները եղան Աստուծոյ Ս. Հոգիին գործիքը, որովհետեւ դիմադրեցին եւ յաղթեցին աշխարհի ժամանակաւոր նեղութիւններուն, չարչարանքներուն ու ցաւերուն, այնպէս որ նրանց մարմիններուն մասունքները յատուկ նշանակութիւն եւ արժէք ստացան, նոյնիսկ երբ անոնց հոգին մարմինէն բաժնուեցաւ:

Մարտիրոսութիւնը կամ նահատակութիւնը գերագոյն վկայութիւնը դարձաւ քրիստոնէական հաւատքի ճշմարտութեան: Նահատակը կամ մարտիրոսը «վկան է» խաչուած, մեռած եւ յարութիւն առած Յիսուսի, որուն միացած է հաւատքով, վստահութեամբ ու սիրով: «Վկան է» Քրիստոսի եւ քրիստոնէական վարդապետութեան: «Արիւնի նահատակութիւնը» (մարտիրոսութիւնը) հաւատքի եւ կեանքի գոհաբերութեան գերագոյն ձեւերէն մէկը դարձաւ սուրբերու համար:

Իբրեւ հետեւանք կրօնական այս մտածողութեան՝ սուրբերուն մասունքները արժանացան մասնայատուկ յարգանքի եւ յաջորդաբար՝ բարեպաշտական մեծարանքի: Այս ձեւի յարգանքն ու պատիւը նախապէս կեդրոնացած էր նահատակներու եւ ընդհանուր սուրբերու դամբարանին վրայ՝ հոն, ուր կը գտնուէր մարտիրոսին կամ սուրբին մարմինը կամ անոր մասունքը:

Մեր հայ պատմիչներէն Ագաթանգեղոս կը պատմէ, օրինակ, թէ Ս. Գրիգոր Լուսաւորչի առաջին գործը եղաւ Հռիփսիմէի, Գայիանէի եւ միւս նահատակուած ընկերուհիներուն անթաղ մնացած մարմինները թաղել «հաւատքով եւ մեծ երկիւղածութեամբ», ուր յաջորդաբար՝ նահատակ այդ սրբուհիներն սկսան նաեւ հաւատքով մեծարուիլ եւ կը շարունակուին մեծարուիլ մինչ այսօր:

Պատմութիւնը կը վկայէ, որ Դ. դարէն սկսեալ՝ սուրբերու մասունքներէն տարուեցան եւ գետեղուեցան անոնց անունով նորաշէն եկեղեցիներու կամ մատուռներու մէջ (վկայարան):

Ասոր համար է նաեւ, որ սուրբերու մասունքները ցրուած են հոս-հոն՝ քրիստոնէական հին քաղաքներում՝ Երուսաղէմ, Աղեքսանդրիա, Հռոմ, Կոստանդնուպոլիս, Աթէնք, Անտիոք, Հայաստանի տարբեր քաղաքներում, Հայ-

կական Կիլիկիայում, Եւրոպայի քրիստոնէական գլխաւոր կեդրոններում, եւ այլուր:

Մասունքներու ուրիշ խումբ մը կազմեցին նաեւ Յիսուսի ապրած Պաղեստինի վայրերուն նիւթական յիշատակները՝ խաչավայտին բեկորները, խաչին բեւեռները, փշեպսակը, եւ այլն:

Այդ դարերէն սկսեալ՝ քրիստոնեայ աշխարհէն ներս սուրբերու մասունքներուն հանդէպ կրօնական յարգանքը եւ մեծարանքն ընդհանրացած երեւոյթ էր քրիստոնեայ բոլոր համայնքներուն մէջ:

«Սուրբերուն բարեխօսութիւնը» մեր կեանքին մէջ. «Սուրբ» անձնաւորութիւններուն հանդէպ քրիստոնէական բարեպաշտութիւնն ունի կրօնական հիմ: Այս առումով առկայ է քրիստոսաբանական մտածողութիւն: Այսինքն՝ Եկեղեցին սուրբերու մասունքներուն մէջ Յիսուս Բրիստոսի աստուածային ներկայութիւնը կը տեսնէ եւ անոնց մէջ ու անոնց միջնորդութեամբ կամ բարեխօսութեամբ ալ ինքզինքին երկնային պաշտպան կը փնտրէ:

«Բարեխօսութիւն» կը նշանակէ մէկու մը բարեխօսել, մէկու մը համար միջնորդել, մէկու մը կեանքին միջամտել:

Սուրբերու բարեխօսութեան վարդապետութիւնն ունի աստուածաբանական խորք եւ հրաւեր մը բոլոր հաւատացեալներուն, որ սուրբերուն միջնորդող աղօթքներով մենք ալ մօտենանք Աստուծոյ: Եկեղեցւոյ հաւատքին եւ հաւատացեալներու բարեպաշտութեան մէջ մեծ եղած է սուրբերուն դերը. դարէ դար Եկեղեցին հարստացած է սուրբերով, որոնք իրենց իսկ կեանքով վկայած են Բրիստոսի հանդէպ իրենց հաւատի ու հաւատարմութեան մասին:

Բրիստոնէական եկեղեցիներու մէջ՝ սուրբերու յիշատակին նուիրուած արարողութիւններու ընթացքին, աղօթքներով եւ շարականներու երգեցողութեամբ դիմում կը կատարուի՝ կը խնդրուի սուրբերէն՝ որ անոնք բարեխօսեն մեզի՝ աշխարհի վրայ գտնուողներու համար:

Ս. Գրիգոր Լուսաւորիչին վերագրուած ճառերու հաւաքածոյին մէջ կը կարդանք հետեւեալը. «Այսպէս պէտք է հասկնալ «Սուրբերուն բարեխօսութիւնը» հաւատացեալներուն համար: Քանի որ երկրի վրայ անոնք հոգեւոր վաստակ ունեցան եւ իրենց մարմինը Աստուծոյ նուիրեցին, անոնց սուրբ հոգիները հոգեւոր բարեխօսութեամբ՝ կրնան Աստուած իր ողորմութեամբը երկիր իջեցնել...»³:

Ընդհանրական եւ Ուղղափառ Եկեղեցւոյ վարդապետութեան մաս կազմող այս գործադրութիւնն է, որ կը կոչուի «Սուրբերու բարեխօսութիւն»:

³ «Յաճախապատում ճառք», Վենետիկ, 1954, ճառ ԺԶ., էջ 185:

Սկզբնական դարերուն եւ Եկեղեցւոյ կազմակերպչական ժամանակաշրջաններուն սուրբերուն մասունքները կը գետեղուէին նորաշէն եկեղեցիներու հիմներուն մէջ, եւ այդ մասունքները կը հանդիսանային քրիստոնէական հաւատքի աղբիւր եւ զօրութիւն: Ընդհանրական Եկեղեցւոյ բազմաթիւ հայրեր եւ վարդապետներ սուրբերու հոգեւոր միջնորդութեանը կ'ընծայեն հոգեւոր մեծ ազդեցութիւն: «Սուրբերը» սովորական մարդիկ չեն, այլ՝ հաւատքի քաջ ու գիտակից վկաներ: Սուրբերու բարոյական եւ հոգեկան բացառիկ ոյժը ուրիշ բան չէ, եթէ ոչ անոնց եզակի փարուսը Յիսուս Քրիստոսն է: Անոնց անձնական սերտ միութիւնը Նրա հետ: Եկեղեցին մարտիրոսներու, նահատակներուն եւ ընդհանրապէս սուրբերուն հաւատքի վկայութիւնն ընդունեց իբրեւ անմոռանալի, գրեթէ պաշտելի իրականութիւն:

Սուրբերու բարեխօսութեան եւ անոնց մասունքներուն հանդէպ քրիստոնէաներու ունեցած հաւատին, յարգանքին, մեծարանքին եւ անոնց հրաշագործ ոյժին ու դերի մասին շատ կարեւոր վկայութիւն մը ունինք Ե. դարէն մեզի հասած՝ հայ պատմագիր Ղազար Փարպեցու գիրքին մէջ:

Ան կը պատմէ, թէ Ե. դարուն պարսիկներու Յազկերտ թագաւորն իր զինուորներուն կը հրամայէ, որ բանտարկուած հայ եկեղեցականները բանտէն հանեն եւ գաղտնաբար քաղաքէն հեռու՝ ամալի տեղ մը տանելով՝ չարչարելով սպանեն. նաեւ խստօրէն կը յանձնարարէ, որ ո'չ մէկը տեղեակ դառնայ սպանութեան վայրին, քանզի «մենք լսած ենք եւ ստոյգ կերպով գիտենք, թէ քրիստոնէաները այս առիթով կ'ուրախանան, քանի որ, կ'ըսեն, անոնք որ իրենց Աստուծոյ համար կը մեռնին՝ անոնց ոսկորներէն նոյնիսկ բեկոր մը եթէ մէկը իր տան մէջ ունենայ, այլեւս չար մարդ ու չար ոգի անոր տունին եւ սիրելիներուն չի' մօտենար»⁴:

Ահաւասիկ, քրիստոնէական այս ըմբռնումին եւ համոզումի գործադրութեան հետեւանքով է, որ դարերու ընթացքին, ինչպէս քրիստոնէական ուղղափառ բոլոր եկեղեցիներուն, այսպէս ալ Հայաստանի եկեղեցիներուն եւ վանքերուն մէջ հաւաքուած են բազմաթիւ սուրբերու մասունքներ⁵:

Հայ Առաքելական Եկեղեցւոյ կրօնական ու պաշտամունքային գրեթէ բոլոր արարողութիւններու ընթացքին (աղօթքներու եւ շարականներու մէջ) սուրբերու մասունքները կը կոչուին՝

ա. «Հաւատքի սիւներ»,

բ. «Ախտերու դեղ»,

գ. «Աստուածային գանձ»,

⁴ Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Դ. տպ., Վենետիկ, 1933, Ծ., էջ 211-220:

⁵ Այս մասին տես Տաճատ ծ. վրդ. Եարտըմեան, Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մէջ պահուած սուրբերու մասունքներ եւ սրբազան առարկաներ. «Բազմավէպ», Վենետիկ, 2000, թիւ 1-4, էջ 128-161:

դ. «Հոգեւոր գանձ»,
 ե. «Պարծանք աշխարհի»,
 գ. «Մեզի համար բարեխօս»,
 է. «Հիւանդներու բժիշկ»,
 ը. «Մարտիրոսներու կենդանի ոսկորները Տաճար են Սուրբ Հոգիին»,
 թ. «Տիրոջ Աջը Իր սուրբերուն վրայ եւ Անոր փառքը հանգչած է անոնց ոսկորներուն վրայ, իսկ անոնց հոգիները հրեշտակներու կարգին են»⁶:

Հետեւաբար, «սուրբերուն բարեխօսութիւնը» հոգեկան մեծ բաւարարութիւն փոխանցած է Եկեղեցւոյ եւ հաւատացեալներուն: Այսօր ալ պէտք է շարունակել աղօթել սուրբերուն, որ անոնք բարեխօսեն հաւատացեալներուն եւ համայն մարդկութեան համար:

Հայ Եկեղեցւոյ մեծարանքը սուրբերուն եւ անոնց մասունքներուն հանդէպ. Հայ Առաքելական Եկեղեցին Գ. դարէն սկսեալ՝ կրօնական մեծ նշանակութիւն, արժէք եւ բացառիկ մեծարանք որդեգրած է հայ եւ ո՛չ հայ քրիստոնէայ համայնքներու պատկանող սուրբերուն եւ անոնց մասունքներուն հանդէպ:

Հայերու, ինչպէս միւս քրիստոնէայ ժողովուրդներու եւ համայնքներու համար, բազմաթիւ էին սիրուած ու յարգուած սուրբերուն մասունքները, որոնք քրիստոնէական կեանքի եւ հաւատքի սրբազան յիշատակն ու վկայութիւնը կու տային կրօնական բարեպաշտութեան մը շունչով օծուած:

Ազաթանգեղոսը կը հաղորդէ, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կեսարիայէն վերադարձին (Դ. դար) իրեն հետ Հայաստան կը բերէ Ս. Յովհաննէս Մկրտչի եւ Ս. Աթանազիոսի մասունքները եւ կը թաղէ Իննակնեան կոչուած վայրում (սպազային դարձած է շատ նշանաւոր վանք եւ ուխտատեղի). այդ մասունքներուն վրայ կը կառուցանէ վկայարան-եկեղեցի⁷:

444 թուականին Շահապիվանի մէջ գումարուած եկեղեցական ժողովը կը յանձնարարէ հետեւեալը. «Երբ մարտիրոսներու մասունքներ բերուին՝ պէտք է հանդիսաւոր կերպով տօնախմբութիւն կատարուի ամէն տարի»⁸:

Իսկ Ղազար Փարպեցին (Ե. դար) կը հաղորդէ, որ Վարդանանց շարժումի ժամանակ, երբ հայ նախարարները Հայաստան վերադարձած են, եկե-

⁶ Գաբրէլին վրդ. Սահակեան, Յաղագս բարեխօսութեան սրբոց եւ գնշխարս նոցա եւ զպատկերս մեծարելոյ, Վենետիկ, 1852, էջ 240-275. Ս. Մայիլեան, Կրօնական գիտելիքների հանրագիտարան, Երեւան, 1993, էջ 17-27:

⁷ Ազաթանգեղոս, Պատմութիւն, էջ 601-602:

⁸ «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., աշխատ.՝ Վազգէն Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 461-462. տնն նաեւ Ռուբէն Աւագեան, Հայ իրաւական մտքի զանձարան, հտ. Ա., Երեւան, 2001, էջ 129:

դեցականության եւ ժողովուրդին կողմէ անոնք դիմաւորուած են Յիսուսի սուրբ խաչավայրին եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչին մասունքներով⁹:

Լսենք քանի մը վկայութիւններ եւս՝ հայ եկեղեցական հեղինակներու կողմէ:

1. Ս. Գրիգոր Լուսաւորի ընծայած ճառերուն մէջ սուրբերու մասունքներուն կրօնական նշանակութեան մասին կը կարդանք. «Ինչպէս բացայայտ է՝ մարտիրոսներուն ոսկորները փրկութեան շնորհք կը պարգեւեն բոլոր հաւատացեալներուն, որպէսզի անոնց մասունքներուն մէջ բնակող Աստուծոյ սէրը երեւի եւ հռչակուի երկրի վրայ»¹⁰:

2. «Մարդիկ, սուրբ մարտիրոսներու մասունքներուն ապաւինելով՝ կ'ազատին իրենց նեղութիւններէն եւ անով իսկ կը յայտնուի Աստուծոյ զօրութիւնը, որ սուրբերուն մէջ է»¹¹:

3. Աբրահամ եպս. Մամիկոնեանի կանոններուն մէջ կը կարդանք (Ե. դար). «Երբ սուրբերու մասունքներուն կ'աղօթենք, Աստուծոյ առջեւ զանոնք բարեխօս կ'ընդունինք, [քանի որ] նահատակութեան ժամուն անոնց ոսկորներուն մէջ աստուածային շնորհքները հանգչած են... եւ այդ մասունքները ուր ալ գտնուին, անոնց մօտ կը գտնուի նաեւ աստուածային շնորհքը, որ խնդրողներուն փափաքները կը լսէ եւ կը հատուցանէ ամէն մէկուն կարիքին համաձայն... եւ քանի որ մեղքերու ամօթով լեցուն ենք եւ կարող չենք համարձակօրէն մօտենալ Աստուծոյ՝ սուրբերու միջնորդութիւնը կը համարձակինք խնդրել, սուրբեր, որոնք Տաճար եղան Սուրբ Հոգիին, որպէսզի Իր առատութեան համաձայն՝ պարգեւէ խնդրողներուն»¹²:

4. Նոյն Աբրահամ եպս. Մամիկոնեան (Ե. դար) Աղուանքի թագաւոր Վաչագանին մեծ հաւատքով կը գրէ ննջեցեալները յարգելու եւ անոնց աղօթելու մասին. «Աստուած, որ կ'ընդունի պատարագներ, եւ խնդրանքներ կատարող է, կը լսէ ողջերուն աղօթքները, կ'ընդունի անոնց նուէրները եւ կը թերթեցնէ ննջեցեալներու հոգիներուն բեռը... Արդ, եթէ ողջերուն աղօթքները կրնան կենդանացնել ննջեցեալները, ապա աստուածային զօրութիւնը աւելի զօրեղ է: Եւ մենք պէտք է հաւատանք, որ ննջեցեալները մեղքերու ներում կը ստանան յոյսով, երբ մենք՝ կենդանի մնացածներս, անոնց համար Աստուծոյ ներողամտութենէն ներում կը խնդրենք»¹³:

⁹ **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց, ԴԷ., էջ 573:

¹⁰ **Ս. Գրիգոր Լուսաւորիչ**, Յաճախապատում ճառք, Վենետիկ, 1954, ճառ ԺԶ., էջ 185:

¹¹ **Եզնիկ**, Եղծ Աղանդոց, Վենետիկ, 1826, Ա. իա., էջ 84:

¹² «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 503-504:

¹³ **Սոփէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քնն. հրատ.՝ Վարազ Առաքելեանի, Երևան, 1983, գլ. ԻԵ., էջ 88-89: Աբրահամ եպս. Մամիկոնեանի մասին տես **Միքայէլ վրդ. Չամչեան**, Պատմութիւն Հայոց, հտ. Բ., Վենետիկ, 1785, էջ 222 եւ **Հր. Աճառեան**, Հայոց անձնատմութեան քառարան, հտ. Ա., Պէյրութ, 1972, էջ 2-30:

5. Ս. Յովհաննէս Ա. Մանդակունի Կաթողիկոս կը գրէ (Ե. դար). «Եթէ մէկը հաւատքով Աստուծոյ դիմէ եւ աղաչանքով մարտիրոսներու մասունքներուն ապաւինի, ցաւերու բժշկութիւն, հիւանդութիւններու եւ դեւերու հալածում եւ մեղքերու ներում կ'ընդունի... Բաւարար չեղա՞ն մարտիրոսներուն մասունքները, որ մօտդ կը գտնուին եւ միշտ քեզի համար կ'աղօթեն եւ կամ Սուրբ Խաչին նշանը, որ ամէն օր մօտդ եւ տանդ մէջ է»¹⁴:

6. Ս. Գրիգոր Տաթեւացի, երբ կը խօսի քառասուն մանուկներու (երիտասարդ զինուորներու) նահատակութեան մասին, կ'աւելցնէ թէ եպիսկոպոսը «նահատակներուն մարմինները գետի ջուրէն կը հանէ եւ անոնց մարմինները վառած ջահերով եւ կրօնական մեծ տօնախմբութեամբ կը հանգչեցնէ եկեղեցոյ մէջ»¹⁵:

7. Պաշտամունքի ընթացքին Հայ Եկեղեցին հաւատքով կ'աղօթէ. «Ո՛վ պանծալի նահատակներ, երկնաւոր Հօր սիրելիներ, դուք, որ Քրիստոսի հետ մկրտուեցաք ձեր արիւնով՝ խաչի մահը յանձն առնելով, Տիրոջ մօտ բարեխօսեցէ՛ք Եկեղեցոյ զաւակներուն համար»¹⁶:

Այս հաւատով հայ հաւատացեալ ժողովուրդը ուխտի կ'երթար այն վանքերը, եկեղեցիները կամ սրբավայրերը, ուր կը պահուէին այս կամ այն սուրբին մասունքները: Բարեպաշտ հաւատացեալները աղօթքով, համբուրելով, մասունքներուն հպուելով, ծնրադրելով, երկրպագելով, մոմ վառելով՝ հոգեկան մխիթարանք, բժշկութիւն կը ստանային եւ կամ կեանքի որոշ հանգրուանի մը յաջողութիւնը ձեռք կը բերէին:

Անցեալին ունէինք բազմաթիւ ուխտավայրեր՝ մեծն ալ, փոքրիկն ալ. գտած էինք տարագրութեան ամէնէն դժնդակ ճամբաներուն վրայ՝ մեզի հետ փոխադրելու հրաշագործ նկար մը, սուրբի մասունք մը, խաչ մը՝ տալու համար անոնց կրօնական բնակարան մը, որ ժամանակի ընթացքին կ'աճէր՝ դառնալու համար հայրենիքին մէկ նշանաւոր սրբավայրը:

Տրամաբանական ընդհանուր հաշուարկումի մը համաձայն, եթէ ամէն մէկ հայկական վանք, եկեղեցի կամ սրբավայր (վկայարան) 1915-ի Հայոց ցեղասպանութենէն առաջ ունէր 10-20 սուրբերու մասունքներ, «հայոց կորսնցուցած թանկագին մասունքներուն թիւը երեսուն հազարը կ'անցնի»¹⁷:

¹⁴ Յովհաննէս Մանդակունի, Ճառք, Բ. տպ., Վենետիկ, 1860, էջ 196, 202:

¹⁵ Ս. Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, վերատպութիւն Երուսաղէմ, 1988, էջ 408:

¹⁶ Տե՛ս «Ժամակարգութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցոյ», Երզ Արեւագալի, Դ. տպ., Երուսաղէմ, 1915, էջ 323:

¹⁷ Գէորգ Մնարոյ, Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922-ին. «Հայաստանի կոչնակ», Պոստըն, 1931, թ. 26, էջ 808:

Նշանաւոր եղած է Հայկական Կիլիկիոյ Սկեռա անունը կրող վանքին ունեցած մասունքներու հաւաքածոն: Կը յիշուի, որ այս վանքին մէջ կը գտնուէր երկփեղկ գեղեցիկ պահարան մը, ուր գետեղուած էին բազմաթիւ սուրբերու մասունքներ: Այս պահարանը շինել տուած էին Կիլիկիոյ Հեթում թագաւորը եւ Կոստանդին Բ. Կատուկեցի Կաթողիկոսը: Մասունքներու այս պահարանը անյայտ ժամանակով եւ անձանօթ պատճառներով փոխադրուած է Իտալիա, եւ 1828-ին հայ մը յայտնագործած է իտալական վանքի մը մէջ: 1880-ին այդ պահարանը՝ սուրբերու մասունքներով լի, ծախուած է ֆրանսացիի մը (Փարիզ): Այս մանրամասնութիւնները մեզի հաղորդած է Ղեւոնդ վրդ. Ալիշանը¹⁸:

Սուրբերու մասունքներու մասին վերջերս՝ 2014-ին, յայտնաբերուած ու մեզի փոխանցուած է շատ կարեւոր լուր մը: Կիլիկիոյ Կիրակոս Սսեցի Աջապահեան Կաթողիկոսի (1797-1822 թթ.) մէկ կոնդակին մէջ (1808 թուակիր) արձանագրուած է, թէ Կիլիկիոյ կաթողիկոսութեան Սուրբ Աթոռին մէջ կը գտնուէին 37.000 սուրբերու մասունքներ: Թիւր առասպելական կը թուի, սակայն ուշադրութեան պէտք է արժանանայ, քանի որ յիշողը Կաթողիկոս մըն է¹⁹...

Ուրիշ կարեւոր վկայութիւն մը եւս, որ կապուած է Հայաստանի Արագած լեռան ստորոտին գտնուող Աղց կամ Աղցք կոչուած գիւղաքաղաքի պատմութեան հետ: Տեղացի բնակիչները աւանդութիւն մը կը պատմեն, թէ ժամանակին սուրբերու՝ քսանչորս ուղտի բեռ մասունքներ բերուած եւ գետեղուած են հոն, հաւանաբար, Աղցից վանքին մէջ²⁰:

Ունինք նաեւ ուրիշ վկայութիւն մը, որուն համաձայն՝ Մուշի Ս. Առաքելոց կամ Ղազարու վանքին մէջ հազարէ աւելի սուրբերու մասունքներ կային²¹:

Այլ վկայութիւններու համաձայն՝ Մաղարթայ կամ Շամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը շատ հարուստ եղած է սուրբերու մասունքներով²²:

Քրիստոնէութեան պաշտօնական որդեգրումէն ատղին հայ ժողովուրդի կրօնական մտածողութեան մէջ «քրիստոնէական կեանքը» գործնականապէս ապրելու եւ զայն արտայայտելու բարեպաշտական ձեւերէն մէկն էր

¹⁸ **Ղեւոնդ վրդ. Ալիշան**, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 107-112, ուր տպուած է նաեւ յիշուած պահարանին լուսանկարը:

¹⁹ Այս մասին տե՛ս **Պարոյր արեղայ Շէրնէզեան**, Աւելի քան երեք տասնեակ հազար մասունքներ. «Հասկ», Անթիլիաս, 2014, թ. 2-3, էջ 184-185:

²⁰ **Յովհաննէս եպս. Շահլիսթոնեանց**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացի Արարատայ, հտ. Բ., Էջմիածին, 1842, էջ 64:

²¹ **Ղուկաս վրդ. Ինճիճեան**, Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 189:

²² **Համազասպ վրդ. Ոսկեան**, Վասպուրական-Վանի վանքերը, հտ. Բ., Վիեննա, 1942, էջ 565-567:

սուրբերու հանդէպ կրօնական յարգանքն ու մեծարանքը, որ դարեր շարունակ իր յատուկ դրոշմը եւ դերը խաղացած է մեր ժողովուրդի հոգեւոր-եկեղեցական կեանքէն ներս: Մասունքները տօնական այս կամ այն օրերուն կը գործածուէին (մինչեւ այսօր ալ) համապատասխան ծիսակատարութիւններու եւ թափօրներու ընթացքին:

Սուրբերու եւ անոնց մասունքներու գոյութիւնը, հինէն ի վեր անոնց հանդէպ ցուցաբերուած կրօնական մեծարանքը կը մնայ քրիստոնէական հաւատքի ու մտածողութեան ցայտուն եւ գործնական արտայայտութիւններէն մէկը:

РЕЗИОМЕ

В статье на богатой исторической, церковной, патристической и богословской основе представлены положения веры Армянской Апостольской церкви в святых и их мощи, а также христианская традиция обращения к ним с молитвами и просьбами о заступничестве.

После представления уважения, возвеличения и почитания Церковью лиц, погибших мученической смертью за веру в первые века христианства, автор переходит к представлению многовековой веры Армянской Апостольской церкви в святых, рассматриваемой с религиозной и церковной точек зрения. С этой целью автор обращается к армянским церковным и патристическим источникам и свидетельствам, выявляя высокое религиозное восприятие и возвеличение Церковью святых, заключая, что мощи святых превратились в один из главных знаков присутствия Бога.

Поводом для написания этой статьи послужило причисление к лику святых мучеников 1915 г., совершенное в Первопрестольном св. Эчмиадзине 23 апреля 2015 г., церковное и общенациональное значение чего действительно велико...

SUMMARY

On the historical, ecclesiastical, patristic and theological basis, the article introduces the attitude of the Armenian Apostolic Church towards saints and their relics, as well as towards the Christian tradition of praying to them and asking for their intercession.

After introducing the Church's respect, veneration and reverence towards people martyred during the first centuries of Christianity, the author represents the centuries-old position of the Armenian Apostolic Church from the religious and ecclesiastical

viewpoint. For this reason, the author has used Armenian ecclesiastical and patristic sources and evidences successfully revealing religious perception and veneration of the Armenian Church towards saints, concluding that for the Church, saints' relics have become one of the evident signs of God's presence.

The reason of this study has been the canonization performed in the Mother See of Holy Etchmiadzin on April 23, 2015, which has a huge ecclesiastical and national significance.



ՊԱՏՏԱՊԱՐԱՆԱԴԱՐԱՆՈՒՄ

ՀԵՆՐԻԿ ՍՎԱԶՅԱՆ

ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Դեռևս իր փարածման վաղ շրջանում առաջանում են քրիստոնեության հոգևոր կառույցները՝ խորհրդական մարմինը, որ հավաքացյալների միությունն է կամ ժողովական հավաքը, և մեկ բառով մարանանշվում է «եկեղեցի» եզրույթով¹, և եկեղեցական պաշտոնության վրա հիմնված նվիրապետական (հիերարխիկ) համակարգը: Նշվածներն էին կարգավորում ու իրականացնում սրբազան հասարակությունում փարվող աստվածապաշտական արարողությունները՝ ժամերգությունը, Ս. պատարագը, պսակադրությունը և այլն:

Քրիստոնեական աշխարհին հայրկանչական նման եկեղեցական կառույցներ ստեղծվում են նաև Բուն Աղվանքում, որը նույն աշխարհի երկրներից մեկն էր: Դրա ապացույցը, թերևս, ըստ ավանդության, Ս. Եղիշա առաքյալի կառուցած եկեղեցին է Գիսում Բ. դարի առաջին կեսին, որտեղ տեղի է ունեցել նաև Ս. պատարագի արարողություն:

Աղվանից եկեղեցին իր կառույցներով բարձրացել է Քրիստոսի աշակերպների քարոզչության հիմքի վրա և, ըստ, էության, առաքելական էր: «Առաքելական ծագումը, - գրում է Մ. Օրմանյանը, - երկու տեսակ է: Մեկն ուղղակի ծագում է, երբոր եկեղեցին անմիջապես առաքելալի մը անձնական քարոզությամբ սկսած է. միսր անուղղակի է, երբոր ծագումը յառաջ եկած է առաքելներէ հասարակույթում ուրիշ եկեղեցւոյ մը միջնորդութեամբ»²: Ըստ այդմ՝ Աղվանից եկեղեցին, որ սնունդ էր առնէ առաքելաշավիղ Ս. Եղիշայի քարոզներով, իրավամբ կարող է դիմել առաքելական ուղղակի ծագմամբ: Ունենալով նման ծագում՝ այն իր բարոյախրատական ողջ գործունեությունը ծավալում է առաքելական կանոններով:

¹ Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա., Երևան, 2001, էջ 1 (այսուհետք՝ Ազգապատում): «Եկեղեցի» եզրույթը հանդիպում է Մարթեոսի Ավետարանում (ԺԶ. 18, ԺԸ. 17):

² **Մաղաքիա արք. Օրմանեան**, Տայոց եկեղեցին, Երևան, 1993, էջ 24 (այսուհետք՝ Տայոց եկեղեցին):

Մովսես Կաղանկարպագու (Դասխուրանցի) վկայությամբ՝ Աղվանից արքա Ուռնայրը, Մեծ Հայքում մկրտվելուց հետո վերադառնալով հայրենիք, իր ժողովրդին ուսուցանում էր «առաքելական կանոնաւք»³:

Գրնելով, որ Աղվանից եկեղեցին ուներ առաքելական ծագում, իսկ Ս. Եղիշային էլ դիտելով նրա հիմնադիր, կարծում ենք, որ ճիշտ կլինի Աղվանից հայրապետությանը փալ «Եղիշայի աթոռ» անվանումը, ինչպես դա արել են հայերը՝ Հայոց կաթողիկոսությունը կոչելով «Թաղեոսի աթոռ»:

Քրիստոնեության հռչակումը պաշտոնական կրոն Դ. դարում (առավել քարաձված կարծիքով դարասկզբին, մեր կարծիքով՝ 370-ական թվականներին) Աղվանից եկեղեցու կառույցների հետագա զարգացման համար նոր ու նպաստավոր պայմաններ է ստեղծում: Հռչակումից անմիջապես հետո Ուռնայր արքայի նախաձեռնությամբ «կարգեցան երեխայիք եկեղեցոյ»⁴, այսինքն՝ հասույթներ սահմանվեցին, նրանց սպասարկման ու գոյատևման համար ապահովեցին եկամուտ: Այս քայլով երկրի առաջին քրիստոնյա թագավորը հանդես է գալիս ոչ միայն իբրև եկեղեցու հովանավոր, այլև այն դեպքում է քրիստոնեական ամուր հիմքերի վրա: Եկեղեցու եկամուտներն Աղվանքում եւս գոյանում էին պաշտոնապես փրվող հասույթներով, մասնավոր անձանց ընծայաբերումներով, ողորմածություններով ու զանազան այլ միջոցներով եւ պաշտպանվում էին պետության կողմից: Ավելի ուշ՝ Վաչագան Գ. (կամ Բ.) Բարեպաշտի օրոք, ըստ ավանդական թվագրման՝ 488 թ. Ուրիքի Աղվան գավառում⁵ հրավիրված կանոնական ժողովում սահմանադրորեն հաստատվում ու կարգավորվում են եկեղեցուն փրվող հասույթները, որոշվում դրանց փեսակները եւ չափերը: Դարելով այդ կանոններից՝ մասհանումները կատարվում էին բնամթերքով, որոնց մեջ զլխավոր բաղադրիչներն էին ցորենը, գարին եւ այգիներից սրացված բերքի մի մասը՝ պորդին: Դրանց թվում հիշատակվում են նաև գինի, ընդհանի կենդանիներ (ձի, հովաքակ, ոչխար, արջառ), բուրդ, պանիր եւ այլն: «Պարող ի ժողովրդեն երիցու՝ կարգ այս լիցի, -սահմանում է սույն կանոնների Դ. կետը.-թուանիկն Դ գրի ցորենն եւ Զ Գրի գարի, եւ ԺԶ փաս քաղցու եւ որ փառապետալն է հացոյ կէսն փացէ, եւ գինի որչափ եւ կարող է: Իսկ որոյ վար եւ այգի ոչ է, մի առցեն, եւ որ ոք աւելի քան զայս փացէ սակս հոգոյն, բարի առնէ... Եւ ոյր ոչխարք են, ի փանէ ոչխար մի եւ Գ զգաթ բուրդ եւ մի պանիր, եւ ոյր ձիք ի փան իցեն, մին յովանակ, եւ ոյր պախւրէք իցեն, որթ մի»⁶: Այս հասկացումների շնորհիվ եկեղեցին կարճ ժամանակում

³ Մովսես Կաղանկարպագի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, գլ. Ա. ժա, էջ 20, քննական բնագիրը եւ ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 20 (այսուհետ՝ Կաղանկարպագի) :

⁴ Տե՛ս անդ:

⁵ Ենթադրաբար փեղաղրվում է այժմյան Գյուլիստանի շրջանում. փեն Ս. Տ. Երեմյան, Հայաստանի ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 34:

⁶ Կաղանկարպագի, գլ. Ա. իգ, էջ 90-91, նաեւ՝ «Սահմանադրութիւն կանոնի Վաչագանայ Աղուանից արքայի, եղեալ ի ժողովն որ յԱղու/է/նս եղեալ», փեն «Կանոնագիրք Հայոց», Է. Բ.,

կուրակում է վիթխարի կարողություն՝ եւ դառնալով խոշոր ավարաբերերից մեկը՝ օժտվում նաեւ փնտրեսական հզորությամբ: Ի նմին, սրանձնելով ժամանակի հասարակարգի գաղափարախոսի դերը՝ այն իշխող դիրքի է հասնում նաեւ երկրի կառավարող շրջաններում: Տիրելով նման ազդու լծակների՝ եկեղեցին, մեկտեղվում է թագավորական իշխանության հետ ու սկսում նրա հետ միասին վճռել պետության ներքին ու արտաքին քաղաքականությանը վերաբերող խնդիրներ:

Որպես նվիրական-սրբազան հասարակություն՝ Ասրծու փրկումը ստեղծում է իր հոգևոր իշխանության վարչահամակարգը: Վերջինս, որի ամբողջությունը նշանակվում է «նվիրապետություն» եզրույթով, ձևավորվում է փվյալ հասարակարգում գործող աշխարհիկ իշխանությունների նմանությամբ՝ սանդղակաձև, ըստ զբաղեցրած պաշտոնների՝ վերից վար: Ի դեպ, նման աստիճանակարգությունն հիմնավորվում է նաեւ փեսականորեն, որի համաձայն նման դասակարգումը պայմանավորված է Ասրծու շնորհով. «Զի իբր աստիճանօք ի վերուստ իջանի աստուածային շնորհն սկսեալ ի պարբիարբէն եւ գայ, հասանէ մինչ ի բնափն վերջինքս որք են ժողովդականք»⁷: Այսպիսի վերերկրային հիմնավորմամբ առաջացած եկեղեցական աստիճանակարգերը թվով ինն էին: «Կարգաւորեաց Աստուած զեկեղեցի ինն դասուց, գրում է Կաղանկարվացու աղբյուրը եւ թվարկում, պարբիարք որ է հայրապետ, եւ արքեպիսկոպոս, որ կոչի եպիսկոպոսապետ, մերթուպալիպք եւ եպիսկոպոսք, քահանայք ու սարկաւագունք, կեսարկաւագք եւ ընթերցողք եւ փսաղպք»⁸:

Դ. դարում փնտրեսական զարգացման ավարաբիրական փուլ թեւակոխած Աղվանքի եկեղեցին չէր կարող բացառություն կազմել եւ չունենալ նմանաբան կառուցվածք: Եւ, իսկապէս, մարենագրական փվյալները ցույց են տալիս, որ այսօրեւ իս «աստուածային շնորհը» իջնում էր պարբիարքից եւ հասնում ժողովրդին: Աղվանից Եկեղեցին չորս հայրնի՝ Մարթեոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Հովհաննեսի, ավերարանջական աթոռներից եւ ոչ մեկին ենթակա չէր: Ներուարար, այն չունէր իր կաթողիկոսին ձեռնադրող փիեզերական պարբիարքը: Այդ դեպքում հանդես էր գալիս Հայոց Կաթողիկոսը, որի վրա էր դրված հիշյալ սրբազան արարողությունը, մի կանոնակարգ, որ սահմանվել էր դեռեւս Ուռնայր արքայի կողմից եւ, քարքեր ժամանակներում վերահասարակելով, պահպանվել նաեւ հետագայում:

Այս կապակցությամբ առաջինը կարելի է նշել Հայոց Կաթողիկոս Սիմեոն Ա. Երեսնցու (1763-1780) գրառումն այն մասին, որ Հռոմի կայսր Կոստանդինա-

աշխարասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ 94 (այսուհետ՝ «Կանոնագիրք Հայոց», Բ.): Հմմտ. նաեւ Վաչագան Աղուանից արքայ, Սահմանադրութիւն կանոնական՝ եղեալ ի ժողովոյն, որ յԱղուէնն եղեւ, «Մարենագիրք Հայոց», հտ. Գ., Զ. դար, գիտա-քննական բնագիր՝ Ա. Յակոբեանի, Անթիլիաս, 2004, էջ 127-140:

⁷ «Պարմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 109 (այսուհետ՝ Օրբէլեան):

⁸ Կաղանկարուացի, գլ Բ. խր, էջ 272:

նուս Ա. Մեծր եւ երկրի Նայրապեր Սեղբեսպրոսը (Եսեքիոսը⁹) հրամանագրերով Գրիգոր Լուսավորչին են հանձնում «զինքնագլուխ եւ զծայրագոյն պապրիարգութիւն արեւելականաց եւ հիւսիսականաց, այսինքն՝ Նայոց, Վրաց եւ Աղուանից, որոց զեպիսկոպոսունսն եւ զկաթողիկոսունսն ընդ իշխանութեամբ նորա դնեն, զի ի նմանէ եւ նորին փոխանորդացն առնուցուն զձեռնադրութիւն»¹⁰: Սա էլ պարճառ է դառնում, զբնում է Նայոց Նայրապերը, որ Աղվանքի կաթողիկոսները կոչվեին Լուսավորչին փոխանորդ կաթողիկոսների որդիներ եւ թոռներ¹¹: Ինչպես երևում է վերոբերյալից, Աղվանից Եկեղեցին, ի դեմս Գրիգոր Լուսավորչի, անդաւրին ենթակա էր Նայոց պապրիարքությանը: Այս իրողությունը վերահասարակական էր Ղվինի՝ 607թ. Աբրահամ Ա. Աղբաթանեցի (607-613) Կաթողիկոսի գումարած ժողովում: Աղվանքի ներկայացուցիչների մասնակցությամբ Կրեդի ունեցած այդ ժողովի որոշմամբ՝ «Նայասարանեայցն կարգէին զԱբրահամ պապրիարք, եւ զԱղուանիցն՝ արքեպիսկոպոս եւ զՎրացն մեքորայոյի»¹²: Նույն դասակարգումն է ցույց տալիս նաեւ Սրբեփանոս Օրբելյանը՝ Վրաց փոխարեն նշելով Սյունիքը¹³:

Ուրեմն, ըստ այս աղբյուրագիրական տեղեկավորության, կասկած չկա, որ Նայոց Կաթողիկոսն էր իբրեւ պապրիարք կանգնած Աղվանից եկեղեցու նվիրակական սանդղակի առաջին աստիճանի վրա եւ իրենով սկզբնավորում էր խնդրո առարկա հոգևոր հասարակության վարչական կառույցը, ինչպես նաեւ ինքն էլ ձեռնադրում էր Աղվանքի Կաթողիկոսին: Պապրիարքներն իրավասու էին արքեպիսկոպոսներ (կաթողիկոսներ) ձեռնադրելու եւ աշխարհաժողով գումարելու¹⁴: Երկրորդ աստիճանի վրա կանգնած էր արքեպիսկոպոսը կամ եպիսկոպոսապետը, որն ավելի շարք հայրնի է «կաթողիկոս» Կրիտոսով: «Երկրորդ դաս (պապրիարքից հետո-Ն. Ս.) եկեղեցոյ՝ արքեպիսկոպոսը, այսինքն եպիսկոպոսապետը, - գրում է Սրբեփանոս Օրբելյանը եւ պարզաբանում, - որ կոչին կաթողիկոսը»¹⁵: Չնայած նշված եզրույթների նույնիմաստությանը՝ Աղվանքի պարագայում, մասնավորապես, «կաթողիկոս» Կրիտոսը երկրի հոգևոր առաջնորդների համար սկսում է կիրառվել միայն կաթողիկոսության ձեռնադրումից հետո՝ Զ. դարի կեսերից, Աբաս Կաթողիկոսի առաջնորդության ժամանակներից: Իսկ մինչեւ այդ՝ նախակաթողիկոսական շրջանում, նրանք հանդես էին գալիս «արքեպիսկոպոս» ու «եպիսկոպոսապետ» հոգևոր կոչումներով: Այս Կրիտոսներով են պարմության մեջ մնացել Աղվանքի հոգևոր առաջնորդներ Երեմիան ու Շուփիաղի-

⁹ Տե՛ս «Ագաթանգեղոյ Պարմութիւն Նայոց», Երևան, 1983, էջ 486:

¹⁰ «Ջամբռ, զիբք, որ կոչի յիշարակարան արձանացոցից, հայելի եւ պարունակող բնափց որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեալ եւ շարադրեալ ի Սիմէօնէ ցաւահար եւ վշտակոծ կաթողիկոսէ Երեւանեցոց», ի Վաղարշապատ, 1873, էջ 65:

¹¹ Տե՛ս անդ:

¹² Կաթողիկոսացի, գլ. Բ. իգ, էջ 274 (ընդգծումը մերն է՝ Ն. Ս.):

¹³ Տե՛ս Օրբելյան, էջ 106:

¹⁴ Տե՛ս անդ, էջ 108:

¹⁵ Անդ:

շուն: Խոսելով Մաշտոցի կողմից աղվանական գրերի արարման մասին՝ Մովսես Խորենացին գրում է, որ սուրբ այրը՝ Մեսրոպ Մաշտոցը, գալով Աղվանք, իջնում է «Առ Արավադէն թագաւոր նոցա եւ առ եպիսկոպոսապետն Երեմիայ»¹⁶: Կաղանկարվացին էլ Շուփհաղիշոյին է մեծարում «արքեպիսկոպոս» փիլոդոսով¹⁷, որը կրկնում է և Կիրակոս Գանձակեցին¹⁸: Տեղին է նաև նշել, որ Շուփհաղիշոյին կոչել են նաև «զաւագ եպիսկոպոսապետն»¹⁹, իսկ Մովսես Դասխուրանցին, արդեն իր ժամանակի պատկերացումներով, նրան անվանել է «կաթողիկոս»²⁰:

Եպիսկոպոսապետը կամ կաթողիկոսը, սովորաբար, լինում էր եպիսկոպոսներից մեկը, ով առաջ քաշվելով սրանձնում էր այդ բարձրագույն եկեղեցական պաշտոնը: Աղվանքի հայրապետաց շարքում նշված են մի շարք հոգևոր առաջնորդներ (Տէր Յոհան, Տէր Եղիազար, Ներսէս, Տէր Յովսէփ, Տէր Դաիթ եւ Էլի ուրիշներ), որոնք Ս. Եղիշայի աթոռին նստելու պարվին էին արժանացել՝ նախկինում գլխավորելով այս կամ այն եպիսկոպոսությունը²¹:

Աղվանքի հոգևոր առաջնորդները (թե՛ կաթողիկոսական շրջանում եւ թե՛ մինչ այդ) իրենց ձեռնադրություններն սրանում էին հայոց Կաթողիկոսից, որ ավանդաբար սերնդից սերունդ փոխանցվելով, հիմնականում պահպանվում է Աղվանից եկեղեցու գոյության ողջ ընթացքում: Բայց մինչև հայոց Կաթողիկոսի կողմից օծվող թեկնածուն ընտրվում էր իր ենթակայության փակ գրովող բոլոր թեմերի հոգևորականների ու աշխարհիկ իշխանության ներկայացուցիչների մասնակցությամբ գումարված ժողովում՝ համընդհանուր համաձայնությամբ: Այնուհանդերձ լինում էին նաև վերապահումներ, որի ընթացքում հովվապետներ ընտրվում էին նաև սակավաթիվ պատվիրակների ներկայության պայմաններում: Նման մի դեպք նշում է Կիրակոս Գանձակեցին, որի փոխանցմամբ, Աղվանքի հովհաննես Զ. Կաթողիկոսի (1195-1235) ընտրության ժամանակ ներկայացուցչական ժողովին մասնակցում էին «եպիսկոպոսք սակաւ, որ ձեռնադրեցին զնա»²²: Սրանալով ժողովականների համաձայնությունը՝ շնորհի արժանացած եպիսկոպոսը ժողովի մասնակիցներից առանձնացված հարուկ խմբի ուղեկցությամբ մեկնում էր հայաստան, համախոսականով ներկայանում հայոց Կաթողիկոսին եւ ապա միայն օծվում վերջինիս կողմից²³:

¹⁶ Մովսես Խորենացի, Պարմություն հայոց, Երևան, 1991, էջ 329 (այսուհետք՝ **Խորենացի**):

¹⁷ Կաղանկարուացի, էջ 89, «Դանոնագիրք հայոց», հ. Բ., էջ 91-92:

¹⁸ Կիրակոս Գանձակեցի, Պարմություն հայոց, աշխարհափրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 194 (այսուհետք՝ **Գանձակեցի**):

¹⁹ Կաղանկարուացի, գլ. Ա. իգ, էջ 85: Անսուն, Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի, առաջարկը եւ գիրա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, «Մարմնագիրք հայոց», հ. Գ., Զ. դար, Այթիլիաս, 2004, էջ 110, էջ 85:

²⁰ Տեն անդ, գլ. Գ. իդ, էջ 342:

²¹ Տեն անդ, էջ 344-347:

²² Գանձակեցի, էջ 182:

²³ Տեն «Կաթողիկոսական դիվան», թղթ. 240, վավ. 210, էջ 10բ-11ա:

Արքեպիսկոպոսների կամ կաթողիկոսների իրավունքն էր մեպրոպոլիտներ ձեռնադրել և մեռնուն օրինել: Երեք արքեպիսկոպոսներ, եկեղեցական այլ դասերի ներկայացուցիչների մասնակցությամբ կարող էին նաև վախճանված պարիարքի փոխարեն նոր պարիարք ձեռնադրել²⁴: Նրանք էին, որ երկրի գլխին ծառացած վրանգի պահերին հանդես էին գալիս իբրև միջնորդներ փեղական իշխանությունների և նվաճողների միջև և ամեն կերպ փորձում թեթևացնել վերջիններիս պարփադրած ծանր բեռը: Մասնավորապես Աղվանքում նմաններից էր Տեր Վիրո Կաթողիկոսը, ով «թափեաց զգերեալսն Նայոց, Վրաց և Աղուանից ի Շաթայ Խազրէ»²⁵:

Եկեղեցական իշխանության հաջորդ աստիճանն զբաղեցնում էին «մեպրոպոլիտները», որոնք, ըստ Սյունիքի Օրբելյանի, մայրաքաղաքի ու ավագագույն աթոռների՝ հապով կարգավիճակով օժտված վերակացուներն էին և ունեին եպիսկոպոս և, նույնիսկ, արքեպիսկոպոս ձեռնադրելու իրավունք: Սյունիքի Օրբելյանը բավականաչափ պարզությամբ պարկերել է նրանց պարփավորություններն ու իրավունքները: «Երրորդ դաս եկեղեցույ մեպրոպոլիտը, որ մայրաքաղաքաց և աւագագույն աթոռոցն լինին փեսուչք, - գրում է Սյունիքաց արքեպիսկոպոսը, - գործ է նոցա ձեռնադրել եպիսկոպոս և զօրինել զձէթն, և թէ հարկ ինչ լինի կամ վասն ոչ գոյոյ պարիարքի կամ վասն այլ մեծագույն պարճառի, հրամանաւ և կամօք մեծ աթոռոյն ձեռնադրեն երեք մեպրոպոլիտք այլովք եկեղեցական դասուք արքեպիսկոպոսն իրեանց»²⁶: Աղվանքում «մեպրոպոլիտներ» լինելու մասին հստակ փեղեկություններ չկան, բայց նկատի ունենալով Նայոց և Աղվանից եկեղեցիների հար և նման կառուցվածքը, քաղաքների ու խոշոր բնակավայրերի առկայությունը, որոնք ըստ օրինաց կարգերի մեպրոպոլիտների ծառայության նստավայրերն էին, սխալ չի լինի եզրակացնել, որ այսպեղ ևս գործում էր նման եկեղեցական դաս:

Աղվանից եկեղեցու հաջորդ դասը, որ բազմիցս վկայված է հայ մատենագրության մեջ, կազմում էին «եպիսկոպոսները»: Բառը ինչպես և «կաթողիկոսն» ու «մեպրոպոլիտը» փոխառություն է հունարենից և նշանակում է պահապան, դիրորդ, վերակացու, լրբես, փեսուչ²⁷: Եպիսկոպոսներին այս վերջին նշանակությամբ է կոչում Փավստոս Բուզանդը: Խոսելով Նայոց կաթողիկոս Ներսես Ա Մեծի (353-373) քարոզչական գործունեության շուրջ՝ նա գրում է. «Յամենայն գաւառս կացոյց (Ներսեսը - Ն. Մ.) փեսուչս եպիսկոպոս»²⁸: Նայ իրականության մեջ նրանց կոչում էին նաև «այցելուք» («այցելուներ»). «Չորրորդ դաս եկեղեցույ,

²⁴ Տե՛ս Օրբելյան, էջ 108-109:

²⁵ Կաղանկապուտացի, էջ 343:

²⁶ Օրբելյան, էջ 109

²⁷ Տե՛ս «Փավստոսի Բիզանդացու Պատմութիւն Նայոց», Երևան, 1987, էջ 326

²⁸ А. Б. Рапович, О развитии христианстве, Москва, 1959, էջ 276: Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 441, ծանոթ. 317, էջ 276:

եպիսկոպոսը, որք կոչին այցելութ»²⁹: Թերևս վերջինս գործածվել է եկեղեցական վարչախիշխանական համակարգում նրանց վերահսկողական դերը ցույց տալու համար:

Եպիսկոպոսները կաթողիկոսության իրավասության տակ զբնվող տարածքային եկեղեցական միավորների (գավառների) առաջնորդներն էին ևս տեղերում վարում էին վերջիններիս հոգևոր գործերը: Նրանք նախում էին գավառի կենտրոնում, քաղաքներում ու խոշոր բնակավայրերում, ընտրվում էին թեմակալ առաջնորդների ընդհանուր ժողովում և հաստատման ներկայացվում մետրոպոլիտին կամ կաթողիկոսին: Ն. Ադոնցը, հենվելով Նիկիայի եկեղեցական փիեզերական ժողովի որոշումներից մեկի վրա, պարզաբանում է, որ երրորդ դասի գործիչների ընտրությունը կատարվում էր «տվյալ թեմի բոլոր եպիսկոպոսների համաձայնությամբ, բայց եթե դժվար էր լինում բոլորին հավաքել, ապա պարտադիր կերպով պահանջվում էր առնվազն երեք եպիսկոպոսի համաձայնությունը: Արդյունքը ներկայացվում էր մետրոպոլիտին ի հաստատումն»³⁰: Սակայն, կարծում ենք, որ մետրոպոլիտի որոշմամբ ամեն ինչ չէր ավարտվում: Այն դեռ պետք է վավերացվեր կաթողիկոսի կողմից և նոր միայն մտնել ուժի մեջ: Եկեղեցական կանոնների համար տեքստում դա անշրջանցելի պահանջ էր:

Եպիսկոպոսների ընտրության նշված կարգը գործում էր նաև Աղվանքում: Աղվենի ժողովի կանոններից էր մատենագրական այլ տվյալներից ակնհայտ է դառնում, որ Աղվանքում եպիսկոպոսներն ունեին նույն պարտականություններն ու իրավունքները: Նրանք այսպիսով ևս պարտավոր էին մասնակցել եպիսկոպոսական ժողովներին ու իրենց կնիքներով հաստատել ընդունված որոշումները, ապա-հովել եկեղեցիներում տարվող ծիսական կարգը, օրհնել եկեղեցին և օծել սեղանն ու ավազանը: Նրանք էին պարտավորված մետրոպոլիտից ստանալ օրհնության ձեթը (մեռոնը) և անձամբ կատարել վերջինիս տեղափոխման արարողությունը: Տարին մեկ անգամ շրջելով իրենց ենթակա թեմերում՝ բարձրաստիճան այս հոգևորականներն օծում էին ձեռնադրված քահանաներին ու սարկավազներին, ինչպես նաև բանադրում ու կարգալույծ անում, կապում-կաշկանդում իրենց հոփին, թողություն տալիս ու ապաշխարողներին կարգ սահմանում³¹: Եպիսկոպոսների իրավունքները որոշ սահմանափակումների են ենթարկվում Աղվենի ժողովում: Եթե մինչ այս կանոնների ընդունումը եպիսկոպոսը կարող էր քահանա նշանակել և ազատել առանց ազնվականի թույլտվության, ապա նոր Կանոնակարգի Ի. կետով արգելվում էր նրան՝ օգտվել այդ իրավունքից: Այժմ նա նման ձևով վարվելու համար պետք է ստանար ազնվականի թույլտվությունը: Նույն կետով սահմանվում է ևս հակառակ կարգը. ազնվականն էլ իր հերթին իրավունք չունի քահանա-

²⁹ Օրբելեան, էջ 109:

³⁰ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 365, նույնի՝ Հայաստանի Հուսարինի-նոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 405:

³¹ Տե՛ս Օրբելեան, էջ 110:

ներ եւ սարկավագներ նշանակել կամ ազարել՝ առանց եպիսկոպոսի համաձայնության³²:

Եպիսկոպոսների թույլտվությամբ էր լինում նմանապես եւ ազնվականների կողմից իրենց եկեղեցիներում սեղան կանգնեցնելու, մասունքներ պահելու կամ պարարագ մատուցելու կարգը³³:

Խնդրո առարկա այս դասը արտոնված էր կարարելու նաեւ դարավարական գործառնություններ: Նրանց էր վերապահված տարբեր զանցանքների համար հոգևոր ու աշխարհիկ անձանց պարժելու իրավունքը³⁴:

Եպիսկոպոսական դասը միապարտ չէր: Նրանցից ոմանց իրենց վաստակի ու ջանադիր գործունեության համար կաթողիկոսը շնորհում էր եպիսկոպոսաց դասի ամենաբարձր՝ «արքեպիսկոպոսի» տիտղոս, որը նրանց տալիս էր ավագության կարգավիճակ իրենց նմանների համեմատությամբ:

Որպես եկեղեցական բարձրաստիճան իշխանության ներկայացուցիչներ՝ եպիսկոպոսները, կաթողիկոսի ու մետրոպոլիտների հետ համահավասար, դասվում էին խոշոր ազնվականության շարքը:

Եպիսկոպոսների գլխավորած եկեղեցական մարզերը կազմում էին առանձին եպիսկոպոսություններ՝ թեմեր, եւ հանդես էին գալիս իբրեւ ընդհանուր հաստատության ճյուղային նվիրապետական կառույցներ: Այդպիսիք գործում էին եւ Աղվանքում, սակայն աղբյուրները խոսում չեն այս հարցում: Առկա տեղեկություններն էլ ավելի շատ վերաբերում են մարզպանական, քան մինչմարզպանական շրջանի Աղվանքում գործող եպիսկոպոսություններին ու նրանց առաջնորդներին: Նման սակավախոսության պայմաններում դժվար է ճշգրտորեն որոշել վերջիններիս թվաքանակը: Ս. Տ. Երեմյանը, ապա եւ Ռ. Գեյդուշը դրանց թիվը հասցնում են ութի³⁵: Դրա համար նրանք հիմք են ընդունել Աղվանից Կաթողիկոս Աբասին ու նրան ենթակա յոթ թեմակալ առաջնորդներին ուղղված Հայոց Նովհաննես Բ. Գաբրելենացի Կաթողիկոսի (557-574) նամակը, որում նշվում են Բախադարի, Կապադակի, Ամարասի, Բաղասականի, Շաքիի, Գարդմանի ու Մեծ Կունքի եպիսկոպոսություններն իրենց թեմակալների անվանական մատնանշումով³⁶: Սակայն չենք կարծում, թե նամակում նշվածներով էր սահմանափակվում նրանց թիվը, քանի որ շրջաբերականն ուղղված էր ոչ թե բոլոր եպիսկոպոսներին, այլ հավանաբար վերջիններիցս նրանց, ով ավելի մեծ հեղինակություն ուներ եւ կարող էր իր ազդեցությամբ ուղղորդել երկրի հոգևոր կյանքը:

³² Տե՛ս Կաղանկապուտացի, գլ. Ա. իգ, էջ 93-94: «Կանոնագիրք Հայոց», Բ., էջ 99:

³³ Տե՛ս Կաղանկապուտացի, գլ. Ա. իգ, էջ 94.: «Կանոնագիրք Հայոց», Բ., էջ 99:

³⁴ Տե՛ս Կաղանկապուտացի, գլ. Ա. իգ, էջ 91-93; «Կանոնագիրք Հայոց», Բ., էջ 95, 97:

³⁵ С. Т. Еремян, Идеология Кавказской Албании, - В кн.: Очерки истории СССР. Кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР. III-IX вв., Москва, 1958, էջ 324, Р. Б. Геюшев, Христианство в Кавказской Албании, Баку, 1984, էջ 36-37:

³⁶ Տե՛ս Կաղանկապուտացի, գլ. Բ. է, էջ 122, «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 81:

Մարթնոս Ուռհայեցու հաղորդմամբ՝ Աղվանքի եպիսկոպոսները քառասունն էին³⁷։ Բայց եթե նույնիսկ մեծ վերապահությամբ էլ ընդունենք պարմիչի րեղեկությունը, միևնույն է, այն իրական չի կարող լինել, որովհետև եպիսկոպոսությունների թիվը զանազան պատճառներով անընդհատ փոփոխվում էր՝ ավելանում կամ պակասում։

Ն. Ադոնցի դիտարկմամբ՝ վերջիններիս թվաքանակի փոփոխությունները րեղի էին ունենում «մասամբ գոյություն ունեցող եպիսկոպոսությունների քրոնմամբ և մասամբ էլ՝ նորերի երևան գալով»³⁸։ Այս ընդհանուր երևույթներից զար՝ Աղվանքի եպիսկոպոսությունների թիվն զգալի աճ է ապրում Ե. դարի կեսերին րեղի ունեցած փարաժքային փոփոխությունների հետևանքով։ 461թ. Աղվանից մարզպանության կազմավորման ժամանակ նրան են միանում Նայոց Ուրիք և Արցախ նահանգներն ու մերձկասպյան ազգագավառները, Աղվանքի կաթողիկոսության իրավասության րակ են անցնում նաև հիշյալ վայրերի նահանգներում ու մարզպանության մեջ մտնող մյուս ազգագավառներում առկա եպիսկոպոսությունները։ Այս պարագան ակնառու է ինչպես Աղվեհի ժողովի մասնակիցների նշված կազմից, այնպես էլ Նովիանենս Բ. Կաթողիկոսի՝ Աղվանքի իր աթոռակցին ուղղված նամակից։ Դրանցում Բուն Աղվանքի եպիսկոպոսությունների (Դապաղակի, Բախաղարի, Բաղասականի ու Շաքիի) կողքին, իբրև միևնույն համակարգի կառույցներ, հիշատակվում են նաև թե Կուրի աջափնյակում (Պարպավ, Գարդման, Ամարաս, Մեծկուենք, Մեծիրանք, Ուրի-Առանձնակ) և թե հեռավոր Դերբենդի կողմերում (Չող, Նաշու, Յրի) գործող եպիսկոպոսությունները³⁹։ Ներկաբար, դժվար է Աղվանքի եպիսկոպոսությունների թվաքանակի մասին որևէ հասարարուն խոսք ասել, ինչպես դա անում է Ֆ. Մամեդովան, որի կարծիքով Ե.-Թ.դարերում Աղվանքում գործում էին րասներկու եպիսկոպոսություններ⁴⁰։ Դրա փոխարեն՝ հասարարապես կարելի է ասել, որ մինչմարզպանական Աղվանքում եպիսկոպոսություններն ավելի սակավաթիվ էին, քան մարզպանական Աղվանքում։

Առաքելական եկեղեցիների դասային աստիճանակարգությանն համապարասխան Աղվանից եկեղեցու պաշտոնական սանդուղքի վրա՝ եպիսկոպոսներից մի աստիճան ներքև, կանգնած էին քահանաները՝ «երիցուք»։ Վերջիններս համայնքներն սպասարկող հոգևորականներն էին և հոգևոր ծառայություն էին մարուցում համայնապարկան գյուղերի, շեների ու այլ բնակավայրերի բնակչու-

³⁷ Տե՛ս Մարթնոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, պարրասրեցին՝ Մ. վրդ. Մելիք-Աղամեան, Ն. սրկ. Տեր Միքայելեան, Վաղարշապար, 1898, էջ 8։

³⁸ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 331, նույնի՝ Նայասարան Կուստինիանոսի դարաշրջանում, էջ 368։

³⁹ Տե՛ս Կաղանկարուացի, գլ. Ա. իգ, Բ. է, էջ 89-90, 122, «Կանոնագիրք Նայոց», հ. Բ., էջ 91-92, «Գիրք թղթոց», էջ 81։

⁴⁰ Տե՛ս Փ. Մամեդով, Политическая история и историческая география Кавказской Албании (III до н. э. – VIII в. н. э.). Баку, 1986, էջ 236։

թյանը: Այդ շրջանակներում էլ սահմանափակվում էին կանոնակարգով նրանց շնորհված պարտավորություններն ու իրավունքները: Ե. դասի այս հոգևորականների պարտավորությունների մեջ մտնում էին Ս. Նաղորդության կենարար խորհուրդի կարարումը, մկրտության ծեսի ու խաչի օրհնության արարողությունների վարումը, սովորական ձեռքի փոխանակումը և այլն: Բահանաները հանդես էին գալիս իբրեւ խոստովանահայրեր և թողություն էին փալիս մեղքերը խոստովանող քրիստոնյային, իսկ իբրեւ համայնքների հոգևոր փրկիչ՝ կարող էին բանադրել իրենց հոգին ու ազգայնական բանադրանքից⁴¹: Նրանք էին կրթում մանուկներին ու սաղմոսերգուներ պատրաստում⁴²: Ըստ Աղվենի ժողովի սահմանած կարգի, նրանք փարեկան երկու անգամ ընծաներով պետք է գնային եպիսկոպոսի մոտ և երկրպագության ու որոշակի վարձատրության դիմաց նրանցից վերստին «զկարգս հոգևորս» ստանային⁴³:

Բահանաներն ի պաշտոնն հաճախ էին լինում իրենց սպասարկման ներքո գտնվող բնակավայրերում, շատ էին շփվում ժողովրդական զանգվածների հետ և բոլորից լավ գիտեին նրանց ցավը: Ունեին մեծ ազդեցություն: Դա էլ նկատի ունենալով՝ Նազկերս Բ.-ն (438-457), իբրեւ հայերին, աղվանացիներին ու վրացիներին հավատարմության անելու միջոցներից մեկը, արգելում է բահանաներին կրթական գործունեությամբ զբաղվել: «Բահանայք, - հրամայում է նա, - մի իշխեսցեն ի քուռս իւրեանց ուսուցանեն գծողովորդս»⁴⁴:

Բահանաների դասը եւս միաբարբ չէր: Նրանց մեջ փարբերակվում էին «աւագ բահանայք» և «պարտական երիցուր»⁴⁵: Նրանք իրենց գործուն մասնակցությունն էին բերում երկրի պետական-քաղաքական իրադարձություններին և հասարակական կյանքին: Ի հասարակումն ասվածի՝ նշենք, որ սկզբնաղբյուրներն Աղվենի ժողովի մասնակիցների թվում հիշարակում են Պարսավ քաղաքի, Կաղանկարույք, Բերդահոջ, Բեդ, Գայեգուն գյուղերի Մաթե, Նովսեփ, Մարթե, Արիկազ, Պողոս և փարբեր վայրերից ժամանած Ուրբաթայր, Նովել, Պարմիդե, Նակոր երեցներին, որոնք նաև իրենց ստորագրությամբ վավերացնում են ժողովում ընդունված կանոնները⁴⁶: Խնդրո առարկա դասում զանազանվում էին «կուսակրոն» բահանաները՝ արեղաները և վերջիններիս միջավայրից դուրս եկած «վարդապետները»՝ գիտական աստիճան ունեցողները կամ «գիտնաուր» երեցներ-

⁴¹ Տե՛ս Օրբելեան, էջ 109-110:

⁴² Տե՛ս անդ, էջ 110:

⁴³ Կաղանկարույցի, գլ. Ա իգ, էջ 90, «Կանոնագիրք Նայոց», Կ., Բ., էջ 93:

⁴⁴ Եղիշէ՝ «Վասն Վարդանայ և Նայոց պատերազմին», աշխարհասիրությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989 (այսուհետ՝ Եղիշէ), էջ 104:

⁴⁵ «Ղազարայ Փարպեցու Պարմուխին Նայոց և Թուրթ առ Վահան Մամիկոնեան», աշխարհասիրությամբ՝ Գ. Տեր-Մկրտչեանի և Սր Մալխասեանի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Բ. Ուրբաթայանի, Երևան, 1982 (այսուհետ՝ Փարպեցի), էջ 98, 100, 102, 146: Եղիշէ, էջ 56:

⁴⁶ Կաղանկարույցի, գլ. Ա իդ, էջ 90, «Կանոնագիրք Նայոց», Բ., էջ 92:

րը: Նմաններից էր «Մալթե երեց գիպնատորը», որին դիմում է Վաչագան Բարեպաշտը կյանքի ու մահվան, հոգու եւ ննջեցյալների նկատմամբ ողջերի վերաբերմունքի խորհուրդներն իր համար պարզելու նպատակով⁴⁷:

Աղվանքում, ինչպես եւ Մեծ Նայքում, արքունիքն ուներ իր առանձին՝ պալատական քահանան կամ, այսպես կոչված, «դրան երեցը»: «Դրան երեցներ» ունեին նաեւ խոշոր իշխանական անտեղքներ: Այդ քահանաների գործունեությունը պարփակված էր արքունիքի ու ազնվականական անտեղքների շրջանակում եւ նրանք ծառայություն էին մատուցում ավելի բնականից անդամներին: Նայ պատմագրության մեջ հիշատակվում են Եսվադեն արքայի դրան երեց Նովնաթան⁴⁸, Վաչագան Բարեպաշտի «դրան երեց» Մանասեն, Աղվենի ժողովի մասնակից «թագաւորի դրան երեց Թոման», Մանուշեից երեց Ուրբաթապար եւ ուրիշներ⁴⁹: Մեծ Նայքի օրինակով կարելի է ասել, որ հայրնի են դեպքեր, երբ երեցը առաջ քաշվելով նշանակվում է երկրի հոգեւոր իշխանության գերագույն մարմնի առաջնորդ՝ կաթողիկոս: Ղազար Փարպեցին հիշատակում էր Նովսեփ անունով երեցին, ով հայ ժողովրդի համար օրհասական ժամանակներում Ե. դարի կեսերին, Նայոց վեհապետն էր. «Յովսեփ, որ թեպէտ եւ երեց էր ըստ ձեռնադրութեան՝ այլ գկաթողիկոսութիւն Նայոց գաթոռն ուներ ի ժամանակին», - ծանուցում է պատմիչը⁵⁰:

Քահանաներն իրենց սոցիալ-տնտեսական կարգավիճակով հավասարեցված էին մանր հողատեր ազնվականների դասին:

Պարմական գրականության էջերում բավականաչափ տեղեկություններ կան նաեւ Աղվանից եկեղեցու նվիրապետական հաջորդ ասորիճանը կազմող սարկավագների դասի մասին: Դրանց համաձայն՝ վերջիններս կանգնած էին սանդղակի վեցերորդ ասորիճանի վրա եւ «յայլ լեզու դիակոնք» էին կոչվում⁵¹: Նրանք եկեղեցու սպասավորներն էին եւ, Սյրեփանոս Օրբելյանի փոխանցմամբ, գլխաբաց սպասավորում էին սուրբ բնմին, սեղանին ու քահանաներին⁵²: Բացի դրանից՝ նրանց գործը նաեւ Ավետարան կարդալն էր եւ քարոզելը, խոնկ ծխելն ու սուրբ խորհրդին սպասավորելը: Սարկավագներն էին բռնում հաղորդության գինով լի արծաթե անոթը՝ սկիհը եւ այն ծածկող հաղորդության նշխարն իր վրա կրող սկավառակը⁵³, որ կոչվում է մաղզման: Նրանց շարքերում լինում էին եւ կանայք՝ սարկավագուհիներ, որոնք նույնպես քարոզչական աշխատանքներ էին տանում, բայց վանական կանանց շրջանում մենաստաններում: Նրանք էլ էին Ավետարան կար-

⁴⁷ Տե՛ս **Կաղանկավաղի**, գլ. Ա. իդ, էջ 86-88: **Մալթե Գիպնատոր**, Նարցումն արքային Վաչագանայ, «Կանոնագիրք Նայոց», հ. Գ., Զ. դար, էջ 357-360:

⁴⁸ Տե՛ս **Կորին**, Վարք Մաշտոցի, բնագիրը... առաջաբանով եւ ծանոթություններով ի ձեռն Մ. Աբեղեանի, Երևան, 1941, էջ 74:

⁴⁹ Տե՛ս **Կաղանկավաղի**, գլ. Ա. իգ, էջ 90, «Կանոնագիրք Նայոց», Բ., էջ 92:

⁵⁰ **Փարպեցի**, էջ 100:

⁵¹ Տե՛ս **Օրբելյան**, էջ 110:

⁵² Տե՛ս անդ:

⁵³ Տե՛ս անդ:

դում եւ բեմբասացություն վարում, սակայն, ոչ թե անմիջապես բեմում կանգնած, ինչպես սարկավագները, այլ առանձին կամ մի անկյունում խմբված: Սարկավագուհիները, ի տարբերություն սարկավագների, չէին մասնակցում պարարագի ընթացիկությանը⁵⁴:

Սարկավագները, պարավարությունների բերումով, գրեթե միշտ եւ ամենուր ուղեկցում էին բարձրաստիճան եկեղեցականներին: Նայարնի է, որ նրանցից մի քանիսը մանուկ Գրիգորիսի հետ մեկնել էին Մասթթագ աշխարհ եւ հենց նրանք էլ, իրենց ուսուցչի խոշորագույն դին բերելով, ամփոփել են Ամարասի եկեղեցում⁵⁵: Մանուկ Գրիգորիսի նշխարների հայրնաբերման մասին ավանդական պարամության մեջ նշվում է, որ Վաչագան Բարեպաշտը սրբի մաստունքները գտնելու համար, բացի եպիսկոպոսներից ու քահանաներից, դիմել է եւ սարկավագներին⁵⁶:

Սարկավագները «ի սպասու ծառայութիւն» էին մատուցում նաեւ նրանց կից հոգեւոր մասնաբաժիններում: Աղվանքում սարկավագների նման խմբի գոյությունը հաստատվում է Մովսես Կաղանկարավացու աղբյուրը՝ Լուսավորչի թոռան մաստունքները փնտրողների մեջ հիշարակելով «սարկաւագ մի Յովել անուն (որ էր - Ն. Ս.) ի դրան արքունի»⁵⁷:

Առանձին սարկավագներ, որոնք աչքի էին ընկնում ջերմեռանդությամբ եւ հայրնի դառնում եկեղեցուն բերած իրենց նպաստավոր գործունեությամբ, ծառայողական աստիճանով վեր բարձրանալով, հասնում էին կաթողիկոսական աստիճանի: Մովսես Դասխուրանցու վկայությամբ Աղվանքի կաթողիկոս Տեր Միմոնը «էր սարկաւագապետ արքայն»⁵⁸, իսկ Տեր Միքայելը «էր սարկաւագ ի Շաքոյ»⁵⁹:

Աղվանից եկեղեցու դասերի թիվը լրացնում էին դպիրները «որք են կէս սարկաւագունք»⁶⁰, գրակարդացները՝ «անագանոսք»⁶¹, («ընթերցողք»⁶²), եւ սաղմոսերգուները՝ «փսաղտոսք»⁶³, կամ «փսաղտք»⁶⁴: Դպիրների գործը առաքելական թղթեր կարդալն էր, մոմեղենն ու գլխին խաչ ունեցող գավազանը վերցնելն ու եկեղեցու դռները փակելը⁶⁵: Վերջին երկու դասերից «ընթերցողք», ինչպես ցույց է տալիս եւ նրանց պաշտոնական անվանումը, նույնպես հանդես էին գալիս իրեն մարգարեական ու վարդապետական գրքեր կարդացողներ⁶⁶, իսկ սաղմոսեր-

⁵⁴ Տե՛ս անդ, էջ 110-111:

⁵⁵ Տե՛ս **Բուզանդ**, էջ 26, **Խորենացի**, էջ 260:

⁵⁶ Տե՛ս **Կաղանկարուացի**, գլ. Ա. իս, էջ 66:

⁵⁷ Անդ, էջ 70:

⁵⁸ Անդ, գլ. Գ. իդէջ 344:

⁵⁹ Տե՛ս անդ:

⁶⁰ **Օրբելեան**, էջ 111:

⁶¹ Տե՛ս անդ:

⁶² **Կաղանկարուացի**, գլ. Բ. իդ, էջ 272:

⁶³ **Օրբելեան**, էջ 111:

⁶⁴ Տե՛ս **Կաղանկարուացի**, էջ 272:

⁶⁵ Տե՛ս **Օրբելեան**, էջ 111:

⁶⁶ Տե՛ս անդ:

գուները կամ փառարանները՝ իբրև աղանդ երգողներ և երգեցողությամբ եկեղեցին սպասավորողներ⁶⁷:

Ահա սրանք են այն ինը դասերը և դասային խմբերը, առանց որոնց եկեղեցիները չեն կարող լիարժեք համարվել. «զի պարզ է եկեղեցույ լրի ունել և անթերի»⁶⁸: Ինչպես փեսանք, Աղվանից եկեղեցին ուներ պահանջվող բոլոր ինը դասերը՝ յուրաքանչյուրի համար սահմանված հստակ պարտավորություններով, իրավունքներով և նույնիսկ հանդերձներով: Ներեաբար՝ առանց այլևայլության, այն կարելի է դասել լիարժեք եկեղեցիների շարքում, որն առաջնորդվում է առաքելական կանոններով:

Այսպիսով՝ իր ծագմամբ ու բնույթով, կառուցվածքով ու ծիսական արարողակարգով, խնդրո առարկա եկեղեցին հար և նման էր Նայ Առաքելական Եկեղեցուն: Նմանությունը խոր, պարմական արմարներ ունի, և գալիս է նրա ձևավորման հենց սկզբից՝ հայ քարոզիչների անմիջական միջամտությամբ քրիստոնեության Աղվանք ներթափանցման ժամանակներից: Լինելով ինքնուրույն սրբազան հասարակություն՝ Աղվանից եկեղեցին կրել է Նայոց Եկեղեցու ազդեցությունը և, ըստ էության, հանդիսացել նրա նվիրապետական աթոռներից մեկը:

РЕЗЮМЕ

С проникновением христианства в Алуанк образуются и его духовно- административные строения, которые в совокупности обозначаются греческим термином «эклесиа».

Каждая христианская церковь считалось полноценной только при наличии девяти, основанных на иерархическом ранге духовно должностных чинов. Ими являются: патриарх, архиепископ или епископосапет, митрополиты, епископы, священники, дьяконы и подьяконы, чтецы, псалты. Исследование показывают, что Алуанская церковь также располагает этими чинами с их обязанностями и правами. Считаем нужным отметить, что для Алуанской церкви, в качестве патриарха, выступали армянские католикосы.

Таким образом, Алуанская церковь обладающей всеми, утвержденными святой верой духовными чинами, бесспорно является полноценной состоятельной церковью.

⁶⁷ Տե՛ս անդ:

⁶⁸ Անդ, էջ 111-112:

SUMMARY

With the penetration of Christianity in Caucasian Albania are formed its spiritual and administrative buildings, which collectively are referred to by the Greek term “éklesia”.

Every Christian Church was full only with nine, based on the hierarchical rank of spiritually official ranks. They are: the patriarch, the archbishop or episkoposapet, the metropolitans, bishops, priests, deacons and subdeacons, acoulithes and psalmists. The study shows that Aluanks Church also has these officers to their duties and rights.



ՎԱԶԳԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ
բանասիրական գիտ. դոկտոր

ԴԱՎԻԹԲԵԿՅԱՆ ՊԱՏՄԱՇՐՁԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ¹

Հայտնի ճշմարտություն է, որ գրողը պատմությանն անդրադառնում է իր ժամանակի ինչ-ինչ հարցերի պատասխաններ գտնելու ծրագրով, այսինքն՝ պատմությունը միշտ ձեռք է բերում արդիական իմաստավորում: Նույնքան հայտնի է նաև, որ պատմությունը «պատմել-ասել» արմատական ստուգաբանությամբ հասկանալի է դարձնում հեղինակային սուբյեկտիվիզմը, նույն դեպքը, անձը տարբեր պատմիչների կողմից կարող է տարբեր կերպ ընկալվել ու մեկնաբանվել՝ կախված ոչ միայն ժամանակի աշխարհայեցողական պահանջից, այլև պատմողի քննական կարողությունից, տեսնելու հմտությունից, նույնիսկ՝ տոհմական ու անձնական սահմանափակություններից: Եւ հետագայի հեղինակի համար հեշտ չի լինում նորովի քննականությամբ հստակել սահմանը, մոտենալ բուն պատմական ճշմարտությանը, որն օբյեկտիվորեն արդեն երկդիմի է: Պատմաշրջանի ընտրության մեջ դեր է խաղում նաև գրական ուղղությունը կամ մեթոդը: Եթե ռեալիստ հեղինակը դիմում է այնպիսի ժամանակների, երբ պատմությունը եւս հաստատում է ժողովրդական տարերքի ուժն ու դերակատարումը («Վարդանանք»), ապա ռոմանտիզմի հետեւորդներն ընտրում են այնպիսի շրջան, որտեղ համընդհանուր անկումների, ազգային վայրէջքների մեջ որոշող է դառնում անհատի անձնագոհության կարողությունը («Սամվել», «Գեորգ Մարգալետունի»):

Բաֆֆու առաջին պատմավեպը՝ «Դավիթ Բեկը», հաստատում է պատմական փաստի գեղարվեստականացման այս սկզբունքների առկայությունը: Ընտրված է պատմաշրջան, երբ թուրք-պարսկական ասպատակություն-ճնշումների մեջ ծվատվող Հայաստանի մի հատվածում՝ Սյունիքում, ԺԸ. դարի 20-ական թվականներին անհատի անձնագոհությամբ հայերը հասնում են ազատության ու հարաբերական ինքնուրույնության: «Դավիթ Բեկ» վեպի պատմական սկզբնաղբյուրն է եղել Ղուկաս Մեբաստացու «Դավիթ Բեկ կամ

¹ Հոդվածի գրության առիթը Բաֆֆու ծննդյան 180, Ս. Խանգաղյանի 100-ամյա հոբելյաններն են. բուն պատճառը անցյալի վերելքների ու անկումների արդիական իմաստավորման շեշտադրումն է:

պատմություն «Ղափանցոց» գիրքը, որը հայ դասական պատմագրության գեղարվեստական ավանդներին չհետեւելով՝ հաստատում է հեղինակի՝ ականատես կամ մասնակից լինելը դեպքերին: Անունների ու դեպքերի մանրամասներով, համարյա առանց քննական ընդհանրացումների շարադրվում են անցքերը, հայերի մեծ ու փոքր բոլոր հաղթանակները: Միշտ չէ, որ Սեբաստացուն մտահոգում է փաստի պարզ պատճառականությունը: Օրինակ՝ պատմում է, թե Դավիթ Բեկը կարողանում է շատերին համախմբել, նրանց մեջ՝ նաեւ Թորոս իշխանին, որը Բեկի գործուն գորապետներից էր: Բայց հետո, առանց պատճառները նշելու, տարեգրում է, թե «...իբրեւ զայր հասանէր Դավիթ ի Ղարաշիմն, ընդդէմ ելանէր նմա Թորոս գորապետն մարտիւ պատերազմի»²: Կամ՝ մի այլ դեպքում պատմվում է, թե Սյունիքի վրա է գալիս թուրքերի ցեղախումբ, նրանց դեմ դժվարին մարտ է տալիս Մխիթարը. «այլ Մխիթար սպարապետն, վասն զի էր խռովեալ ընդ տեառն իւրոյ Դավթի, ուստի իբրեւ սկսան սոքա հարկանել զթշնամիսն եւ վանել, հրամայեաց Մխիթարն զօրավարացն յետս կալ ի պատերազմէն»³: Այդպես էլ անում են. թշնամին դաժան հակահարձակման է անցնում, այս անհասկանալի դավաճանության արդյունքում շատերի հետ գերի է ընկնում Մխիթարի մտերիմ Ստ. Շահումյանը. «Եւ իբրեւ զայն լսէր Դավթ, ի արամտութիւն բարկութեան բրդէր ի վերայ Մխիթարայ եւ հրաման տայր զկառափն հարկանելոյ»⁴: Երկու դեպքում էլ մտերիմների միջնորդությամբ հաշտությունը կայանում է, միաձույլ հաղթական կռիվները շարունակվում են, իսկ հարցականներ պարունակող այսպիսի դրվագներն օգնում են գրողներին՝ հերոսների հարաբերությունների մեջ տեսնել հոգեբանական բարդ տեղաշարժեր, ինչը նկատում ենք Սերո Խանգաղյանի կատարմամբ եւս:

Պատմաշրջանի գեղարվեստականացման այս եւ այլ կարգի դժվարություններ հաղթահարելով՝ գրողը, ուրեմն, ամենից առաջ մտահոգվում է **անցյալի արդիական իմաստավորման** խնդիրներով: Րաֆֆու համար արդեն իսկ դա առկա է Դավիթ Բեկի մեջ անհատի դերի շեշտադրումներով: Վեպի սկզբում գաղափարակիր մի այլ հերոսի՝ Ստեփանոս Շահումյանի խոսքերով Րաֆֆին ընդգծում է իր ամբողջ ստեղծագործության համար ընդհանրական աշխարհայեցողական մի գիծ. Ստ. Շահումյանը վստահ էր, որ «ժողովուրդը հոգեպես եւ բարոյապես բոլորովին մեռած չէ», բայց գիտեր նաեւ՝ «հայ ժողովուրդը կատարյալ ոչխարային բնավորություն ունի. մեկը պետք է առջեւից գնա, որ մյուսները հետեւեն նրան»⁵: Դուկաս Սեբաստացին թուրքական եւ պարսկական բռնությունները Հայաստանի եւ Ադվանքի վրա ստվերագծելուց հետո շեշտում է Սյունիքում ծայրահեղ լարված վիճակը եւ գրում, որ համընդ-

² **Ղուկաս Սեբաստացի**, Դավիթ Բեկ կամ պատմություն Ղափանցոց, Երևան, 1992, էջ 34:

³ Անդ, էջ 48:

⁴ Անդ:

⁵ **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հտ. 7, Երևան, 1985, էջ 12:

հանուր անշարժության մեջ Ստեփանոս անունով իշխանը հանդգնեց տարօրինակ թվացող մի քայլ անել. «Խորհեցաւ սուտ գիրս յանուն յիսուն արանց տանուտերանց Ղափանու յօրինել, եւ ըստ նմանութեան իւրաքանչիւր կնքոց նոցա զկնիքս քանդակել»⁶: Այդպէս պատրաստված նա հասնում է Մցխեթ, վրաց թագավորին հաճելի է թվում, որ հայերը, իբր, միաբանված կարող են ելնել թշնամու դեմ, եւ նա «կոչեալ գԴաւիթ Պէկն Մծխեթացի, ի հայկազեանս տոհմէ, ետ նմա զիշխանութիւն երթալ յաշխարհ Սիւնեաց»⁷:

Բաֆֆին վեպն սկսում է նույն արկածալից ու խորհրդավոր դրվագներով, կատարում, անշուշտ, պատմական ու կերպարային որոշակի փոփոխություններ, բայց այս բնորոշ դեպքի մեջ ընդհանրացնում արդիական հնչեղությունը: Ստեփանոս Շահումյանը Վրաստանում Դավիթ Բեկին հիշեցնում է Հայաստանի ծանր վիճակը եւ հայտարարում. «Մնացել է վերելում Աստված, իսկ ներքեւում դու, Դավիթ Բեկ: Խեղդամահ եղած հայրենիքի վերջին հառաչանքը կոչում է քեզ»⁸: Անհատն ազգավրկիչ գործունեության մեջ կոչված է աստվածային առաքելության: Այդ գաղափարական շեշտադրումը, բնական է, որ հոգեբանորեն եւս պիտի հիմնավորվի, եւ դա սկսվում է Դավիթ Բեկի կասկածով.

« - Մի մարդով ոչինչ չի դառնա:

- Այդ մի մարդը կդառնա հարյուր, հարյուրը՝ հազարներ»⁹:

Ստեփանոս Շահումյանի համոզմունքը փաստարկվում է պատմության օրինակով, իսկ այստեղ մշտարդիական է Վարդան Մամիկոնյանի կերպարը: Դավիթ Բեկի ընտրած նստավայր Տաթեւում Վարդանանց տոհմն է, եւ կրկին շեշտվում է, թե «Վարդանը ժողովրդի մարմնացած բողոքն է», կերպարը համադրվում է նոր անունների խորհրդով, որ պատարագում հնչում է այսպէս. «Ով Տեր Աստված Հայկի, Արամի եւ Տիգրանի. առաքիր մեզ Վարդանի եւ նրա աջակից քահանաների՝ Հովսէփի ու Ղեւոնդի հոգին»¹⁰: Այս կատարելատիպ հերոսների ազգապահպան ուժն ընդգծում էր պատմահայր Խորենացին. «Վասն որոյ սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան՝ Հայկ, Արամ, Տիգրան. քանզի ըստ իմ՝ քաջաց ազգք քաջքն»¹¹: Ռոմանտիզմի պոետիկայի պահանջով՝ ինքնագոհաբերող *մեկը*, դրսից գալով եւ *դրսի* երեւոյթ լինելով, պիտի զոհաբերվի ազգի փրկությանը՝ երբեմն չընկալվելով նրա կողմից եւ օտարվելով իր «խենթության» համար: Դա նկատելի է *դրսից* եկած Դավիթ Բեկի եւ մանավանդ նրա որոշ ընկերների կերպարում: Տաքարյուն-ըմբոստ, կոպտորեն ազատ Բայինդուրի մասին, օրինակ, հարցնում են.

⁶ **Ղուկաս Սեբաստացի**, նշվ. աշխ., էջ 18:

⁷ Անդ:

⁸ **Բաֆֆի**, նշվ. աշխ., հտ. 7, էջ 121:

⁹ Անդ, էջ 249:

¹⁰ Անդ, էջ 271:

¹¹ **Սովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 86:

« - Այդ մարդը գիժ է, ինչ է:

- Ո՛հ, նա չափազանց բարի է և անկեղծ մարդ է, - ասաց Բեկը»¹²:

Հիշենք, որ յուրօրինակ մերժվածության նույն գնահատականն ունեին «Զալալեդդին» վիպակի Սահրատը, մանավանդ ընկերները՝ Դալի Բաբան (Գիժ Տերտեր), Զիթաբ Դալխին (Գրքի Գիժ), այս հատկանիշն ի վերջո ամփոփվում է «Խենթը» վեպի վերնագրի և հերոսների գաղափարական դերակատարման մեջ:

Արդիական իմաստավորում են ստանում նաեւ մեծ տերությունների դերակատարումը, ազգամիջյան խնդիրները: Բաֆֆին անդրադառնում է ամենից առաջ դեպի Ռուսաստան հայերի ձգտումներին. «Հայերը եւս պատրաստվում էին ձգել պարսկական ծանր լուծը: Ամենի աչքը դարձած էր դեպի Պետրոս Մեծը»¹³: Գրողը արդիական կարեւոր հանգամանք է դիտում նաեւ Հայաստանի հարեւան երկրների հետ դիվանագիտական կապերի հարցը, եւ այստեղ առաջնայինը Վրաստանի հետ հարաբերություններն են: Դավիթ Բեկը դեռ Վրաստանում էր, երբ սկսվեցին Ղարաբաղի մեղիքների ու վրաց թագավորի բանակցությունները Ռուսաստանի հետ, եւ Բեկը «պարզ տեսնում էր, թե ինչ բախտավոր սպագա կարող են պատրաստել այդ երկու հարեւան ազգերը, եթե իրանց շահերը միացնեին... Ո՞ր սատանան մտցրեց այդ ատելությունը երկու ազգերի մեջ»¹⁴:

Այս եւ այլ խնդիրներ նորովի են ներկայացվում Սերո Խանգադյանի «Մխիթար սպարապետ» վեպում: Պատմագիտությունը նոր զարգացումներ, նաեւ գաղափարական ճնշումներ էր ապրել, որի դրսևորումներից է Ռուսաստանի դերի միակողմանի գերազնահատումը, ինչպես եւ զգալի սոցիոլոգիզմը: Տաթևում հրավիրված ավագանու խորհրդում պարզունակ ոգևորությունն էր այն հեռանկարից, որ Գանձասարում սպասվող ռուսական պատվիրակությանը կարելի է հրավիրել Սյունիք: Եւ այս ամենը՝ Դավիթ Բեկի հաղթական կռիվներից հետո: Եւ որքան էլ դիվանագիտական ենթատեքստով վտանգավոր տեղեկություն է գալիս, թե «Պետրոս թագավորը մեզ խորհուրդ է տալիս տեղահան լինել ու գնալ բնակվել ծովափի ավազուտներում»¹⁵, միեւնույն է, հաղթանակներից հետո էլ հնչում է խեղճության կոչը. «Կկորչենք ազգովի, տեր Դավիթ Բեկ: Դու աշխատիր ռուսների զորքը բերել մեր աշխարհ»¹⁶:

Խնդիրն ավել է խճճվում դիվանագիտական լայն կապերի մեջ: Պարսկաստանի թուլացումն այստեղ է մղում ռուսներին ու թուրքերին: Ահագոյու օսմանյան վտանգը հայերին ու վրացիներին ավելի մոլեռանդորեն է տանում դեպի

¹² Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 137:

¹³ Անդ, էջ 234:

¹⁴ Անդ, էջ 245:

¹⁵ Սերո Խանգադյան, Երկերի ժողովածու, հտ. 2, Երևան, 1981, էջ 132:

¹⁶ Անդ, էջ 139:

Հյուսիս (այս ամենը չկար Սեբաստացու Պատմության մեջ): Ռուսների առաջխաղացումը, ինչպես միշտ, սարսափեցնում է Անգլիային ու Ֆրանսիային: Թավրիզը եւս փորձում է դիվանագիտական խաղերի մեջ մտնել, այստեղ քայլ էր նաեւ Դավիթ Բեկի՝ դաշնակցելու առաջարկը շահ Թահմասգին: Հարավկովկասյան ազգերի ոգեւորված սպասումը ավարտվում է հուսախաբությամբ, Պետրոս Մեծը Դերբենդից ետ է վերադառնում, եւ հաջորդում է դեսպան-պատվիրակի բացատրությունը. «Եթե Անգլիան ու Ֆրանսիան արգելք չլինեին, հիմի մեր գորքերն այստեղ էին»¹⁷: Համընդհանուր հուսախաբություն եւ ազգի պես միայնակ մնացած պարզ ճշմարտություն՝ քո զենքի կռվով ապահովիր քո գոյության իրավունքը: Վեպի բուն ասելիքը՝ Դավիթ Բեկի եւ Մխիթար սպարապետի ղեկավարած պայքարն ու անհավանական թվացող հաղթանակները, հաստատում են այդ ճշմարտությունը:

Սերո Խանգադյանը, այդ ամենով հանդերձ, պատմության արդիական հնչեղությունը երբեմն հասցնում է միագիծ այժմեականության, ուր խախտվում է պատմականությունը: Դրա արտահայտության ձեւերից մեկը պարզունակ սոցիոլոգիզմն է, դասակարգային հակասության բացարձակացումը: Այն, որ մեկիքը կամ իշխանը ամեն մի զանցանքի համար դաժան պատժի է ենթարկում գյուղացուն, եւ անգամ հասարակ ծագում ունեցող Մխիթարը, անկախ իր՝ սպարապետ եւ հայտնի դեմք լինելուց, պիտի արժանանա արհամարհանքի, ինչպես այս դեպքում մեկիք Բարխուդարն է հոխորտում՝ «Ռամիկ սպարապետ. ես քեզ էլ մի օր այսպես սմբակահար կանեմ, դեռ կաց»¹⁸, եւ այս ամենին միշտ պետք է հակադրվի գյուղացու հավերժական դժգոհությունը՝ «Իշխանավորից ի՞նչ լավ բան ես ուզում, ջամիկ եղբայր»¹⁹, - ճշմարիտ դիտարկում է ֆեոդալական կացութաձեւի մասին: Բայց որ այս շարակարգում արվում են այնպիսի դիտարկումներ, ինչպիսիք են, օրինակ, այն, որ «գարնանը հայոց գահերեց գորավար Դավիթ Բեկի հրամանով մեկիքները պարսիկներից ետ խլած հողերը պետք է բաժանեին ժողովրդին»²⁰, կամ այն, որ Մխիթարի հրամանով «վերացվում է ջամիկների մարմնական պատիժը, կոռն ու բեկարը»²¹, ուղղակի պատմության «մոդեռնացում» է:

Սոցիալիստական այսպիսի հավասարության ներմուծման կողքին առկա են նաեւ «սովետական ինտերնացիոնալիզմի» ցույցեր: Պետրոս Մեծի հետ հանդիպմանը ոգեւորված սպասում էին Անդրկովկասի երեք «եղբայրական» ժողովուրդները, որոնք նաեւ համատեղ են տանում հիսաթափության ցավը.

«Ադրբեջանցի Մահմադ խանը փաթաթվեց Մխիթարին.

¹⁷ Անդ, էջ 258-259:

¹⁸ Անդ, էջ 37:

¹⁹ Անդ, էջ 55:

²⁰ Անդ, էջ 49:

²¹ Անդ, էջ 57:

- Իրար քոմագ կանենք, Մխիթար եղբայր»:

Իսկ Սյունիք վերադարձած Մխիթարը Հալիձորում «Դավիթ Բեկին պատմեց իրենց, վրաց ու ադրբեջանական զնդերի խանդավառությունը, ապա դեսպան Իվան Տոլստոյի բերած անսպասելի լուրը»²²: Հիշեցնենք, որ Ադրբեջան կոչված երկիրը Խորհրդային պետության նվերն էր, որը կայացավ դավիթբեկյան շրջանից ճիշտ 200 տարի հետո. իսկապես, պատմության նկատմամբ միշտ պետք է շատ զգույշ լինել:

Խորհրդային գաղափարաբանության ճնշումը նկատելի է նաեւ Եկեղեցու, նրա գործիչների նկատմամբ վերաբերմունքի մեջ, եւ այստեղ որոշակի շփման կետեր կան Րաֆֆու գաղափարների հետ: Լիբերալ-ազատամիտ հոսանքի հետեւորդ «մշակական» Րաֆֆին, ճիշտ ընկալելով Եկեղեցու մշակութա-ազգաբանական կարեւոր դերը, ընդգծված համակրանք ունենալով, օրինակ, Խրիմյան Հայրիկի նկատմամբ, միաժամանակ քրիստոնեության մարդասիրական գաղափարների՝ աստվածաբանական-փիլիսոփայական խորքերն ընկալում է քաղաքական իմաստավորմամբ եւ մերժում անպայքարունակ քարոզը, «մի երեսին ապտակի» խորհուրդը վտանգավոր համարում փոքր ազգերի համար, ուր գոյության կարեւոր հիմունքը զենքի կռիվն էր: Եւ ահա պարզունակ եզրահանգում «Դավիթ Բեկ» վեպից. «Այն օրից, երբ մեր թագավորները, իշխանները սկսեցին իրանց հարստությունը վատնել եկեղեցիների ու վանքերի թիվը բազմացնելու, այն օրից մեր գորությունը օրըստօրե թուլացավ»²³: Հիշենք, որ «մշակական» Րաֆֆուն հակադրվում էր հայկական ժողովրդի մյուս խոշոր ներկայացուցիչը՝ «նորդարական» Մուրացանը, ում համար Եկեղեցին ու հավատքն են ազգային միաբանության ոգեւորիչ ուժը. «Ոչ մի հաստատություն այնքան մոտիկ չէ ժողովրդի սրտին, որքան Եկեղեցին, եւ ոչինչ այնքան չի բորբոքում նրա հոգին, մեղմում բարքի կոշտությունը, որքան հանդիսավոր պատարագը»²⁴:

Սերո Խանգաղյանի համար որոշիչ է մնացել խորհրդային աթեիզմի պարտադրանքը: Եթե Րաֆֆու կերտած Խորեն արեղայի եւ սրբազանի կերպարները, որոնք ազատագրական կռիվների ու Զեւու բերդի գրավման մեջ կարեւոր դեր ունեին, նաեւ Վարդանին համադիր՝ Ղեւոնդ երեցի ազգափրկիչ առաքելության հիշատակումն ունեցել են իրենց ազդեցությունը Սերո Խանգաղյանի կողմից Մովսես արեղայի եւ պատմական տեր Ավետիսի՝ որպես հայրենյաց գինավորի, կերպարաստեղծման վրա, ապա միեւնույն է, պատմականության շեղման եւ իր ժամանակի պահանջի արտահայտություն է Եկեղեցու նկատմամբ բացասական դիրքորոշումը: Անգամ սթափ եւ երեսույթները ճիշտ գնահատող Դավիթ Բեկը հայտարարում է, թե միակ հույսը ռուսներն են, իսկ կա-

²² Անդ, էջ 271:

²³ Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 277:

²⁴ Մուրացան, Երկերի ժողովածու, հտ. 2, Երևան, 1975, էջ 215:

թողիկոսը «թող հանդարտ մնա իր վեհափառական գահին: Նա չի, որ պետք է որոշի մեր ժողովրդի բախտը»²⁵:

Պատմագեղարվեստական երկի վերլուծության մյուս կարեւոր սկզբունքը **պատկերվող դարաշրջանի՝ որպես կյանքի ու ոգու, ամբողջական քննական իմացությունն է**, երբ գրողը ստանձնում է նաեւ գիտնականի գործառույթ՝ յուրացնելով պատմությունը ոչ միայն որպես փաստ, այլեւ որպես պատմաշրջանի կյանքի ամբողջություն՝ փիլիսոփայական ընդհանրականությամբ: Ղուկաս Մեբաստացին ականատեսի անմիջականությամբ տարեգրում է պարսկական ճնշումների, թուրքական ասպատակությունների, քոչվոր ցեղերի հարձակումների դեմ Դավիթ Բեկի կռիվները՝ երբեմն բանահյուսական չափազանցումների հասցնելով հայերի հաղթանակների հիշատակումները: Տեղեկացնելով «Փաթալի սուլթանի»՝ մեծ զորքով Սյունիք գալու, Ասլամազ Ղուլիի կողմից Զեու բերդում զորք կուտակելու մասին՝ պատմիչը համարյա կրկնվող պարբերականությամբ ավելացնում է. «Զօրականքն Դաւթի յամենայն երկիրն Դափանու շրջէին, յոյգ եւ խնդիր առնէին, եւ ուրեք զթուրք գտանէին՝ սուր ի վերայ եղեալ սատակէին, մինչեւ բնաւին բնաջինջ առնել զթուրքն ի Դափանո»²⁶: Երկրամասը ողողված էր անընդմեջ կռիվներով: Ներխուժած թուրքմենական մի հրոսակախմբի դեմ Դավիթ Բեկը զորք է ուղարկում, հայերը հետապնդում են թշնամուն. բայց «պատահեցաւ Մխիթար սպարապետն միայնակ առաջի թշնամեացն, առ որ քարածիլ լեալ՝ կալան»²⁷, նա օգնություն է կանչում, հասնում է տեղի Ավետիսը եւ ազատում նրան, միասին գալիս են Հալիձոր՝ Դավիթ Բեկի մոտ:

Արտաքին վտանգը, ուրեմն եւ՝ կազմակերպված ազատագրական պայքարը նոր թափ է ստանում 1724-ից սկսած՝ «օսմանցիների սուլթան Ահմեդի ժամանակ», որը տիրում էր Պարսից ծոցից մինչեւ Եգիպտոս ու Լիբիա: Աղետալի վիճակ էր, թուրքերը գրավում են նաեւ «զմայրաքաղաքն Երեւանու», օրհասական հեղեղից ահաբեկված՝ ումանք «թողին լքին գԴաւիթ, եւ գնացին մտին ընդ լծովն Օսմանցոց»²⁸: Չերկնչեց միշտ իր էպիկական հերոսականությամբ բոլորին դեպի իրեն տանող Բեկը: Այսինքն՝ պատմականորեն ու մարդկայնորեն համադրվում են Հայաստանի պատմության խորհուրդները՝ արտաքին ռազմա-քաղաքական վտանգ, ներքին անմիաբանություն, կենտրոնաձիգ ինքնության համար պայքար: «Պատմական կյանքի» այս ընդգրկումը, դրսևորման տարբեր ձևերով, երեւում է նաեւ վեպերում: Րաֆֆին այս առանձնահատկություններին հաճախ անդրադառնում է պատմագիտական դիտարկումների ձևով՝ ընդհանրացումները, իհարկե, գեղարվեստորեն որոշակիաց-

²⁵ Սերո Խանգադյան, նշվ. աշխ., հտ. 2, էջ 148:

²⁶ Ղուկաս Մեբաստացի, նշվ. աշխ., էջ 32:

²⁷ Անդ, էջ 46:

²⁸ Անդ, էջ 54:

նելով գաղափարակիր հերոսի անձնագոհության շառավիղներում: Վերհուշի ձեռով տեղեկացնում է Հայաստանի ծանր դրության արտաքին պատճառների մասին: Պարսկաստանում գահակալական կռիվներ էին եւ թուլացող երկրի վրա՝ դրսից հարձակումներ. «Այդ հանգամանքից օգուտ քաղելով՝ երկու ավելի հզոր պետություններ՝ օսմանցիք եւ ռուսները, աշխատում էին իրանց ձեռքը գցել Պարսկաստանի արեւմտյան մասը»²⁹:

Հայերը հայտնվեցին եռակի ռազմաքաղաքական գործոնների ու խաղերի բարդագույն պայմաններում: Այսպես փոքր տարածքներն անգամ կարող են հայտնվել ընդգրկում ու մեծ քաղաքակրթությունների հակամարտության խաչմերուկում: Ընդհանրապես «քաղաքակրթությունը դիտարկվում է իբրեւ մի համակարգ, որը գործառույթ է կոնկրետ ժամանակատարածքային եւ ընկերային չափույթի ծիրում՝ խնդիր ունենալով նախ եւ առաջ ապահովել հավասարակշիռ վիճակ ինչպես իր ներքին բաղադրիչների, այնպես էլ շրջակա միջավայրի նկատմամբ»³⁰: Ազգամիջյան եւ հասարակական կացութաձեւերի մեջ այն, որպես կանոն, վերածվում է ռազմա-դիվանագիտական վայրագ արտահայտության, որտեղ փոքր ու մեծ ազգերի համար դժվար է լինում պահպանել ներքին եւ արտաքին հավասարակշռությունը, ինչի պահպանմանն է ընդհանրապես միտված նաեւ քրիստոնեական բարոյաբանությունը: Այս դեպքում եւս, Պետրոս Մեծը հայի մեջ տեսնում էր իր հարավային ծրագրի վստահելի աջակցին, եւ հայերն էլ ոգեւորված ցույց էին տալիս «ամեն տեսակ պատրաստականություն» մեծ թագավորի մեծ նպատակները իրագործելու համար»³¹: Եւ խորանում են հավասարակշռության խախտումները, պարսիկները Երեւանում նույնիսկ հայեր են կոտորում, Սյունիքում սկսվում է պայքարը: Այն ձեռք է բերում համազգային հնգեղություն. Բաֆֆին ընդգծում է, թե Սպահանի եւ Հնդկաստանի հայերը պատրաստ էին օգնել իրենց ազգակիցներին (այդպես է միշտ, նաեւ այսօր). «Դուք, -գրում էին նրանք Սյունյաց աշխարհի ապստամբության պետերին, - սիրտ ունեք եւ քաջություն, իսկ մենք փող ունենք եւ միջոցներ՝ ձեզ օգնելու»³²: Այսինքն՝ Բաֆֆին, ի տարբերություն իր պատմական սկզբնաղբյուրի, դավիթբեկյան պատմաշրջանը դիտում է լայն քաղաքական ու մարդկային հարաբերությունների համապատկերում, եւ գլխավոր հերոսի քայլերի տեղային սահմանն ինքնին պիտի դառնա դրա բաղադրատարրը՝ գեղարվեստական ազդեցիկությամբ:

Պատմաքննական այսպիսի դիտարկումներից եւ նոր պատմագիտության նվաճումներից հետո Մերո Խանգաղյանի վեպում եւս գործողությունների

²⁹ Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 234:

³⁰ Ալբերտ Ստեփանյան, Պատմության կերպավորությունները Մեծ Հայքում, Երեւան, 2012, էջ 12:

³¹ Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 235:

³² Անդ, էջ 238:

ծանրությամբ, իհարկե, պարսիկների ու թուրքերի դեմ կռիվներն են: Բավականին հիմնավոր է ներկայացվում պատմաշրջանը՝ Գանձասարի Եսայի կաթողիկոսի ու վրացիների դաշնակցական քայլերը դեպի Ռուսաստան, դրանց հետ Սյունիքի առնչությունները, արձագանքը Երուսալյում եւ Ստամբուլում, հուսախաբված հայերին ու վրացիներին ռուսաց կայսեր կոչը՝ «Շահից պահանջեք ձեր երկրները գիշել Ռուսաստանին»³³, թուրքերի հարձակումները եւ կռիվները նաեւ Սյունիքից դուրս՝ մինչեւ Վայոց ձոր, Նախիջեւան, Երեւան, պարսիկների դաշնակցության խաբկանքը, թուրքերի հոխորտանքը, որ եթե հայերը չլինեին, իրենք վաղուց կգրավեին Դերբենդն ու Բաքուն, նաեւ այն, թե Երուսալյի ճնշմամբ ռուսները համաձայնում են՝ Զուռ եւ Արաքս գետերի խառնուրդը դարձնելու Թուրքիայի, Պարսկաստանի եւ Ռուսաստանի սահմանակետը, ու այս ամբողջի դիվանագիտական ձեւախաղը. «Համենայն դեպս, դո՛ւք, իշխան, ընդունեցե՛ք հայերին, մի քաղցր հուսադրողական խոսք ասե՛ք նրանց»³⁴: Իսկ վերջնական ճշմարտությունը միշտ մեկն է՝ միաբանյալ կռիվ ինքնության համար:

Ահա, արտաքին ուժերի ու հարաբերությունների հետ յուրովի համադրվում է հայոց պատմության մյուս բնորոշ հատկանիշը՝ *անմիաբանության առկայությունը*: Նույն չափավոր տարեգրումով ներկայացնելով այս երեւոյթը՝ Ղուկաս Սեբաստացին հենց այստեղ է, որ երբեմն չի կարողանում զսպել զգացմունքները, դիմում է խոհական զեղումների՝ կարծես հայ դասական պատմագրության իր նախորդների նման հուշելով, որ ամենավտանգավորը սա է ազգային գոյաբանության մեջ: Նախ պատմում է, թե ինչպես Դավիթ Բեկի շուրջ համախմբումներից հետո Տաթեւի մելիք Դավիթը, որ ուրացել էր եւ կոչվել Պաղրի, հավաքելով ումանց, իր որդիներով «խորհէր տալ պատերազմ ընդ Դաւթի Պէկին»³⁵: Բեկը հաղթում է, կտրում ուրացողի գլուխը եւ Տաթեւը դարձնում իր կենտրոնը: Ավելի նեղ քայլերի է դիմում մելիք Ֆրանգյուլը, ում համար «ոչինչ փոյթ եղել լինիլն նենգաւոր, թշնամի Աստուծոյ եւ մարդկան եւ ազգին իւրոյ եւ ժողովրդեանն մատնիչ եւ սատակիչ»³⁶: Եթե Դավիթ Բեկի շարժման առաջին շրջանում կասկածը հեռու էր պահում անգամ պայքարի այնպիսի նվիրյալների, ինչպիսիք են Թորոսը, տեր Ավետիսն ու մելիք Փարսադանը, ապա բուն դավաճաններն իրենց անձնապաշտ եսի սահմաններից դուրս չեն գալիս անգամ Բեկի հզոր հաղթանակներից հետո: Այն ժամանակ, երբ թուրքերը, հայերի անունը լսելով, փախչում էին, Ագուլիսի քաղաքապետ մելիք Մուսէն եւս դիմում է դավաճանության ու մյուսների նման ստանում արժանի պատիժը:

³³ Սերո Խանգադյան, նշվ. աշխ., էջ 267:

³⁴ Անդ, էջ 552:

³⁵ Ղուկաս Սեբաստացի, նշվ. աշխ., էջ 22:

³⁶ Անդ, էջ 34:

Բաֆֆին եւս, երկրի համար ծանր իրավիճակը բավականին լայն ընդգրկման մեջ նկարագրելով, ցույց է տալիս երկպառակության կործանարար դերը՝ «Միսյանց հետ անհաշտ, անվերջ թշնամություններով՝ այդ իշխանները ավելի իրանք էին ծանրացնում ժողովրդի ստրկության լուծը»³⁷, այնուհետեւ դա ներկայացնում է կերպարների միջոցով: Դավիթ ուրացողի վտանգավորությունը շեշտվում է նաեւ սոցիալական առումով. նրա դաժանությունը գյուղացիներին մղում է անասելի քայլերի՝ ինքնահրկիզման Ֆաթալի խանի վրանների դիմաց. «Ժողովուրդը հույս ուներ, որ բռնակալ խանի մեջ կգտնե ավելի գութ, քան թե մի հայ դավաճանի մեջ»³⁸: Իր ստորություններով նրա հետ յուրովի մրցում է մելիք Ֆրանգյուլը: Վիպասանը փորձում է երկու մրցակից դավաճանների կերպարները անհատականացնել նրանով, որ Դավիթ ուրացողը երբեք երերումներ ու ետ դառնալու մտահոգություն չի ունենում (ինչպես «Սամվել» վեպի Վահան Մամիկոնյանը): Անգամ դաժանագույն հարվածից հետո, երբ ժողովրդական ատելության էպիկական պոռթկմամբ՝ գեղջկուհին իր հավանոցում թաքնված ուրացողի դավաճան որդուն սպանում է՝ նրա գլխին դրած մեխին խփելով, բանադրված Դավիթ ուրացողը շարունակում է հոխորտալ. «Մելիք Դավիթը չի խոնարհվի ավագակ Դավթին (Բեկին - Վ. Ս.), - ասաց նա դառնությամբ»³⁹:

Մելիք Ֆրանգյուլը հոգեբանորեն ավելի բարդ կերպար է (ինչպիսին դառնալու է նաեւ «Սամվել» վեպի Մերուժան Արծրունին): Նա ներկայանում է յուրօրինակ երկվության մեջ. «Մելիքը բնավորությամբ բարի մարդ էր, բայց սաստիկ փառասեր... Իբրեւ հայ՝ նա ցանկանում էր, որ երկիրը ազատ լինի, ունենա իր հայ իշխողը, բայց այդ իշխողը լինի ոչ այլ ոք, բայց՝ միայն ինքը»: Նա նույնիսկ խղճի խայթ է զգում, մտածում, որ երկինքն ու երկիրը չեն ների իրեն: Բայց ավելի զորեղ են դուրս գալիս փառասիրությունը եւ Բեկի նկատմամբ ատելությունը: Նույնիսկ իր համար եւս տհաճ գիտակցությունից հետո, թե՛ «ոչ, ես ուրացողի անունը կրեցի, բայց դավաճանի անուն ժառանգել չեմ ցանկանում»⁴⁰, միեւնույն է, նա դիմում է այդ դավաճանությանը: Ավետարանի ու խաչի վրա երդվում է, որ կօգնի Թորոս իշխանին՝ Ֆաթալի խանի դեմ կռվում, հետո այդ ամենի մասին տեղեկացնում խանին:

Մերո Խանգաղյանի վեպում դավաճանությունը՝ որպես քաղաքական երեւույթ, միանում է իշխանական դասի սոցիալական նկարագրին, քանի որ, ըստ գրողի, աշխատավոր ժողովրդի անսահման ճնշումները նույնքան են դառնում անմիաբանության հիմք, որքան քաղաքական ազդակները: Այդպիսի երկակի հիմնավորում կա դավիթբեկյան գորապետերից մեկի՝ մելիք Բարխուդա-

³⁷ Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 10:

³⁸ Ատ., էջ 51:

³⁹ Ատ., էջ 301:

⁴⁰ Ատ., էջ 455:

րի կերպարում, ում դեմ Մխիթարի սոցիալական պայքարը նաեւ անձնական դրամաների հիմք է դառնում, քանի որ մեկիքը սպարապետի սիրելի Գոհարի հայրն է: Դավաճանին բնորոշ անարժանապատիվ պահվածք ու չարություն է գրողը փորձում տեսնել Բարխուդարի կերպարում, երբ Մխիթարի պատժից խուսափելու համար նա սողալով ներում է հայցում:

Ներքին միաբանության համար ուժեղ անհատ եւ մեծ գաղափար ու հավատք է պետք: Բայց քանի որ գրողը չի ընդունում Եկեղեցու դերը, միավորող գաղափարի ու հավատքի ուժը ուղղվում է կրկին դեպի Ռուսաստան. ռուսներին սպասելով՝ «հայոց մեկիքների միաբանությունն առավել ամուր էր, քան երբեւէ»⁴¹: Իսկ ցրվածության կարեւոր հիմքերից մեկը շարունակում է սոցիալական խնդիրը մնալ. Դավիթ Բեկը դիմում է հայ խոջաներին՝ փողով օգնելու, իսկ նրանք, եւ նրանց մեջ ամենից եռանդով՝ Ագուլիսի պարոնտեր Մուսին, «երդվեցին Աստծու անունով, որ ոչինչ չունեն առեւտուր անելու համար:

- Դավաճաններ, - որոտաց Բեկը»⁴²:

Եւ պատմագրության, եւ երկու վեպերի մեջ բովանդակային առանցքը կապվում է արտաքին ու ներքին վտանգների դեմ մղվող՝ *կենտրոնաձիգ ուժերի պայքարի* հետ, որի գոյապահական իմաստը ազգային ինքնության եւ անկախության (հեռանկարում՝ նաեւ պետականության) վերականգնումն է, ինչը նույնպես մեր պատմության հավերժական բնութագրիչներից է: Սերաստացու Պատմության մեջ Դավիթ Բեկի գործունեությունն արդեն իսկ ուներ անձնագոհության շեշտադրում: Ույթեփետում դարաչափով թուրքերին հաղթելուց հետո Դավիթ Բեկը բանակում է Շնիեր ամրոցում, Տաթևի հոգեւոր առաջնորդին հայտնում իր գալու նպատակը եւ նոր ուժեր հավաքելով՝ «ասպատակեաց զգիւղօրէան Թուրքաց եւ ժառանգեաց զստացուածս նոցա»: Այնուհետեւ հաղթում է թուրքերի 16 հազարանոց բանակին, Մխիթար սպարապետին ուղարկում Քուրթլար կոչված շենը, «եւ էհար զայն, էառ զամենայն ստացուածս նոցա»⁴³. եւ այսպես շարունակվում են կռիվ-հաղթանակների պատումները: Լինում են նաեւ հուսահատության ու բաժանման պահեր, Բեկը մնում է մտերիմների փոքր խմբով՝ նրանց մեջ՝ տեր Ավետիսն ու Փարսադանը, թշնամու 60 հազարանոց զորքի դեմ կռիվ ժամանակ օգնության է հասնում Մխիթարը, ոգեւորված գոչում են. «Եթէ հասեալ իցէ վախճան մեր, քաջութեամբ մեռցուք»⁴⁴, հիշեցնելով Վարդանանց պատգամները: Այսպես անընդհատ կռիվների մեջ ապրած զորավարը, վեց տարի Սյունիքի ոգին պահելով, «եղեւ ի ժամանակի յայնմիկ հիւանդանալ եւ մեռանել իսկ խաղաղութեամբ ի տան իւ-

⁴¹ Սերո Խանգադյան, նշվ. ախշ., հտ. 2, էջ 135:

⁴² Անդ, էջ 204:

⁴³ Ղուկաս Սերաստացի, նշվ. աշխ., էջ 20:

⁴⁴ Անդ, էջ 58:

րում՝ ի Հալիձոր, յամի Տեառն 1728», որից հետո «գօրականքն միաբանեալք՝ կացուցին ինքեանց իշխան եւ գլուխ զՄխիթար սպարապետն Դաւթի»⁴⁵:

Րաֆֆին գաղափարական հերոսի անձնագոհության եւ ուժի ցուցադրման համար բազում կռիվներից վիպական սյուժեի հիմքում դնում է երկուսը՝ Ուչթեփեն եւ Զեուրն՝ սկիզբը եւ բարձրակետը: Առաջին պատմավեպին բնորոշ կառուցվածքային անհամաչափությունը, արտաքին ու ներքին վերոհիշյալ բարդ իրադարձությունները ներառելու հոգսը դեր են խաղացել Դավիթ Բեկի դերակատարման որոշ կրավորականության մեջ: Անգամ մոտ 120 էջ ընդգրկմամբ՝ Զեուր բերդի գրավման հատվածում նա համարյա չի երեւում: Բերդի ներսում արկածային ու լարված վիճակներում գործում են տեր Ավետիսը, ոչ պատմական այլ կերպարներ: Դրսում, շրջափակման իրավիճակից ելնելով, գործում դերի մեջ են Մխիթարը, Թորոս իշխանը, Բայինդուրը, մելիք Փարսադանը, որոնք փոխում են պաշարման ու հարձակման մարտավարությունը, հանդես գալիս ռազմագետի կարողությամբ: Իսկ Բեկը դեռ այստեղ գալու ճանապարհին զարմանախառն հիացմունքով նայում էր Սյունիքի բերդերի հզոր անմատչելիությանը, նրան հիացրել էր «հին հայերի պատերազմական հանճարը»: Այս խոհերի մեջ էր, երբ սրբազանը Բեկին հարցնում է.

« - Դուք, երեւի, պաշարման ընթացքի վրա էիք մտածում...

- Ոչ, ես ամենեւին այդ մասին չէի մտածում»⁴⁶:

Թեպետ Րաֆֆին շեշտում է, որ բերդի ներսում եւ դրսում բոլորը գիտեն, որ այս պատերազմական հանճարի կրողը Դավիթն է. վեզիրը պաշարված Ասլամազ Կուլի խանին հայտնում է իրենց կորուստների մասին, պատմում հայերի անասելի քաջագործություններից եւ ավելացնում. «Այդ կատաղի ապստամբությունների գլխավորն է մի մարդ. ես Դավիթ Բեկի մասին եմ խոսում»⁴⁷: Եւ որքան էլ կառուցվածքային թերություն է, որ հենց Բեկը համարյա չի երեւում այդ ծավալուն դրվագում (ինչպես եթե Վարդանը չերեւար Ավարայրում), բայց Զեուր բերդի առումը դառնում է դիպաշարային լարվածության փայլուն օրինակ:

Մերո Խանգաղյանը եւս, պատմական սկզբնաղբյուրի պահանջով, վեպում կարեւոր տեղ է հատկացնում ազատագրական կռիվներին, դրանց հերոսականությանը: Եթե Րաֆֆու վեպում ազատագրական պայքարի հանգուցակետը Զեուր բերդն էր, ապա այստեղ այդ դերը վերապահվում է Մարաղայի եւ Ագուլիսի ճակատամարտին: Դավիթ Բեկը աշխարհագրային գնդեր է կազմում, նեղացած Մխիթարը հեռու էր: Մարաղայի դաշտում հայերը անձնագոհ կռվի նոր օրինակներ են տալիս, նրանց օգնող պարսիկները խուճապահար փախչում են, ժողովուրդը, կանայք հերոսաբար դիմակայում են, բայց թուրքերի մեծ

⁴⁵ Ասդ., էջ 74:

⁴⁶ Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 357:

⁴⁷ Ասդ., էջ 349:

ուժն սկսում է ճնշել, պարտությունն ու օրհասը մոտ է, եւ հանկարծ հեռվում անսպասելի երեսացող գորաբանակի տեսքից, որ շատերը ընդունեցին որպէս թշնամու նոր ուժ, «Դավիթ Բեկը հագիվ զսպեց հեկեկոցը»: Իսկ առջեւում սլացող Մխիթարը ցավի ինքնամոռացության մեջ էր. «Եկա՛, դիմացե՛ք, - ատամներն արյունոտելով մռնչում էր նա»⁴⁸: Անսպասելի հարվածը պարտություն է բերում թուրքերին, իսկ մահացու վիրավորված Դավիթ Բեկը կտակի նման հնչեցնում է. «Արյունով ձեռք բերած ազատությունը երկար չի տեի, եթե թուլանա պայքարի ոգին, խախտվի միաբանությունը... Ձեր ձեռքը բաց չթողնեք ռուսի փեշից... Մեր մահացու թշնամին թուրքն է»⁴⁹:

Ամիաբանությունից օգտվելով՝ թուրքերը կրկին հարձակվում են, այս անգամ՝ Ագուլիսի վրա, նոր կռիվն ու հաջորդող դեպքերը անկումների շարան են դառնում՝ գերծ Սեբաստացու պատկերած անընդմեջ հաղթանակների ոգեւորությունից: Մելիք Մուսու դավաճանությամբ Ագուլիսն ընկնում է, Գոհարի հերոսական քայլերի արդյունքում շատերը զաղտնի անցքով դուրս են գալիս եւ փրկվում. հիմա էլ բոլոր ուղիները տանում են Հալիձոր, պաշարված է Մեղրին, իրար են հաջորդում կորուստներն ու զոհերը, անձնական ու ազգային ծանր ողբերգություն է ապրում Մխիթարը, որը ամբողջացնում է տեր Ավետիսի կոչը. «Արի հպատակվենք թուրքին»⁵⁰: Կռիվն աստիճանաբար դառնում է *ցարուցրիվ ինքնահոշոտում, ծվատումների մեջ իջնում է հերոսականության ոգին, կարծես ծախվում է ամեն ինչ, ինչպես Մխիթարի գլուխը՝ թուրքին: Փաստորեն ոչ լավատեսական այսպիսի վախճանը կարող էր լինել ոչ միայն Ռուսաստանի բացակայության գաղափարի պարտադրանք, այլեւ ընդհանրապես բուն հավատքի չգոյության արդյունք:*

Պատմական փաստը, այսպիսով, փոխարկվում է գեղարվեստական փաստի, ամենից առաջ, **կերպարակերտման առանձնահատկություններով**, կերպարն է դառնում որոշիչ, քանի որ «էկա մարդ պատմությունից դուրս, իսկ պատմությունը իրական է միայն մարդու մեջ»⁵¹: Պատմականության առումով առաջնային դերը վերապահվում է նշանավոր դեմքերին՝ Դավիթ Բեկ, Մխիթար սպարապետ, տեր Ավետիս, եւ նրանց միջավայրն ամբողջացնող մյուս հերոսներին՝ Ստեփանոս Շահումյան, Բայինդուր, Թորոս, Փարսադան եւ այլք, դավաճաններին ու օտար տիրակալներին եւ, իհարկե, այս մթնոլորտը գեղարվեստորեն անձնականացնող ոչ պատմական դեպքերին ու դեմքերին, որոնք ապահովում են մարդկային ապրումների, սիրո եւ ատելության, ընտանիքի, բնավորությունների հանդիպադրումների գեղարվեստական տարածություն

⁴⁸ Սերո Խանգադյան, նշվ. աշխ., էջ 478:

⁴⁹ Անդ, էջ 510:

⁵⁰ Անդ, էջ 694:

⁵¹ С. С. Аверинцев, Поэтика ранневизантийской литературы, Москва, 1977, с. 7.

ու ժամանակը, եւ այս ամենի մեջ է փաստը ընդհանրանում որպէս փիլիսոփայություն, անհատականացումների կապերով պատմությունը դառնում է կյանք, իսկ կյանքն ամենից առաջ մշակութաբանական- հոգեբանական կարգ է՝ սոցիալ-պատմական հիմունքների վրա:

Դավիթ Բեկի մասին Ղուկաս Սեբաստացին հաղորդում է. «Եւ ինքն Դավիթ ազնուական էր, բարեպաշտ, արիասիրտ, երկայնամիտ խորհրդով, տեղեակ գրոց, վրեժխնդիր վնասակարաց ազգի, սոյնպէս եւ ամենայն հետեւողք իւր»⁵²: Հայ դասական պատմագրությունից եկող կանոնական բնութագիրը պատմավեպերում պետք է ավելի անհատականանա եւ տեսանելի դառնա շարժման մեջ: Բաֆֆին հերոսի ազնվական լինելը փոխարինում է գյուղական հասարակ ծագումով, իսկ նրա խորհրդանշական մուտքը գործողություն՝ ինքնահրկիզող գյուղացիների միջից դուրս պոռթկումը, պիտի ամրակայվի հետագա ազգային նվիրումի ու ինքնայրումի ազդեցիկ դրսեւորումներով, եւ Վրաստանում թափաղ-իշխան դառնալն էլ իր վաստակի արդյունքն էր: Բեկի կերպարի հերոսականությունը նրան մոտեցնում է Էպոսի հերոսներին՝ գործելու կտրուկությամբ ու վճռականությամբ, եւ Բաֆֆին այստեղ հակադրում է երկու գործիչներին. «Որքան սպարապետը խոհեմ, զգույշ եւ խորը մտածող մարդ էր, այնքան Բեկը սկզբից երկար մտածել չէր սիրում: Նա մտածում էր գործը սկսելուց հետո», ինչպէս Ստ. Շահումյանի նամակի քննարկման ավարտին է կտրուկ գոչում. «Գնանք, բարեկան, հայրենիքը կոչում է մեզ»⁵³: Նույն կերպ Սյունիք հասնելուց անմիջապէս հետո, երբ տեսնում է, որ այստեղ ոչ մի համախմբվածություն չկա, «Ի՜նչ... խաբե՛լ ես, - հարցրեց Բեկը» Ստեփանոսին, բայց հաջորդ վայրկյանին նույն վճռականությամբ որոշում է. «Այժմ գունդեր ամենեւին պետք չեն», թող այդ մելիքները, տանուտերերը «մնան իրանց *խոհեմության* մեջ»⁵⁴, այստեղ *խեղճություն* է պետք: Ուշեփեփի խենթ պոռթկումից հետո կայծը բռնկված է, սրբազան հոր բնութագրմամբ՝ «Մի այսպիսի հրաշք պետք էր: Կույր ժողովուրդը միշտ հրաշք է պահանջում»⁵⁵:

Անձնավորման առումով կերպարը կենդանի են դարձնում սերը Թամարի նկատմամբ եւ նրանից բաժանման թախիծն ու կարոտը, իսկ այստեղ՝ Տաթևի մոտ, հուզմունքն ընդգծվում է հեռավոր հուշերի հորձանքով, մանկության օրերի ցավով ու սավերոտ անուրջներով: Կերպարը, սակայն, ներկայանում է ոչ համամասնորեն, եւ Զեւու բերդի գրավման տեսարանում ու դրանից հետո Բեկն ավելի շատ ներկայանում է անցյալի զուգահեռների մեջ խորհրդածող, շատ հաղթանակների վերջնակետում սկեպտիկ հանդարտություն ապրող մարդու նկարագրով: Բերդի գրավումից հետո «Բեկը կանգնեցրեց իր ձին: Նա

⁵² **Ղուկաս Սեբաստացի**, նշվ. աշխ., էջ 20:

⁵³ **Բաֆֆի**, նշվ. աշխ., էջ 199:

⁵⁴ Անդ, էջ 245:

⁵⁵ Անդ, էջ 258:

չորեց գետնի վրա եւ արտասովոր աչքերով, ձեռքերը դեպի երկինք բարձրացնելով՝ ասաց. - Աստված իր քաջերին հաղթություն է շնորհում»⁵⁶: Սա իր անելիքն ավարտած եւ ուրիշ կյանքի նախապատրաստվող հերոսականորեն դրամատիկ կերպար է, ում գործերի որոշ տարեգրումներ վեպի «Վերջաբան»-ում են արվում, եւ նույն կերպ հիշվում է նրա մահը:

Մերո Խանգաղյանը, ունենալով պատմական եւ գեղարվեստական նախօրինակներ, կարող էր ավելի անհատականացնել Դավիթ Բեկի կերպարը, եւ անկախ իր վեպի վերնագրից՝ Բեկն էր լինելու դարաշրջանի խորհրդի կրողը: Նա վիպական գործողությունների մեջ է մտնում «Անհանգիստ մարդ» վերնագրային բնութագրմամբ (հիշենք, որ Մուրացանի վեպում ճիշտ այդպես էր Գեորգ Մարգարետունու բնութագրել Հովհաննես Կաթողիկոսին): Այս հերոսն անընդհատ երկրի ու ազգի հոգսերի կենտրոնում է, մելիքներին բացատրում է իր ծրագրերը՝ պահելով նրանց նկատմամբ որոշակի զգուշավորություն եւ ակնհայտ համակրանք գյուղացիների հանդեպ, ովքեր իրենց հերթին նրան ու Մխիթարին էին շրջապատում վստահելի սիրով: Այստեղ Դավիթ Բեկն ամբողջ երկրի ազատագրման նվիրյալն է, ծրագրում է նույնիսկ Երեւանն ազատել պարսիկ տիրակալներից: Բեկն է հստակ գնահատում ինչպես արտաքին դիվանագիտական վայրիվերումները, այնպես եւ ներքին խնդիրները, որոնք ստիպում են նրան հաճախ խիստ ու դաժան լինել, երբ ցավով պետք է խոստովանել. «Ամեն մարդ իր բույնն է ուզում փրկել, - գլուխն օրորեց Դավիթ Բեկը»⁵⁷:

Հերոսի խոհեմությանն ու քաջությանը համադրվում է դրամատիզմը, քանի որ ներքին ու արտաքին փոթորիկները իրար դեմ են կանգնեցնում Բեկին ու Մխիթարին, եւ այդ դրվագները հոգեբանական բարդ անցումների վկայություն են՝ ազգային ու անձնական խնդիրների համադրումներով: Այս բաժանումը երկու՝ իրար լրացնող, իրարով ուժեղ անհատների յուրօրինակ ողբերգությունն է, որ վիպասանը ներկայացնում է գեղարվեստական անհրաժեշտ մակարդակով, ի տարբերություն պատմիչի՝ բացատրելով նաեւ պառակտման պատճառը: Դա յուրօրինակ ջղաձգում է, ինչը հոգեբանական արտահայտություն է ստանում Բեկի պահվածքում. «Այսուհետեւ ես գլխատել կտամ նրան, ով կհամարձակվի մի փոքր անգամ հակառակ կանգնել իմ կամքին... Իսկ դու, սպարապետ Մխիթար, քիթդ մի խոթիր այնտեղ, որտեղ իրավունք չունես»⁵⁸: Բայց բաժանված էլ նրանք մի ամբողջություն են մնում, ինչը ամփոփվում է ջերմ հաշտությամբ, որ կայանում է Մարաղայի դաշտում:

Մխիթար սպարապետի կերպարը անհատականալու է բարդություն, եւ լայն հնարավորություն ունի: Պատմիչը ժլատ տարեգրմամբ նշում է, որ Դավիթ

⁵⁶ Անդ, էջ 448:

⁵⁷ Մերո Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 331:

⁵⁸ Անդ, էջ 426:

Բեկի մահից հետո «յաջորդեաց Մխիթարն, որ իբր *կորիւն առիւծու* գոչեաց ի լերանց Սիւնեաց... Այլ գտան անօրէնք ի մէջ ժողովրդեանն, որք ախտացեալ իսկ էին այսու ժանտ ախտիւս անմիաբանութեան, ուստի իշխեցին սպանանել զառաջնորդն իւրեանց»⁵⁹: Բաֆֆին կերպարի խոհականությունը կապում է նաեւ իշխանական ծագման հետ՝ գրելով, որ «սպարապետը բնիկ այունեցի էր՝ մի հին իշխանական տոհմից շառավիղված... Մցխեթում ապրում էր որպէս մի օտարական հյուր: Նրա տարիքը 45-ից հազիվ անցած կլինէր: Միջակ հասակով, թիկնավետ, բարեկազմ մարդ էր՝ *առյուծի* խրոխտալի դեմքով»⁶⁰, եւ նրան պատմության մեջ հիշում են «քաջ, այր անպարտելի» խոսքերով: Ինչպէս գլխավոր հերոսը, այնպէս եւ, շատ ավելի զգալի, Մխիթարը Բաֆֆու «Դավիթ Բեկ» վեպում չի հասել կերպավորման բազմակողմանիության, դեպքերն ընդամենը գալիս են հաստատելու վերոնշյալ բնութագրումները:

Խանգաղյանի վեպում Մխիթարը մուտք է գործում որպէս չոր ու դաժան մեկը, որը կարծես միտվում է իր շուրջը մենության պատեր ավելացնելու: Դրամատիզմը սրվում է Դավիթ Բեկից հեռանալուց հետո, երբ մանավանդ գորքի մեջ դասալքության դեպքերը, որոշ գորապետերի դժգոհությունը սպարապետին հասցնում են հուսահատության: Բեկին ուղարկած նամակում պարզապէս գրում է. «Ես ինձ դուրս եմ դնում քո իշխանությունից: Կարող ես գալ ինձ պատժելու»⁶¹: Ծածկամիտ ու լռակյաց դարձած Մխիթարի մեջ, սակայն, լուսավոր պահերը կրկին կապվում են Բեկի անուղղակի ներկայության հետ. Նա «վճռեց գործել Դավիթ Բեկի նախասիրած ձեւով», կամ՝ «Ի՛նչ կասի Բեկը՝ իմանալով այս հաղթանակի լուրը, - ոգեւորությունից ինքնամոռաց մտածում էր Մխիթարը»⁶²:

Ջուգահեռաբար հերոսի դրամայի մեջ միշտ զգացվում է սոցիալական խնդիրը: Անկախ այն բանից, որ Սեբաստացին վկայում է, թե Դավիթ Բեկի մահից հետո բոլորը միաբան ոգեւորությամբ Մխիթարին են ընտրում նրա հաջորդ, վեպում սպարապետին տանջում են կասկածները. «Ես ի՛նչ եմ որ... - գոչեց նա: - Իմ հայրը անհող ռամիկ էր»⁶³, եւ ուրեմն՝ ինչո՞ւ պիտի իրեն գահերեց ընտրեն: Գահերեց ընտրված սպարապետի դեմ հիմա էլ կանգնում է տեր Ավետիսը, եւ նրա կերպարի գեղարվեստական մեծ ուժը մի տեսակ երկրորդում է Մխիթարի դերը, ում մեջ քայլ առ քայլ ստվերագծվում է դավերի ցանցում հայտնված նահատակը: Սպարապետը ինչպէս դեմ էր Դավիթ Բեկի՝ պարսիկների հետ դաշնակցելու քայլին, այնպէս եւ չէր ուզում լսել ռազմիկ-քահանայի՝ ընդհանուր հոգնության եւ հուսահատության միջից հնչող կոչը՝

⁵⁹ **Ղուկաս Սեբաստացի**, նշվ. աշխ., էջ 80:

⁶⁰ **Բաֆֆի**, նշվ. աշխ., էջ 197:

⁶¹ **Սերո Խանգաղյան**, նշվ. աշխ., էջ 428:

⁶² Անդ, էջ 437:

⁶³ Անդ, էջ 520:

հաշտվել թուրքի հետ՝ թեկուզ գիշումների ու ենթարկվելու գնով: Սրան հակադարձաձ նենգ պահանջների մեջ թուրքը արժեւորում է սպարապետի գլուխը, ինչը եթե պիտի սթափեցնի տեր Ավետիսին, ապա Հալիձորի դավադիր պարտությունից հետո Մխիթարի դեմ պիտի հանի հին թշնամուն՝ մեկիք Բարխուդարի որդուն: Գերեվարվում է սպարապետի ընտանիքը, ինչի մասին վկայում է պատմիչը, իսկ երբ Գոհարի եղբայրը թուրք փաշայի սեղանին է դնում սպարապետի գլուխը, ներկա գտնվող «երուպացի խորհրդատուներից մեկն անհամարձակ ափսոսանքով ասաց.

- Էլ ինչո՞ւ են այդ հայերը ազատության ձգտում, երբ իրենց ազատությունն իրենք են սպանում»⁶⁴:

Պատմական ու գեղարվեստական առումով դավիթբեկյան շրջանի ինքնատիպ դեմքերից մեկը *տեղի Ավետիսին* է: Նա զինվորյալ հոգեւորականի ավանդական կերպար է, որպիսին մեր պատմությունը շատ գիտի... Դեռ պատմական սկզբնաղբյուրի մեջ այս կերպարին բնորոշ է ինչ-որ երկվություն: Ղուկաս Մեբաստացին, պատմելով Դավիթ Բեկի՝ հայերի համախմբմանն ուղղված ջանքերի մասին, գրում է, թե նա «հրեշտակա առաքեաց ի Հալիձոր առ տեր Աւետիսին, եւ առ մելիք Փարսադան աներ նորա, եւ ասէ. Եկայք միաբանեցաւորսք ընդ մեզ... եւ նոքա ոչ եկին»⁶⁵: Մեկ անհատի անձնագրի առաքելության նկատմամբ նախնական կասկածը գուցե եւ հասկանալի է: Բեկի տպավորիչ առաջին հաղթանակից հետո նրանք գալիս են միանալու, «իսկ նա բարկացեալ ի վերայ նոցա, ասէ. Կոչեցի զձեզ, եւ ընդէ՛ր ոչ ելիք յօգնութիւն մեզ. Եւ հրամայեաց տանիլ զնոսա ի Շնհեր, եւ անդ արկանել զնոսա ի բանտ»⁶⁶: Հետո նրանց կարգում է գորապետեր, եւ տեր Ավետիսը մինչեւ վերջ մնում է նրա նվիրյալ զինակիցներից մեկը: Անգամ անընդմեջ կռիվներից, հոգնությունից եւ ունանց հեռանալուց հետո այս հերոսները միշտ Բեկի փոքրաթիվ խմբում են: Մասնավորապես Մեբաստացու գրքի «Յաւելուած»-ում՝ «Պատում տեր Աւետիս քահանայի» վերտառությամբ, շեշտվում է. «Տէր Աւետիս արար զբազում մեծամեծ քաջութիւնս, որպէս եւ ի պատմութեանս իսկ տեսանի. զի էր կարի քաջ եւ արիասիրտ եւ զօրաւոր յոյժ բանիւք եւ գործովք»⁶⁷, եւ լրացում անող անանուն հեղինակը վերջում բերում է հերոսին նվիրված չափածո ներբող:

Րաֆֆու վեպում տեր Ավետիսի կերպարը պատմականորեն ամբողջացվում է Վարդանի հետ ղեւոնդյանների հիշատակումով, նրանց ոգու հավերժակյացության հավատքով: Հերոսի ուժի պոռթկումը եւս երեւում է Զեւու բերդի դրվագում: Գրողի նախասիրած արկածայնությունն այստեղ խորհրդավոր է դարձնում կերպարի հերոսականությունը: Երեք ծպտյալ անձեր շարժվում

⁶⁴ Անդ, էջ 773:

⁶⁵ Ղուկաս Մեբաստացի, նշվ. աշխ., էջ 22:

⁶⁶ Անդ, էջ 24:

⁶⁷ Անդ, էջ 110:

են դեպի Զեու. նրանցից սափրիչի տեսքով ծայտվածը «հալիձորցի տեր Ավետիսն էր՝ Դավիթ Բեկի ամենաքաջ զորապետերից մեկը», հյուսնի տեսքով ծայտվածը «Ստեփանոս Շահումյանն էր՝ Դավիթ Բեկի սիրելին»⁶⁸: Բերդը ներսից անկման տանելու, մթին խորշերում արկածալից քայլերի գլխավոր կազմակերպիչը կրկին տեր Ավետիսն էր: Նա հարկ եղած դեպքում իր խմբով բացահայտ ճակատման է գնում, նրա «ռազմագիտական հանճարով» բացած անցքից հայերը մտնում են ներս:

Տեր Ավետիսի կերպարն արդեն հերոսականի ու ողբերգականի համադրություն է «Մխիթար սպարապետ» վեպում, ուր երկվությունը պարզվում է ազգային ու անձնական հիմունքներով, եւ անկախ զգալի գաղափարական միագծությունից՝ սա Սերո Խանգաղյանի վեպի ամենահաջողված գեղարվեստական որակն է: Նա միշտ դժվարին հանգուցալուծում պահանջող իրադրությունների կենտրոնում է: Տեղային հաղթական կռիվներից հետո, երբ Դավիթ Բեկի ու կողմնակիցների համար ավելի է հստակվում, որ պայքարը պետք է համազգային դառնա, տեր Ավետիսն է Փոքր Գորգիի հետ գնում Վաղարշապատ, կաթողիկոսի հարցմանը, թե նա չի՞ երկնչում արյուն թափելուց, քահանան վստահ պատասխանում է. «Երբեք, բնավ չեմ երկնչում, Վեհափառ»⁶⁹:

Անորոշության մղձավանջի մեջ երկիրն ու ազգը փրկելու ջղաձգումները խորացնում են հերոսի դրաման, նա անընդհատ օտարվում է ինքն իրենից՝ փորձելով վերագտնել իրեն: Արդյունքում՝ տառապազին թառանջը. «Խաբվեցինք, - մտածում էր տեր Ավետիսը դառնացած, - կործանիչ ուղի բռնեցինք»։ Ինքնագտնումի տարտամությունը կրկին վերադարձ է. կնոջ ու որդու գերեվարումից հետո տեր Ավետիսը գնում է տուն, վրայից պոկում զորավարի հագուստը. «Խուրջինից հանեց քահանայական իր հնամաշ սքեմը, հագավ եւ դարձավ մի տխուր արարած»⁷⁰: Հետագա բոլոր վիճակները, երբեմն հոգեկան անհավասարակշիռ ցնցումներով, ապաշխարանքի գնացող ճգնաժամի դրաման է. մենության պատանքով նա քայլում է, որ չոքի ամեն վանքի ու խաչքարի առջեւ, լավագին աղոթի, որ սպասի անձանոթ հարցումին՝ «Դու ո՞վ ես», եւ տա ինքնակեղեք պատասխանն ու անհետանա մույթ հեռուներում, անսպասելի պայթյուններով, հրդեհներով վնասի թուրքական բանակին՝ «աղեխարշ ձայնով աղաղակելով՝ Չհավատա՛ք թուրքին, հայեր»⁷¹, եւ այդպես անհայտանա խորհրդավոր մշուշում: Երկվության այդ մշուշը զգալի է նաեւ հերոսի ճակատագրի պատմագրական վկայումներում: Ղուկաս Մեքաստացին գրում է, թե Մխիթարի կործանումից հետո տեր Ավետիսը թուրք փաշայի հետ հեռացավ

⁶⁸ Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 317:

⁶⁹ Սերո Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 288:

⁷⁰ Աղ, էջ 725:

⁷¹ Աղ, էջ 729-730:

Հալիձորից, «զնաց բնակվեց Գաղատիայում եւ Հռոմի սրբազան հայրապետից ներումն ստացավ»⁷²:

Այսպիսով՝ Ղուկաս Սեբաստացու գրքում տարեգրական որոշակիությամբ ներկայացվում է պարսկական լծի եւ թուրքական ասպատակությունների դեմ մղվող հաղթական կռիվների անընդմեջ շարքը Սյունիք-Ղափանում: Այդ սեղմ տարեգրումները հիմք են դառնում հետագայի գրողների համար՝ գտնելու անցյալի արդիական իմաստավորումը, կատարելու պատմաքննական դիտարկումներ եւ փոփոխություններ, իրենց գաղափարա-գեղագիտական սկզբունքներով կերպավորելու հերոսներին: Ռոմանտիկ Րաֆֆու համար առաջնայինը գլխավոր հերոսի, նրա անձնագոհության շեշտադրումն է, թեպետ կառուցվածքային որոշ անհամաչափությունը պայմանավորվում է Ղավիթ Բեկի կրավորականությամբ: Սերո Խանզադյանը փորձում է սոցիալ-պատմական լայն ընդգրկումների մեջ ներկայացնել պատմաշրջանն ու նրա հերոսներին, բայց պատմականության շեղումների գնով է հասնում Ռուսաստանի դերի բացարձակացմանն ու ակնհայտ սոցիոլոգիզմին, որքան էլ այդ հիմքի վրա բացատրելի լինեն հերոսների դրաման, կերպավորման հաջողությունները: Բոլոր դեպքերում՝ խոսուն շերտեր է բերում պատմական փաստի արդիական իմաստավորումը:

РЕЗЮМЕ

Историк Гукас Себастици в книге “Давид Бек или история Капана” хронологической конкретностью представляет победные сражения в Сюнике против персидского ярма и турецких набегов, но не рассматривает все это в общих армянских соотношениях и часто не аргументирует разные происшествия. Писатель-романтик Раффи на этих фактах создает образ самоотверженного героя, победы которого направлены против внешней опасности и внутреннего раскола. Но композиционные недостатки его романа “Давид Бек” являются то, что иногда почти не виден главный герой, притом даже в таком кульминационном и объемистом отрывке, как взятие крепости Зеву.

Роман “Мхитар спарапет” Сиро Ханзадяна имеет программу в обширном социально-политическом полотне представить историю и ее героев. Более целостно дается внешнеполитическое отношение, односторонне обсолютизируется роль России. Но все это иногда делается нарушением историчности. Не видны образы настоящих изменников, а внутренний раздор объясняется боль-

⁷² Ղուկաս Սեբաստացի, նշվ. աշխ., էջ 75:

ше на социальной основе, что доводит до примитивного социологизма и атеистического отношения к церкви.

В обоих романах отражение особенности исторического периода имеет современное-актуальное осмысливание истории.

SUMMARY

Historian Ghukas Sebastatsi in his book “David Bek or Kapan history” presents the victorious battles against the Persian oppression and Turkish incursions in Syunik with chronological accuracy, but does not examine it in the general Armenian context and frequently does not elucidate many occurrences. Romantic writer Raffi based on this facts creates the image of self-sacrificing hero, whose victories were directed against the external threat as well as the internal dissidence. But the structural weakness of “David Bek” novel is based on the fact that among other details the protagonist is almost invisible, even for instance in the very outstanding and plenteous scene such as the capture of Zevu fortress.

The purpose of Sero Khanzadyan’s novel “Mkhitar Sparapet” is the presentation of the historical period of David Bek and its heroes in an all-embracing social-political context. The complete picture of the issues of foreign relations is presented unilaterally declaring the supreme role of Russia. But the presentation is carried out with some historical inaccuracies. The figures of actual traitors are covert and internal conflict is explained more on social bases which lead to simple social realism and atheistic attitude towards the church.

The depiction of the peculiarities of the historical period retains current conception of the historical past in both novels with the exceptional creation of the characters.



ԱՐՄԵՆ ԱՍՐՅԱՆ

պատմական գիտ. թեկնածու

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Արեւմտահայությանը ոչնչացնելու, Արեւմտյան Հայաստանը սեփական հայրենիքի վերածելու եւ Հայկական հարցը մեկընդմիշտ լուծելու նպատակով թուրքական պետությունը Առաջին համաշխարհային պատերազմի առաջին իսկ ամիսներից ձեռնամուխ եղավ արեւմտահայության ցեղասպանության իրագործմանը:

Ձեռնամուխ լինելով Հայոց ցեղասպանության իրականացմանը՝ թուրք ոճրագործները 1915-1916 թթ. ամենայն դաժանությամբ կոտորեցին շուրջ 1,5 միլիոն արեւմտահայերի, մի քանի հարյուր հազարին բռնությամբ մահմեդականացրին: Արեւմտահայության միայն մի փոքր մասը կարողացավ խուսափել կոտորածներից ու ձուլումից: Անկասկած, արեւմտահայության եղեռնը կլիներ ամբողջական, մեկ հայ իսկ կենդանի չթողնելու թուրքական ծրագիրն ամբողջապես իրագործված, եթե մի շարք վայրերում արեւմտահայությունը ոտքի չկանգներ թուրք ջարդարարների դեմ եւ չկազմակերպեր ինքնապաշտպանական մարտեր: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Վանի 1915 թ. ապրիլյան ինքնապաշտպանությանը, որի կազմակերպման գործում մասնակցություն ունեցավ ազգային-ազատագրական շարժման նվիրյալ, ՀՅԴ Վանի կազմակերպության ղեկավար գործիչներից մեկը՝ Արամ Մանուկյանը (Սարգիս Հարությունի Հովհաննիսյան, 1879-1919 թթ.), ում բախտ էր վիճակված 1918 թ. դառնալու Հայաստանի Հանրապետության հիմնադիրը¹:

1914 թ. հուլիսի 19-ին (օգոստոսի 1-ին) սկսված Առաջին համաշխարհային պատերազմի լուրը տազնապի մատնեց բովանդակ հայությանը, բայց հատկապես արեւմտահայերին: Բանն այն է, որ մի կողմից բանակ էին զորակոչվում 20-45 տարեկան տղամարդիկ, իսկ մյուս կողմից՝ ավելի էին գրգռվում թուրքերի, առհասարակ մահմեդական զանգվածի հակահայ բնազդները, նրանց կոչ էին անում կոտորել հայերին՝ կեղծ լուրեր տարածելով, թե իբր հայերը մտադրություն ունեն թիկունքից հարվածել թուրքերին: Շարժման մեջ դրվե-

¹ Տե՛ս Ա. Ասրյան, Արամ Մանուկյան. կյանքը եւ գործը (Ազատագրական շարժման եւ անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2009:

ցին համիդեական գնդերը: Մասնավորապես, Վանի նահանգում քուրդ բեյերին կարգադրվեց խմբեր հավաքագրել եւ կառավարական զենքերով զինել: Բանտերից ազատվեցին եւ զինվեցին մահմեդական հանցագործները²: Բացի այդ, Թուրքիան ծավալեց քրիստոնյա բնակչության ունեզրկման քաղաքականություն: Մինչեւ 1914 թ. աշնան վերջը Վան քաղաքը մի քանի անգամ ենթարկվեց կողոպուտի: Բավական է նշել, որ միայն քաղաքի հայ վաճառականներից բանակի մատակարարման պատրվակով վերցվեց մոտ 60000 ոսկու ապրանք ստացագրերի դիմաց՝ իբր պատերազմից հետո վճարելու համար³: «Հարկատվության» ծանր բեռը հայ բնակչությունը տարավ անտրտուն, թեպետեւ նրան հասցվեց ծանր տնտեսական ու բարոյական հարված:

Վանի նահանգի հայության առաջնորդները՝ օսմանյան խորհրդարանի անդամ Ա. Վռամյանը, դաշնակցական գործիչներ Իշխանը եւ Արամ Մանուկյանը, կանխատեսելով իրադարձությունների զարգացման ողբերգական հետեւանքներն արեւմտահայության համար, փորձեցին ամեն կերպ ազգաբնակչությանը հեռու պահել թուրքական իշխանությունների բռնություններից: Նրանց հորդորներով արեւմտահայությունը լծվեց թուրքական պետության հանդեպ իր քաղաքացիական «պարտականությունների» կատարմանը: Վանում խորհրդակցություն գումարվեց, որտեղ որոշվեց հավաքագրել զորակոչից խուսափող հայ երիտասարդներին: Մեկ-երկու շաբաթ անց երիտասարդների մի խումբ Արամի առաջնորդությամբ ներկայացավ զինվորական ստյան⁴: Միաժամանակ, կանխատեսելով գորահավաքի դեպքում ժողովրդին սպառնացող վտանգը՝ գաղտնի հրահանգվեց, որ տեղերում «աչքի ընկնող զինվորական ուժերը մնան փախստական, հավաքեն զենքերը եւ ապահով պահեստներում պահեն»⁵:

Սակայն վասպուրականահայության առաջնորդների խաղաղասիրական ջանքերը ժամանակավոր արդյունք տվեցին, քանզի թուրքերն իրենց անելիքը որոշել էին վաղուց: Ռուս-թուրքական ռազմաճակատի բացումից (1914 թ. հոկտեմբերի 29) եւ հատկապես Էնվերի փեսա Զեյդեթին Վանի կուսակալ նշանակելուց հետո նահանգում իրավիճակը խիստ սրվեց: Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի դիտարկմամբ, Զեյդեթն իր պաշտոնը ստանձնել էր տեղի հայերին «բնաջնջելու որոշ հրահանգներով»⁶:

1914 թ. դեկտեմբերին Վանի նահանգի Սարայ եւ Բաշկալե գավառներում սպանվեց շուրջ տասը հազար հայ: Իրավիճակը բարդանում էր: «Ահ ու դողի

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 29, թ. 1:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 19:

⁴ Տե՛ս անդ, թ. 18-19:

⁵ Անդ, թ. 21:

⁶ Տե՛ս «Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը եւ հայկական եղեռնի գաղտնիքները», Երևան, 1990, էջ 247:

ամիսներ էինք սպրտում, կոտորածը գավառներէն (1914 թ. աշնանային նահանգի հետեւանքով) կամաց-կամաց մոտենում էր քաղաքին», - գրել է Արամ Մանուկյանը 1916 թ.⁷: 1915 թ. հունվար-մարտ ամիսներին բռնություններ տեղի ունեցան Վասպուրականի Աղբակ, Թիմար, Հայոց ձոր եւ այլ գավառներում: Կոտորածներին զոհ գնաց 16000 հայ, 15000-ը ապաստանեց Վանում⁸: Թուրքական բանակում ծառայող հազարավոր հայ զինվորներ կոտորվեցին⁹:

Ի պատասխան թուրքական բռնարարներին՝ հայերը սպանեցին մի քանի տասնյակ թուրք ոստիկանների, մի շարք տեղերում կտրեցին հեռագրալարերը¹⁰: Վռամյանը, Արամը եւ Իշխանը աշխատում էին զսպել հայերին՝ նպատակ ունենալով հնարավորինս երկարաձգել խաղաղությունը¹¹: Միաժամանակ, նրանք իշխանություններից պահանջում էին պատժել հայերի ջարդերի ու թալանի մեղավորներին:

Ժողովրդի անվտանգությունն ապահովելու համար հրահանգվեց նոր զինվորներ այլեւս չտալ բանակին¹², երկրորդ՝ տհաճ անակնկալներից խուսափելու համար քսանական լավ զինված անձանցից բաղկացած շրջիկ խմբեր ստեղծվեցին: Այդ խմբերի ուժի մասին է խոսում թեկուզ այն փաստը, որ Թիմարի շրջանի Բայրաք գյուղի մոտ Միսակի խումբը, Վանից 600 զինվորներով ուղարկված Բյուրհանեդդիհի հետ կռվի բռնվելով, սպանեց 40-50 զինվոր¹³:

Հայ գործիչները գիտակցում էին, որ իրադրության սառնեցման համար անհրաժեշտ է փոխհասկացողություն գտնել թուրք իշխանավորների հետ: Որպես բարի կամքի դրսեւորում՝ Վռամյանը, Արամը եւ քաղաքի հայ երեւելիները 1915 թ. մարտի 17-ին մասնակցեցին սահմանագլխից Վան վերադարձող Զեւդեթի ընդունելությանը¹⁴: Սկզբնական շրջանում ինքզինքը հայերին հաշտ ձեւացրած Զեւդեթը խոստումներ տվեց կանխել արյունահեղությունները եւ պատժել մեղավորներին: Սակայն նրա իրական նպատակն այլ էր: Վերջինս դեռեւս փետրվարին մտադրվել էր ոչնչացնել Վանի հայությանը: 1914-1915 թթ. ձմռանը Պարսկաստանի հյուսիսային շրջաններում հայերի եւ ասորիների ջարդերն իրագործած Զեւդեթը թուրք ներկայացուցչական ժողովի հավա-

⁷ Տե՛ս «Հորիզոն», 7.IV.1916:

⁸ Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու» (կազմողներ՝ Մ. Ներսիսյան, Ռ. Սահակյան). Երեւան, 1991, էջ 345:

⁹ Տե՛ս Մ. Արզումանյան, Հայաստան. 1914-1917. Երեւան, 1969, էջ 317:

¹⁰ Տե՛ս Վ. Տառքյան, Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով. ԱՄՆ, 1995, էջ 50:

¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 32-33, գ. 29, թ. 8: §Աջակ', 9.VII.1915:

¹² Տե՛ս Հ. Բարրի, Սարսափի երկրին մեջ: Նահատակ Հայաստան (թարգմ.՝ Մ. Շամուռն-ճեան), Կ. Պոլիս, 1919, էջ 80:

¹³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 32:

¹⁴ Տե՛ս Ա - ԴԹ, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին. Երեւան, 1917, էջ 150-151:

քույրներից մեկում հայտարարեց, որ նույն կերպ պետք է վարվի նաև Վանի հայության հետ¹⁵:

Վանի թուրքական իշխանությունների հետ բանակցող Արամ Մանուկյանն ու Վռամյանը, ելնելով հայության անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունից, ջանում էին հասնել նրան, որ զինվորական ծառայությունը փոխարինվի պատերազմի ընթացքում ամսական երկու ոսկի զինվորական սուրճ վճարելով: Սակայն իշխանությունները չընդունեցին այդ առաջարկը: Դրանից հետո Արամը, ելնելով այն հանգամանքից, որ հայ զինվորներին հիմնականում վերածում էին «ամելենների» եւ թանկարժեք աշխատանքներ հանձնարարում, առաջարկեց նահանգի ամբողջ փոխադրական գործը հանձնարարել հայերին կամ նրանցից ստանալ փոխադրության արժեքը: Այս առաջարկը եւս մերժվեց¹⁶: Վանում իտալական հյուպատոսության աշխատակից Սպորդոնի հաղորդմամբ՝ ջարդերի մտադրություն ունեցող իշխանությունները մերժեցին հայ առաջնորդների նույնիսկ ամենաօրինակոր առաջարկները¹⁷:

Հայաստան ծրագիրը դյուրացնելու նպատակով թուրքական իշխանությունները վարում էին արեւմտահայ մտավորական եւ քաղաքական գործիչներին ոչնչացնելու քաղաքականություն թե՛ կայսրության կենտրոնում եւ թե՛ նահանգներում: Սպորդոնի վկայակոչմամբ՝ խոսքը առաջին հերթին տեղի հայ ազգաբնակչության «երեք գլխավոր առաջնորդներին՝ Վռամյանին, Արամին եւ Իշխանին» վերացնելու մասին էր¹⁸:

1915 թ. ապրիլի 3-ին թուրքական դավադրության գոհ դարձավ Իշխանը: Հաջորդ օրը խորհրդակցության պատրվակով կուսակալն իր մոտ հրավիրեց Վռամյանին եւ Արամին: Կուսակալին ներկայացած Վռամյանը (նա եւ Արամը պայմանավորվել էին միասին չայցելել կուսակալին) անմիջապես ձերբակալվեց, տեղափոխվեց Բիթլիսի բանտ, ապա՝ սպանվեց: Արամը եւս պատրաստվում էր այցելել կուսակալին, սակայն նրան նախազգուշացրին՝ տեղեկացնելով Վռամյանի հետ կատարվածի մասին, եւ նա Սպորդոնի բնորոշմամբ՝ «ի բարեախտություն Վանի», չգնաց հանդիպման¹⁹: Փաստելով Վանի ազդեցիկ գործիչներ Վռամյանի եւ Իշխանի սպանության կանխամտածվածությունը՝ Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթը նշել է. «Ա. Մանուկյանն ալ

¹⁵ Տե՛ս Գ. **Фирбюхер**, Армения 1915. Уничтожение Турцией культурного народа, Отв. редактор В. Микаелян, Ереван, 1991, էջ 59, Յ. **Լեփսիուս**, Գաղտնի տեղեկագիր տորթ. Եօհաննէս Լեփսիուսի, Հայաստանի ջարդերը, թարգմանեց՝ Մ. Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 89, Ս. **Ստեփանյան**, Յոհաննէս Լեփսիուսը եւ Հայաստանը, Երևան, 1998, էջ 21:

¹⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 30:

¹⁷ Տե՛ս Հ. **Բարբի**, նշվ. աշխ., էջ 154:

¹⁸ **H. Barby**, Au Pays de L'Epouvante: L'Arménie Martyre. Paris, 1917, էջ 253:

¹⁹ Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու», խմբագիր Մ. Ներսիսյան, կազմողներ՝ Մ. Ներսիսյան, Ռ. Սահակյան, Երևան, 1991, էջ 346:

մեջտեղէն վերցնել ուզած է, սակայն Մանուկեան ավելի ճարպիկ գտնուելով ապստամբած եւ կուսակալ ճեւտեթը փախուստի մատնելով, իր վարչութեան տակ առժամեա կառավարութիւն մը հիմնած է»²⁰:

Պարզորոշ ըմբռնելով ժամանակի հրամայականը՝ Արամ Մանուկեանն անմիջապէս հրահանգեց հասարակական-քաղաքական գործիչներին եւ ժողովրդական զանգվածներին՝ պատրաստուել իրադարձությունների կտրուկ վատթարացմանը: Միաժամանակ, առճակատումից խուսափելով, ինչպէս նաեւ Իշխանի ու Վռամյանի հետ կատարվածի պատճառները ճշտելու նպատակով նա ապրիլի 4-ին Զեդեթի հետ վերսկսեց բանակցությունները: Սակայն վերջինս պահանջեց անհապաղ հանձնել բոլոր զինապարտներին՝ սպառնալով հիմնահատակ ավերել Այգեստանը: Խուսառնակելու քաղաքականությունն այլեւս իմաստագործ էր: «Մեր կացությունը հուսահատական էր այն ատեն, - հետագայում նշել է Արամը, - ընտրելու մեկ բան միայն կը մնար մեզի համար. կամ անձնատուր ըլլալ եւ թողուլ որ խողխողեն մեզ իբր ոչխար, կամ մեռնիլ զենի ձեռքին կռուելով: Այս վերջինը նախընտրեցինք»²¹:

1915 թ. ապրիլի 5-ին Վանի հայությունը ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանության կազմակերպմանը: Ստեղծվեց Հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին, որտեղ Ա. Մանուկեանի առաջարկով ընդգրկվեցին փորձառու զինվորականներ՝ դաշնակցականներ Բուլղարացի Գրիգորը, Կայծակ Առաքելը եւ ռամկավար Արմենակ Եկարյանը²²: Որոշ ժամանակ անց ինքն էլ մտավ այդ մարմնի մեջ եւ ղեկավարեց Վան-Այգեստանի ինքնապաշտպանությունը²³: Արամի գործուն մասնակցությամբ ստեղծվեցին Զինվորական մարմնին ենթակա Զինաբաշխ մարմինը, որն իրականացնելու էր զենք-զինամթերքի պահեստավորումն ու բաշխումը, եւ Տեղեկատու դիվանը, որի գործը իրադարձությունների արձանագրումն ու թռուցիկների հրապարակումն էր: Այնուհետեւ ստեղծվեցին զինագործարան, հիվանդանոց, «Հայթայթիչ մարմին», որն օրական 3000 մարդու սնունդ էր ապահովում եւ այլն: Զինվորական մարմնի քարտուղար Օ. Մխիթարյանի հավաստմամբ՝ «Զինվորական մարմնի եւ անոր հարակից օրգաններու, ինչպէս նաեւ Վանի հերոսամարտի ամբողջ բարոյական ղեկավարությունը ընկավ Արամի վրա»²⁴:

Զինվորական մարմինն անմիջապէս կազմակերպեց ինքնապաշտպանական մեծածավալ աշխատանքները: Կազմվեց ինքնապաշտպանության հա-

²⁰ Րիֆաթ Մելյան Զատե, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը եւ իթթիհատի հայացին՝ ծրագիրները. Երևան, 1990, էջ 93:

²¹ Յ. Լեւիսիուս, Գաղտնի տեղեկագիր տոքթ. Յոհաննես Լեւիսիուսի, Հայաստանի ջարդերը, թարգմ.՝ Մ. Շամուսնճեան. Կ. Պոլիս, 1919, էջ 106:

²² Տե՛ս «Հերոսապատում Մեծ Եղեռնի». Բեյրութ, 1978, էջ 59: «Վան-Վասպուրականի հերոսամարտը-75» (կազմ.՝ Հ. Փալիազյան). Երևան, 1990, էջ 22:

²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 39:

²⁴ Օ. Մխիթարեան, նշվ. աշխ., էջ 54:

տակագիծ, Այգեստանը բաժանվեց պաշտպանական շրջանների: Ապրիլի 6-ի դրությամբ ստեղծվել էին պաշտպանական հինգ շրջաններ՝ իրենց շրջանապետերով, 50 դիրքեր՝ նույնքան խմբապետերով. զինվորների թիվը 800 էր, որից 400-ը հրացանակիր, 400-ը՝ ատրճանակով զինված: Թուրքական կողմը հայոց դեմ կենտրոնացրել էր 6000-12000 կռվող եւ 12 թնդանոթ:

Արամը եռուգեռի մեջ էր, զբաղվում էր կազմակերպչական աշխատանքներով, որոնք աչքի էին ընկնում հաշվենկատությամբ: Զինվորական մարմնի միջոցով նա հրահանգում էր ձեռնպահ մնալ հարձակողական քայլերից եւ հսկել սարատեգիական կետերը²⁵: Ապրիլի 5-ին Վանի Քաղաքամեջ թաղամասից իր մոտ ուղարկված սուրհանդակ Տեր-Հովհաննես քահանայի միջոցով Արամն այնտեղի գործիչներին հրահանգեց աչալուրջ լինել: Սուրհանդակների միջոցով գավառների հայությանը տեղեկացրեց Վանի իրադրության մասին եւ կարգադրեց Վանում ընդհարումն սկսվելուն պես տեղերում պատրաստ լինել հարձակվելու թուրքերի վրա²⁶:

Այնուամենայնիվ, Արամ Մանուկյանն աշխատում էր հնարավորինս հետաձգել ընդհարումները, զսպել հայկական ուժերը՝ չպատասխանելու թուրքական սադրանքներին: Երբ ապրիլի 6-ին հայ մարտիկները ցանկանում էին հարձակվել ռազմամթերք տեղափոխող թուրք զինվորների վրա, Արամը դա արգելեց՝ չցանկանալով առաջինը հրագնել օգտագործել²⁷, ինչը կարող էր հակառակորդի համար ռազմական մեծամասշտաբ գործողություններ ծավալելու առիթ դառնալ: Սակայն զիջումները չէին կարող անվերջ լինել: Դա հավասարազոր էր ինքնասպանության: Դա էր պատճառը, որ երբ Զեդեթը փորձեց գորքեր տեղակայել գերմանական եւ ամերիկյան միսիոներություններում, ինչի հետեւանքով Այգեստանի արեւելյան հատվածում Համուդ աղայի գորանոցից Հաջի բեքիրի գորանոց ձգվող թուրքական պաշարման գիծը կամբողջանար, եւ Այգեստանը լիովին կմեկուսացվեր արտաքին աշխարհից, Արամը դա թույլ չտվեց: Շնորհիվ այդ քայլի՝ պահպանվեց հաղորդակցությունը քաղաքի արվարձանների, ինչպես նաեւ Շուշանցի եւ Վարազի հետ:

Վան-Այգեստանի ինքնապաշտպանությունն սկսվեց 1915 թ. ապրիլի 7-ին: Այդ օրը թուրքերը Հաջի Բեքիրի գորանոցից, Սահակ բեյի փոսից, Թուփրակ կալեի կողմից իրականացված ուժգին հրետակոծությունից հետո անցան լայնածավալ հարձակման. հայկական դիրքերի համար սպառնալից կացություն ստեղծվեց: Հատկապես տագնապալից էր դրությունը Սահակ բեյի դիրքում: Գիտակցելով պահի լրջությունը՝ Արամը, համապատասխան ցուցումներ տալով Զինվորական մարմնի անդամներին, մի խումբ զինվորների հետ անմիջապես շտապեց այնտեղ: Հայտնվելով հրացանային եւ թնդանոթային ուժգին

²⁵ Տնն **R. Hovhannisian**, *Armenian Van/Vasporakan*. USA, 2000, էջ 230:

²⁶ Տնն ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 38:

²⁷ Տնն **Օ.Մխիթարյան**, նշվ. աշխ., էջ 62-63:

կրակի տակ՝ նա առաջնորդին վայել իր պահվածքով (զինվորներից յուրաքանչյուրի հետ առանձին գրուցում էր, համբուրում նրանց, գոտեպնդում եւ խորհուրդներ տալիս) բարձրացրեց զինվորների մարտական ոգին²⁸։ Ռազմական տեսակետից կարեւորելով հաղորդակցությունը դիրքերի միջեւ՝ Արամը դիրքապահներին հանձնարարեց անցուղիներ փորել Սահակ բեյի դիրքից մինչեւ Թովմասյանի դիրքը՝ խոստանալով ուղարկել օգնական բանվորական ուժ։

Արամը ծայրահեղ զգուշության կողմնակից էր եւ գտնում էր, որ ամեն վայրկյան պետք է պատրաստ լինել իրավիճակի բարդացմանը։ Կռվի առաջին օրվա երեկոյան, երբ թշնամին ժամանակավորապես դադարեցրել էր հարձակումը, նա հայ ինքնապաշտպաններին կարգադրեց զգոն լինել եւ չսխալվեց։ Կարճ ժամանակ անց թշնամին նոր ուժով վերսկսեց հարձակումը եւ դարձյալ հանդիպեց հայերի դիմադրությանը։ Ապրիլի 7-ի մարտերում հայերը տվեցին 4-5, իսկ թուրքերը՝ 22 սպանված։ Արամի, Զինվորական մարմնի անդամներ Ա. Եկարյանի, Բուլղարացի Գրիգորի եւ Կայծակ Առաքելի ղեկավարությամբ հայերը ոչ միայն պաշտպանվում էին, այլեւ արժանի հակահարված հասցնում թշնամուն։ Ապրիլի 8-ին եւ 9-ի լույս 10-ի գիշերը հայկական ուժերը գրավեցին թուրքական կարեւորագույն հենակետերի վերածված անգլիական հյուպատոսարանի շենքը եւ Համուդ աղայի գորանոցը, որտեղ մինչեւ ինքնապաշտպանության սկիզբը թուրքերը կենտրոնացրել էին 650 զինվոր։ Զորանոցի գրավմանն իր մասնակցությունը բերեց եւ Արամը²⁹։

Աշխարհից լիովին կտրված վանեցիներին խիստ մտահոգում էր ապագան. բոլորին պարզ էր ռուսական բանակի ու հայ կամավորների հետ կապ հաստատելու եւ օգնություն խնդրելու կարեւորությունը։ Այդ գործը եւս իր վրա վերցրեց Արամը։ Գրվեցին նամակներ եւ ուղարկվեցին ռազմաճակատ։ Նամակներից մեկը տեղ էր հասել Դիլմանի ճակատամարտի (ապրիլի 18) նախօրյակին. հաղորդելով վանեցիների հերոսական դիմադրության մասին՝ Արամը ժողովրդի փրկության համար անհրաժեշտ էր համարում դրսի շուտափույթ օգնությունը³⁰։

Ա. Մանուկյանի գործունեությունը չէր սահմանափակվում միայն Վան-Այգեփատանով։ Դեռեւս ապրիլի 14-ին, ընդունելով թուրքերի դեմ մաքառող շատախցիների պատվիրակությանը, նա հրահանգեց Շատախի, Փեսանդաշտի եւ Քերծի մարտիկներին վարել բացառապես պաշտպանական մարտեր ու շարունակ լինել ժողովրդի հետ³¹։ Արամն արգելեց Շուշանց-Վարագ գծում հավաքված 5000 գավառահայ փախստականների նահանջը Վան եւ Զինվո-

²⁸ Տե՛ս անդ, էջ 74-75։

²⁹ Տե՛ս «Աշխատանք», Վան, 17.VII.1915։

³⁰ Տե՛ս «Հուշեր Արմենակ Եկարյանի». Կահիրե, 1947, էջ 240։

³¹ Տե՛ս Օ. Մխիթարեան, նշվ. աշխ., էջ 131։

րական մարմնի մյուս անդամների հետ քայլեր ձեռնարկեց նրանց պաշտպանության համար: Ապրիլի 14-ին Արամի հրահանգով այնտեղ ուղարկվեցին Այգեստանում ապաստանած 15000 գաղթականներից առանձնացված սպառազեն զյուղացիները: Նույն օրը Շուշանց-Վարազ գծի հրամանատար նշանակվեց դաշնակցական գործիչ Շիրինը: Ձեռնարկված քայլերի շնորհիվ տեղի ազգաբնակչությունը մինչև ապրիլի 25-ը դիմադրեց թշնամուն եւ հետո միայն հարկադրաբար նահանջեց Այգեստան:

Մարտական գործողությունները Վանում նոր թափ ստացան ապրիլի 19-ին: Իրենց հերոսությամբ աչքի ընկան Ա. Եկարյանն ու Կայծակ Առաքելը, որոնց միջամտության շնորհիվ կործանումից փրկվեց Թաղաքյահրեզի շրջանը: Այդ օրը թուրքերը տվեցին 40-ից ավելի զոհ³²: Թուրքական հարձակումն իր գագաթնակետին հասավ ապրիլի 21-ին: Այգեստանի վրա արձակվեց 500 ռումբ: Արամն այդ օրը տարերքի մեջ էր. նա շարունակ դիրքից դիրք էր անցնում եւ ոգետորում հայ զինվորներին³³: Ուժերի գերագույն լարմամբ հետ մղվեցին բոլոր գրոհները: Թշնամուն ոչ մի հաջողություն չբերեց նաեւ ապրիլի 28-ի հարձակումը, որն ուղեկցվում էր ուժգին ռմբակոծությամբ: Հայոց դիմադրությունն այնքան հերոսական ու կազմակերպված էր, որ թուրքական գրոհներից մեկն առաջնորդող գերմանացի մի սպա, կրած անհաջողությունից հուսահատված, հեռացավ Վանից՝ խոստովանելով, թե այդպիսի դիմադրություն չէր սպասում³⁴:

Մայիսի 3-ին հայ ինքնապաշտպանները հետ մղեցին թուրքական վերջին գրոհը: Չկարողանալով կոտրել վանեցիների հերոսական դիմադրությունը եւ տեղեկանալով ռուսական բանակի առաջխաղացման մասին՝ կուսակալը դադարեցրեց քաղաքի պաշարումը եւ նահանջեց Բիթլիսի ուղղությամբ: Վանը հաղթանակեց, հաղթանակեց այն բանի շնորհիվ, որ վանեցիները հանդես եկան միասնաբար, մի կողմ թողեցին բոլոր տեսակի տարածայնությունները, ապավինեցին զենքին եւ վճռականորեն արժանի հակահարված հասցրին ոսոխին:

1915 թ. մայիսի 5-ին ռուսական զորքերի կազմում գործող Արարատյան կամավորական գնդի հեծելազորը դաշնակցական Խեչոյի հրամանատարությամբ մտավ հաղթանակած Վան՝ արժանանալով ցնծալից ընդունելության: Գեներալ Թ. Նազարբեկյանի վկայությամբ՝ նրանց դիմավորեց Արամը՝ իր օգնականների եւ քաղաքի բնակչության հետ³⁵: Հերոսամարտի հաղթանակի առթիվ իր եւ ՀՅԴ հասցեին ասված Խեչոյի գովասանքին ի պատասխան՝ Արամը ազնվորեն նշեց, որ Վանում «կուսակցությունը չէ որ գործ տեսավ, այլ ամբողջ

³² ՏՆՍ ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 76, թ. 5:

³³ Տե՛ս «Հերոսապատում Մեծ Եղեռնի», էջ 78:

³⁴ ՏՆՍ Հ. Բաբբի, նշվ. աշխ., էջ 84:

³⁵ ՏՆՍ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 45:

ժողովուրդը»³⁶: Մայիսի 6-ին Վան հասան կամավորական գնդերի հրամանատարներ Դրոն, Քեռին, Վարդանը, ապա ռուսական բանակի «Բայազետ» զորախմբի հրամանատար զորավար Նիկոլաեի, որին էլ Արամը վանեցիների անունից հանձնեց քաղաքի բանալիները³⁷:

Վանի հաղթական ինքնապաշտպանության շնորհիվ ավելի քան 150 հազար վասպուրականցիներ փրկվեցին կոտորածներից՝ փաստելով, որ թուրք ջարդարարներից ազատվելու միակ ճանապարհը նրանց գինված դիմադրություն ցույց տալն է: Արեւմտահայության գերակշռող մեծամասնությունը, ցավոք, գոհ գնաց թուրքերի կողմից իրականացված ցեղասպանությանը:

1915 թ. մայիսի 7-ին ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության կողմից Արամ Մանուկյանը նշանակվեց Վանի նահանգապետ:

Արամի գլխավորությամբ Վասպուրականի հայությունը ձեռնամուխ եղավ հայրենի նահանգի վերաշինմանը: Ձեռավորվեցին նահանգի վարչական կառույցներն ու կառավարման համակարգը: Հատկանշական է այն փաստը, որ Վանի կառավարությունը ձեռավորելիս Արամը հերթական անգամ դրսևորեց ապակուսակցական մոտեցում՝ նրանում ընդգրկելով բոլոր կարող ուժերին, ինչ կուսակցության էլ նրանք պատկանեին: Եռանդուն աշխատանք ծավալվեց նահանգի անվտանգության ապահովման, քայքայված տնտեսության վերականգնման, գաղթականության խնամքի, օրինականության եւ կարգ ու կանոնի ապահովման եւ այլ խնդիրների լուծման ուղղությամբ:

Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից էր ինքնապաշտպանության ապահովումն ու նահանգից հեռացած քրդերի վերադարձի կանխումը: Քրդական հարձակումներից պաշտպանվելու համար ստեղծվեցին ինքնապաշտպանական խմբեր, որոնք ընդհուպ մինչեւ հուլիսյան գաղթը հաջողությամբ կատարեցին իրենց առջեւ դրված խնդիրը: Քրդերի վերադարձի առնչությամբ առկա էին լուրջ հակասություններ Արամի եւ ռուսական բանակի հրամանատարության միջեւ: Եթե Արամը ամեն կերպ փորձում էր խափանել Հայոց ցեղասպանությանը մասնակցած քրդերի վերադարձը իրենց նախկին բնակավայրեր, ապա ռուսական կողմը նրանց հանդեպ ցուցաբերում էր կարեկցական մոտեցում: Այսպես, ռուսական բանակի հրամանատարությունը 1915 թ. հունիսին թույլատրել էր ռուսական հպատակություն ընդունած քրդերի վերադարձն իրենց նախկին գյուղեր³⁸: Նահանգի հայ բնակչությունից պահանջվում էր չհարձակվել քրդերի վրա, իսկ նահանգապետը համարվում էր պատասխանատու քրդերի կյանքի եւ գույքի ապահովության համար:

Անհանգստացած իր ժողովրդի ճակատագրով՝ Արամը հունիսի 26-ին դիմեց Նիկոլաեին, հունիսի 27-ին՝ Կովկասյան բանակի եւ չորրորդ կորպուսի

³⁶ «Հուշեր Արմենակ Եկարյանի», էջ 233:

³⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 45, ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 44, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 51:

³⁸ Տե՛ս անդ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 42; ֆ. 503, ց. 1, գ. 62, թ. 6:

հրամանատարներին՝ փորձելով կանխել այդ որոշման կենսագործումը: Արամը գտնում էր, որ քրդերին հարկ է դիտել որպես ռազմագերիների՝ դրանից բխող հետեւանքով կամ էլ նրանց մեջ տեսնել սովորական հանցագործների եւ ի հարկին պատժել³⁹: Նա աշխատում էր հրամանատարությանը համոզել, որ քրդերի վերադարձով կխախտվի անդորրը Վանում այն պարզ պատճառով, որ ջարդված եւ կողուպտված հազարավոր հայերի հարազատները չէին կարող անտարբեր մնալ իրենց թշնամիների հանդեպ: Նա իրավացիորեն նշում էր, որ թույլատրել քրդերին վերադառնալ՝ կնշանակի, թույլ տալ նրանց անպատիժ կերպով կողուպտել եւ սպանել հայերին, ինչի պատճառով վերջիններս՝ որպես Թուրքիայում «ռուսական զենքի հաշողության միակ անկեղծ կողմնակիցներ», խորը հիասթափություն կունենան Ռուսաստանի հանդեպ⁴⁰: Իր մտքերն ազդու դարձնելու նպատակով Արամը համարձակորեն նշում էր, որ որոշման գործադրման դեպքում ինքը չի կարող իր վրա պատասխանատվություն վերցնել Վանի շրջանում հանդարտության պահպանության համար եւ հայտնում էր իր բողոք-նկատառումները՝ պահանջելով. 1) չգործադրել հունիսի 22-ի հրամանը, 2) հայոց ջարդերի ու թալանի մասնակից քրդերին ենթարկել պատասխանատվության, 3) զգուշացնել չգրավված տարածքների մահմեդականներին, որ հայոց նկատմամբ ռճրագործությունների մասնակիցները ենթակա են պատասխանատվության⁴¹: Թեեւ նահանգապետի փաստարկները հիմնավոր էին, իսկ նշված հրամանը հակասում էր 1915 թ. գարնանը Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հրապարակած հռչակագրին, որով հայոց ջարդեր իրականացնողները համարվում էին պատասխանատու, Վանի կայսզորի պետը, Արամի անհանգստությունը հասկանալի համարելով հանդերձ, մերժեց հրամանը չեղյալ հայտարարելու նրա պահանջը⁴²:

Արամի եւ կառավարության առանձնահատուկ հոգածության ներքո էր գտնվում նաեւ փախստական ժողովրդի պաշտպանության խնդիրը: Տասնյակ հազարների հասնող թշվառների միակ հույսը հայկական կառավարությունն էր, որն ամեն ինչ անում էր նրանց սովի եւ համաճարակի ճիրաններից փրկելու համար: Համաճարակներից օրական մահանում էր 30-40 մարդ: Շուրջ 15-25 հազար գաղթականների տեղավորելով հիմնականում Ադրասարում եւ Ոստանում՝ կառավարությունն այլ վայրերից սննդամթերք էր հասցնում նրանց: Նահանգապետության միջոցները սակավ էին, եւ Արամը օգնության խնդրանքով դիմեց նախ նահանգի ժողովրդին: Գտնելով, որ սովն ու հիվանդությունները կարող են ավելի մեծ ավերածություններ գործել, քան թուրքական կոտո-

³⁹ ՏՆԱ անդ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 42-44:

⁴⁰ ՏՆԱ անդ. թ. 45-46:

⁴¹ ՏՆԱ անդ, թ. 45-47:

⁴² ՏՆԱ անդ, գ. 5, թ. 176: Ֆ. 503, ց. 1, գ. 62, թ. 8: «Բանքեր Հայաստանի արխիվների», 2007, թ. 1-2, էջ 31-36:

րածները՝ Արամը նշում էր. «Մի՛ մոռնաք որ փոխադարձ օգնությամբ միայն կրնանք պահել մեր ազգային գոյությունը: Եթե մեկը չ'օգնե միսին, մենք կորած ենք. մեկը ամենքին, ամենքը մեկին, հոս է մեր փրկության խարիսխը»: Նահանգապետը կոչ էր անում ժողովրդին աջակցել գավառապետերին, որոնց ինքը հանձնարարել էր հանգանակություն հավաքել սովյալների համար⁴³: 1915 թ. հունիսի 23-ի դրությամբ տեղական միջոցներով հավաքվել էր 10000 փութ ցորեն, որի կեսը, ինչպես նաեւ 8000-10000 ոչխար, ավելի քան 2000 խոշոր եղջերավոր անասուն արդեն իսկ բաժանվել էր ժողովրդին: Սակայն ներքին ռեսուրսները բավարար չէին: Նահանգապետը եւ Վանի շրջանային վարչությունը դիմեցին նաեւ Կովկասի եւ գաղութների աղայությանը՝ խնդրելով արագացնել բժիշկների, դեղորայքի, սննդի եւ երկրագործական մեքենաների առաքումը⁴⁴: Առանձին գրությամբ Արամը խնդրեց նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենյանցի աջակցությունը⁴⁵: Օգնությունն անհրաժեշտ էր ոչ միայն տվյալ պահի, այլեւ ձմռան համար պահուստ կուտակելու համար: Օգնությունը դրսից առաքվեց ժամանակին: Բուժարան-հիվանդանոց ստեղծվեց Վանում, սննդակայարան՝ Արճեշում, բուժարան՝ Ոստանում եւ այլն:

Ծավալված հետետողական միջոցառումների շնորհիվ կյանքը Վան-Վասպուրականում զարթոնք էր ապրում: Ապագայի հանդեպ լավագույն հույսերով տոգորված ժողովուրդը վերականգնում էր ավերված օջախները, կառուցում նորերը, մշակում վարելահողերն ու այգիները, վերաբացում դպրոցները, արհեստանոցներն ու փոերը, շուկան եւ այլն:

Դժբախտաբար, ցեղասպանությունից փրկված վասպուրականցիներին վիճակված չէր երկար ապրել հայրենի օջախներում: Կովկասյան ռուսական բանակի նահանջի հետեւանքով Վան-Վասպուրականի հայությունը հարկադրաբար բռնեց գաղթի ուղին: Արամը, որը ամեն ջանք գործադրեց գաղթը կանխելու համար, սակայն հաջողության չհասավ, նույնպես բռնեց գաղթի ուղին:

Հուլիսյան գաղթից հետո Անդրկովկասում հաստատված Արամ Մանուկյանի ուշադրության կենտրոնում ցեղասպանությունից մազապուրծ արեւմտահայ փախստականների ճակատագիրն էր: 1916 թ. մարտի 2-ին Արամը մասնակցեց Բաքվի Հայոց Ազգային բյուրոյի նիստին, իսկ մայիս ամսին՝ Պետրոգրադում գումարված հայ փախստականների առաջին համագումարին⁴⁶, որտեղ քննության դրվեցին արեւմտահայ փախստականներին նյութական օժանդակություն ցուցաբերելու, նրանց բժշկական, կրթական եւ այլ կարիքները բավարարելու հարցերը: Այդ խնդիրները հաջողությամբ իրականացնելու համար

⁴³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 43, թ. 1, գ. 68, թ. 1:

⁴⁴ Տե՛ս «Մշակ», 1915, հուլիսի 9, թ. 147:

⁴⁵ Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, թ. 2, էջ 137-138:

⁴⁶ Տե՛ս «Աշխատանք», 1916, մայիսի 4, թ. 1, Ս. Վրացեան, Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962, էջ 211:

հարկավոր էր ստեղծել փախստականների գործերը տնօրինող կենտրոնական մարմին, որը կկոորդինացներ մնացյալ բոլոր մարմինների աշխատանքը: Մի շարք պատգամավորների թվում Արամը եւս գտնում էր, որ նոր կառույցի նստավայրը պետք է գտնվեր ժողովրդին հնարավորին չափ մոտ, քանզի այդ ժամանակ այն ավելի լավ կտեսներ նրա կարիքները եւ, բնականաբար, կգործեր առավել արդյունավետ: Համագումարը ցանկալի արդյունքը չտվեց, այդ իսկ պատճառով նոր հավաք գումարելու կարիք առաջացավ: 1916 թ. դեկտեմբերին Արամը, ֆիդայապետ Անդրանիկը եւ Ա. Դարբինյանը հանդես եկան արեւմտահայերի համագումար հրավիրելու նախաձեռնությամբ, սակայն ցարական իշխանություններն արգելեցին: Հայ գործիչները չփառվեցին, եւ 1917 թ. Ռուսաստանում տեղին ունեցած փետրվարյան հեղափոխությունից հետո կենսագործեցին իրենց ծրագիրը: 1917 թ. մայիսի 2-11-ը Երեսնում գումարվեց արեւմտահայերի առաջին համագումարը, որն ստեղծեց արեւմտահայության կյանքը ղեկավարող մարմիններ: Արամ Մանուկյանն անմիջական մասնակցություն ունեցավ ռուսական գործերի կողմից գրավված Արեւմտահայաստանի նահանգների վերաշինությանը, ինչի արդյունքում կարճ ժամանակում տասնյակ հազարավոր արեւմտահայեր վերադարձան իրենց օջախներ:

1915-1916 թթ. թուրքերի գործած ոճիրն արդարացնելու նպատակով թուրք կեղծարարները բազմաթիվ հորինվածքների հետ միասին դրա պատճառ են համարում նաեւ «հայկական ապստամբությունները»՝ այդպիսին որակելով առաջին հերթին Վանի ինքնապաշտպանությունը:

1913-1916 թթ. Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն, անդրադառնալով Վանի ապրիլյան իրադարձություններին, մերժել է այն ապստամբություն որակելու եւ դրանով իրենց հետագա ոճիրներն արդարացնելու թուրք գործիչների փորձը՝ գրելով, որ «...այդ համբաւաւոր «յեղափոխութիւնը» (Վանի ինքնապաշտպանությունը-Ա.Ա.) ուրիշ բան չէր, բայց եթէ Հայերու դիմադրութիւնը՝ միտքերնին դրած ըլլալով պաշտպանել իրենց կիներուն պատիւը եւ իրենց կեանքը»⁴⁷:

Վանի ապրիլյան անցքերը հայոց օրինական ինքնապաշտպանության դրսեւորում են գնահատել, իսկ այն ապստամբություն որակելը անհեթեթություն համարել բազմաթիվ օտարազգի եւ հայ հեղինակ-ժամանակակիցներ ու պետական գործիչներ:

Այսպիսով՝ Հայոց մեծ եղեռնի տարիներին հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ Արամ Մանուկյանը գտնվում էր թուրք շարդարարների դեմ պայքարի առաջավոր գծում եւ ամեն ջանք գործադրում իր ժողովրդի անվտանգությունն ապահովելու համար: Ահավոր սարսափի տա-

⁴⁷ «Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը եւ հայկական եղեռնի գաղտնիքներ», էջ 249:

րիներին նա աչքի ընկավ մեծագույն պատասխանատվությամբ իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Գործակցելով հասարակական-քաղաքական բոլոր ուժերի հետ՝ Արամ Մանուկյանը կարողացավ կազմակերպել հայության միասնական պայքարը թուրք ոճրագործների դեմ՝ հետագա սերունդների համար հաստատագրելով այն իրողությունը, որ ողբերգություններից խուսափելու եւ ազգային ձգտումներին հասնելու միակ ուղին համագգային միասնությունն է:

РЕЗИОМЕ

Армянский народ в годы Первой мировой войны подвергся серьезным испытаниям. Младотурецкое правительство Османской империи, продолжив националистическую политику монархии по отношению к нетурецким народам, по заранее запланированной программе истребило в 1915 г. около полутора миллиона западных армян с целью освоить их исконные земли и навсегда решить Армянский вопрос. Арам Манукян (1879–1919) всячески стремился уберечь армян Вана от широкомасштабных погромов турок. В апреле 1915 г., он в сотрудничестве с другими политическими силами, организовал самооборону Вана, благодаря чего армяне Вана в основном спаслись от резни.

SUMMARY

During the First World War Armenian people underwent terrible ordeals. The government of Ottoman Empire (The Young Turks) going on with their nationalistic policy of monarchy with respect to non-Turkish people, according to a pre-arranged program, annihilated about 1,5 million Eastern Armenians to master their native lands and to solve the Armenian problem once and for all. During World War I Aram Manukian (1879–1919) struggled a lot to keep the Armenians of Van from massacres. In the April of 1915 cooperating with other political forces he organized the self-defence of Van. Thanks to that the Armenians of Van mainly were saved from slaughter.



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ

**ԹՈՒՐԲ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ՄԵՐԺՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (1945-1948 ԹԹ.)**

1945 թ. հուլիսի 16-ի՝ Մեծ Բրիտանիայի եւ ԽՍՀՄ ԱԳ նախարարներ Ա. Իդենի եւ Վ. Մոլոտովի հանդիպմանը, որտեղ առաջին անգամ հանգամանակից քննարկվեց նաեւ հայկական տարածքների խնդիրը, կռահելով, որ թուրքերը Իդենին անպայման գլխիվայր շրջված են ներկայացրել հարցը՝ Մոլոտովն ավելորդ չի համարում անդրադառնալ անցյալին. «1921թ. թուրքերն օգտվեցին խորհրդային պետության թուլությունից եւ նրանից խլեցին Խորհրդային Հայաստանի մի մասը: Խորհրդային Միության հայերը իրենց վիրավորված են զգում: Այդ պատճառներից ելնելով էլ խորհրդային կառավարությունը օրինական կերպով բարձրացրեց Խորհրդային Միությանը պատկանած տերիտորիաները վերադարձնելու հարցը»¹:

Մոլոտովի բացատրությունը գնահատելով վտանգահարույց եւ զգալով խորհրդային կողմի վճռականությունը, նաեւ չբացահայտելով իր կառավարության վերաբերմունքը՝ Իդենն ասում է, «որ թուրքերը համաձայն չեն բավարարել Խորհրդային Միության տերիտորիալ պահանջները»²:

Ավելին, Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարարը, դիմելով դիվանագիտական խաղի եւ ներկայանալով իբր խնդրին անտեղյակ մարդ, ասում է. «Անգլիացիները նախկինում երբեք չեն լսել Խորհրդային Միության՝ Թուրքիայից տարածքային պահանջների մասին: Բրիտանական կառավարությունը գիտեր միայն նեղուցների ռեժիմի հարցում խորհրդային առաջարկների մասին...»³:

Շարունակելով նման դիրքորոշումը՝ Մեծ Բրիտանիայի եւ ԱՄՆ-ի պատվիրակությունները 1945 թ. հուլիսի 22-ին ԽՍՀՄ նեղուցների նկատմամբ

¹ «Դաշնակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը», փաստաթղթերի ժողովածու, Երևան, 1989, էջ 44:

² Անդ, էջ 45:

³ “Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, 1941-1945”, том 6, Москва., 1980, էջ 40:

պահանջը, այն է՝ նեղուցները վերահսկվեն ԽՍՀՄ-ի եւ Թուրքիայի կողմից, չեն ընդունում, եւ նույն թվականի հուլիսի 28-ին Մեծ Բրիտանիայի պատվիրակությունը հայտարարում է, որ խորհրդակցության ժամանակ վերջնական որոշում չի կայացվել⁴:

Հայտարարությանը հետեւում է ԽՍՀՄ նոր փորձը, ինչով խորհրդային պատվիրակությունը ապացուցում էր, որ նեղուցների մասին համաձայնագիրը չի համապատասխանում ժամանակակից պայմաններին, եւ առաջարկում է հարցը դարձնել «Երեք կառավարությունների եւ թուրքական կառավարության միջեւ» բանակցությունների առանցք⁵:

Ի վերջո, 1945 թ. հուլիսի 31-ին Մեծ Բրիտանիայի եւ ԱՄՆ պատվիրակություններն առաջարկում են, որ հիշյալ համաձայնագիրը (խոսքը նեղուցների վերաբերյալ ԽՍՀՄ-Թուրքիա կոնվենցիայի մասին է - Հ. Զ.) պետք է վերանայվի, քանզի այն պետք է համապատասխանեցվի «ներկա ժամանակի պայմաններին», հաջորդ քայլով՝ «անմիջական բանակցություններ սկսվեն յուրաքանչյուր երեք կառավարությունների եւ թուրքական կառավարության միջեւ»⁶:

1946 թ. հունվարի 2-ին ԱՄՆ պետքարտուղար Զեյմս Բիրնսը, Թուրքիայում ԱՄՆ դեսպան Էդվին Վիլսոնին տեղեկացնելով 1945 թ. դեկտեմբերի 16-20 կայացած՝ Մոսկվայի ԱԳ նախարարների խորհրդաժողովի մասին, առաջարկում է. «Եթե ցանկանում եք, կարող եք թուրքական կառավարությանը հայտնել, որ Մոսկվայում Թուրքիայի հետ կապված ոչ մի հարց չի քննարկվել: Հնարավոր է՝ լավ կլինի, եթե Դուք չհիշատակեք Բեվինի եւ Մոլոտովի գրույցի մասին, քանի որ Մեծ Բրիտանիայի դեսպանը իր կառավարության անունից թուրքերեն համապատասխան տեղեկություններ կներկայացնի»⁷:

ԱՄՆ-Մեծ Բրիտանիա-Թուրքիա համագործակցությունը այնքան ակնառու էր, այնքան ցայտուն, որ կողմերը, չգոշանալով անգամ զաղտնագերծումից, բացահայտ արտահայտում էին իրենց տեսակետերը: Այդպիսի բազմաթիվ փաստերից մեկը Թուրքիայում ԱՄՆ դեսպան Էդվին Վիլսոնի եւ Թուրքիայի ԱԳ նախարար Ֆերիդան Զեմալ Էրկինի հանդիպումն էր, ինչի առթիվ դեսպանը հեռագրով տեղեկացնում է իր երկրի պետքարտուղար Զեյմս Բիրնսին⁸:

Թուրքիային արդեն հաջողվել էր ԱՄՆ-ին եւ Մեծ Բրիտանիային ներքաշել խնդրի քննարկման մեջ ու համարձակորեն ներկայացնել իր գերակա

⁴ Տե՛ս անդ, էջ 407:

⁵ Տե՛ս անդ, էջ 408:

⁶ Անդ, էջ 439:

⁷ C. Akalin Soğuk avas ABD-Türkiye-1. Oyleyler Belgeler 1945-1952, Istanbul, 2007, էջ 62:

⁸ Տե՛ս անդ:

շահերը՝ չխորշելով անգամ ահաբեկչական արտահայտություններից: Հիշյալ հանդիպման ժամանակ Թուրքիայի ԱԳ նախարարը, փորձելով նոր երանգ հաղորդել շարունակվող քննարկումներին, հայտարարում է. «Անցյալ տարվա մարտից (խոսքը 1945թ. մարտի մասին է - Հ. Զ.), Սովետների Թուրքիայի վրա աճող ճնշումը հասցրել է նրան, որ մեր համբերությունը սպառվել է»⁹:

«Սպառված» համբերության արդյունք էր նաև Թուրքիայի ԱԳ նախարար Հասան Սակի՝ 1946 թ. հունվարի 28-ին Լոնդոնում կայացած՝ Զ. Բիրնսի հետ հանդիպման ժամանակ արտահայտած միտքը, որով հայտնվում էր թուրք ժողովրդի եւ կառավարության՝ իրենց տարածքային ամբողջականությունը պաշտպանելու պատրաստակամությունը:

Քաջատեղյակ լինելով խնդրին՝ Իդենը հայտնում էր, որ հայկական պահանջները միարժվելու են նմանատիպ այլ խնդիրների մեջ եւ չեն ստանալու իրենց լուծումը:

Թեհրանի եւ Յալթայի հանդիպումներից հետո տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխություններն արդեն կանխորոշել էին Պոտսդամի բանակցությունների վերջնական արդյունքը: Հանդիպումը պարզ դիվանագիտական քայլ էր, որով հիշեցվում էր, որ Անգլիան սատար չի կանգնելու ԽՍՀՄ տարածքային պահանջներին, որ արդեն նշմարվող «սառը պատերազմի» քամիները նախկին դաշնակիցներին տանելու էին տարբեր բեռեր:

ԱՄՆ պետքարտուղարի պարտականությունները կատարող, հանձնակատար Զ. Կ. Գրյուին՝ 1945 թ. հունիսի 18-ի գրության մեջ, որտեղ խոսելով բրիտանական զորքերի հավատարմատար (նախարար) Զոն Բալյուլի հետ հանդիպման մասին եւ նրան տեղեկացնելով խորհրդային կառավարության պահանջները՝ գրում է. «Ելնելով անգլո-թուրքական պայմանագրի դրույթներից՝ բրիտանական կառավարությունն առաջարկում է պաշտպանել թուրքական դիրքորոշումները»¹⁰: Ավելին, մտահոգ լինելով այն հարցում, որ ԱՄՆ առայժմ՝ մինչեւ Մեծ եռյակի հանդիպումը, չի բացահայտի իր տեսակետը, բրիտանական կողմը հույս է հայտնում, «որ մենք գոնե մեր որոշ գործողություններով կսատարենք բրիտանական գործողություններին»¹¹:

Համագործակցությունն անկասկած իրականանալու էր, որովհետեւ թե՛ Անգլիան, թե՛ ԱՄՆ իրենց ուրույն տեսակետներն ունեին Թուրքիայի նկատմամբ: Ահավասիկ, մեջբերենք 1945 թ. հունիսի 29-ին ԱՄՆ-ի՝ Թուրքիայի համար մշակված քաղաքականության առավել կարեւոր հատվածներից. «Ծովակալ Բրիստոլի ժամանակներից Միացյալ Նահանգների եւ Թուրքիա-

⁹ Feridun Cemal Erkin, Disisferinde 34 Yil, Anuler-Yerumbar, cilt 1, Ankara, 1987, էջ 70:

¹⁰ «Դաշնակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի դեկլարաների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը», փաստաթղթերի ժողովածու, Երեւան, 1989, էջ 45:

¹¹ Անդ.:

յի միջև հարաբերությունները բարեկամական էին եւ փոխշահավետ: Մենք առանձնապես խնդիրներ չունեինք Թուրքիայի հետ, նորմալ խաղաղ փոխհարաբերությունների մեջ էինք»¹²:

Գրեթե նույն կարծիքն ուներ Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Վիլսոնը. «Մոլոտովի կողմից առաջադրած հարցերը սկզբնական քայլ են այն բազմամասշտաբ կամպանիայի, որը դուրս է գալիս Թուրքիայի սահմաններից:

Կարսը եւ Արդահանը հետ վերադարձնելու պահանջը պետք է լուրջ ընդունվի: Նախկինում ցարական կարգերի ունեցածը վերականգնելու հարցը ներկայիս սովետական կառավարության համար հեղինակության հարց է: Բացի դրանից, այդ տարածաշրջանները կարելու է ռազմավարական նշանակություն ունեն հյուսիսային Իրանին եւ Արեւելյան Անատոլիային մոտենալու տեսանկյունից»¹³:

Առավել հանգամանալից էր դեսպան Վիլսոնի տեղեկատվությունը 1945 թ. հուլիսի 3-ին փոխնախարար Սարաջողլուի հետ հանդիպման մասին. «Երեկ ես հանդիպեցի Սարաջողլու փոխնախարարի հետ: Նա ասաց. «Խուք եւ Բրիտանիան շատ խնդիրներ ունեն: Մենք՝ թուրքերս, միայն մի խնդիր ունենք, բայց մեզ համար դա կյանքի ու մահու հարց է: Եթե Միությունը փորձում է դեմ գնալ մեր անկախությանը, մենք կկռվենք: Դա կարող է անհույս լինել կամ ոչ, բայց մենք ամեն դեպքում կկռվենք»: Հետո նա ասաց. «Խուք եւ Բրիտանիան հոժարակամ փորձում են աշխարհում կարգուկանոն եւ տնտեսական կայունություն վերահաստատել: Միությունը հակառակն է անում: Նրանք ամենուր հանգեցնում են անկարգության եւ կասկածի: Նրանք փորձում են քառս ստեղծել, որից հույս ունեն օգուտ քաղել»¹⁴:

Թուրքիան, զգալով պահի լրջությունը եւ ցուցաբերելով համբերություն, ոչ թե ԽՍՀՄ-ի դեմ պայքարում իր անկարողությունն էր արտահայտում, այլ բացառապես նպատակ ուներ հակամարտության մեջ ներքաշել եւ Անգլիային, եւ ԱՄՆ-ին՝ քաջ գիտակցելով, որ նրանք երբեք թույլ չեն տա ԽՍՀՄ-ի ընդարձակումը դեպի Միջերկրական ծով: Այդ առթիվ հրապարակախոս Յալչինը (նույն ինքը Հուսեյին Զահիդը - Հ. Զ.) գրել է. «Տկար, դողահար Օսմանէան կայսրութիւնը կարողացավ դարերով երկարել իր հոգեվարը, հակառակ եւրոպական ամենէն մեծ ու հզոր պետութեանց ընչաքաղցութեան, ահաւոր թշնամութեանց, կրկնակի յարձակումներին եւ յաղթանակներին: Ինչո՞ւ: Տկարներին պահպանող այդ ոյժը մի փոքր տարագ էր - ուժերի հա-

¹² «Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг., Ереван, 2010, էջ 249-250 (այսուհետ՝ Армения):

¹³ Անդ, էջ 251:

¹⁴ Անդ, էջ 252-253:

ւասարակշռություն»¹⁵: Հավասարակշռությունը պահպանելու ջատագովները միայն Անգլիան կամ ԱՄՆ չէին, այլ նաեւ Ռուսաստանը: Ռուս-թուրքական հակամարտությունը մի ամբողջ դար (ԺԹ. դար) իր վրա էր բեռնել աշխարհի մեծ ու փոքր խնդիրները լուծող տերությունների ուշադրությունը: Առանձնահատուկ հակամարտություն էր ձեւավորվել թուրքական պետության պահպանման համար: Որեւէ մեծ տերություն պատրաստ չէր թուրքական հարցում գնալ զիջումների: Այս փոխհարաբերությունը պահպանվեց երկու աշխարհամարտերի ընթացքում եւ, ի վերջո, հաստատվեց բոլորին ձեռնադրող վիճակը. «Թուրքիան ո՛չ ինձ, եւ ո՛չ քեզ, այլ մեզ բոլորին՝ բաց եւ ազատ»¹⁶: Իսկ թե ինչպես կայացավ այդ «համաձայնությունը», բացահայտում է ամերիկացի վերլուծաբան Վ. Լիպմանը «Կայունության պահ մը հողվածում». «Կրեմլը ընդունեց այն իրողությունը, թե Կարմիր Բանակն ու իր գործակալները՝ Հինգերորդ Զորասիւնը, չեն կարող յառաջանալ դէպի Իրան, Թուրքիա եւ Յունաստան: Կրեմլը կարծում էր, թե կարող էին: Բայց սրանք ետ մղուեցին Միջերկրական ուղարկուած մեր ուժերի կողմից մի քայլ, որ ուղղեց ուժերի կշիռը Կրեմլի իրավապաշտներին միանգամայն հասկանելի լեզուով»¹⁷:

Ամերիկյան վերլուծաբաններից Վ. Շիհանը «Նեղուցների հարցը» հողվածում տալիս է մեկ այլ բացատրություն. «Եթէ պատերազմ ծագի Միացյալ Նահանգների եւ Ռուսիոյ միջեւ՝ ռուսները պիտի գրաւեն նեղուցները մեր առաջին հիլեական ռումբը պայթեցնելուց առաջ: Իսկ եթէ պատերազմ չծագի՝ ո՛ր է վտանգը ռուսական հակակշռից»: Ավելին, վերլուծաբանը կողմ է նեղուցները ԽՍՀՄ-ին հանձնելու գաղափարին՝ «Նեղուցները անխուսափելիորեն - աշխարհագրական դիրքով, բնութեամբ եւ տրամաբանութեամբ - պետք է տրուեն Ռուսիոյ: Սրանով մենք ամենայառաջադէմ քայլը արած կը լինենք ի խնդիր խաղաղութեան»¹⁸: Որոշ ժամանակ անց ԱՄՆ պետքարտուղարը 1945 թ. հոկտեմբերի 10-ին Վաշինգտոնում արտասանած ճառում հայտնում է, որ ԽՍՀՄ-ը, բացի նեղուցներից, պահանջել է «Հայաստանին վերադարձնել ռազմագիտօրեն երկու կարեւոր լեռնաշրջաններ՝ Կարս եւ Արդահան»¹⁹: 1946 թ. փետրվարի 21-ին համայնքների պալատում նույն միտքն է արտահայտում նաեւ Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարարը. «Հակամարտութեան մէջ երկու կէտեր կան,- մեկը Դարդանեւն է, իսկ միւսը երկու նահանգները»²⁰:

¹⁵ «Ազդակ», Բեյրութ, 1940, 18 հուլիսի:

¹⁶ «Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, 1941-1945», том 6, М., 1980, էջ 40:

¹⁷ «Հայրենիք», 1947, 9 հունվարի:

¹⁸ Անդ., 1946, 11 հոկտեմբերի:

¹⁹ Վ. Նավասարդյան, Նեղուցները (Վուսիոր եւ Դարդանեւ). Թրքական ջրուղիները եւ Հայ դատը, Գահիրե, 1947, էջ 287:

²⁰ Անդ., էջ 288:

Նախարարի վկայությունը վերաբերում է 1945 թ. դեկտեմբերի 16-26 Մոսկվայում կայացած երեք տերությունների ԱԳ նախարարների խորհրդակցությանը: Այսինքն՝ ԽՍՀՄ-ը տարածքների հարցը քննարկման է ներկայացել նաև մոսկովյան խորհրդակցության ժամանակ՝ ԽՍՀՄ կառավարության՝ սփյուռքահայության ներգաղթի մասին որոշումն ընդունելուց 14 օր առաջ՝ դեկտեմբերի 2-ին:

Բեվինի ճառի հայերեն թարգմանությունից, որ տպագրել է «Յառաջ» թերթը 1946 թ. հոկտեմբերի 25-ին, պարզվում է, որ «վերջին երեք-չորս տարիների» ԽՍՀՄ-ը բարձրացրել է նեղուցների հարցը, այսինքն՝ 1943-1944թթ.²¹:

Վ. Նավասարդյանի կարծիքով՝ ԽՍՀՄ-ը տարածքային պահանջները ներկայացրել է դեռևս Հայրենական մեծ պատերազմից առաջ. «... այն օրերին, երբ գերման եւ լեհ պատերազմն իսկ սկսում էր (1939թ., սեպտ. 10)»²²:

Հիշեցնենք, որ հողային պահանջները քննարկվել են նաև 1940 թ. Բեռլինում՝ Հիտլեր-Մոլոտով հանդիպման ժամանակ:

Սան Ֆրանցիսկո մեկնած թուրքական պատվիրակության անդամ Ն. Էդիմը վկայում է, որ դեռևս 1939 թ., երբ Սարաջոլին մեկ ամիս գտնվում էր Մոսկվայում, այնտեղ նրանից պահանջում էին նեղուցներում տրամադրել հենակետ եւ վերադարձնել Կարսի ու Արդահանի շրջանները²³:

Նույն փաստը հաստատում է նաև մեկ այլ հեղինակ՝ գրելով. «... Ռուսաստանը ուզում է նեղուցների իրավիճակը փոխել ազդու երաշխիքներ ունենալու համար, ինչպես նաև կցել Թուրքիոյ արեւելեան գաւառները»²⁴:

Թուրքական, «Թասվիր» թերթի հավաստմամբ, դիվանագիտական գործընթացներին զուգահեռ՝ գնալով ուժեղանում էր ԽՍՀՄ-ի ճնշումը եւ, ինչպես նշում է «Նյու Յորք տրիբուն» թերթը, «Թուրքիան ընկերներ է որոնում, այլապես պիտի դառնայ խամաճիկ պետություն Ռուսիոյ ճանկերի մէջ»²⁵:

Այդ որոնումներն «ազդեցիկ» դարձնելու համար Թուրքիան դիմում էր ցանկացած քայլի, այդ թվում նաև տպավորություն ստեղծելով, թե մահու եւ կենաց պայքար կմղի յուրաքանչյուր թիզ հողի համար:

Պայքարելու, արյուն թափելու հայտարարությունները տեղ գտան նաև Զ. Կ. Գրյուի հետ 1945 թ. հուլիսի 7-ին թուրք դեսպանի հանդիպման ժամանակ, երբ վերջինս հայտարարեց՝ «Թուրքիան անմիջապես կսկսի կռուել»²⁶:

²¹ «Յառաջ», 1946, 25 հոկտեմբերի:

²² Վ. Նավասարդյան, նշվ. աշխ., էջ 293:

²³ Անդ, էջ 420:

²⁴ А. Первушин, Тысячелетнее будущее Третьего Рейха, “Секрет”, 20-26 февраля, 2005, թ. 264, էջ 82-83:

²⁵ «Հայրենիք», 1946, 8 հոկտեմբերի:

²⁶ Անդ:

Պարզ էր, որ Թուրքիան, իրոք, պատերազմի մեջ կմտնի: Այս աննախադեպ իրավիճակը կխառներ անգլո-ամերիկյան ծրագրերը, եւ վերջիններս որոշեցին կանխել սկսվող իրադարձությունները: ԱՄՆ նախագահը, հենվելով Իդենի տեղեկությունների վրա, հայտարարում է. «Եթե Թուրքիան ցանկանա պատերազմ հայտարարել, մենք նրան նախապես կասենք, որ այս հարցը քննարկման կառնվի: Նրանք պետք է իմանան այդ փաստի մասին նախքան պատերազմի մեջ մտնելը: Ես համոզված եմ, որ մենք պարտավորված ենք նրանց այդ մասին ասելու... մենք պահպանում ենք պայմանավորվածությունը (խոսքը Թուրքիային տված երաշխիքների մասին է - Հ. Զ.):

Երբ կատարվեն փոփոխությունները, արդյո՞ք Թուրքիային պետք է տալ որոշակի երաշխավորություն այն մասին, որ նրա անկախությունը շինծու չի լինի»²⁷:

Թուրքիան նույնիսկ մտահոգություն էր հայտնում, որ Սան Ֆրանցիսկոյում ձեռք բերված խաղաղության, համագործակցության գաղափարները կոչնչանան: Միակ երաշխիքը, որ կբացառվի պատերազմն ու խաղաղության կորուստը, կախված է ԱՄՆ-ից, որի «ուժեղ հակազդեցությունը» ԽՍՀՄ-ին կստիպի հրաժարվել ուժ գործադրելուց²⁸:

Այս կացությունից դուրս գալու ելք որոնելիս թուրքական դիվանագիտությունն սկսեց առավել տխուր գույներով ներկայացնել այն վիճակը, որ կստեղծվի ԱՄՆ եւ Անգլիայի հետաքրքրությունների առանցք Մերձավոր ու Միջին Արեւելքում, Պարսից ծոցի շրջանում, արաբական երկրներում, Աֆրիկայում²⁹:

Խնդիրը ավելի քան լրջանում էր, եւ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն ուղղորդողները թուրքական կողմին պատասխանեցին, որ թե՛ Տրումենի, թե՛ ԱՄՆ-ի իշխանություններն այն կարծիքին են, որ ԽՍՀՄ-Թուրքիա հակասությունները չեն վերաճի զինված բախման, որ եւ Կարսի, եւ Արդահանի հարցը առիթ չի հանդիսանա նման սպառնալիքի համար³⁰:

ՄԱԿ-ի հիմնադիր ժողովի մասնակից թուրքական պատվիրակության անդամ Նիհադ Էդիմը, «Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցեր» հոդվածում անդրադառնալով անգլո-ամերիկյան քաղաքականությանը, հայտնում է կարեւոր փաստեր. «Խորհրդային Միության յուշագիրէն ետք, Թուրքիա Մ. Նահանգներուն դիմեց եւ հաղորդեց, թէ Ստալինի պահանջներուն ժխտական պատասխանն պիտի տայ. Կրնա՞ք մեզի օգնել»: Միացյալ

²⁷ Foreign Relations of the United States. Diplomatic Papers. The Conference of Berlin (The Potsdam Conference), 1945, vol. 1, Washington, էջ 910:

²⁸ «Հայրենիք», 1946, 8 հոկտեմբերի:

²⁹ Տե՛ս Վ. Նավասարդյան, նշվ. աշխ., էջ 176:

³⁰ Տե՛ս անդ., էջ 241:

Նահանգներու պատասխանը ուշագրաւ կ'ըլլայ. «Պատերազմէն հոգնած ենք, զինուորները արձակում կը պահանջեն, տասը հազար մղոնը կտրելով ձեզի օժանդակութեան հասնիլ անկարելի է. Համաձայնեցէք Խորհրդային Միութեան հետ»: Թուրքիան նույն դիմումը կատարեց նաեւ Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Անյոնի Իսթլին, որուն պատասխանը եղավ. «Ուր որ է՝ բանակին մէջ յեղափոխութիւն պիտի ծագի. Համաձայնեցէք Խորհրդային Միութեան հետ»³¹:

Գնալով խորացող խորհրդա-թուրքական հակամարտութիւնը պահանջում էր վերլուծություն, եւ 1945թ. սեպտեմբերից ԱՄՆ դիվանագիտական համակարգը, ուսումնասիրելով խնդիրը, հանգեց այն եզրակացության, որ ԽՍՀՄ-ի պահանջները, ի վերջո, հասցնելու են նրան, որ Թուրքիան վերածվի խամաճիկային պետության, ինչը կնպաստի ողջ տարածաշրջանում խորհրդային ազդեցության հաստատմանը: Այսինքն՝ ԽՍՀՄ-ը կհասնի նրան, որ Միջերկրական ծովի եւ Պարսից ծոցի շրջանում իսպառ կվերացվի արեւմտյան ազդեցությունը: 1945 թ. հոկտեմբերի վերջին ԱՄՆ ռազմական հետախուզության վերլուծաբանները հանգեցին այն եզրակացության, որ ԽՍՀՄ-ը չի բավարարվի Թուրքիայի թուլացմամբ եւ հենակետի վերածելով Կարսի սարահարթը՝ գործունեության շառավիղները կտարածի դեպի Պարսից ծոց, եւ ստեղծելով իր փափագած անվտանգության գոտին՝ հսկողության տակ կառնի Միջերկրական ծովն ու Մերձավոր Արեւելքը³²: Իսկ դա նշանակում էր, որ ԽՍՀՄ-ը կտիրանա նաեւ տարածաշրջանի (Իրաք, Պարսից ծոց) նավթաբեր շրջաններին՝ իր ազդեցությունը տարածելով նաեւ Սուեզի ջրանցքի շրջանում:

Ամերիկյան վերլուծական միտքը, կտրականապես դեմ էր դուրս գալու ԽՍՀՄ-ի ծրագրին՝ այն համարելով ոչ թե Հայկական հարցի լուծմանն ուղղված քայլ, պահանջ, այլ աշխարհաքաղաքական նոր կարգեր հաստատելու ծրագիր:

Սառը պատերազմի հիմնադիր եւ գաղափարախոս, ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դին Աչեսոնը այդ առթիվ թուրք դեսպանին հավաստիացնում է. «Խորհրդա-թուրքական հարաբերություններում ներկայիս քննարկվող հարցերը դուրս են գալիս Թուրքիայի տարածքից եւ կապվում են աշխարհի խաղաղության եւ անվտանգության խնդիրների հետ, ինչը գտնվում է ԱՄՆ-ի խիստ հետաքրքրության ոլորտում»³³:

³¹ Զ.Սըրրլեան, Հայկական հարցի մասին, Պեյրութ, 1978, էջ 30:

³² Barry Rubin, The Great Powers in Middle East 1941-1947, The Road to the Cold War, London, 1980, էջ 194:

³³ "Foreign Relations of the United States, Diplomatic Papers. The Near East and Africa", 1945, էջ 1288:

Ահա այսպես, ականջալուր լինելով նաեւ Չերչիլի հնչեցրած՝ ԽՍՀՄ քաղաքականությունից բխող տագնապներին՝ ԱՄՆ-ը 1945 թ. կտրուկ փոխեց իր մարտավարությունը, եւ 1945 թ. հուլիսին մշակելով խորհրդա-թուրքական հարաբերությունների վերլուծականը՝ 1946 թ. հունվարից այն դարձրեց իր հակախորհրդային եւ թուրքապաշտպան քաղաքականության առանցքը:

ԱՄՆ քաղաքական կերպարանափոխումն առաջինը նկատեցին թուրքերը, եւ 1946 թ. հունվարի 6-ին մերժեցին Կարսը եւ Արդահանը վերադարձնելու ԽՍՀՄ-ի պահանջը: Այս վճռորոշ քայլը հաճամահունչ էր կամ, ավելի ճիշտ, շարունակություն էր ԱՄՆ -ի նախագահի հայտարարության. «Ես կասկած չունեմ, որ Ռուսաստանը որոշել է ներխուժել Թուրքիա, զավթել Միջերկրական ծով տանող նեղուցները: Ուրիշ պատերազմ կբռնկվի, եթե Ռուսաստանը երկայթե բռնուցքով եւ խիստ լեզվով հակադարձ չստանա: Նրանք խոսում են միայն դիվիզիաների քանակի լեզվով: Ես չեմ մտածում, որ մենք պետք է համաձայնության գնանք: Ես արդեն հոգնել եմ ԽՍՀՄ-ի համար դայակություն անելուց»³⁴:

Անգլո-ամերիկյան հակազդեցությունը, ուղղված լինելով ԽՍՀՄ ծավալապաշտական քաղաքականության դեմ, ուղղակիորեն մերժում էր նաեւ Հայկական հարցը: ԽՍՀՄ-ը, այժմ արդեն դեմ առ դեմ կանգնելով նախկին դաշնակիցներին, իր պահանջներից նահանջելու միտում չունենալով հանդերձ, ձեռք էր բերում նոր դրսեւորում, որը կարելի է բնութագրել որպես համերաշխության քայլ: Այդպիսի վկայություններից էր Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան Վինոգրադովի եւ Թուրքիայի ԱԳ նախարարի տեղակալ Սյումերի միջեւ 1946 թ. փետրվարի 25-ի հանդիպման ժամանակ արտահայտած միտքը. «Հայաստանն ունի դրա (Կարսի եւ Արդահանի - Հ. Զ.) կարիքը, եւ եթե Թուրքիան ընդառաջի այդ հարցում, ավելի քան կփոխհատուցվի»³⁵: Թուրք հեղինակներից մեկն ավելացնում է, որ ԽՍՀՄ դեսպանը ավելի հստակ հայտնել է, որ այդ հողերն անհրաժեշտ են ոչ թե ԽՍՀՄ-ին, այլ Հայաստանին, «քանի որ այն շատ փոքր է տարածությամբ»³⁶:

Թուրքիայի ԱԳ փոխնախարարը, որ տեղյակ էր ԽՍՀՄ քաղաքականության փոփոխությանը, տալիս է բազմանշանակ պատասխան՝ հայտնելով, որ Թուրքիան ո՛չ տարածք կզիջի, ո՛չ էլ ցանկանում է որեւէ տարածք ձեռք բերել: ԽՍՀՄ դեսպանը, նման առաջարկ կատարելով, հայտնում էր իր կառավարության պատրաստակամությունը պաշտպանելու Թուրքիայի՝ Հալեպի շրջանն ու երկաթուղին միացնելու ծրագիրը: Այսինքն՝ դեսպանը Կարսի եւ Արդահա-

³⁴ Harry Truman, Years Trial and Hope, Memories, vol. 2, New York, 1956, էջ 97:

³⁵ Foreign Relations... էջ 817:

³⁶ Sñu Antan Deliocman, Turkclere Karsi Ermeni Komitrcileri, Istanbul, 1973, էջ 307:

նի վերադարձի դեպքում փոխանակում էր առաջարկում, ինչը թույլ եւ անհեռանկար փորձ էր սրված հարաբերությունները մեղմելու հարցում:

Պատմության մեջ հայտնի «Թուրքական ճգնաժամը», սակայն, չէր մեղմանում: Անգլո-ամերիկյան զորակցությունը միայն Թուրքիայի պաշտպանություն չէր նշանակում, այլ դաշնակիցներն իրականացնում էին տարածաշրջանում իրենց հետաքրքրությունները եւ փորձում ԽՍՀՄ-ին ստիպել փոխել իր ծրագրերը: Ահա թե ինչու Տրումենը, իր հուշերում անդրադառնալով այդ հարցին, պատրաստակամություն էր հայտնում տարածաշրջանում բացառել խորհրդային տիրապետության հաստատումը³⁷:

Շարունակելով նախագահի միտքը՝ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Դ. Ալենտնը բացահայտ հայտարարում է, որ ԱՄՆ-ը պարտավոր է իրականացնել Թուրքիային ԽՍՀՄ քաղաքական եւ ռազմական ճնշումից պաշտպանելու քաղաքականություն³⁸: 1946 թ. օգոստոսի 15-ին Վաշինգտոնում գումարվում է խիստ գաղանի խորհրդակցություն, որտեղ քննարկվում են խորհրդա-թուրքական հակամարտության հարցերը եւ կայացվում է համապատասխան որոշում: ԱՄՆ-ի շահերից է բխում այն, որ «խորհրդային Միությանը ուժով կամ ուժի սպառնալիքով» ստիպեն հրաժարվելու «Դարդանելի եւ Թուրքիայի նկատմամբ» ծրագրերից, վարել Թուրքիայի անկախությունը, տարածքային ամբողջականությունը պաշտպանելու քաղաքականություն³⁹:

Նեղուցների հարցում ԱՄՆ-ի դիրքորոշումը պարզորոշ շարադրված էր հրապարակված հուշագրում, որը խոսում էր ոչ միայն Բոսֆորի եւ Դարդանելի մասին, այլեւ մտքեր էր պարունակում ԱՄՆ-ի՝ Թուրքիայում եւ Մերձավոր Արեւելքում վարվելիք քաղաքականության մասին: Հուշագիրը տեղեկացնում էր, որ հովանավորյալ թուրքական կառավարությունը հույս ունի, որ ոչ մի հարց չի բարձրացվի թուրքական նեղուցների վերաբերյալ:

1946 թ. օգոստոսին ԽՍՀՄ-ը եւ ԱՄՆ-ը նոտաներ փոխանակեցին, որին հաջորդեց «Ֆրանկլին Ռուզվելտ» ռազմանավի՝ Միջերկրական ծովում հայտնվելը, եւ ԽՍՀՄ-ը Թուրքիայի նկատմամբ խիստ քաղաքականությունից հետդարձ կատարեց, եւ որպեսզի անգլո-ամերիկյան կողմը թույլ չտա Արեւմտյան Եւրոպայի նկատմամբ ԽՍՀՄ քաղաքականության իրականացումը, Մերձավոր ու Միջին Արեւելքի վրա կենտրոնացրեց իր ուշադրությունը, որի առանցքային պահանջները ամփոփվեցին 1946 թ. հոկտեմբերի 21-ին պետդեպարտամենտի կողմից մշակված երեք էջանոց ծրագրում, որտեղ կարելի էր տեսնել Թուրքիայի դիրքը՝ ԱՄՆ-ը «պետք է շարունակի իր հաստատուն դի-

³⁷ Տե՛ս **Harry Truman**, նշված աշխ., էջ 97:

³⁸ Տե՛ս **Larson Deborah Weleb**, *Origins of Containment*, Princeton, New Jersey, 1985, էջ 280:

³⁹ Տե՛ս անդ, էջ 328-329:

մաղրությունը, որն արդեն դրսևորել է նեղուցների հարցում: Ինչ իրավիճակ էլ որ ստեղծվի, ԱՄՆ-ն պետք է հաստատուն դիրքորոշում ունենա նաեւ մյուս խնդիրների նկատմամբ, ինչպիսին է Թուրքիայի արեւելքում տարածքներ ստանալու ԽՍՀՄ-ի ցանկությունը: ԱՄՆ-ի վերաբերմունքը այս հարցերի նկատմամբ երբեւէ չպետք է կասկած հարուցի Թուրքիայում, ԽՍՀՄ-ում եւ ամբողջ աշխարհում»⁴⁰:

1946 թ. օգոստոս-հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում ԱՄՆ-ը վերջնական տեսքի բերեց ԽՍՀՄ-ի եւ Թուրքիայի նկատմամբ իր դիրքորոշումները եւ վճռականորեն հայտարարեց, որ դեմ է Կարսի եւ Արդահանի պահանջին, որովհետեւ այդ տարածքները ԽՍՀՄ-ը կօգտագործի հեռուն գնացող իր ծրագրերը իրականացնելու համար: 1945-1946 թթ. դիվանագիտական հակամարտությունների հիմնական նշանակետը ԽՍՀՄ-ի՝ դեպի Մերձավոր ու Միջին Արեւելքում հիմնավորվելու քաղաքականությունը չեզոքացնելն էր, որը գլխավորում էր ԱՄՆ-ը: Միջազգային քաղաքականության մեջ տեղի ունեցավ խոշոր տեղաշարժ. հակախորհրդային քաղաքականության ղեկավարությունը տեղափոխվեց ԱՄՆ, եւ սկսվեց գաղափարական պայքարը կոմունիզմի դեմ:

Հաջորդ նշանակալի իրադարձությունը կապված էր «Տրումենի դոկտրինայի» հետ, որով ի պաշտպանություն Թուրքիայի եւ ի հակակշիռ ԽՍՀՄ տարածքային պահանջների, Հայկական հարցը տեղակայվեց, կցվեց նեղուցների, Մերձավոր Արեւելքի խնդիրներին, հակախորհրդային, հակակոմունիստական, այժմ արդեն հակառուսական խնդիրներին՝ նրա վրա դրոշմելով «անլուծելի» կնիքը:

Այս տեսակետը հաստատվեց կառավարությունների ղեկավարների հուլիսի 17-ի խորհրդակցության բացման նիստից հետո, երբ մինչեւ 1945 թ. հուլիսի 22-ը սկսվեց վեցերորդ նիստը, որտեղ քննության առնվեց նաեւ Հայկական տարածքների հարցը:

Նախագահող Հ. Տրումենը տեղեկացնում է, որ հաջորդ հարցը Մեծովյան նեղուցների խնդիրն է, եւ ձայնը տալիս է Ու. Չերչիլին: Վերջինս իր ավանդական երկարաշունչ նախաբանից հետո հայտնում է, որ ինքը տեղյակ է թե՛ Մոլոտովի ու թուրք դեսպանի հանդիպման, թե՛ նեղուցների ու Թուրքիայի արեւելյան սահմանների փոփոխման մասին, ուստի ցանկանում է իմանալ, թե «ինչպիսին է խորհրդային կառավարության դիրքը այս հարցի վերաբերյալ»⁴¹, եւ հիշեցնում. «Միաժամանակ ես ինձ թույլ եմ տալիս գեներալիսիմո-

⁴⁰ Անդ, էջ 896:

⁴¹ Армения..., էջ 167:

սի ուշադրությունը հրավիրել այն բանի կարեւորության վրա, որ Թուրքիային չվախեցնի»⁴²:

Արդեն իսկ պարզ էր, որ Անգլիան, ԱՄՆ-ի համաձայնությամբ, պաշտպանության տակ էր առնում Թուրքիային: Նման դիրքորոշումը, բնական է, որ ենթադրելու էր ԽՍՀՄ քաղաքականության փոփոխություն, բայց ոչ առաջ քաշված հարցից հրաժարում, այսինքն՝ քննարկում հենց քննարկման համար, քանզի դաշնակիցներն արդեն բացահայտ հայտնում էին, որ դեմ են խորհրդային կողմի պահանջներին:

Թերեւս նման իրադրության պատճառով էր, որ Ստալինը հրաժարվեց խոսքից՝ առաջարկելով ձայնը տալ Մոլոտովին: Գրեթե կրկնելով Իդենի հետ հանդիպման ժամանակ արված բացատրությունները՝ Մոլոտովն այս անգամ կատարում է նորամուծություն. «Դաշնակցային պայմանագիր կնքել նշանակում է, որ մենք պետք է համատեղ պաշտպանենք մեր սահմանները. ԽՍՀՄ-ը կպաշտպանի ոչ միայն իր սահմանը, այլև թուրքականը, իսկ Թուրքիան՝ ոչ միայն իր սահմանը, այլև խորհրդային սահմանը: Սակայն որոշ մասերում ԽՍՀՄ-ի եւ Թուրքիայի միջեւ եղած սահմանը մենք համարում ենք անարդարացի: **Իսկապես, Խորհրդային Հայաստանից եւ Խորհրդային Վրաստանից Թուրքիան տերիտորիա պոկեց. դա Կարսի, Արտվինի ու Արդահանի մարզերի հայտնի տերիտորիան է** (ընդգծումը՝ Հ. Զ.): Ահա Թուրքիայի պոկած տերիտորիայի քարտեզը (հանձնում է քարտեզը): Այդ պատճառով էլ ես հայտարարեցի, դաշնակցային պայմանագիր կնքելու համար պետք է կարգավորել Վրաստանից եւ Հայաստանից պոկած տերիտորիայի հարցը՝ այդ տերիտորիան վերադարձնել նրանց»⁴³:

Մոլոտովը նախորդ բանակցությունների եւ հանդիպումների ժամանակ չէր արձարծել Վրաստանի խնդիրը: Հարցը ունի քառակի պատասխան: Նախ՝ ԽՍՀՄ-ը դեմ էր Հայկական հարցի բարձրացմանը եւ այն օգտագործում էր նեղուցների հարցում թուրքերի վրա ճնշում գործադրելու համար: Երկրորդ՝ թերեւս խորհրդային կողմը արդեն հանգել էր վերջնական եզրակացության, որ խնդիրը ընդհանրապես անլուծելի է: Երրորդ՝ խորհրդային կողմը, թերեւս նկատի ունենալով, որ հայկական հողերի հարցը հնարավոր է, որ լուծվի, մտադրվել էր բաժին հանել նաեւ Վրաստանին: Չորրորդ՝ մեջտեղ բերելով Վրացական խնդիրը՝ խորհրդային կողմը դրանով ցանկանում էր ձախողել նաեւ Հայկական հարցը:

⁴² Անդ:

⁴³ Անդ., էջ 168:

РЕЗЮМЕ

История Второй мировой войны констатировала также такие проблемы, связанные с судьбой маленьких народов, которые были результатом проводимой захватнической политики великих держав. Естественно, что вовлеченные в войну те же государства сейчас уже решали новые проблемы, программы достижения мирового господства.

И в этот раз Армянский вопрос был вовлечен в ряд требующих решения проблем и получил название “Армянские территориальные требования”.

Дискуссии по проблеме начались еще в 1939-1941гг. во время советско-германских переговоров и остались безрезультатными.

В переломный этап войны, который начался со Сталинградской битвы и после открытия второго фронта, советская сторона, вместе с победным входом в Западную Европу советской армии, выдвинула также проблемы проливов и армянских территорий, которые проходили без подготовки и анализа и были неожиданными для союзников и Турции, которые щепетильно относились к вопросу, разработали отказ от требований, программу для нейтрализации. США, которые стремились к достижению мирового господства, осуществлению политики по установлению однополюсного мирового порядка, превратился в ключевую страну антисоветских сил и защищая Турцию, провалил программы СССР, провалив в очередной раз и Армянский вопрос.

Приведенные в статье документы еще раз убеждают, что необдуманная политика СССР настроила против себя бывших союзников, которые, хотя чувствовали необходимость решения Армянского вопроса, однако осуществить законные требования армянского народа означало способствовать осуществлению экспансионистских программ.

SUMMARY

The history of the Second World War also stated such problems associated with the fate of small nations, which were the result of the aggressive policy pursued by the great powers. Naturally, that now the states which have been involved in the war, had to meet the new challenges of the program to achieve the world domination.

At this time, the Armenian question was involved in a number of problem-solving and was called “Armenian territorial demands.”

The discussions on the issue began in 1939-1941 during the Soviet-German negotiations and were remained inconclusive.

At the turning point of the war, which began with the Battle of Stalingrad and after the opening of the second front, the Soviet Union, together with a triumphant entrance of the Soviet Army into the Western Europe, also submitted the problem of spillage and Armenian territories that were held without the preparation and analysis and were unexpected for the Allies and Turkey which were sensitive for the problem, developing the renunciation and the program for neutralization. The USA, which sought to achieve the world domination and the implementation of policies for the unipolar world order establishing, became a key country of anti-Soviet forces and while protecting Turkey, they failed the USSR's program as well as failing once again the Armenian question.

The above article documents convinced again that the reckless policy of the USSR alienated the former allies who, though they felt the need to resolve the Armenian question, refused to implement the legitimate demands of the Armenian people as it was meant promoting the implementation of the expansionist programs.



ՀԱՂԱՌՐԳԻՈՒՄՆԵՐ

ՕՎՍԱՆՆԱ ՔԵՇԻՇՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿԻ ՄԻ ՄԱՆՐԱՆԿԱՐ Ս. ԴԻՈՆԻՍՈՍԻ ՎԱՆՔԻ ՀՈՒՆԱՐԵՆ ՁԵՌԱԳՐՈՒՄ

Հունաստանի Աթոս լեռան Ս. Դիոնիսոսի վանքի մատենադարանի հիմնարեն Հ^մ 27 ձեռագրում (Նոր Կտակարան, էջ 147բ) տեսնում ենք Ս. Ղուկաս ավետարանչի պատկերով մի մանրանկար, որը ոճական, պատկերագրական եւ հորինվածքային ընդհանրություններ ունի կիլիկյան մանրանկարիչ Սարգիս Պիծակի արվեստի հետ (նկ. 1)¹:

Հունարեն ձեռագիրը բաղկացած է չորս Ավետարաններից, որտեղ Մատթեոսի հատվածը կորել է, Առաքյալների թղթերից, Պետրոսի թղթերից եւ «Հանգիստ Հովհաննոս» գրքից: Այս ամենին հաջորդում են հունարեն գրությունները: Կազմի կաշեպատ տախտակի վրա «Խաչելության» տեսարանն է: Կան լավ պահպանված մանրանկարներ, որոնցից աչքի են ընկնում Ս. Ղուկաս եւ Ս. Հովհաննես ավետարանիչների պատկերները: Հունարեն այդ ձեռագիրը թվագրվում է ԺԳ. դարով²: Սակայն Ս. Ղուկասի պատկերը, մեր կարծիքով, ԺԴ. դարի գործ է, քանի որ հենց այդ ժամանակաշրջանում է ստեղծագործել Սարգիս Պիծակը, ում վրձնին էլ, ամենայն հավանականությամբ, պատկանում է մանրանկարը: Հունարեն ձեռագրի հայկական այս մանրանկարի մասին նշում է նաեւ Լ. Չուգասզյանը՝ Վ. Ղազարյանի՝ Սարգիս Պիծակին նվիրված գրքի գրախոսականում³: Ստորեւ փորձենք առավել հանգամանորեն քննել նորահայտ այս մանրանկարը:

¹ Տե՛ս «The Treasures of Mount Athos», S. M. Pelekandis - P. C. Christou, Ch. Tsioumis - S. N. Kadas, vol. I, Athens, 1974, էջ 80:

² Տե՛ս անդ, էջ 406:

³ Տե՛ս Լ. Չուգասզյան, Վ. Ղազարյան. «Սարգիս Պիծակ» (գրախոսություն). «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1981, թ. 6, էջ 115-118:

Սարգիս Պիծակի նկարագարում ոչ բոլոր Ավետարաններն ունեն չորս ավետարանիչների պատկերները⁴: Դրանց մի մասը կորել է կամ ոչնչացվել: Կարող է պատահել նաեւ, որ այդ թերթերը պոկվել են եւ պահվում են մեկ այլ ձեռագրի թերթերի հետ կարված, ինչպես երբեմն պատահում է. հնարավոր է, որ նման ճակատագրի արժանացած լինի նաեւ այս մանրանկարը:

Ս. Դիոնիսոսի վանքի մանրանկարում (չափերը՝ 16,5x11 սմ) Ս. Ղուկաս ավետարանիչը պատկերված է՝ նստած հյուսածո զարդերով աթոռակին, որի վրա դրված է կարմիր բարձ: Երեք քառորդ չափով թեք դիրքով է, աջ ձեռքով պահել է գիրքը, ձախ ձեռքը դրել է կզակին՝ ցուցամատը շրթունքների մոտ՝ խորհող դիրքով: Այդ ժեստը բնորոշ է Ս. Մարկոսին, սակայն Ժ. դարից սկսած՝ Բյուզանդիայում այդպես էին պատկերում նաեւ Ս. Ղուկասին: Հագել է երկնագույն ներքնաշապիկ, որի թելքերը փոքր-ինչ բարձրացված են վեր: Ձախ ուսին գցել է մանուշակագույն պարեգոտ: Նկարիչը մանրամասն մշակել է ստացել է հագուստի ծալքերը: Ավետարանի դեմքը երկարավուն է, աչքերը՝ խոշոր, նշաձեւ, քիթը՝ ուղիղ: Կարճ թուխ մազերով է, կլոր մորուքով, գլխավերելում սավիրած է՝ տոնգուրով, լուսապսակով: Կերպարին բնորոշ է պիծակյան ժպտացող, բարի եւ ջերմ մանրանկարների շունչը:

Սարգիս Պիծակի մանրանկարներում յուրաքանչյուր ավետարանիչ ունի իր հատակ, կանոնական պատկերագրությունը, որը կրկնվում է ձեռագրից ձեռագիր⁵: Օրինակ՝ Ս. Մատթեոսը Սարգիս Պիծակի գործերում պատկերվում է ճերմակահեր ծերունու տեսքով, սրածայր մորուքով, Ս. Մարկոսը՝ միջահասակ, մուգ եւ կլոր մորուքով, Ս. Ղուկասը՝ թուխ, կլոր մորուքով, իսկ Ս. Հովհաննեսը ճերմակամորուս ծերունի է՝ ճաղատ գլխով:

Ավետարանիչների հագուստը պարեգոտ եւ ներքնաշապիկ է: Նրանք հիմնականում նստած են շքեղ գահին կամ թիկնակով աթոռին՝ կարմիր բարձի վրա: Ոտքերի տակ եւս բարձ է դրվում: Սուրբ Գիրքը պատկերվում է ավետարանիչների ծնկներին դրված՝ պատկերագրություն, որ հայտնի է դեռեւս Ժ. դարի ձեռագրերից⁶: Սարգիս Պիծակը գիրքը դնում է գրակալի վրա, որը տարբեր ձևերով է ներկայացվում: Մեծ մասամբ գրակալը ձկան տեսքով է պատկերվում, որը տարածված էր նաեւ բյուզանդական ձեռագրերում: Նման գրակալներ տեսնում ենք Ս. Մատթեոսի եւ Ս. Ղուկասի (ՄՄ 5786, 9450 եւ 7631), հազվադեպ՝ Ս. Մարկոսի պատկերներում, իսկ մնացյալ դեպքերում լինում է ոլորապտույտ փայտ:

⁴ Տե՛ս Վ. Ղազարյան, Սարգիս Պիծակ, Երևան, 1980, էջ 39:

⁵ Տե՛ս ա՛նդ, էջ 39-40:

⁶ Տե՛ս Վ. Ղազարյան, Սյուժետային մանրանկարչությունը Կիլիկիայում, Երևան, 1984, էջ 84:

Սարգիս Պիծակի ձեռագրերում Ս. Ղուկասը պատկերվում է երեք քառորդ չափով թեք դիրքով նստած գահավորակին՝ պարեգոտ եւ ներքնաշապիկ հագած, աջ ձեռքով գրելիս, իսկ ձախով բռնած ծնկներին դրված գիրքը, ոտքերը՝ բարձի վրա, ինչպես՝ Մատենադարանի 1335 թ. (Հ^մ 6504), 1336 թ. (Հ^մ 5786), 1353 թ. (Հ^մ 6795) եւ 1352 թ. (Հ^մ 7631) Ավետարաններում, նաեւ՝ 1312 թ. Երուսաղեմի ձեռագրում (Հ^մ 1949, էջ 183բ): Հետաքրքիր է 1336 թ. «Արքունական Ավետարանում» (ՄՄ 5786) եւ 1338 թ. Աստվածաշնչում (ՄՄ 2627) հանդիպող Ս. Ղուկասի հագուստը, որը կարմիր է՝ ոսկեգույն կետանախշերով: Նույնը տեսնում ենք նաեւ Վենետիկի Ս. Ղազարի 1331 թ. (Հ^մ 16) ձեռագրի՝ Ղուկաս ավետարանչի մանրանկարում (նկ. 2): Ավետարանիչը պատկերվում է միջին տարիքի տղամարդու տեսքով, թուխ եւ կլորավուն մորուքով, որը, ի տարբերություն Ս. Մարկոսի մորուքի, Սարգիս Պիծակի ձեռագրերում հիմնականում երկծայր է պատկերվում: Գլուխը միշտ սավրած է՝ հրեական տոնգուրով, որ հաճախ ենք հանդիպում Սարգիս Պիծակի արվեստում: Տոնգուրը, որ հայտնի է դեռեւս Մլքե թագուհու Թ. դարի ավետարանից, ԺԳ. դարի ձեռագրերից (ՄՄ 2629, 5784) եւ ԺԴ. դ. ՄՄ 9450 Ավետարանից, ինչպես եւ ընդունված էր Բյուզանդիայում, հատուկ է միայն Ս. Ղուկասին⁷: Բայց ՄՄ 242 ձեռագրում (1317-1318 թթ. Նոր Կտակարան Կիպրոսից, որի մանրանկարները եւս հարում են Սարգիս Պիծակի արվեստին) եւ պիծակյան մի շարք այլ ձեռագրերում տոնգուր ունեն բոլոր ավետարանիչները՝ բացի Ս. Հովհաննեսից, ինչպես նաեւ 1336 թ. «Արքունական Ավետարանում» պատկերված Ս. Մարկոսից⁸:

Ս. Ղուկասի առջեւ պատկերվում է սեղանը՝ գրակալով եւ գրքով: Գրակալը «Արքունական ավետարանում» (1336 թ., ՄՄ 5786, 169բ) ոլորանման փայտ է, 1338 թ. (ՄՄ 2627, 445բ) Աստվածաշնչում բացակայում է ընդհանրապես, 1335 թ. (ՄՄ 6504, 17բ) Ավետարանում ձկան տեսքով է, որ բերանով ամրացված է սեղանին, իսկ պոչի վրա գիրքն է: 1353 թ. «Բժշկության Ավետարանում» (ՄՄ 6795, 62բ), չնայած էջի վատ պահպանվելուն, նկատելի են ոլորանման գրակալը եւ ոսկե կետանախշերով թիկնոցը⁹:

⁷ Անդ:

⁸ Տե՛ս անդ:

⁹ Ներշնչանքի աղբյուրը գրեթե միշտ կրկնվում է, սակայն կան նաեւ տարբերություններ: «Արքունական ավետարանում»՝ Ս. Ղուկասի նկարի աջ անկյունում, երկնքի պատկերն է, որից իջնում է Սուրբ Հոգին՝ աղավաղ տեսքով, իսկ ձախ անկյունում Աստծո Աջն է՝ օրհնող ժեստով: «Բժշկության ավետարանում»՝ վերեւում, Աստծո լույսն է՝ ճառագայթների տեսքով, 1335 թ. Ավետարանում՝ Աստծո Աջը, իսկ 1338 թ. Աստվածաշնչում, քանի որ պատկերը կրճատված է եւ լոկ պատկերված է նստած ավետարանիչը, ներշնչանքի աղբյուրը բացակայում է:

Մեր մանրանկարում ավետարանչի դիմագծերը հիշեցնում են Սարգիս Պիծակի ինքնանկարները՝ մեզ հայտնի նրա ձեռագրերից (1331 թ. Վենետիկի Ս. Ղազար վանքի Հ^մ 16 Ավետարան (նկ. 3), 1338 թ. ՄՄ 2627 Աստվածաշունչ, 1343 թ. Դուբլինի Չեսթեր Բիթիի գրադարանի Հ^մ 614 Ավետարան, նկ. 4)¹⁰:

Ընդ որում, նշենք, որ Սարգիս Պիծակը թողել է ոչ թե երեք դիմանկար, այլ՝ չորս: Նա իրեն նկարել է 1331 թ. Վենետիկի Հ^մ 16 ձեռագրի 193բ էջի Ս. Ղուկասի մանրանկարում եւս՝ ավետարանչի առջեւ ծնկի իջած¹¹ (նկ. 2): Ինքնանկարների այս առատությունը բացառիկ է ոչ միայն հայ մանրանկարչության, այլև միջնադարյան արվեստում առհասարակ:

Սարգիս Պիծակի թողած վերոնշյալ ինքնանկարների հետ դիմագծերի հստակ նմանությունը եւս մեկ անգամ ցույց է տալիս, որ հունական ձեռագրի այս նկարի մանրանկարիչը Սարգիս Պիծակն է:

Մանրանկարում օգտագործված են Սարգիս Պիծակի արվեստին բնորոշ գույները՝ կարմիր, կապույտ, սև եւ դեղին: Ավետարանչի առջեւ նախազարդ սեղանն է՝ գրելու պարագաներով, իսկ դրա վրա դրված է եզի տեսքով գրակալը, որը հազվադեպ հանդիպող երեւույթ է: Ս. Ղուկասի պատկերում եզի (ցլի) առկայությունը տրամաբանական է, քանի որ վերջինս նրա խորհրդանիշն է, բայց գրակալի տեսքով գրեթե չենք հանդիպում: Կենդանին կանգնած է ուղղահայաց դիրքով՝ հետևի ոտքերի վրա: Ունի խոշոր ացքեր եւ ամբողջապես հիշեցնում է Սարգիս Պիծակի վրձնած կենդանիների պատկերները: Եզի գլխով գրակալի վրա ամրացված է գիրքը:

Սեղանից վերեւ բարձրանում են երկու սյուներ, որոնց վրա խոյակն է, իսկ վերջինիս վրա՝ հայերեն գրություն, որը մաշվածության պատճառով դժվարընթեմնելի է: Գրությունը մեկ բառ է պարունակում, որ սկսվում է «Ս»-ով, իսկ վերջավորությունը՝ հստակ երեւացող «ԻԷ»: Երեւացող տառերի բեկորներով կարելի է վերականգնել՝ «ՍԱՐԳՍԻ Է» բառը: Այսինքն՝ գրությունը վկայում է, որ պատկերը Սարգսի գործն է: Սարգիս Պիծակին հատուկ է իր մանրանկարների վրա գրություն թողնելը, որը ցույց է տալիս, թե ով է ձեռագրի ծաղկողը կամ գրիչը: Այս մանրանկարում եւս գրությունը, հավանաբար, վերոնշյալ նպատակն է հետապնդում: Նմանատիպ օրինակ է 1338 թ. ՄՄ 2627 Աստվածաշունչի հայտնի ինքնանկարը, որտեղ նա նկարի վերին հատվածում գրում է «ՍԱՐԳՍԻՍ ԵՐԷՑ Է ՇԻՆԵԼ»: Հետաքրքիր է Վենետիկի Ս. Ղազարի (1331 թ., Հ^մ 16) ձեռագրի Ս. Մատթեոսի մանրանկարը, որ-

¹⁰ Տե՛ս Վ. Ղազարյան, Ինքնանկարը հայ մանրանկարչության մեջ. «Գիտություն եւ տեխնիկա» ամսագիր, 1981, էջ 32:

¹¹ Տե՛ս C. Mutafian, L'Arménie du Levant, XI-XIV siècle, tom II, Paris, 2012, նկ. 201:

տեղ ավետարանչի առջեւ ծնկի իջած՝ պատկերված է հենց նկարիչը (էջ 19բ): Նկարի ներքեւում կարդում ենք՝ «ՍԱՐԳԻՍ ԱՔԵՂ(Ա.)»: Ուշագրավ է նաեւ նույն ձեռագրի 193բ էջի նկարը, որտեղ մանրանկարիչն իրեն պատկերել է հենց Ղուկաս ավետարանչի առջեւ ծնկի իջած: Գրությունը եւս առկա է՝ «ՍԱՐԳԻՍ»: Այդպիսի օրինակ կարող ենք բերել նաեւ Սարգիս Պիծակի ծաղկած՝ 1346 թ. Մարիուն թագուհու Ավետարանից (Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի Հ^մ 1973 ձեռագիր). այստեղ ձեռագրի պատվիրատու Մարիուն թագուհու պատկերը կրող «Խաչից իջեցումը» նկարի ստորին հատվածում կարդում ենք՝ «ՍԱՐԳԻՍ ՆԻԱՍՏ ՔԱՀԱՆԱՅԻ» գրությունը, Երուսաղեմում պահվող 1312 թ. Ավետարանի (Հ^մ 1949, նկ. 5) 183 բ էջի Ս. Ղուկասի մանրանկարում՝ «ԶՎԵՐԱԿԱՑՈՒՆ Զ(Ս)ԱՐԳԻՍ ՔՀ ՅԻՇԵԱ», իսկ 1342 թ. Դուբլինի Չեսթեր Բիթիում պահվող Հ^մ 614 ձեռագրի 13բ էջում գահին նստած Քրիստոսի կողքին կրկին տեսնում ենք ծնկի իջած Սարգիս Պիծակի ինքնանկարը՝ ուղեկցվող գրությամբ՝ «Ա(ՍՏՈՒԱ.)Ծ ԻՄ ՔՈ ԾԱՌԱՅ ՍԱՐԳԻՍ ԶՔԵԶ ՅԱՆՁԻՆ ԱՄԷՆ»: Այսինքն՝ Սարգիս Պիծակը սիրում էր գրություններ թողնել մանրանկարների վրա՝ մատնանշելով հեղինակին, ինչը եւ տեսնում ենք դիտարկվող մանրանկարում:

Այս մանրանկարում ավետարանչի մագերը եւ մորուքը մոդելավորված են գծերով, որը բնորոշ է Սարգիս Պիծակին, մասնավորապես այդպիսին են ՄՄ 2627 Աստվածաշնչի որոշ մարգարեների պատկերները: Մեր մանրանկարչին բնորոշ է էջի մակերեսը տարբեր առարկաներով ու նախշերով ծածկելու պիծակյան սովորությունը: Դրանք ոլորազարդեր են, որ ծածկում են խորհրդանշական ճարտարապետական շինությունը, գրասեղանը, ավետարանչի աթոռը եւ ետնախորքը: Կերպարները հարթապատկերային են եւ գրավում են ողջ տարածքը: Մանրանկարն ամբողջապես պիծակյան է, եւ, ամենայն հավանականությամբ, առանձնացված է Սարգիս Պիծակի որեւէ ձեռագրից: Չի բացառվում նաեւ, որ նա ստացել է Ս. Ղուկաս ավետարանչին պատկերելու պատվեր՝ հունական այդ ձեռագրին կցելու նպատակով: Հաշվի առնելով նրա հռչակը այդ ժամանակաշրջանում՝ դա լիովին հնարավոր էր: Իսկ թողնելով իր անունը նկարի վրա՝ Սարգիս Պիծակը մատնանշում է, թե ով է մանրանկարի հեղինակը:

Մանրանկարը լիարժեք արտահայտում է Սարգիս Պիծակի արվեստին բնորոշ առանձնահատկությունները՝ գծանկարայնությունը, մաքուր եւ հնչեղ գույների կիրառումը, ոսկու առատ օգտագործումը, մարմնի կառուցվածքի ու մասերի մշակման ձեւը (խոշոր նշածեւ աչքեր, գծերով ձեւավորված մագ-մորուք, ուղիղ քիթ, դեմքի արտահայտություն, որը երբեք չէա շփոթի այլ նկարիչների ոճի հետ), առարկաների եւ կերպարների տեղադրման հարթապատ-

կերայնությունը, ինչպես նաև՝ պիծակյան այն ջերմ ու բարի շունչը, որ առկա է նրա բոլոր մանրանկարներում:

Սարգիս Պիծակի արվեստին է մոտենում նաև Կիպրոսում գրված 1317-1318 թթ. (ՄՄ 242) Նոր Կտակարանի ոճը (նկ. 6), որի մանրանկարները կարող ենք դասել մանրանկարչի գործերի շարքին. այստեղ տեսնում ենք հայ մանրանկարչի արվեստին բնորոշ վերոնշյալ բոլոր առանձնահատկությունները: Ձեռագիրը ստեղծվել է այն հայերի շրջանում, որոնք Օշին (1308-1320 թթ.) թագավորի հրամանով գաղթել էին Կիլիկիայից Կիպրոս՝ Կաթոլիկ Եկեղեցու դեմ հանդես գալու համար¹²: Այստեղ կան չորս ավետարանիչների դիմանկարներ, չորս անվանաթերթ, գլխազարդեր, լուսանցազարդեր, լուսանցքային մանրանկարներ, որոնց պատկերագրությունը նույնն է, ինչ Սարգիս Պիծակի մնացած ձեռագրերում: Ավետարանիչների պատկերները ամբողջապես կրկնում են նրա մշակած կերպարները: Ս. Ղուկաս ավետարանիչը եւս իրեն բնորոշ դիրքով է, կարմիր զգեստով՝ վրան ոսկեգույն զարդեր, տոնգուրով, կարճ մագերով եւ մորուքով, պատկերված է գրելիս: Մանրանկարի վերելում Սուրբ Հոգին է՝ աղավաղ տեսքով՝ որպես ներշնչման աղբյուր: Մնացած մանրանկարները եւս հիշեցնում են մեր նկարչի ոճը, օրինակ՝ 271բ էջի Պողոս առաքյալի պատկերը նման է ՄՄ 2627 Աստվածաշնչի 499բ էջի նույն կերպարին¹³. ամբողջովին պիծակյան են նաև Ս. Մատթեոս եւ Ս. Հովհաննես ավետարանիչների պատկերները, լուսանցապատկերները, օրինակ՝ 153բ էջի «Կույրի բժշկումը», ինչպես նաև անվանաթերթերի զարդային հարդարանքն ու գլխատառերի ձևավորումը: Չի բացառվում, որ ձեռագրի մանրանկարները հետագայում են ավելացվել Սարգիս Պիծակի կողմից՝ Կիլիկիայում:

Նկարչի ոճը առավել սերտ առնչություններ ունի հոր՝ գրիչ եւ ծաղկող Գրիգոր Պիծակի արվեստի հետ, որը Հովհաննես Արքաեղբոր աշակերտն էր: Գրիգոր Պիծակի արվեստում արդեն առաջ են գալիս կատարման գրաֆիկական եղանակը, գծանկարի չորությունը, վառ գույներով ներկված զարդամոտիվները, որոնք լիովին տարբերվում էին ինչպես Հովհաննես Արքաեղբոր դպրոցի, այնպես եւ ԺԲ.-ԺԳ. դդ. Կիլիկիայում ձևավորված գեղանկարչական սկզբունքներից¹⁴: Մատենադարանում նրանից պահվում է հինգ¹⁵ ձեռագիր մատյան (Հ^մ 196՝ Մասունք Նոր Կտակարանի, Հ^մ 7663՝ Ավետարան, Հ^մ 8623՝ Մանրոսմունք, նաև՝ Հ^մ 199՝ Մասունք Աստվածաշնչի եւ Հ^մ 1590՝ Շա-

¹² Տե՛ս **С. Манукян, В. Казарян**, Матенадаран, Москва, 1991, էջ 201:

¹³ Տե՛ս անդ:

¹⁴ Տե՛ս **Վ. Ղազարյան**, Սյուժետային մանրանկարչությունը Կիլիկիայում, էջ 69:

¹⁵ Տե՛ս **Ա. Գեորգևան**, Հայ մանրանկարիչներ, մատենագիտություն, IX-XIX դդ., Գահիրե, 1998, էջ 114-115:

րակնոց), որոնք նա ընդօրինակել է 1271-1312 թթ.¹⁶: Ընդ որում, հետաքրքիր է, որ որդուն՝ Սարգսին վերագրվող «Պիծակ» մականունը կրել է նաեւ հայրը՝ Գրիգորը: Այդ մասին կարդում ենք ՄՄ 196 ձեռագրի 86ր հիշատակարանում. «...զՍտեփանոս եւ զԳրիգոր մականունն Պիծակ՝ զնկարողք սուրբ տառիցս յիշման արժանի համարեսցջիք»¹⁷: Ճարտար մանրանկարիչ Սարգսի, ով Ստեփանոս Վահկացու քեռորդին էր եւ Գրիգորի որդին, «Պիծակ» մականվան ավանդությունը ներկայացնում է Ղ. Ալիշանն իր «Սիսուան» աշխատության մեջ¹⁸: Միգուցե մականունը հորից անցել է որդուն:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ Սարգիս Պիծակ մանրանկարչի արվեստի հարուստ գանձարանն անընդհատ նոր բացահայտումների հնարավորություն է ընձեռում, նկարագարոված ձեռագրերի ահռելի քանակը նորանոր չուսումնասիրված էջեր հայտնաբերելու առիթ է տալիս, իսկ բացառիկ նշանակություն ունեցող ինքնանկարների առկայությունը եւս մեկ անգամ ընդգծում է բազմաշնորհ արվեստագետի ուրույն եւ անգնահատելի դերն ու նշանակությունը հայկական մանրանկարչության պատմության մեջ:

РЕЗЮМЕ

В греческом манускрипте 13-ого века (н. 27) в хранилище рукописей Дионисийского монастыря, находящийся на горе Афон в Греции, миниатюра с изображением евангелиста Луки (вероятно, 14-ый век), судя по стилистическим, иконографическим и композиционным общностям, принадлежит искусству киликийского миниатюриста Саргиса Пицака. Она похожа на другие изображения евангелиста Луки в манускриптах Пицака (Матенадаран, 1335 г. (н. 6504), 1336 г. (н. 5786), 1353 г. (н. 6795), 1352 г. (н. 7631), Иерусалим 1312 г. (н. 1949) и т. д.). Черты лица евангелиста напоминают также автопортреты Пицака из известных нам пицаковских манускриптов (1331 г., Евангелие н. 16 монастыря Св. Лазарь в Венеции ; 1338 г., Библия н. 2627 в Матенадаране им. М. Маштоца; 1343 г., Евангелие н. 614 библиотеки Честера Битти в Дублине). При этом отметим, что Саргис Пицак оставил не три, а четыре портрета: в венецианском манускрипте н. 16 он изобразил себя дважды на разных страницах. На нашей миниатюре имеется также надпись на армянском, которая из-за изношенности неудобочитаема и содержит одно слово: оно начинается на «U» и заканчивается на «ԻԷ», что может составить слово «ՍԱՐԳՍԻ Է» («Создано Саргисом»).

¹⁶ Անդ:

¹⁷ Լ. Խաչիկյան, Ժ.Դ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երեւան, 1950, էջ 294:

¹⁸ Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, Ս. Ղազար, 1885, էջ 517:

Искусству Пицака вероятно принадлежат также миниатюры написанного в. 1317-1318 гг. на Кипре Нового Завета (Матенадаран, н. 242). Стиль Пицака имеет наиболее тесные соприкосновения именно с искусством отца художника_переписчика и иллюстратора рукописей Григора Пицака. При этом любопытно, что прозвище «Пицак», прописываемое сыну_Саргису, носил также Григор.

SUMMARY

Taking into consideration the stylistic, iconographic and compositional generalities of the miniature of the 13th century (N 14) with the image of the Evangelist Luke (probably the 14th century) in the Dionysus monastery library in the Greek Athos mountain we can say that it belongs to the art of Cilician miniaturist Sargis Picak. This miniature is similar to Picak's other miniatures with the image of the Evangelist Luke (1335 (N6504), 1336 (N5786), 1353 (N6795), 1352 (N7631) years manuscripts of Matenadaran, 1312 (N 1949) year manuscript of Jerusalem and others.) The features of the Evangelist resembles the self-portraits of Picak's well-known manuscripts (N16 manuscript, 1331 year St. Lazarus monastery in Venice; N 2627 Bible ,1338 year; N614 Gospel of the library of Chester Beattie Dublin). We should also mention that Sargis Picak had left not 3 but 4 manuscripts: he had painted himself in N16 manuscript of Venice, 1331 year two times in different pages. There is also an Armenian scarping in our miniature that is hard to read because of frazzling and contains one word starting with «U» (S), and ending with «ԻԷ» (Ie), that can form the word «ՍԱՐԳՍԻ Է» (It is Sargis).

We think that the miniatures (N242) of the New Testament of Cyprus written in 1317-18 may also probably belong to Picak's art. The style of Picak has closer relation to the style of his father writer and miniaturist Gregory Picak. And it is interesting that the nickname «Picak» has also using his father Gregory.



**ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ ՊԱԿՏԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԹՈՎՄԱ ՎԱՆԱՆԴԵՅՈՒ ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈՐԱԳՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ**

ԺԶ. դարում հայ մշակույթի պատմության մեջ տեղի ունեցավ չափազանց կարեւոր մի իրադարձություն. սկզբնավորվեց հայկական տպագրությունը, որի 500-ամյա հոբելյանը վերջերս է բոլորել: Գուտենբերգյան գյուտից հետո Եվրոպայում արագ զարգացող տպագրական գործը չէր կարող չգրավել հայ մշակութային գործիչներին: Հայոց Կաթողիկոսները, թեպետ ծանր դրության մեջ էին գտնվում, սակայն զարմանալի եռանդով էին զբաղվում հայ տպագրությունը առաջ մղելու գործով. նրանք վարդապետներ էին ուղարկում հեռավոր Եվրոպա՝ նոր տառեր ձուլելու, նոր տպարաններ հաստատելու համար¹:

Հանգամանքների բերումով հայ տպագրիչն առաջին անգամ երեւան է եկել այնտեղ, որտեղ կային միջոցներ ու հարմարություններ այդ նոր արհեստից օգտվելու եւ այն զարգացնելու համար: Հայերեն առաջին գրքի² տպագրությունն իրականացվել է Վենետիկում՝ դոժերի քաղաքում, որտեղ շարժուն տառերի գյուտից առաջ արդեն գործածության մեջ էր փայտափորագրությունը, որը տախտակի վրա փորած տպագիրն է: Վենետիկից այս արհեստը անցել ու զարգացել է Գերմանիայում եւ Հոլանդիայում: Առաջին հայերեն տպողը եղել է իտալացի Zuan Andrea-ն:

Ձեռագիր հայ գիրքը մինչեւ ԺԹ. դարը ներառյալ շարունակել է առաջ գալ եւ կատարել իր մշակութային դերը³: Հայերեն առաջին տպագիր գրքերի բովանդակությունն արդեն վկայում է, որ հայ տպագրիչների եւ հրատարակիչների գլխավոր նպատակը նյութական շահը չէր, այլ այլալեզու եւ օտար միջավայրում ծուլման վտանգի առաջ կանգնած հային իր լեզվին ու ազգա-

¹ Տե՛ս «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», [Կազմեցին՝ Ն. Ա. Ոսկանյան, Բ. Ա. Կորկոտյան, Ա. Սավալյան], Երեւան, 1988, էջ 7-10 (այսուհետ՝ Հայ գիրքը):

² Առաջին հայ մարդը, ում հաջողվեց Եվրոպայում հիմնել տպարան եւ հրատարակել հայերեն գրքեր Ջուդայեցի (ենթադրաբար) Հակոբն էր, որն այժմ հայտնի է Հակոբ Մեղապարտ անունով: Մեզ են հասել Հակոբ Մեղապարտի տպագրած հինգ անուն գրքեր՝ «Ուր-բաթագիրք», «Պատարագատետր», «Աղթարք», «Պարգատումար», «Տաղարան»:

³ Տե՛ս Գ. Լևոնյան, Հայ գիրքը եւ տպագրության արվեստը, Երեւան, 1946, էջ 41-43:

յին ավանդույթներին ամուր շաղկապելու, մայրենի լեզվով գիր ու գրականություն մատուցելու ազգապահպան վեհ ձգտումը:

Տպագրության առավելությունները ակնհայտ էին. բավական է միայն նշել, որ ձեռագիր մատյան ընդօրինակելու համար անհրաժեշտ ժամանակամիջոցը այնքան էր, որքան նույն ծավալի չորսից հինգ հարյուր օրինակ տպագիր գիրք ստեղծելու համար պահանջվող ժամանակը: Հայ հնատիպ գիրքը երկար ժամանակ «գոյակցել» է ձեռագիր մատյանների հետ, ուստի պատահական չէ, որ տպագիր լինելով հանդերձ՝ հնատիպ գիրքը պարունակում է ձեռագրին հատուկ մի շարք տարրեր՝ ծանրաբեռնված տիտղոսաթերթեր, բառակրճատումներ, հիշագրեր, ավելորդություններով հագեցված հիշատակարաններ⁴: Հայ տպագրության արշալույսին հրատարակված գրքերում կարելի է հանդիպել այնպիսի իրողությունների, որոնք հատուկ են միայն հնատիպ գրքերին: Օրինակ՝ գրքերը երբեմն տպագրվում էին առանց անվանաթերթերի, գրքի հեղինակի, տպագրիչի, իսկ տպարանի անունները, տպագրության տարեթիվը, ինչպես նաեւ հրատարակչական այլ տվյալներ, երբեմն նշված են ոչ թե գրքի անվանաթերթին, այլ հիշատակարանում կամ բնագրի այլ հատվածում, հաճախ էլ այդ տվյալները չեն հիշատակվում: Որոշ դեպքերում գրքի տպագրության թվականը նշվում է չափածո կամ ծածկագրով: Կան գրքեր, որոնք ունեն երկու տիտղոսաթերթ, որոնցից մեկը, երբեմն երկուսը լինում են չափածո: Որոշ գրքեր էջագրված չեն, համարակալված են միայն մամուլները: Դեպքեր կան, որ գրքերը տպագրվելուց հետո նրանց շարվածքը պահվել է եւ մեկ կամ մի քանի տարի հետո օգտագործվել գրքի մի նոր տպագրության համար՝ փոխելով միայն տպագրության տարեթիվը, հովանավորող պատրիարքի ու տպագրության ծախսերը վճարողի անունները: Իսկ երբեմն շարվածքը նույնությամբ օգտագործվել է՝ առանց փոխելու նախորդ տպագրության նույնիսկ թվականն ու վայրը, որը հետագայում զանազան թյուրիմացությունների տեղիք է տվել: Հանդիպում են նաեւ մեկ էջի վրա հրատարակված աղոթքներ կամ բանաստեղծություններ, որոնք լույս են ընծայվել այս կամ այն տպարանի ձեռք բերած նոր տպատառերը փորձելու նպատակով: Որոշ դեպքերում «զպարապ երես թղթոցն» խորագրի տակ գետեղված է լինում որեւէ այլ բնագիր:

Տպագիր գրքերը հետզհետեւ ազատվում են ձեռագրերի նմանություններից եւ ձեռք են բերում նոր շրջանի գրքերին բնորոշ տարրեր. բեռնաթափվում են գրքերի տիտղոսաթերթերը, ձգձգված հիշատակարանների փոխարեն դրվում է համառոտ «վերջաբանություն», գրքերին կցվում են բովանդակության, գրականության եւ այլ ցանկեր, նշվում են գրքում տեղ գտած վրիպակները, հիշատակվում են թարգմանչի, խմբագրի, կազմողի անունները եւ այլն:

⁴ Տե՛ս «Հայ գիրքը», էջ 8-9:

Որքան էլ ձեռագիր գիրքը շարունակեր իր գոյությունը, ինչպես էլ այն զարգանար, այնուամենայնիվ, հետագայում՝ տպագրության շրջանում, այն աստիճանաբար պետք է զիջեր իր տեղը տպագիր գրքին⁵:

ԺԷ.-ԺԸ. դարերում Արեւմտյան Եվրոպայում առանձնանում է Ամստերդամի հայկական տպարանը, որտեղ հայերեն գրքերի տպագրությունն սկսվեց 1660 թվականից: Առժամանակյա դադարից հետո այն շարունակվեց մինչև 1716 թվականը՝ շուրջ 57 տարի, ապա դադարեց ընդմիշտ:

Ամստերդամի տպագրության պատմության մեջ իր հրատարակչական գործունեությամբ առանձնանում է Գողթն գավառի Ս. Խաչ վանքի եպիսկոպոս Թովմա Վանանդեցի Նուրիջանյանը⁶: Սակայն մինչ իր ժամանելը Հոլանդիա, Ամստերդամում էին գտնվում Թովմա Վանանդեցու եղբոր որդիները՝ Միքայել և Ղուկաս Վանանդեցիները, և մորեղբորորդին՝ Մատթեոս Վանանդեցին: Վանանդեցիների տպագրական գործունեության կազմակերպողը և մղիչ ուժը դառնում է հենց ինքը՝ Թովմա Նուրիջանյանը՝ «վեհափայլ եպիսկոպոս և բազմաշան վարդապետ»⁷, «եպիսկոպոս սրբոյ Խաչի վանիցն Գողթնեաց»⁸: 1695 թ. Թովմա Վանանդեցին⁹ ստանձնում է Ամստերդամի տպարանի ղեկավարությունը և շուրջ տասը տարվա ընթացքում հրատարակում է 14 գիրք, որոնք աչքի են ընկնում իրենց թեմատիկ փորագիր պատկերներով, որոնցից երկուսում պատկերված է Քրիստոսի Ծնունդը:

Թովմա Վանանդեցու հրատարակած գրքերում հիմնականում տեղ են գտել գերմանացի Քրիստոֆել վան Զիխենի կերտած փորագրանկարները: Քրիստոֆել վան Զիխեն կրտսերը ծնվել է 1580-ական թվականներին՝ Բագելյում: 1600-ականներին նա ապրել է Ամստերդամում, եղել է հոլանդացի հռչակավոր նկարիչ Հեն(դ)րիկ Գուլցիուսի (1558-1617) աշակերտը: Քրիստոֆել վան Զիխենը կամ «հոլանդացի Դյուրերը» հայտնի է եղել որպես գրքեր նկարագարող (ունի շուրջ 1200 փայտե փորագրություն): Ունի մի շարք ինքնուրույն գործեր, որոնցից լավագույնները գտնվում են դիմանկարների այն ժողովածուի մեջ, որը լույս է տեսել Ամստերդամում 1609 թ. (Iconica Haeresiarcharum): Նրա նկարագարումամբ է լույս տեսել «Քրիստոսի մանկությունը»՝ տպված 1617 թ., ինչպես նաև Աստվածաշնչի մի քանի հրատարակություններ, որոն-

⁵ Տե՛ս Ա. Երիցեան, Պատմական տեսություն հայ տպագրութեան. մինչև տասնևիններորդ դարը, «Փորձ» հանդես, 1881/Դ., էջ 6-10:

⁶ Տե՛ս Գ. Զարբիանալեան, Պատմություն հայկական տպագրութեան. սկզբնաւորութենէն մինչ առ մեզ, Վենետիկ, 1895, էջ 153-170:

⁷ Մովսէս Խորենացի, «Ազգաբանութիւն տոհմին Յաբթեան», Ամստերդամ, 1695:

⁸ «Բանալի Համատարած Աշխարհացոյցին», Ամստերդամ 1696, էջ 3:

⁹ Տե՛ս Մ. Գրիգորեան, Նոր նիւթեր և դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցոց մասին, Վիեննա, 1963:

ցից երկուսը տպագրվել են Ամստերդամում¹⁰ (1646 թ.), Նոր Կտակարան՝ տպված Անտվերպենում (1646 թ.), եւ այլն: Քրիստոֆել վան Զիխեն կրտսերի այլ գործերի շարքում հայտնի են չորս ավետարանիչների դիմանկարները, որոնք օգտագործվել են Թովմա Վանանդեցու հրատարակություններում եւ Ոսկան Երեսնցու հրատարակած Աստվածաշնչում (1666-1668): 1657 թ. հրատարակված Biblia Sacra-ն ունեցել է 797 պատկեր՝ տպված Քրիստոֆել վան Զիխենի փորագրություններից: Հարկ է նշել, որ առաջին անգամ հայկական գրքերի համար Քրիստոֆել վան Զիխենի փորագրանկարներն օգտագործվել են 1660-1661 թթ. Ամստերդամի «Ս. Սարգիս եւ Ս. Էջմիածին» տպարանի հրատարակած գրքերում, իսկ վերջին անգամ հանդիպում ենք 1739 թ.՝ Կ. Պոլսի՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանի հրատարակած գրքերում:

Ըստ Ռաֆայել Իշխանյանի՝ Ոսկանյան տպարանի հրատարակությունների մեջ օգտագործված գրեթե բոլոր նկարները (չնչին բացառությամբ) Քրիստոֆել վան Զիխեն կրտսերի փորագրություններն են, որոնք պատճենված են Ռաֆայելի, Ալբրեխտ Դյուրերի, Հեն(դ)րիկ Գուլցիուսի եւ եվրոպական ուրիշ նշանավոր վարպետների հայտնի նկարներից¹¹: ԺԷ.-ԺԸ. դդ. եղել են չորս կամ երեք Քրիստոֆել վան Զիխեն անունով նկարիչներ՝ Քրիստոֆել վան Զիխեն երեց, Քրիստոֆել վան Զիխեն, Կոռնելիուս վան Զիխեն եւ Կառլ վան Զիխեն: Տեսակետ կա, ըստ որի վերջին երկուսը մեկ մարդ է, որը փորագրություններ է կատարել ոչ թե փայտի, այլ պղնձի վրա: Քրիստոֆել վան Զիխեն երեցը ապրել է ԺԷ. դարում Գերմանիայում եւ ոչ մի առնչություն չունի Ամստերդամի տպարանի փորագրանկարների հետ: Ենթադրվում է, որ Քրիստոֆել վան Զիխեն երեցը հայրն է ԺԸ. դարում ապրած մյուս վան Զիխեն նկարիչների: Ուշագրավ է, որ մի շարք նկարիչների անվանատառերը Քրիստոֆել վան Զիխենը թողել է նրանց նկարներից պատճենած փորագրանկարների վրա՝ AD-Ալբրեխտ Դյուրեր, HG-Հեն(դ)րիկ Գուլցիուս, եւ միաժամանակ դրել իր ստորագրությունը՝ CVS: Քրիստոֆել վան Զիխենի փորագրանկարները գետեղվել են նաեւ Մարսելի, Լիվոռնոյի, Կ. Պոլսի հայկական տպարանների հրատարակած գրքերում: Քրիստոֆել վան Զիխենի կատարած փորագրանկարներն արված են երկայնակի փայտե փորագրության (քսիլոգրաֆիա¹²) տեխնիկայով¹³:

¹⁰ Տե՛ս **Mishel Bryan**, A biographical and critical dictionary of painters and engravers, II Voll., London 1816, էջ 398:

¹¹ Տե՛ս **Ռ. Իշխանյան**, Հայ գրքի պատմություն, հ. 1, Երևան, 1977, էջ 461-464:

¹² Փայտե փորագրությունը կամ քսիլոգրաֆիան (հունարեն՝ xylon-փայտ եւ grapho-գրում եմ, նկարում եմ, բառերից) պատկանում է ուռուցիկ կամ բարձր տպագրության փորագրանկարչությանը, որ փորագրության առավել տարածված տեսակներից է:

¹³ Տե՛ս «Популярная художественная энциклопедия», Москва, 1986, էջ 372-373:

Զիխենը, լինելով հմուտ փորագրիչ, կարողացել է վարպետորեն եւ մաքուր փորագրել իր ժամանակի նշանավոր նկարիչների աշխատանքները: Նրա փորագրանկարների արդեն պատրաստի տպածները Թովմա Վանանդեցին օգտագործել է իր հրատարակություններում՝ հարմարեցնելով դրանք իր գրքերի բովանդակությանը: Մեզ հայտնի չէ, թե սկզբնապես ում կամ որ գրքերի համար են արվել Զիխենի փորագրանկարները: Այս վարպետի փորագրությունները հետագայում գործածվել են հոլանդական հրատարակությունների մեջ: Կարծում ենք՝ Վանանդեցու հրատարակած գրքերում տեղ գտած փորագրանկարները հայտնի չեն եվրոպական փորագրության արվեստի ուսումնասիրողներին, ուստի դրանց քննությունը կարելի է նաեւ եվրոպական փորագրանկարչության պատմության համար: Քրիստոֆել վան Զիխենի մահվան թվականը հայտնի չէ, բայց 1656 թ. նա դեռ կենդանի էր: Քրիստոֆել վան Զիխեն կրտսերի նկարները բազմիցս օգտագործվել են առաջնակարգ հրատարակությունների մեջ. այս փաստը վկայում է, որ նա հիշյալ ժամանակաշրջանի շնորհաշատ նկարիչ-փորագրիչներից մեկն է եղել:

Թովմա Վանանդեցու՝ 1702 թ. հրատարակած «Շարակնոց»-ում Քրիստոֆել վան Զիխեն փորագրող-նկարչից հայտնի են «Քրիստոսի ծննդյան տեսարանը» ներկայացնող երկու փորագրապատկեր:

Ծնունդ՝ որպես Երկրպագություն Մանկանը (նկ. 1)

(Ղուկասու Բ. 1-12, Մատթեոսի Ա. 1-12):

Քրիստոսի Ծնունդը տոնական շարքի երկրորդ տեսարանն է: Սովորաբար «Քրիստոսի Ծնունդ» տեսարանի մեջ ամփոփվում են Ծննդյան հետ կապված մի քանի դրվագներ, որոնք կարող են հանդես գալ նաեւ որպես առանձին, ինքնուրույն պատկերներ. դրանցից են Հովիվների ավետումը եւ Մոգերի երկրպագությունը: «Շարակնոց»-ում ներկայացված «Ծնունդ» տեսարանը արեւմտյան պատկերագրության մեջ կոչվում է «Երկրպագություն Մանկանը» (նկ. 1): Այդ պատկերագրությանը բնորոշ են ներկա բոլոր կերպարների պատկերումը մանկանը երկրպագելիս: Երկրպագում են եւ՝ Մարիամը, եւ Հովսեփը, եւ հովիվները, եւ մոգերը: Շատ հաճախ արեւմտյան պատկերագրության տեսարաններում պատկերվում են նաեւ երկրպագող նվիրատուները (դոնատորներ): Նախրատուն հիշեցնող մի ծածկի տակ պարկերված է ծնրադիր Տիրամայրը՝ բարուրված մանուկ Հիսուսի առջեւ ծունկի իջած. արեւմտյան պատկերագրության մեջ ծննդյան վայրը պատկերվում էր որպես ծածկով մի նախրատեղի՝ ի տարբերություն հայկականի, որտեղ տեսարանը պատկերվում էր քարանձավի հենքի ներքո, որն էլ իր հերթին բնորոշ էր բյուզանդական եւ, առհասարակ, արեւելյան պատկերագրությանը: Հայկական միջնադարյան մանրանկարչության մեջ այս տեսարանում Տիրամայրը պատկերվում էր մահիճի վրա կիսապառկած, նրա կողքին՝ մսուրի մեջ, բարուրված Մանուկ Քրիստոսը: Տեսարանում պատկերվում էին նաեւ փառա-

բանող հրեշտակները, մանկան լոգանքի տեսարանը, ներկա էր լինում նաեւ Հովսեփը, որը նստած էր ձախ անկյունում կամ Տիրամոր ոտքերի մոտ: Երկուսն էլ պատկերվում էին լուսապսակներով:

Տիրամոր թիկունքում՝ նույն ծածկի տակ, պատկերված են եզն ու էշը, որոնք, սովորաբար, խորհրդանշում են հրեաներին եւ հեթանոսներին, ինչպես նաեւ մոգերին եւ հովիվներին: Նշված կենդանիները նույնպես երկրպագում են մանկանը: Տիրամոր առջեւ պատկերված է նվիրատուների եւ հովիվների խումբը, իսկ ներքեւում պատկերված են նաեւ շներ: Բազմակերպար հորինվածքը նկարված է ամենայն մանրամասնությամբ՝ սկսած հեռվում երեւացող ճարտարապետական կառույցներից մինչեւ առաջին հատվածում ներկայացված հովիվների, նվիրատուների, Տիրամոր եւ Մանկան պատկերները: Լավ է վերարտադրված հեռանկարը, որտեղ երեւում են ճարտարապետական շինություններ, բնապատկեր, մարդկային խմբեր:

Մոգերի երկրապագություն (նկ. 2)

(Ղուկաս Բ. 6-16)

Մոգերի երկրապագությունը Ծննդյան տեսարանի բաղկացուցիչ մասն է, սակայն այն կարող է պատկերվել եւ առանձին՝ փոխարինելով Ծննդյան տեսարանին: Մատթեոս ավետարանիչը խոսում է այն մասին, որ մոգերը, լսելով Փրկչի ծննդյան մասին, գալիս են նրան երկրապագելու¹⁴:

Վաղ շրջանում մոգերը պատկերվում էին որպես իմաստուներ, իսկ միջնադարում՝ որպես թագավորներ: Մոգերը կապված են Միհրի պաշտամունքի հետ, կրում էին փռուզիական գլխարկներ, պարսկական Միհրի հագուստներ: Սակայն արեւմուտքում նրանց պատկերում էին որպես թագավորներ՝ թագերով կամ հատուկ, փափուկ գլխարկներով¹⁵:

Այս փորագրանկարում Մարիամը պատկերված է նախրատան առջեւում նստած՝ Մանուկ Քրիստոսը գրկին: Տիրամայրը եւ Քրիստոսը պատկերված են լուսապսակներով: Նրանց դիմաց պատկերված են մոգերը եւ ժողովրդի հոծ զանգված: Բոլորը ցանկանում են տեսնել մանուկ Քրիստոսին: Մոգերից երկուսը պատկերված են ծնրադիր, իսկ երրորդը՝ կանգնած: Մոգերը երեքն են, որոնք ներկայացված են որպես արեւելյան թագավորներ. կրում են թագ ու թագավորական շքեղ հագուստ:

Գասպարը, որը ներկայացնում է Եվրոպան, Քրիստոսին ընծայում է ոսկի, ինչը խորհրդանշում է Քրիստոսի արքայական իշխանությունը, եւ պատկերված է Քրիստոսի առջեւ ծնրադիր: Բաղդասարը, սովորաբար, սեւամորթ է պատկերվում եւ խորհրդանշում է Աֆրիկան. այս տեսարանում նա երրորդն է: Նա կնդրուկ է ընծայում Քրիստոսին՝ որպես աստվածային բնության

¹⁴ Տե՛ս Ա. Ե. Майкапар, Новый Завет в искусстве, Москва, 2003, էջ 88-89:

¹⁵ Տե՛ս Н. В. Покровский, Евангелие в памятниках иконографии, Москва, 2001, էջ 180-187:

խորհրդանիշ: Մեկընդ խորհրդանշում է Ասիան, գմուռն է նվիրում Քրիստոսին՝ որպես մարգարեական մահվան եւ Քրիստոսի մարդեղության խորհրդանիշ: Մոգերից երկուսը՝ Գասպարը եւ Մեկընդ, իրենց թագերը դրել են գետնին՝ ի նշան հնազանդության եւ հպատակության: Հայկական պատկերագրության մեջ երեք մոգերը տարիքով իրարից գրեթե չեն տարբերվում: Ըստ արեւմտյան պատկերագրության՝ մոգերը տարբեր տարիքի են եւ ներկայացնում են մարդու կյանքի երեք շրջանը՝ երիտասարդություն, հասունություն, ծերություն: Այս շրջանի արեւմտյան պատկերագրությունը համալրվել է միջնադարյան որոշ նոր տարրերով՝ կապված ոճի փոփոխության հետ: Այստեղ միջնադարյան պայմանական ոճը փոխվել է իրապաշտական, պատմողական ոճի: Ներմուծված է բնապատկերը, որը ներկայացնում է արեւմտյան տիպի շենքերով մի գյուղաքաղաք, կամուրջ, լեռներ, ծառեր: Արեւմտյան նորամուծություն է նաեւ մոգերի պատկերումը իրենց շքախմբով: Փորագրապատկերում յուրաքանչյուր մոգ պատկերված է իր սպասավորների հետ՝ երեխաների կերպարներով: Նորամուծություն է նաեւ մոգերի հետեւից պատկերված ժողովրդի հոծ բազմությունը: Այսպիսով, արեւմտյան վարպետը փորձել է մոգերի երկրպագությունը տեղափոխել իրեն հարազատ միջավայր:

Փորագրանկարներն արված են փայտե փորագրության երկայնակի տեխնիկայով¹⁶: Փայտե փորագրությանը բնորոշ բոլոր հատկությունները հստակ երեւում են այս երկու փորագիր պատկերներում: Ներկայացված տեսարանների պատկերագրությունն ու ոճն արտացոլում է կերպարվեստի այն վիճակը, որը տիրում էր ԺԶ. դարի վերջին եւ ԺԷ. դարի առաջին կեսին Հոլանդիայում, մասնավորապես՝ Հյուսիսային Եվրոպայում: Փորագրապատկերներն ընդգծված արեւմտյան ոճի են, դրանք աչքի են ընկնում տեսարանի կանոնավոր պատկերագրության մեջ հեղինակի կողմից ներմուծված կերպարներով կամ այլ մանրամասնություններով, տոգորված են ավելի հարուստ խորհրդաբանությամբ (Արեւմուտքում պատկերագրությունն ավելի ազատ էր): Փորագիր պատկերները ունեն բազմակերպար, բարդ կառուցվածք ունեցող հորինվածքներ, որտեղ հավասարությունը գրեթե միշտ խախտվում է անկյունագծերով տեղադրված կերպարների միջոցով: Գլխավոր գործողությունը հիմնականում պատկերվում է առաջին հատվածում: Լավ է վերարտադրված նաեւ հետին հատվածը: Չնայած հորինվածքների հագեցվածությանը՝ ամենափոքրիկ տարրն անգամ մշակված է ամենայն մանրամասնությամբ. տարածության յուրաքանչյուր հատված փորագրիչն օգտագործել է:

Կերպարները պատկերված են բարդ դիրքերով, եւ մեկնաբանումը տարբեր է. դրանք երբեմն մեղմ, բնական, զգացմունքների ավելի զուսպ վերարտադրությամբ են, երբեմն՝ բուռն ու անհանգիստ: Պատկերված են Բարոկկո-

¹⁶ См. Б. Р. Виппер, Введение в историческое изучение искусства, Москва, 1985, էջ 34-36:

յի ժամանակաշրջանի հագուստով եւ սանրվածքով: Կերպարների հագուստների գալարվող փեշերն աննախադեպ շարժում են հաղորդում փորագրանկարի ամբողջ հորինվածքին: Մի կողմից՝ կերպարները, կարծես, իրական կյանքից վերցված լինեն, մյուս կողմից՝ նրանց շարժումն ու ներքին կեցվածքը չափազանցված է: Դա կապված էր Քրիստոֆել վան Զիխեմի ապրած ժամանակաշրջանի՝ Բարոկկոյի ոճի հետ: Հորինվածքները հարուստ, շեշտված լուսաստվերային լուծումներ ունեն, որոնցով աչքի են ընկնում հատկապես գլխավոր կերպարների դիմային նուրբ ձեւավորումները:

Վանանդեցու հրատարակած գրքերն իրենց գեղարվեստական ձեւավորման նուրբ ճաշակով համարվել են ժամանակի բարձրորակ տպագրություններ եւ օրինակ հանդիսացել հաջորդ տպագրիչների համար. Վանանդեցու հրատարակությունները տպագրական արվեստի տեսակետից մի քայլ առաջ էին անգամ Ոսկանյան հրատարակություններից: Փորագիր պատկերները կրում են արեւմտաեվրոպական տպագիր գրքի անմիջական ազդեցությունը, ինչը պայմանավորված է Թովմա Վանանդեցու գրքերի՝ եվրոպական միջավայրում հրատարակված լինելու եւ եվրոպական փորագրող-նկարչի՝ Քրիստոֆել վան Զիխեմի տպատախտակները (կլիշեները) օգտագործած լինելու հանգամանքով: Ակներեւ է, որ քննարկվող երկու փորագիր պատկերները եւ, առհասարակ, Թովմա Վանանդեցու հրատարակած գրքերում գետեղված փորագրապատկերներն արված են մեծ վարպետությամբ, եւ այդ է պատճառը, որ դրանք հետագայում հանդիպում են նաեւ արքահայր Մխիթար Սեբաստացու հրատարակություններում:

РЕЗЮМЕ

В 17-18 веках в Западной Европе среди армянских печатных особенно привлекало Голландская столица Амстердам, где издательство армянских книг начиная 1660 года, до временной паузы снова продолжалось до 1716 года, всего 57 лет, и навсегда кончается. В истории амстердамской печати издательской работой выделяется провинции Гохт церкви Святого Креста епископа Товма Ванандеци Нуричяна. В 1695 году Товма Ванандеци назначают руководителем амстердамского издательства. Около десяти лет 1695-1705 гг. Товма Ванандеци издает 14 книг. Эти книги отличались своими гравированными изображениями, которые выделяются тематическими гравированными изображениями, из двух которых изображено Рождение Христа. Эти две гравированные изображения несут в себе непосредственное влияние в западноевропейской печатной книге.

В печатных книгах Товма Ванандеци автором гравированных изображений был родом из Германии немцем, свою деятельность распространивший в

Голандии, резчик эпохи барокко Кристофел ван Зихем. Для книг он вырезывал как из собственных, так и из работ европейских, крупных, известных художников, особенно у Альбрехта Дюрера, Лукаса ван Лейдена, Ген(д)рика Голциуса. Привлекательно то, что Кристофел ван Зихем первые начальные буквы имен художников оставлял на гравюрах сделанных из их портретов: AD-Албрехта Дюрер, HG-Ген(д)рик Голциус, но одновременно оставлял свою подпись` CVS.

SUMMARY

In the 17-18th centuries in Western Europe, one of the most remarkable Armenian publishing houses is the one located in the capital of Netherlands-Amsterdam, where the publishing of the armenian books began in 1660, then stopped temporary and soon continued till 1716, for almost 57 years and then finished for ever. In the history of the Amsterdam's publishing house Tovma Vanandetsi Nuridjyan, the bishop of the Saint Khach monastery of the Goghtn region is famous for his publisher's activities. In 1695 Tovma Vanandetsi took charge of the managment of the Amsterdam's publishing house. During approximately ten years 1695-1705 Tovma Vanandetsi published 14 books. The integral part of Vanandetsi's published books are the tematic engraved images, which are prominent for their thematic engravements and the two of which exhibit the Birth of Christ. These two engraved images carry the direct influence of the western european printed book.

The author of the engraved images used in Tovma Vanandetsi's published books in the engraver of the barroque period Cristofher van Zikhem who was German by origin but making activity in Holland. He did engravements for the books of his own works as well as for the works of the european prominent painters such as Albrecht Dyurer, Lucas van Leiden and of his teacher Hen(d)rik Goltsius. It is worth of mentioning that Zikhem left the initials of the several painters such as on the engravements created based on their pictures AD-Albrecht Dyurer, HG-Hen(d)rik Goltsius at the same time putting his signature on them` CVS.



ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍՅԱՆ
բանասիրական գիտ. թեկնածու

ՎԱՐԱՆԴԱ ԳԱՎԱՌԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի աշխարհի Վարանդա գավառը կազմավորվել է ԺԶ. դարում աշխարհացույցյան Մյուս Հաբանդ գավառի հյուսիսային մասում: Գավառն ընդգրկում էր Կարկառ գետի աջ ափը, հասնում մինչև Քիրս-Դիզափայտի լեռնագոտին: Աղբյուրներում գավառը կոչվել է նաև Հաբանդ, Մյուս կամ Փոքր Հաբանդ, Մուխանք, Պազկանք, Վառանդա, Վառանդինի, Վարանդ, Վարանդա Մյուս, Վերենդե, Քոչիգ, կենտրոնի անունով՝ նաև Ամարաս¹:

Վարանդայի կենտրոն Ամարասի վանքը Դ. դարի սկզբին հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը, իսկ ավարտումն ու օծումը վերագրվում է նրա թոռ Գրիգորիսին²: 330-331 թթ. Բուն Աղվանքի կողմերում (Մասքթագ թագավորությունում) քրիստոնեությունը տարածելու ժամանակ նահատակվում է Գրիգորիսը, եւ նրա աճյունն իր աշակերտները բերում ամփոփում են Ամարասի եկեղեցու բակում³: 489 թ. Վաչագան Բ. Բարեպաշտ թագավորը, գտնելով Գրիգորիսի գերեզմանը, վրան մատուռ է կանգնեցնում, միաժամանակ ավարտում եկեղեցու

¹ Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 70: Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 772: Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 31: Լեո, Երկերի ժողովածու, հ. Ա., Երևան, 1966, էջ 160: Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 25: Ա. Յակոբեան, Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտություններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երևան, 2009, էջ 302-311:

² Տե՛ս Փաւստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. Ա., առաջաբանը Պ. Մուրադեանի, Կ. Իզրաշեանի, Անթիլիաս, 2003, էջ 428: Մովսէս Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, առաջաբանը՝ Պ. Հովհաննիսյանի, բնագիրը՝ Գ. Գասպարյանի, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ., գիրք Բ., Երևան, 2011 (այսուհետև՝ Մովսէս Կաղանկատուացի), էջ 68: Դիվան հայ վիճագրության, պր. Վ. Արցախ, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 170:

³ Տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, էջ 72: Փաւստոս Բուզանդ, էջ 429: Անանուն, Կեանք եւ վարք Վաչագան արքայի, գիտա-քննական բնագիրը՝ Ա. Յակոբեանի, Մատենագիրք Հայոց, հ. Գ., Զ. դար, Անթիլիաս, 2004, էջ 63:

կառուցումը⁴: Վանական համալիրն ամբողջացրել են հետագա դարերում կառուցված շրջապարիսպը, միաբանների եւ ուխտավորների սենյակները, օժանդակ այլ շինություններ⁵:

Վաղ միջնադարում Ամարասը նշանավոր էր որպես եպիսկոպոսանիստ եւ հոգեւոր մշակույթի կենտրոն: Ըստ ավանդության՝ գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցը այստեղ է բացել Արցախի առաջին դպրոցը եւ հիմք դրել հայոց դպրության: Քանի որ գրչակենտրոնից ոչ մի ձեռագիր մատյան չի պահպանվել, դժվար է ասել, թե ինչ տիպի դպրոց է գործել Ամարասում, ինչ գործունեություն է ծավալվել, ինչ մասնագետներ են պատրաստել, ովքեր եւ ինչ են դասավանդել: Վանքի՝ որպես կրոնական եւ մշակույթի կենտրոնի վերաբերյալ հատուկ են տեղեկություններ են տալիս վիմագիր արձանագրությունները, գավառի այլ վայրերում գրված ձեռագրերի հիշատակարանները, ինչպես նաեւ Ամաստաս վարդապետի կազմած վանքերի մասին պաշտոնական վավերաթուղթը, որ պահպանվել է նաեւ Մովսես Կաղանկատվացու Պատմության մեջ⁶:

Պատմական Արցախի այս հնագույն ու նշանավոր վանքը բազմիցս է ենթարկվել օտար նվաճողների ասպատակություններին: 821 թ. արաբները գրավում են Ամարասը, թալանում վանքի հարստությունը, բայց Առանշահիկ Սահլ Սմբատյանը հերոսական դիմադրություն է ցույց տալիս թշնամուն. «զԱմարաս գաւառ գերի առեալ իբրեւ ոգիս հազարս... Սահլ Սմբատեան Եռանշահիկն տէր քաջագոր եղբարքք իւրովք եւ զօրօք ի լուսանալ առաւօտուն ի վերայ յարձակեալ առ հասարակ դիաթաւալ զնոսս ցիր ու ցան կացուցանէին»⁷: 853-854թթ. արաբները Բուղայի գլխավորությամբ կրկին ասպատակում են գավառը, այս անգամ էլ նրանց դեմ է դուրս գալիս Եսայի Աբու Մուսնն⁸:

Մյուսյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ 1293 թ. թաթար Բաթու խանը կողոպտել է Ամարասի վանքը, ավերել ու թալանել, թանկարժեք շատ իրերի հետ տարել է Գրիգորիսի գավազանն ու 36 թանկարժեք քարերով

⁴ Տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, էջ 73:

⁵ Տե՛ս Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 27, Ս. արք. Զալալեանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա., Տիֆլիս, 1842, էջ 196:

⁶ Տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, էջ 74: Տե՛ս նաեւ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 229: Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 97-101:

⁷ Մովսէս Կաղանկատուացի, էջ 402-403:

⁸ Տե՛ս Թովմա Արծրունի եւ Ասանուն, Պատմություն տանն Արծրունեաց, Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ., առաջաբանը եւ քննական քնագիրը՝ Պ. Հովհաննիսյանի, Աթիլիաս, 2010, էջ 207: Մովսէս Կաղանկատուացի, էջ 407, Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ., էջ 43: Ստեփանոս Ասողիկ, Պատմություն տիեզերական, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ., գիրք Բ., առաջաբանը եւ քննական քնագիրը՝ Գ. Մանուկեանի, Երևան, 2011, էջ 708: Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 62-63: Լևոն, Հայոց պատմություն, հ. Ա., Երևան, 1947, էջ 459-464:

ընդելուզված ոսկեծույլ մի խաչ⁹: 1387 թ. Ամարասը մեծ կորուստներ է կրում Լենկթեմուրի արշավանքից հետո: Չափազանց մեծ է նաեւ ձեռագիր արժեքների կորուստը:

Բազմաթիվ ավերածություններ տեսած վանքը մնայլ ու դաժան ժամանակներում էլ չի դադարել կրոնական ու մշակութային կենտրոն լինելուց: Վկայություն ունենք այն մասին, որ ԺԵ. դարում Ամարասի Մանուել եպիսկոպոսը, ումից մեզ հասած գրչագրերն ընդօրինակված են Գտչավանքում, ձեռագրեր է օրինակել նաեւ Ամարասում¹⁰: Քանիցս ավերված վանքը ԺԷ. դարում վերականգնում է Աղվանից (Գանձասարի) Պետրոս կաթողիկոսը, որը նաեւ միաբանության ամառանոց Հերիեր գյուղում կառուցում է մի նոր եկեղեցի (ՄՄ ձեռ. 2561, թ. 264ա):

ԺԸ. դարում այս սրբավայրը թուրքերը դարձնում են իրենց աղոթատեղին, ապա բերդատեղի ու մաքսատուն, այնքան ժամանակ, մինչեւ որ Բաղդասար մետրոպոլիտին հաջողվում է օտարներից նորից ետ վերցնել այն¹¹: Երբեմնի ծաղկուն ու շեն վանքը ԺԹ. դարում ամայանում է, դառնում անմարդաբնակ՝ մնալով լոկ ուխտատեղի:

ԺԷ. դարում Վարանդայի տիրակալներն էին Դուփյան իշխանական տոհմից սերող Մելիք-Շահնազարյանները: Մելիք Շահնազար Ա-ի սերնդից մելիք Հուսեփնը Գեղարքունիքի Մեծ Մագրա գյուղից գալիս ու վերահաստատվում է Ավետարանոց ավանում՝ հիմք դնելով այս տոհմի՝ Վարանդայի Մելիք-Շահնազարյաններ ճյուղին: Ավետարանոցը դառնում է նրանց իշխանանիստը¹²: Կուսանաց անապատի գավիթը Մելիք-Շահնազարյանների տոհմական դամբանատունն էր: Այստեղ հանգչում են Մանուել վարդապետը, մելիք Միրզան, մելիք Հուսեփնը, մելիք Հովսեփը եւ նրանց կանայք¹³: Այս տոհմի պատմությունն է ներկայացված Միքայել Բեկ Լալաբեկյան-Մելիք-Շահնազարյանցի «Վասն ծագման Մելիք-Շահնազարեանց տոհմին» երկում¹⁴:

Ավետարանոց ավանի Կուսանաց անապատը, որը, ըստ ավանդության՝ հիմնադրվել է Ե. դարում, Աղվանից Վաչագան Բարեպաշտ թագավորի կող-

⁹ Տե՛ս **Ստեփաննոս Օրբելեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 476:

¹⁰ Տե՛ս **Հ. Ոսկեան**, Արցախի վանքերը, էջ 27:

¹¹ Տե՛ս «Ազգագրական հանդես», 1897, Բ., էջ 8: **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1987, էջ 441:

¹² Տե՛ս **Ս. արք. Զալալեանց**, Ճանապարհորդութիւն..., հ. Բ., Տիֆլիս, 1858, էջ 247 (այսուհետ՝ **Ս. արք. Զալալեանց**, Ճանապարհորդութիւն..., հ. Բ.: **Մ. արք. Սմբատեանց**, Տեղեկագիր Գեղարքունի Ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազետ գաւառ, Վա-դարշապատ, 1896, էջ 810: Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, էջ 147:

¹³ Տե՛ս **Մ. եպ. Բաբխուտարեանց**, Արցախ, Բագու, 1895, էջ 96 (այսուհետ՝ **Մ. եպ. Բաբխուտարեանց**, Արցախ...): **Հ. Ոսկեան**, Արցախի վանքերը, էջ 31: «Դիվան հայ վիմագրության», պր. V, Արցախ, էջ 148:

¹⁴ ՄՄ ձեռ. 7429, թերթ՝ 103, սյուր՝ թուղթ, 35,3 x 23, գիր՝ շղագիր, տող՝ 33-49:

մից¹⁵, ԺԷ.-ԺԸ. դարերում դառնում է գրչության կենտրոն եւ կապվում Գայանե եւ Հռիփսիմե կույսերի անունների հետ: Անապատի բարեկարգման աշխատանքներով զբաղվում էր մայրապետ Հռիփսիմեն, իսկ տեր Առաքելն ու Գայանեն օգնում էին նրան¹⁶: Գայանեն, որ գավառի անունով կոչվում էր նաեւ Վարանդացի, մելիք Հուսեինի եւ Դիզակի գավառի տիրակալ մելիք Ավանի քույր Աննայի դուստրն էր¹⁷: 1733-ին նա մտնում է անապատ եւ մինչեւ կյանքի վերջն իրեն նվիրում գրչության արվեստին¹⁸: Գայանեն հմուտ գրիչ էր: Րաֆֆին վկայում է, որ ինքն անձամբ Ավետարանոց գյուղում տեսել է Գայանեի գրչագրած գեղեցկագարդ մի Ավետարան¹⁹:

Գայանեի ձեռքով գրչագրված ու նկարագարված երեք ձեռագիր է մեզ հայտնի: Առաջինը Մաշտոց է, որ համաչափ ու մանր բոլորգրով Գայանեն օրինակել է պարոն Զանու մի խնդրանքով 1641 թվականին «ի յերկիրս Աղուանից՝ ի գեաղաքաղաքն Աւետարանոց՝ ընդ հովանեաւ Ս. եկեղեցոյս Յարութին» (թ. 287բ)²⁰: Համեստ ծաղկագարդումը՝ մի քանի ճակատագրորդեր, լուսանցագրորդեր ու զարդագրեր, նույնպես կատարել է Գայանեն: Գլխավոր հիշատակարանում, որտեղ գրիչն իր անունը թողել է ծածկագրով, խնդրում է հիշել իր հոգեւոր հայր «գըրտնաշան եւ բազմաերախտ եւ զքաղցրագույթ» տեր Առաքելին, որ իրեն «սնոյց խրատու եւ ուսմամբ սուրբ գրոց», իր ավագ քույր եւ հոգեւոր ծնող Հռիփսիմեին, որ մանկուց դաստիարակել է իրեն, ինչպես նաեւ ուխտի բոլոր միաբաններին (թ. 288ա):

Արդար վաստակով ձեռք բերած Մաշտոցը Զանումը նվիրել է Մարտիրոս քահանային՝ որպես հիշատակ իր ծնողներին եւ բոլոր արյունակից մերձավորներին: Ստացողը խնդրում է հիշել իրեն եւ նգովում նրան, ով այս Մաշտոցը Մարտիրոսի ձեռքից կփորձի առնել: 1823 թ. Զրաբերդի Իննամասն կոչվող անապատում Խաչատուր դպիրը, տեսնելով «գալիստանացու գիրքս գայս... յիրաւի

¹⁵ Ըստ ավանդության՝ Վաչագան թագավորը, չենթարկվելով պարսիկների՝ հավատափոխ լինելու պարտադրանքին, հրաժարվում է թագավորությունից, քաշվում անապատ եւ ապրում մեկուսի ու մենակյացի կյանքով: Նույն ավանդության համաձայն՝ թագավորն այստեղ արտագրում է մի Ավետարան, որից էլ առաջացել է գյուղի անունը: Տե՛ս նաեւ **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 47:

¹⁶ Տե՛ս **Ս. արք. Զալալեանց**, Ճանապարհորդություն..., հ. Բ., էջ 246: **Վ. Հացունի**, Հայուհին պատմութեան առաջ, էջ 174:

¹⁷ Իշխանական տոհմից սերող այս խիզախ հայուհու մասին ավանդազրույցը պատմում է, որ նա իր մոր՝ Աննայի հետ սպանում է գյուղ ներխուժած թուրք զինվորներին, նրանց մեջ նաեւ իրենց գորավարին, ով, տեսնելով Գայանեին, ցանկանում էր կնության առնել նրան: Տե՛ս ՄՄ ձեռ. 7429, թերթ 8բ: **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, 1942, էջ 445: **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 441:

¹⁸ Տե՛ս **Վ. Հացունի**, նշվ. աշխ., էջ 174: **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 445: **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 441:

¹⁹ Տե՛ս անդ:

²⁰ ՄՄ ձեռ. 2404, թերթ՝ 249, նյութ՝ թուղթ, 11 x 9, գիր՝ բոլորգիր, տող՝ 17. տե՛ս նաեւ՝ **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ. դ., հ. Գ., Երևան, 1984, էջ 14:

ցաւեցեալ մեզ զբազում ցաւս, զի կայր անկեալ ի ձեռս անշքաց եւ անպատիւ եղեալ», լրացրել է թերին եւ նորոգել, որպէսզի ոչ մի պակասություն չունենա (թ. 289ա):

Դարձյալ Ավետարանոցի Կուսանաց անապատում Գայանեն մի Ավետարան օրինակել է 1671 թ.²¹: Ձեռագրի գտնվելու վայրը հայտնի չէ:

Երրորդ ձեռագիրը նույնպէս Ավետարան է, որ գրվել է 1650 թ. «ի յերկիրս Վարանդա, ի գեաւոս Թաղավարդ» (Վիեննա, ձեռ. 931, թ. 257ա): Սարգիս քահանայի խնդրանքով բոլորգրով օրինակել է Կատարինե կույսը, իսկ ծաղկազարդումը կատարել է Գայանեն: Ավետարանը չունի համաբարբառ աղյուսակները: Գրիչը գրել է միայն Մատթեոսի Ավետարանի ցանկն ու նախադրությունը, իսկ մյուսներին թողել է մաքուր թերթեր՝ հետագայում դրանք ավելացնելու համար: Գայանեն նկարել է Ավետարանի խորաններն ու զարդագրերը, որոնց նկարազարդումը նույնպէս համեստ է: Թեպետ Գայանեն հմուտ է ու գեղեցկագիր գրչության արվեստում, բայց անվարժ է ու անփորձ ծաղկազարդման մեջ: Գրվելուց հինգ տարի հետո ձեռագիրը կազմելու են տվել: Այն այժմ պահվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում՝ 931 թվահամարի տակ²²: Կատարինեն անապատի սանուհիներից էր. նա աշակերտել է կուսանուհի Մարիամին: Վերջինս հոգացել է իր սանի կրթության ու դաստիարակության մասին, նրան կարդալ է սովորեցրել, ապա ուսումը կատարելագործելու նպատակով ուղարկել է Սյունյաց Շենիեր անապատի խոստովանահայր Աստվածատուր քահանայի մոտ՝ «վասն շարականի եւ գիր ուսուցանելոյ» (թ. 257բ):

Կատարինեի հիշատակարանում դարձյալ միասին են հիշվում անապատի միաբաններ՝ խոստովանահայր տեր Առաքելը, գրիչ եւ ծաղկող Գայանեն եւ նրա քույր մայրապետ Հռիփսիմեն: Կատարինեն ակնածանքով է հիշում նաեւ իր երկու ուսուցիչներին՝ բնիկ վանեցի Աստվածատուր քահանային եւ Մարիամին, որ ծնունդով Նախիջեւանի դիմաց՝ Պարսկահայքում գտնվող Դարաշամբ գյուղից էր: Գրիչը վերջում խնդրում է չմոռանալ նաեւ իրեն՝ «գղարիպն կրկին դարիպացեալ հոգով եւ մոխրաթաւալ եւ հողոյ հաւասար» գրչին (թ. 257ա): 1745 թ. ձեռագիրը պատկանել է ցղնեցի Սողոմոնի որդի Թաթեոսին, իսկ երրորդ ստացողներն են Աղպալն ու նրա կինը՝ Սուլթանումը:

Ավետարանոց ավանում 1667 թ. գրիչ Խոսրովը մայրապետ Հռիփսիմեի խնդրանքով գրչագրել է Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքը²³: Ավետարանոցի Ս. Աստվածածին եկեղեցում 1671 թվին անհայտ գրիչն ընդօրինակել է թղթյա պատկերազարդ մի Ավետարան²⁴:

²¹ Տե՛ս Ս. արք. Զալալեանց, Զանապարհորդութիւն..., հ. Բ., էջ 246:

²² Տե՛ս Հ. Ոսկեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1963, հ. Բ., էջ 515-517: Տե՛ս նաեւ Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ. դ., հ. Գ., էջ 626-627:

²³ Տե՛ս ՄՄ ձեռ. 7421, թերթ 596, նյութ՝ թուղթ, 35,5 x 23,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 35:

²⁴ Տե՛ս Մ. եպ. Բաբլախտարեանց, Արցախ..., էջ 94:

Այստեղ է պահվել այժմ նյույորքքաբնակ Արսեն և Արման Փուշմանների սեփականությունը հանդիսացող մագաղաթյա Ավետարանը²⁵: Ավետարանը գրված է բոլորգրով, գրությունը՝ երկայուն, ունի 319 թերթ (12 x 16,3), տողերի քանակը՝ 19, կազմը կաշի է՝ Ա. փեղկին արծաթյա խաչելության պատկերով: Այս շքեղ մատյանը Եղիա միայնակյացի խնդրանքով 1659 թ. Քարահատի Ս. Աստվածածին եկեղեցում օրինակել է «երբն-երբն գունովք եւ ոսկեգոծ որակօք» ծաղկազարդել է հմուտ գրիչ եւ ծաղկող Գրիգոր երեցը: Ձեռագիրը Եղիան նվիրել է իր հոգեւոր ծնող «մաքրազարդ եւ սրբաներկ» տեր Տերունին, որ «ստացաւ բազում գրեանս եւ շատ շինութիւն աւելացոյց ի յանապատին» (թ. 313ա): Ստացողի անունից գրիչը խնդրում է հիշել Եղիային, որ ջանք ու եռանդ չխնայեց մատյանի ստեղծման համար, Գրիգոր եպիսկոպոսին, Կարապետ աբեղային, ուխտի մյուս միաբաններին, իրեն՝ գրչին եւ տեր Դավիթին, որ իրեն օգնել է աշխատանքի ընթացքում: Վերջում գրիչը խնդրում է անմեղադիր լինել, որովհետեւ մագաղաթը շատ վատն էր եւ մեծ դժվարությամբ է ծաղկազարդումն ավարտել: Քանի որ գրչության արվեստով ու ներքին հարդարանքով Ավետարանը շատ էր շքեղ, տարիներ հետո Եղիան ու Մխիթար միայնակյացը ցանկանում են արտաքին տեսքն էլ պատշաճ տեսնել եւ կազմի Ա փեղկին արծաթյա խաչելության պատկեր են ավելացնում: Ավետարանը 6000 դեկանով գնել են Սարգիսն ու իր կողակից Ոսկանձը: 1675 թ. Ավետարանը դարձել է Ղարամուրատի անապատի սեփականությունը: Իսկ տեր Եղիազարի՝ 1747 թվի հիշատակումից տեղեկանում ենք, որ ձեռագիրը հիշատակ է մեկը Բաղիի դուստրերին՝ Հռուքիսմեհին, Դավլաթին եւ Շահանդուխտին: Ավետարանոց ավանի Ս. Աստվածածին եկեղեցում արծաթյա տուփերի մեջ պահվել են նաեւ Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների, Պանդալիոնի եւ կենաց փայտից մատուներ²⁶:

Վերին Թաղավարդ գյուղում անհայտ գրիչը 1717 թ. օրինակել է Առաքել Սյունեցու «Աղամագիրքը»²⁷: ԺԵ. դարում Առաքել երեցը իր եղբայր Պողոսի հետ «ի գաւառս Վարընդոյ, ի գեղս, որ կոչի Լիզներ, ի դուռնն Սուրբ Յովհաննէսին» (թ. 250բ) սկսել ու ավարտել է մի Ավետարան²⁸:

Խնուշինակ գյուղի եկեղեցում է պահվել 1672 թ. Վանում Վարդան գրչի օրինակած եւ Գրիգոր Վանեցու ծաղկած Ավետարանը²⁹, որը 1845 թ. մեկը

²⁵ Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», հ^տ 12, էջ 258-261, նաեւ՝ Վ. Հակոբյան, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ. դ., հ. Գ., էջ 851-852: Մ. Լալ. Բարխուտարեանց, Արցախ..., էջ 94-95:

²⁶ Տե՛ս Մ. Լալ. Բարխուտարեանց, Արցախ..., էջ 95:

²⁷ Տե՛ս ՄՄ ձեռ. 3888, թերթ՝ 148, նյութ՝ թուղթ, 17 x 10,5, գիր՝ նոտրագրանման շղագիր, տող՝ 20-22:

²⁸ Տե՛ս ՄՄ ձեռ. 4176, թերթ՝ 252, նյութ՝ թուղթ, 26 x 20, գիր՝ բոլորգիր, տող՝ 21-22:

²⁹ Տե՛ս ՄՄ ձեռ. 9032, թերթ՝ 257, նյութ՝ թուղթ, 12,1 x 9,3, գիր՝ բոլորգիր, տող՝ 22: Հմմ. Մ. Լալ. Բարխուտարեանց, Արցախ..., էջ 119:

Զհանբախշի դուստր Նանագուլը նվիրել է Ավետարանոցի Ս. Աստվածածին եկեղեցուն: Իսկ շուշեցի տիրացու Անաստաս Տեր-Մկրտչյանը 1855 թ. Խնուշինակ գյուղի եկեղեցուն է նվիրել մի Մաշտոց³⁰:

1575 թ. Հովհաննես քահանայն Ս. Ստեփանոս եկեղեցում «ի Փոստանհանկ գաւառս Վարընթոյ, ի գեւղս, որ կոչի Շուշոյ» (թ. 264ա) օրինակել է մի պատկերազարդ Ավետարան³¹: Առաջին ստացողը հայտնի չէ, երկրորդ ստացողն է Գրիգոր երեցը: Ծաղկողը, հավանաբար, գրիչն է: Ձեռագիրն ունի ավետարանիչների պատկերները, կիսախորաններ, բազմաթիվ լուսանցազարդեր ու զարդագրեր: Գլխավոր հիշատակարանում գրիչը հիշում է իր ծնողներին՝ Մատթեոսին եւ Գանուն, կողակցին՝ Գուլխաթունին, եղբայրներին, քույրերին, զավակներին եւ արյունակից մերձավորներին: 1596 թ. ձեռագիրը գնել է Ովաննես եպիսկոպոսը: 1825 թ. այն գտնվել է Սավրի գյուղի Ս. Հովհաննես եկեղեցում՝ Հակոբի որդի Ավագի մոտ:

Գրչագրեր են հասել նաեւ **Թաղլար** գյուղից (ավանից): 1834 թ. Գասպար քահանայն անվարժ բոլորգրով Մայր Մաշտոց է օրինակել. ձեռագրի ստացողը գրիչն է³²:

Թաղլարում է պահվել ՄՄ 2464 Շարակնոցը: Գրվել է 1665 թ., գրիչը, գրչության վայրն ու առաջին ստացողն անհայտ են³³: Ձեռագիրը թերի է՝ սկզբից եւ վերջից թերթեր ընկած լինելու պատճառով: Երկրորդ ստացողը՝ մեծթաղլարցի ուստա Միրզան արդար վաստակով այլազգիներից գնել է ձեռագիրը՝ հիշատակ իրեն եւ ազգականներին³⁴: Իսկ Մելքումը 1707 թ. ստացողի անունից հիշատակ է թողել ձեռագրի մի քանի էջերում: Գլխավոր հիշատակարանը պատմում է, թե ինչպես թշնամին մտել է Արցախի գավառները, կողոպտել, տարել է ամեն ինչ, գերվել են նաեւ ձեռագրերը, կործանվել ու թալանվել են Գանձակի, Դիզակի, Վարանդայի, Խաչենի հոգեւոր կենտրոնները. «Լազկին եկն Կանձա, Խաչին, Վարանդա, Դուգաղ ամեն եսիր տարաւ Դաղխտան: Եղ նորա այլազգն զօրացան, երկիր խնկարկեցին, վանք, զանցապատ, եկեղեցիք կոթօրդեցին: Զայս Շարակնոցս այլազգի ձեռաց գնեցի, որ է Շիրվանդալու» (թ. 179ա): Բարեբախտաբար, տարիներ հետո գտնվել ու փրկվել է այս Շարակնոցը:

Թաղլար ավանի Ամենափրկիչ եկեղեցում է պահվել 1776 թ. Որոտանի Լոր գյուղի Ս. Գեորգ եկեղեցում Կաքավաբերդի Մահրափու գյուղի քահանա տեր

³⁰Տե՛ս Մ. Լալ. **Բարխուտարեանց**, Արցախ..., էջ 119:

³¹ ՄՄ ձեռ. 4375, թերթ՝ 266, նյութ՝ թուղթ, 21 x 15,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 21: Հասկանալի է, որ այստեղ նշվում է ոչ թե Շուշի քաղաքը, այլ Շուշո, այսինքն՝ ներկայիս Շոշ գյուղը:

³² Տե՛ս Յ. Թովչեան, Յուրակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մաս Ա., Վաղարշապատ, 1898, էջ 50:

³³ Տե՛ս ՄՄ ձեռ. 2464, թերթ՝ 296, նյութ՝ թուղթ, 12 x 9,2, գիր բոլորգիր, տող՝ 22:

³⁴ Ստացողը հիշատակարանում հիշում է ծնողներին՝ Գրիգորին եւ Խանումին, եղբայրներին՝ Ավաթին, Աղայճանին, Մանին եւ կողակցին՝ Խանապաշուն, որդուն՝ Ոյանին, դստերը՝ Զանանին:

Վրթանեսի խնդրանքով Արիստակես սարկավագի օրինակած Ավետարանը: Մագաղաթյա եւ նկարազարդման արվեստով աչքի չընկնող այս Ավետարանը Թաղլարցի Պողոսից Պողոսի որդի Աբրահամը տեսել է այլազգիների մոտ, գնել եւ նվիրել է Տեղ գյուղի Ս. Գեորգ եկեղեցուն: Ապա, ինչպես երեւում է Աբրահամի վերջին հիշատակարանից, նա ձեռագիրը նվիրել է Թաղլարի Ամենափրկիչ եկեղեցուն՝ իր ծնողների՝ Պողոս եւ Խաթուն Բաղդասարյանների հիշատակին³⁵:

Ազոխ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում Սարգիս անունով ոմն ծերունի քահանա օրինակել է թղթյա մի Ավետարան³⁶:

Խաչմաչ գյուղում Թադեոս քահանայի խնդրանքով Աղեքսանդր եպիսկոպոսի օրինակած մի Ավետարան է պահվել Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում³⁷: Իսկ Խաչմաչ գյուղի Ս. Ստեփաննոս եկեղեցու քահանայի մոտ եղել է երկու գրչագիր Մաղմոս: Նրանցից մեկը՝ մագաղաթյա եւ գեղեցկագիր, ունեցել է նաեւ Աթանաս եպիսկոպոսի Դավիթ մարգարեի մեկնությունը³⁸: Վերջին չորս ձեռագրերի ճակատագրերը հայտնի չեն:

Սարուշենի հնաշեն, բայց գավառի բոլոր եկեղեցիների մեջ իր ներքին եւ արտաքին հարդարանքով առանձնացող Ս. Աստվածածին եկեղեցին հռչակված է նաեւ Սարուշենի Կարմիր Ավետարանով³⁹: Հնության կամ գորության պատճառով Ավետարանը տեսնելու համար այստեղ են եկել շատ ուխտավորներ ոչ միայն Արցախից, այլեւ հարեւան երկրներից, եկել են անգամ մահմեդականներ:

Նկարազարդման արվեստով Ավետարանն առանձնապես աչքի չի ընկնում: Այն մագաղաթյա է, հնարավոր է՝ գրվել է 1182 թ.⁴⁰: Գրչության թվականի վերաբերյալ մատյանի սկզբում պահպանվել է դժվարընթեռնելի մի փոքրիկ գրություն. «Գրեցաւ սուրբ Աւետարանս...յաբեթեանս թուականին ՈԼԱ [1182]»: Քանի որ բնագիրն ամբողջությամբ գրված է երկաթագրով, Գ. Հովսեփյանը կարծում է, որ ձեռագիրը գրվել է ավելի վաղ, իսկ 1182-ը վերանորոգման թվականն է⁴¹: Ավետարանն ունեցել է Ռստակես, Վրդանես, Ստեփանոս վարդապետների պատկերները: Նրանք ձեռագրի գրիչներն են: Ռստակեսն առաջին գրիչն է, որ հասցրել է գրել Մատթեոսի եւ Մարկոսի Ավետարանները՝ ձեռագրի սկզբում ու խորանների մեջ թողնելով հիշատակագրություններ, որոնցում

³⁵ Տնն Մ. Եպ. Բարխուտարեանց, Արցախ..., էջ 86-87:

³⁶ Տնն անդ, էջ 88:

³⁷ Տնն անդ, էջ 140:

³⁸ Տնն անդ, էջ 100:

³⁹ Տնն Յ. Թովչեան, Յուրակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, մաս Բ., Վաղարշապատ, 1900, էջ 47: Մ. Եպ. Բարխուտարեանց, Արցախ..., էջ 101:

⁴⁰ Տնն անդ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ, Երեւան, 1988, էջ 234:

⁴¹ Տնն Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա., Աթիլիաս, 1951, էջ 491: Հմմ. Մ. Եպ. Բարխուտարեանց, Արցախ..., էջ 101-102:

խնդրել է հիշել իրեն. «ԶՌատակես գրիչ յիշեսցիք, սիրելի՛ եղբարք...»: Նրա հիշատակարանը անավարտ է մնացել, որովհետև վախճանվել է գրիչը՝ կիսատ թողնելով աշխատանքը: Այն շարունակել է Վրդանես գրիչը՝ Ռատակեսի հիշատակարանին ավելացնելով. «Որ փոխեցաւ առ Քրիստոս, որ գրեց զՄաթեոս եւ զՄարկոս»: Վրդանեսը գրել է Ղուկասի եւ Հովհաննեսի Ավետարանները, իսկ իր նկարի տակ թողած գրությամբ խնդրել հիշել իրեն՝ մեղավոր գրչին՝ «զի չիք մարդ մեղավոր, քան զիս՝ յերկրի»: Վրդանեսին շարունակել է Ստեփանոսը եւ դարձյալ նկարի տակ միայն անունն է թողել՝ «Ստեփանոս»: Զեռագիրը ծաղկել է Հակոբը եւ Մատթեոսի պատկերի տեղում փակագրով թողել է հիշատակարան. «Տէր Աստուած, ողորմեա՛ Յակովբայ նկարչի»:

Ավետարանը գերի է տարվել Պարսկաստան: 1827 թ. Շուշի Ղալիի բնակիչ Միրզա Օհանեսյան-Զարկարյանցովը ձեռագիրը տեսել է Թավրիզում, մեծ գումարով գնել եւ վերադարձրել է Շուշի ու նորոգել տվել⁴²: Մատյանի հետագա ճակատագիրն անհայտ է:

Կղարծի գյուղի Սրբոց Թարգմանչաց եկեղեցում պահվել է կենաց փայտից մի մասունք՝ ամփոփված արծաթյա խաչի մեջ, եւ 1477 թ. Հովհաննես գրչի՝ Աղթամարում օրինակած թղթյա պատկերագարդ Ավետարանը: «Ի դառն եւ ի նեղ ժամանակ խուժադուժ ազգաց նետողաց տաճկաց ազգաց չարամահ եղած» Ավետարանը փրկվել ու բերվել է Արցախ, որտեղ 1502 թվին ԶՌ (6000) դահեկանով մի քահանա գնել ու նվիրել է Գանձասարի առաջնորդին, վերջինից էլ այն ձեռք է բերել Թորոս երեցը⁴³:

Տասնինը ձեռագիր մատյան է հասել **Շուշիից**, որոնք գրվել են ԺԸ-ԺԹ դարերում: Այդ ձեռագրերը հիմնականում բառարաններ են, փիլիսոփայական, բարոյագիտական, տոմարական, բժշկական նյութերի ժողովածուներ: Դրանք պահվում են Մաշտոցյան Մատենադարանում⁴⁴:

⁴² Տեն Մ. Եպ. Բաբխումարեանց, Արցախ..., էջ 100-102: Մ. արք. Զալալեանց, Ճանապարհորդութիւն..., հ. Բ., էջ 342:

⁴³ Տեն Մ. Եպ. Բաբխումարեանց, Արցախ..., էջ 112:

⁴⁴ Ժողովածու (ՄՄ ձեռ. 2622), 1804-1856 թթ., վայր՝ Կապադովկիա, Շուշի, Կ. Պոլիս, գրիչ՝ Գրիգոր Կոստանդնուպոլսեցի, Հովսեփի Արցախեցի, Հովհաննես Թազկորյան, Աբել Մխիթարյանց, Գրիգոր Շաքարճյան, ստացող՝ Մատթեոս վրդ. Բաղդասար Զալալյան, Թադեոս Միհրդատեանց, Դաթեոս աղա: Ժողովածու (ՄՄ ձեռ. 2835), 1831 թ., գրիչ՝ Գրիգոր Տեր-Ավագյան Նախիջևանցի: Դուրան (ՄՄ ձեռ. 2968), 1848 թ., գրիչ՝ Մնացական Հովհաննիսյան-Հարությունյան, Հովսեփի Փինաջյանց: Քնար սրտի (ՄՄ ձեռ. 3038), 1883 թ., գրիչ՝ հեղինակը: Ժողովածու, 1828 թ. (ՄՄ ձեռ. 3351): Ռիչինալդ Պադեստին (ՄՄ ձեռ. 3690), 1833 թ.: Ժողովածու (ՄՄ ձեռ. 3869), 1863 թ.-ից առաջ: Ժողովածու (ՄՄ ձեռ. 7428), 1791-1792 թ., գրիչ՝ Միքայել Աստապատեցի: Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից (ՄՄ ձեռ. 8035), 1848 թ., գրիչ՝ Ներսես Տեր-Բարսեղյան Աբովյանց Օձնեցի: Ժողովածու (ՄՄ ձեռ. 8212), 1822 թ., գրիչ՝ Մեսրոպ Թադիսարյանց: Յարութիւն Մելքոնեանց, Քերականութիւն Հայկազեան լեզուի (ՄՄ ձեռ. 9132), 1851 թ., գրիչ՝ հեղինակը: Հարութիւն Մելքոնեանց, Սրբազան պատմութիւն հին եւ նոր օրինաց (ՄՄ ձեռ. 9133), 1851 թ., գրիչ՝ հեղինակը: Պատմութիւն սր. գրոց (ՄՄ ձեռ. 9275), 1828 թ.,

Շուշիի եկեղեցիներում պահվել են բավական մեծ թվով ձեռագրեր:

Վայոց ձորի Հերմոնի վանքում Եսայի նկարչի գրած եւ ծաղկած մագաղաթյա Ավետարանը պահվել է Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (ՄՄ ձեռ. 9431): Այստեղ են եղել Նիկողայոս գրչի՝ 1658 թվին ստույգ եւ ընտիր օրինակից Կաֆայում գրված եւ ճաշակով նկարազարդված մագաղաթյա Ավետարանը⁴⁵, Վարդանի 1460 թվին Վանում օրինակած Ավետարանը⁴⁶: 1656 թ. Կոստանդնուպոլսում Ղազար գրչի օրինակած տասնմեկ նրբաճաշակ եւ ընտիր պատկերներով մագաղաթյա Ավետարանը Ամենափրկիչ եկեղեցում ստացել է Ղուկասը⁴⁷: Իսկ 1765 թ. այն գնել է Ղազանչեցոց Նարինեն. վերջինիս զավակներն էլ Ավետարանը նվիրել են եկեղեցուն:

Ագուլեցոց Ս. Աստվածածին եկեղեցում են եղել 1645 թվին Տավուշի Թովուզ գյուղում Սարուխանի խնդրանքով Եսայի գրչի օրինակած Ավետարանը⁴⁸, Չարեքա անապատի առաջնորդ Դավիթ եպիսկոպոսի աշակերտ Սարգիս կրոնավորի 1641 թ. նորոգած Ավետարանը⁴⁹, Բարսիսատում Բարսեղ քահանայի 1680 թ. ընդօրինակած Ավետարանը⁵⁰, 1308 թ. Ասպինակայում Ղազարի օրինակած Ավետարանը, որ հետո նկարազարդել է Ծերուն ծաղկողը եւ նորոգել վերջին ստացող Կիրակոս քահանան⁵¹:

Մեղրեցոց Սբ. Աստվածածին եկեղեցում է պահվել 1414 թ. Կոռուց անապատում Հովսեփ քահանայի ձեռքով ընդօրինակված Ավետարանը, 1473 թ. մոկացի հայտնի գրիչ Իսրայելի օրինակած Ավետարանը, 1778 թ. տեր Մեսրոպի

գրիչ-թարգմանիչ՝ Հարություն Դավթյան Զուղայեցի: Բաղգիրք Հայկազեան լեզուի (ՄՄ ձեռ. 9349), 1852 թվականից առաջ, գրիչ՝ տիրացու Նահապետ Հովհաննիսյան: Պողոս Ներսիսեան, Քերականութիւն (ՄՄ ձեռ. 9688), 1842թ., գրիչ՝ հեղինակը՝ Յարութիւն Ալամդարեանց, Համառոտ բարարան ի ոռսաց լեզուէ ի հայ (ՄՄ ձեռ. 10106), 1846 թ., գրիչ՝ Հովաննես Մախմուրյանց: Ժողովածո (ՄՄ ձեռ. 10107), 1868 թ., Խանքանդ, գրիչ՝ Անդրեաս Մուսաեղյան Շուշեցի: Աղթագիրք (ՄՄ ձեռ. 10160), 1841 թ-ից առաջ, գրիչ՝ Մովսես, ստացող՝ Հակոբ մահտեսի, Ժողովածո (ՄՄ ձեռ. 10166), 1840 թ., գրիչ՝ Մովսես:

⁴⁵ Տնն Մ. Եղ. Բարխուդարեանց, Արցախ..., էջ 138:

⁴⁶ Տնն Լ. Խաչիկյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ. դ., հ. Բ., էջ 146: Հմմ. Մ. Եղ. Բարխուդարեանց, Արցախ..., էջ 139:

⁴⁷ Տնն Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ. դ., հ. Գ., էջ 701: Հմմ. Մ. Եղ. Բարխուդարեանց, Արցախ..., էջ 138:

⁴⁸ Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ. դ., հ. Գ., էջ 181-182: Հմմ. Մ. Եղ. Բարխուդարեանց, Արցախ..., էջ 145:

⁴⁹ Տնն Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ. դ., հ. Գ., էջ 47: Հմմ. Մ. Եղ. Բարխուդարեանց, Արցախ..., էջ 143:

⁵⁰ Տնն Մ. Եղ. Բարխուդարեանց, Արցախ..., էջ 144:

⁵¹ Տնն Լ. Խաչիկյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ. դ., էջ 57: Յ. Թովհանյան, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մաս Բ., էջ 46: Հմմ. Մ. Եղ. Բարխուդարեանց, Արցախ..., էջ 148:

գրած, ավելի ուշ Հակոբի ձեռքով նորոգված Ավետարանը, եւ փոքրադիր մի Ավետարան, որ պատվիրել է Մարիամը Հովհաննես արեղային⁵²:

Շուշիի Նոր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն շուշեցի Ավագ Դանիելյան-Ղազարյանցը նվիրել է Գեղվաձորի Կից գյուղում ընդօրինակված գեղեցկագիր մագաղաթյա մի Ավետարան⁵³:

Այս բոլոր ձեռագրերի գտնվելու վայրն անհայտ է:

Այսպիսով, Վարանդա գավառի վանքերին ու եկեղեցիներին կից գործող գրչության կենտրոններում գրվել, ծաղկազարդվել ու պահպանվել են պատմական, փիլիսոփայական, մեկնողական, կրոնական, ծիսական բովանդակությամբ բազմաթիվ ձեռագիր մատյաններ, որոնց հիշատակարանները նաեւ բազմաթիվ պատմական նյութեր եւ ուշագրավ տեղեկություններ են պահպանել գավառի պատմության ու հոգեւոր կյանքի վերաբերյալ:

РЕЗЮМЕ

В предлагаемой статье дан обзор рукописного наследия Арцахской провинции Варанда. До наших дней не дошла ни одна рукопись, переписанная в скриптории монастырского комплекса Амарас. Однако, его существование как религиозно-культурного центра подтверждает совокупность имеющихся конкретных материальных и исторических свидетельств, в том числе эпиграфические надписи и колофони датированных манускриптов, созданных в других рукописных мастерских этой провинции.

Значительным свидетельством является также официальный документ, касающийся церковей этой провинции, составленный архимандритом Анастасом – сохранившийся в «Истории страны Агванк» Мовсеса Каланкатуаци. Имеется также свидетельство о том, что наряду с дошедшими до нас рукописями 15 в., писанными епископом Амараса Мануелом в Гтчаванке, существовали его же манускрипты, изготовленные в Амарасе.

Пустынь Кусанац (близ села Аветараноц) была основана согласно преданию в 5 в. Агванским царем Вачаганом Барепаштом. Известно, что в 17 в. в скриптории этого комплекса копировала рукописи Гаяне Варандаци. В Аветараноце хранилось пергаментное Евангелие 1659 г., написанное и иллюминированное Григором в селе Караат по просьбе монаха Егии (ныне собственность Арсена и Армана Пушманов из Нью-Йорка).

В рукописных центрах арцахской провинции Варанда было переписано и иллюстрировано значительное число списков религиозных, исторических, философских сочинений, наряду с толковательная, церковная литература и др.

⁵² Տե՛ս Մ. Լալ. Բարխուտարեանց, Արցախ..., էջ 147-148:

⁵³ Տե՛ս անդ, էջ 147:

Манускрипты хранились во многих населенных пунктах провинции: это села Верин Тагавард, Таглер, Хачмач, Азох, Шош, Хнушинак, Кгарти. Своим Красным Евангелием знаменита Сарушенская церковь Св. Богоматери. Немало рукописей хранилось в церквях Шуши – Казанчецоц, Агулецоц, Меграцоц и Нор Таг. 19 шушинских манускриптов обрели свое надежное пристанище в хранилище Матенадарана.

Скажем, что калофоны этих памятников также донесут до наших дней неоценимые материалы для реконструкции истории, культуры и духовной жизни населения арцахской провинции Варанда.

SUMMARY

The present article is devoted to the manuscript heritage of Varanda province of Artsakh. None of the manuscripts has reached us from the scriptorium of Amaras monastery, which was the centre of Varanda. However, we receive an information about the monastery as a religious and cultural centre from the epigraphic inscriptions, colophons of manuscripts written in the other places of the province, as well as from the official document on the monasteries compiled by Anastas the archimandrite, which is also found in the *History* by Movses Kaghankatvatsi. Manuscripts copied in the 15th century in Gtchavank by Manuel the bishop of Amaras have reached us. There is an evidence that he had copied manuscripts in Amaras as well.

According to the tradition Kusanats monastery (near to the village Avetaranots) was founded in the 5th century by Vachagan the Pius the king of Aghvank. In the 17th -18th centuries it became a scriptorium, where one of the most famous scribes was Gayane Varandatsi. A Parchment Gospel copied and illuminated by Grigor the priest in 1659 in Karahat at the request of Eghia was preserved in Avetaranots (subsequently became the property of Arsen and Arman Poushmans living in New York).

Manuscripts (philosophical, historical, religious, liturgical and commentry literature) have been copied and preserved in many villages of Varanda province - Verin Taghavard, Taghlar, Khachmach, Azokh, Shosh, Khnushinak, Kgharts. St. Virgin church in the village Sarushen was famous for its parchment Red Gospel. Numerous manuscripts had been preserved in the churches of Shushi - Ghazanchetsots, Aguletots, Meghretsots and Nor Tagh. 19 manuscripts from Shushi are at present at Mashtots' Matenadaran.

Colophons of these manuscripts contain appreciable data about the history, culture and spiritual life of Varanda province.



ՆԱՆԵ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՒ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Հայաստանում հողի սահմանագծման, սահմանազատման աշխատանքների վերաբերյալ հայերեն առաջին գրավոր հիշատակությունները պահպանվել են դեռևս Ե. դարից (համեմատության համար արժե նշել, որ Ռուսաստանում այդ հարցի հետ առնչվող առաջին վկայությունները ԺԱ. դարից են. հանդիպում են «Русское право»-ում՝ Կիևյան Ռուսիայի իրավական նորմերի հավաքածու¹):

Քերթողահայր Մովսես Խորենացին իր «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ ներկայացնում է Արտաշես Ա. Բարերար թագավորի հողային բարեփոխումները. «Յետ ամենայն առաքինութեանց եւ գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զսահմանս գիւղից եւ ագարակաց որոշել, քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով ազգս, եւ բնակեցուցանելով ի լերինս եւ ի հովիտս եւ ի դաշտս: Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս, եւ պնակաձեւ փոսել զմէջնս, ծածկելով յերկրի. եւ չորեքկուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ»²: Նրա օրինակին հետեւելով, ինչպես Պատմահայրն է ասում՝ «Ընդ որ նախանձեալ Արտաշրի որդոյ Սասանայ՝ զնոյն նման հրամայէ առնել եւ ի Պարսից աշխարհին եւ յիւր անունն անուանել, զի մի՛ եւս յիշեսցի անունն Արտաշիսի:

Բայց ասի, ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ո՛չ լեռնային եւ ո՛չ դաշտային, յաղագս շինութեան երկրիս»³:

Արտաշես Ա.-ի բարենորոգումների մասին նշանակալից աղբյուրներ են նրա արամեերեն արձանագրությունները, որոնք հայտնաբերվել են պատահական գյուտերի շնորհիվ: Առայժմ դրանց թիվը տասնմեկն է: Արձանագրու-

¹ Տե՛ս «История земельных отношений и землеустройства», под ред. А. А. Варламова, М., 2000, էջ 327:

² «Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց», աշխատ.՝ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, գլ. Բ. ծգ, էջ 186:

³ Անդ:

թյունների վերծանությամբ զբաղվել են մի շարք ուսումնասիրողներ, հատկանշական է, որ հիմնականում՝ օտարագզիներ. վերջիններս պնդում են, թե այդ գտածոները Արտաշեսի հողաբաժան այն սահմանաքարերն են, որոնց մասին որոշակիորեն հիշատակել է Մովսես Խորենացին: Գյուղերի ու ագարակների հողաբաժան այդ սահմանաքարերը Արտաշես Ա.-ի՝ հողի մասնավոր սեփականության զարգացման ընթացքի կարգավորմանը, հողատերերի եւ գյուղական համայնքների միջեւ ստեղծված հակասությունները մեղմելուն ուղղված բարեփոխումների արդյունք էին⁴:

Հողի խնդիրների հետ կապված (սահմանագծում, օգտագործում, հողի նկատմամբ իրավունքներ) հաջորդ կարելուր աղբյուրն է «Կանոնագիրք Հայոց»-ի Ա. հատորի նյութը⁵, որը բովանդակում է Հովհաննես Գ. Օձնեցի Հայրապետի խմբագրությունը (Ը. դար): «Կանոնագրքի» Բ. հատորում ընգրկված են Ժ. եւ ԺԱ. դարերի խմբագրություններում Հովհաննես Օձնեցուց հետո կատարված հավելումները⁶: Հողի հարկման վերաբերյալ օրենքներ «Կանոնագիրք Հայոց»-ում հանդիպում են՝ Ներսես Գ. Տայեցի Կաթողիկոսի «Սահմանք եւ կանոնք»-ում (ՌՄՁԲ./ՌՄՀԴ./ԺԵ.), Սահակ Պարթևի «Գիր աւանդութեան»-ում (ՌՄԾԷ./ՌՄՆԹ./Ա.), իսկ ժառանգման վերաբերյալ՝ Դվինի եկեղեցական ժողովի «Կանոնք»-ում (ՌՄՆԳ./ՌՄԼԵ./Ը.):

Հասարակական հարաբերությունների (այդ թվում նաեւ հողային հարաբերությունների) կարգավորման գործում դժվար է գնահատել Մխիթար Գոշի հեղինակած «Դատաստանագրքի» դերը: Մխիթար Գոշն այն գրել է ԺԲ. դարավերջին: ԺԲ.-ԺԳ. դարերի միջակա 50-ամյակը պատմաքաղաքական մեծ հեղափոխումների ժամանակաշրջան էր Հայաստանի ու հայ ժողովրդի կյանքում: ԺԲ. դարի վերջին քառորդից սկսած՝ Հայաստանը թեւակոխում է ազգային պետականության վերականգնման մի նոր շրջան, որն անխազելիորեն կապված էր երկրի հարավ-արեւմուտքում Ռուբինյան, հյուսիս-արեւելքում՝ Զաքարյան իշխանական տների հզորացման հետ:

Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքի» շարադրման անհրաժեշտությունը, աշխարհաքաղաքական հանգամանքներով պայմանավորված, բացատ-

⁴ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», կազմ.՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան, հտ. 1, Երևան, 2007, էջ 299-301, 571: Գ. Շիրմազանի իր «Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից» (Երևան, 1962) աշխատության մեջ նշում է, որ մասնավոր սեփականության նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք ունեցող Հին Արևելքում, այդ թվում նաեւ Հայաստանում, առավել տարածված էր հողի համայնքային սեփականության ձևը, քանզի կլիմայական այս պայմաններում առանձին տնտեսություններն ինքնուրույն չէին կարող լուծել ջրանցքաշինության, ոռոգման խնդիրները: Դրանք պետք է կառուցվեին ու կառավարվեին պետության, համայնքի միջոցներով ու միասնական ուժերով (էջ 15):

⁵ Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխատ.՝ Վ. Հակոբյանի, հտ. Ա., Երևան, 1965. հմմտ. «Մատենագիրք Հայոց», հտ. Է., Ը. դար (յաւելում), Անթիլիաս, 2007, էջ 173-707:

⁶ Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխատ.՝ Վ. Հակոբյանի, հտ. Բ., Երևան, 1971, էջ 475:

րում է 12 պատճառով: Դատաստանագրքում կան գլուխներ՝ նվիրված հողասեփականատեր շինականներին (գլ. ԻԱ.՝ «Յաղագս դատաստանաց շինականաց»), հողի կամ անշարժ գույքի գրավին (գլ. ՁԳ.՝ «Յաղագս դատաստանաց գրավից»), առքուվաճառքին (գլ. ՂԱ.՝ «Յաղագս դատաստանաց վաճառողաց եւ գնողաց տան»), սահմաններին (գլ. ՃԷ.՝ «Յաղագս դատաստանաց սահմանաց ամենայնի», ՄԽԷ.՝ «Վասն սիւնօռու, որ է սահմանք») կամ դրանց խախտմանը (գլ. ՃԻ.՝ «Յաղագս դատաստանաց մտելոց ի հունձն», ՃԻԱ.՝ «Յաղագս դատաստանաց մտողաց յայգի ընկերաց»)⁷:

Մարդկային մտքի պատմության մեջ Մխիթար Գոշը մեկն է առաջիններից ու եզակիներից, որ անագատության հիմքը փնտրել է հասարակության ներքին կյանքում, բացատրել ընկերային-տնտեսական պատճառներով: Անագատության, ուրիշներին ծառայելու հիմնական պատճառը նա համարում էր հողն ու ջուրը, երբ հարաբերությունները մարդկանց միջեւ այնպես են դասավորվում, որ ոմանք զրկվում են դրանցից, իսկ մյուսներն իրենց ձեռքում են կենտրոնացնում: Շինականի վիճակն ավելի էր ծանրացել, որովհետեւ ուժեղացել էր շահագործումը՝ մի կողմից հողային եւ այլ կարողության կենտրոնացում հասարակության փոքրամասնության ձեռքում, մյուս կողմից՝ շինականության որոշ մասի հողագրկում, որն արդյունք էր շահագործման ուժեղացման, առեւտրավաշխառուական կապիտալի աշխույժ գործունեության եւ հողային հարաբերությունների բնագավառ ներթափանցման: Մխիթար Գոշը նորմեր է սահմանում «Դատաստանագրքում», որով ձգտում է հարթել սուր անկյունները, պաշտպանել շինականին: Պատահական չէ, որ այստեղ մի շարք կանոններ կան վարձկանների վերաբերյալ, քանի որ վարձկանությունը զանգվածային բնույթ էր կրում: Հողագրկված շինականն աղքատանում էր եւ օրվա հացը հոգալու համար հարկադրված դառնում էր վարձկան:

Բարվոք չէր նաեւ հողակտոր ունեցողների վիճակը: Ծանրանում էին եղած հարկերը, ավելանում՝ նորերը: Միջին դարերում Հայաստանում գործում էին հողի եւ դրանից ստացվող արդյունքի բազմաթիվ հարկեր.

ա. Ախարթամար - քաղաքներում վճարվող հարկ,

բ. Աղլիակ - գոմի, փարախի օգտագործման համար վճարվող հարկ,

գ. Ամիրայիակ - քաղաքապետի օգտին գանձվող վարչական հարկ,

դ. Բալախահակ - անասուններ արածեցնելու հարկ, արոտների՝ խոտհարքի հարկ,

ե. Դեմեթարայիակ - տուրք, որ գյուղի համայնքից գանձվում է գյուղավագի օգտին,

զ. Խալայ - գինու, խաղողի եւ այգու վրա դրված հարկ,

է. Խալան - թաթարների նշանակած հարկի մի տեսակ,

ը. Խափչուր - ոչխարի հարկ,

⁷ Տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխատ.՝ Խոսրով Թորոյանի, Երեւան, 1975:

թ. Խոտչեք - մի որոշ տեղում խոտ հնձելու իրավունքի համար վճարվող հարկ,

ժ. Հագր - հարկ՝ կալվածատիրոջ փարախներից ու գոմերից օգտվելու համար,

ժա. Ղեսարայ - հարկ, որ վճարում էին Օշական գյուղը եւ վանքերը,

ժբ. Ղփչուր - անասնագլխի հարկ, անասնահարկ⁸:

Արժեքավոր է Միմեոն Երեւանցի Կաթողիկոսի կոթողային «Ջամբռ» աշխատությունը, որն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում նրա գիտական, գրական ժառանգության մեջ: Այն ինչպես անցյալում, այնպես եւ այժմ մնում է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, չի կորցնում իր կարեւորությունը: 1873 թ. առաջին անգամ լույս է տեսել Վաղարշապատում՝ շուրջ մեկ դար ձեռագիր վիճակում մնալուց հետո⁹: 1958 թ. Մոսկվայում հրատարակվել է ռուսերեն, իսկ 2003 թ. Երեւանում լույս է տեսել աշխարհաբար թարգմանությունը՝ ընդարձակ ծանոթագրություններով եւ առաջաբանով¹⁰: Հեղինակի բնորոշմամբ՝ այն «...գրաւոր յիշատակարան, հայելի եւ ժողովածոյ է» ոչ միայն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, այլ նաեւ հարակից վանքերի, մուլքատու հողատարածքների մասին: Միմեոն Երեւանցի Հայրապետը հավաքագրել ու մեկ ամբողջական մատյանում է գրանցել վանքերի եկամուտները եւ ծախսերը, հաշվետվությունները, պայմանագրերը, տեղեկանքներն ու այլ փաստաթղթեր եւ կոչել է «Ջամբռ». վերջինս ֆրանսերեն «chambre» բառի փոփոխված տարբերակն է, նշանակում է կալվածական եւ իրավական փաստաթղթերի դիվան, ժողովածու:

Միմեոն Երեւանցին իր նախաձեռնությունը բացատրում էր այսպես. «Քանզի գրեցի ի սմա զամենայն որպիսութիւնսն, այս ինքն զորպիսաբար հաստատիւն, զորպիսաբար կեալն եւ կառավարիւն սորին եւ սորին աթոռակալացն՝ ներքսապէս եւ արտաքսապէս: Զորքանաբար տարածումն իշխանութեանն եւ պատուոյն եւ գերբեմնական տկարութիւնն եւ զվշտակրութիւն, զի սմա նստող Կաթողիկոսունսն, որոց եւ զորպէսն, եւ յորս զառաւել բարերարսն: Այլ եւ զինչ ունիւն սորին, զորպէս եւ զերբ ունիւն, այս ինքն Նուիրականն, Առաջնորդականն, եւ զայլ արդիւնաբեր տեղիսն որպիսութեամբքն իւրեանց՝ զմլքատու 1. գեօղորայսն, զմուլքսն, այսինքն՝ զայգիս, զջրաղացս, զդիւնկս, զտունս, զխանութս, զսերմանելի տեղիսն, զշուրս եւ զառուս, եւ զայլս այսպիսիս հանդերձ իւրաքանչիւր Տաճկական եւ Հայկական դաբալայական,

⁸ Տէն Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Խո. Ա., Երեւան, 1987:

⁹ «Ջամբռ». Գիրք որ կոչի Յիշատակարան. Համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Միմեոն Կաթողիկոսէ Երեւանցոյ, ի Վաղարշապատ, 1873:

¹⁰ Տէն Միմեոն Կաթողիկոս Երեւանցի, Ջամբռ, աշխարհաբար թարգմ.՝ Վ. Գ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրություններն ու քարտեզները՝ Գ. Բադալյանի, Երեւան, 2003:

2. վախճանական, 3. վկայական եւ վիճումնական գրովքն իւրեանց, եւ թէ ե՛րբ եւ որո՞ց ձեռօքն»¹¹:

Հատկանշական է, որ գրքում իր օգտագործած բոլոր եզրույթների բացատրությունը Սիմեոն Կաթողիկոսը տալիս է. այսպես՝ մուլք նշանակում է կալվածք, երկիր, արդյունք, դապալա՝ կալվածագիր, վաղֆ՝ կալված, ժառանգություն՝ հասարակության օգտին կտակած ինչք, մաղաֆ՝ ազատ, ազատություն:

Աշխատությունը բաղկացած է առաջաբանից եւ 25 գլխից (վերնագրային ընդարձակ ձեւակերպումներով): «Ջամբռ»-ի Ա.-ԺԲ. գլուխները վերաբերում են Հայ Եկեղեցու պատմությանը՝ սկզբից մինչեւ ԺԸ. դար, ԺԳ.-ԻԵ. գլուխները նվիրված են Մայր Աթոռի տնտեսական պատմությանը՝ հիմնված պատմական, իրավական, քաղաքական փաստերի վրա: Մայր Աթոռը, իբրեւ առանձին կառույց, ունեցել է իր սեփականատիրական իրավունքներն ու հասույթները՝ որպես նյութական հնարավորություն: Այդ գլուխներում մեծ տեղ է հատկացված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի կառավարման հարցերին՝ գույքի տարբեր տեսակներին, դրանց ձեռքբերմանն ու օտարմանը, վերջիններիս համար հիմք հանդիսացող փաստաթղթերին, հողամասերի սահմաններին, հարկային արտոնություններին, գույքի օգտագործումից ստացված եկամուտներին, վիճելի գույքի դատական գործընթացներին եւ այլն:

Սիմեոն Երեւանցի Կաթողիկոսն անշարժ գույքը դասակարգում էր հետևյալ կերպ.

1. դաշտեր եւ վարելահողեր, անասունների արոտավայրեր,
2. խաղողի այգիներ, պարտեզներ,
3. ջրաղացներ, դինկեր, ձիթհաններ,
4. ջրեր, առուներ, ջրամբարներ,
5. տներ, խանութներ:

Գրքի ԺԳ. գլխում թվարկված են Մայր Աթոռի մուլքատու գյուղերը, ընդ որում, այն կտրվածքով, որ այդ գյուղերից վերցվում է այգիների ու ցանքերի տասանորդը: Ըստ այսմ՝ «առանձին-առանձին, անուն առ անուն» խոսվում է գրեթե բոլոր վանքապատկան գյուղերի (դրանցից մի քանիսի միայն անվանումներն են պահպանվել) այգիներից ու ցանքերից առնվող տասանորդի մասին: Յուրաքանչյուր բնակավայրի մասին տրվում է մանրամասն տեղեկություն՝ նախկին անվանումները, հողի եւ ջրի վարչական պատկանելությունը, կալվածագրերը, դաշտերն ու վարելահողերը, խաղողի այգիները, անասունների արոտավայրերը, ջրերը, առուները եւ ջրամբարները, լճակները, դրանց

¹¹ Տե՛ս «Ջամբռ». Համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմէօնէ Կաթողիկոսէ Երեւանցոյ, էջ 3:

չափսերը: Ծանուցվում է նաեւ, թե որտեղ են գտնվում դրանք, ինչպես, երբ եւ ում միջոցով են ձեռք բերվել:

Տեղեկություն կա նաեւ Վրաստանում գտնվող հայկական գյուղերի, հողատարածքների մասին: Յուրաքանչյուր մասնավոր դեպքում նշվում են համապատասխան վավերագրերի (կալվածագիր, ստացվածագիր) ձեւակերպման գրեթե բոլոր հանգամանքները (ու՜մ կողմից է տրված, կնքված, որտեղ եւ ինչպես է պահվում): Ներկայացվում է նաեւ մուլքի ազատագրման պատմությունը, ժամանակի ընթացքում այս կամ այն կարգի փոփոխության ենթարկվելը: Այս եւ հետագա գլուխներում տեղեկանում ենք գյուղական բնակավայրերի կացության մասին այն ժամանակաշրջանում, երբ դրանք մուլքատու են եղել Մայր Աթոռին: Այս տեսակետից «Զամբռ»-ը ունի անփոխարինելի նշանակություն:

ԺԸ. դարի երկրորդ կեսից սկսյալ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անշարժ գույքի նկատմամբ կիրառվող «մաղափությունը» մասնակի բնույթ ստացավ, եւ մաղափ (լայն իմաստով նշանակում էր բոլոր այն հողերը, որոնք վճարում էին պետական հողային հարկ՝ խարաջ) համարվող գույքի ցանկը պարբերաբար փոփոխվում էր՝ ելնելով տնտեսական ու քաղաքական իրադրությունից: Մաղափ համարված գույքին Սիմեոն Երեւանցի Կաթողիկոսն անդրադարձել է իր աշխատության ԺԴ. գլխում:

Մայր Աթոռի վարելահողերի ու արոտավայրերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը բերված է «Զամբռ»-ի ԺԵ. գլխում:

Մայր Աթոռը՝ իբրեւ հոգեւոր կառույց, տարբեր ժամանակներում ազատված է եղել հարկատվության ինչ-ինչ ձեւերից: Հարկերից ազատված լինելը որոշակի դեր է խաղացել Ս. Էջմիածնի նյութական ապահովվածության, հետեւաբար նաեւ՝ բարեգործության, ընչազուրկներին նյութական աջակցություն ցուցաբերելու գործում: Ըստ այսմ՝ գրքի ԺԶ. գլխում հեղինակն անդրադառնում է ժամանակին Էջմիածնական գյուղերում, ինչպես նաեւ վանքերի ու մենաստանների ենթակայության տակ գտնվող վայրերում մաղափ համարված եւ նյութական արժեք ներկայացնող միջոցների՝ շարժական ու անշարժ գույքի հետ կապված հանգամանքներին: Այստեղ նույնպես առկա են համապատասխան փաստաթղթերի ձեւակերպումները՝ իրենց մանրամասն հատկանիշներով, ձեռքբերման կամ փոխանցման պատմությամբ հանդերձ:

ԺԷ. գլխում բերվում են ջրաղացների, դիմկերի ու ձիթահանների ցանկը, դրանց ձեռքբերման եւ ձեւափոխման պատմությունը, փաստաթղթերը: Ընդ որում, անշարժ գույքի նկարագրությունը շատ քիչ է տարբերվում այսօրվա կադաստրային համակարգերում կիրառվող նկարագրություններից:

Սիմեոն Երեւանցի Կաթողիկոսի ուշադրության առարկան են Մայր Աթոռ Ս. Էջմիածնին պատկանող, եկամտի աղբյուր հանդիսացող տնտեսական միջոցների մանրամասն հիշատակումն ու նկարագրությունը: Այդ միջոց-

ներն են մի դեպքում տերունի, մուլքատու կամ մաղաֆ համարվող դաշտերը, վարելահողերն ու արոտավայրերը, մյուս դեպքում՝ խաղողի այգիները, այգե-տեղերը եւ պարտեզները, մեկ այլ դեպքում՝ ջրաղացները, դինկերն ու ձիթ-հանները, խմելու եւ ոռոգման ջրերը, առուները, ջրամբարները, վերջապես՝ տներն ու խանութները: Այստեղ եւս Մայր Աթոռի դիվանական արձանագրա-յին փաստաթղթերից յուրաքանչյուրն արժանանում է առանձին քննարկման ու գնահատության, ընդ որում՝ իրենց ձեւակերպման բոլոր հատկանիշների մատնանշումով:

Այդ փաստաթղթերը եւս ցույց են տալիս ժամանակի մարդկային հարա-բերությունների, դրանցից բխող հոգեւոր ու հոգեբանական տարբերակումնե-րի, նյութական, ունեցվածքային վերաբերմունքի բազմաթիվ օրինակներ եւ փաստեր: «Ջամբռ»-ը լիարժեք տեղեկատու է իր ժամանակաշրջանում տիրող հողային, մարդկային հարաբերությունների հիմքերի ու դրսեւորումների վե-րաբերյալ:

Աշխատության ԺԳ-Ի. գլուխները նվիրված են Հայ Եկեղեցու տնտեսա-կան հնարավորություններին եւ օրենքներին:

Գրքի Ի-ԻԴ. գլուխներում բերված են պարսից եւ օսմանցի իշխանու-թյունների ներկայացուցիչների կողմից Մայր Աթոռին տրված բազմաթիվ ու բազմաբնույթ փաստաթղթերի վերլուծությունները: Այդ փաստաթղթերի մեծ մասը հայերեն կամ օտար լեզուներով կազմված կալվածագրեր ու սեփակա-նագրեր են, որոնց շնորհիվ Մայր Աթոռն ապահովել է սեփականության իր իրավունքը տարբեր տեսակի անշարժ գույքի նկատմամբ:

«Ջամբռ»-ը արժեքավոր աղբյուր է ԺԸ. դարում Հայաստանում անշարժ գույքի տնօրինման, հողատիրության գործող իրավունքի մասին: Անշարժ գույ-քի յուրաքանչյուր միավոր, համաձայն գրքում եղած փաստաթղթերի, ունեցել է սեփականատեր, գույքի տեսակ, սահմաններ, չափ, արժեք, գրանցման թիվ:

Գյուղացուն հյուծող ծանր հարկերի ու վարկերի մասին գրում է Մկրտիչ Ա. Վանեցի Կաթողիկոսը. «Ահա մեր բարեկամ Կիրակոս եղբոր կալը, չափում են տեն, 20 կիլոյանոց մի ցորենի շեղջ է. վաշխառու քաղաքացիները եկել, պատրաստվել են: Չափեցին, շեղջը 20 քիլա եղավ: Նախ Տերության տասնոր-դի տուրքը տրվեց, վաշխառուները՝ ամեն մեկն իր տոկոսի հաշվով չափեցին առան: Ի՞նչ մնաց, միայն կալատակը, նրա վրա էլ աղքատները թափվեցին կալեմասն առան, սրբեցին կալատեղը:

Այս անխիղճ ու անիրավ վաշխառուների ձեռքից մեր գյուղացի ժողովուր-դը էրբ պիտի ազատվի, որ բացի կալի ցորենից մեր արտերն էլ են գրավ վերց-նում... Արդեն քանի տարի առաջ պետության հոգածությունը դարձավ այս բանի կողմը, ուստի գավառագլուխ քաղաքներում փոխառության սնդուկներ հաստատել տվեց՝ խիստ չափավոր տոկոսներով, որ երկրագործ ժողովուրդը,

թողնելով վաշխառուներին, փոխառության կենտրոնին դիմի...»¹²: Խրիմյան Հայրիկը նաեւ հավելում է. «Երոպայի գիտակ մարդիկ այժմ կալ կալսելու համար մի մեքենա են հնարել, որ ահագին բան է, մեծ սայլի պես չորս անիվների վրա է հաստատված... Գիտությունն ինչքան է դյուրացրել մարդկանց աշխատանքը, այնինչ՝ մենք ամիսներով կալ ենք անում, եւ շատ անգամ ձյան տակ է մնում բերքը:

...Մեր մի քանի ամսվա գործը մեքենան մի քանի օրվա մեջ է ավարտում:

Երոպացին կարիք չունի նման մեքենա ստանալու, որովհետեւ կան ընկերություններ, որ հատկապես այդպիսի մեքենաներ են գործածում, գյուղացին, վարձ տալով, իր ունեցած ամբողջ ցորենադեզերը կալսելու է տալիս: Ո՛վ գիտե, անշուշտ կգա ժամանակը, եւ մի օր այդ մեքենան քայլելով կգա մեր աշխարհ...

Հողը եւս՝ մարդու պես իր կյանքն ունի, եթե այն շարունակ գործածելով վարես, ցանես առանց ուժ տալու, գիտես, որ կծերանա, ամուլ կդառնա եւ կդադարի իր պտղաբերությունը:

Ապահով կյանքը գյուղն է, եւ արդար վաստակը մշակությունն է:

Ասեմ, թե հողն ինչպես է մեռնում. այն անբախտ օրը, երբ երիտասարդը, ձեռք քաշելով մաճից, հողագործությունը չշարունակի կամ հարստանալով՝ մեծամտանա, այդուհետ ամոթ համարի գյուղում կամ գյուղական միջավայրում ապրելը, թողնի գյուղն ու հողը, գնա քաղաքացի լինի: Եւ կամ եթե դժբախտ օրեր հասնեն իր վրա, երբ հուսալով, թե շատ հողեր ունի, պարտք անելով՝ իրար վրա բարդի, ահա այդ օրը հողը երիտասարդի համար կմեռնի, գրավողի համար կենդանի կմնա...»¹³:

Պակաս ուշագրավ չէ նաեւ Ավետիք Արասխանյանի՝ հողային հարաբերություններին նվիրված «Հողի արդյունաբերությունը եւ հասարակությունը» (Թիֆլիս, 1884) աշխատությունը, որտեղ նա անդրադարձել է հողային ռենտային, վերլուծել եւ բարձր է գնահատել Ռիկարդոյի տեսությունը: Ավ. Արասխանյանը դիֆերենցիալ ռենտայի առաջացման նախադրյալներից է համարում հողի բերրիությունն ու տեղադրությունը, հողերը «տնտեսական տեսակետից» ունեն տարբեր բերրիություն, ուստի կապիտալի եւ աշխատանքի հավասարաչափ ծախսման դեպքում հավասարամեծ հողակտորները տալիս են տարբեր «արժողության արդյունք»: Զանի որ գյուղատնտեսական մթերքների արտադրության գինը շուկայում կարգավորվում է առավել վատ հողամասերի արտադրության պայմաններով, ուստի լավագույն եւ միջակ հողերը բերում են ռենտա: Ավ. Արասխանյանն այս ամենը հիմնավորում է թվային տվյալներով:

Հայաստանի ոռոգման ու հողի մշակության հարցերի ուսումնասիրողներից Գ. Շիրմազանը համոզված էր, որ մեր երկրում հողի գինը որոշվում էր ոչ թե չափերով, նույնիսկ՝ ոչ բերրիությամբ, այլ՝ ոռոգման համակարգի առ-

¹² «Հոգեւոր ընթերցումներ», Ը., Խրիմյան Հայրիկ, Ս. Էջմիածին, 2009, էջ 137-138:

¹³ Անդ, էջ 247:

կայությամբ, դրանցից օգտվելու պարբերականությամբ: Ոռոգման հարցերը կարելի էր են հայոց հայրապետներից շատերը եւ գործուն նպաստ են բերել իրավիճակը բարելավելու ուղղությամբ. Ներսես Աշտարակեցի, Մկրտիչ Ա. Վանեցի, Մակար Կաթողիկոս... նրանց ջանքերով Արարատյան դաշտավայրի անջրդի հողերի մեծ հատվածներ դարձան ոռոգելի, ուրեմն նաեւ՝ բարեբեր¹⁴:

Ի տարբերություն Ռիկարդոյի՝ Ավ. Արասխանյանն ընդունում էր բացարձակ ռենտայի առկայությունը՝ նկատելով, որ դիֆերենցիալ հողային ռենտան արդյունք է հողի նկատմամբ մենաշնորհի, իսկ «բացարձակ ռենտան արդյունք է հողի մասնավոր սեփականության»: Վատորակ հողերի մշակման վերաբերյալ Ավ. Արասխանյանը գրում է. «Դորա պատճառն այն է, որ հողի արտադրական ուժը մի սահման ունի, որից դեն, կրկնապատկելով ձեր ջանքը եւ կապիտալը, հողը ձեզ երկու անգամ ավելի արդյունք չի տա, մինչեւ որ նույնիսկ մշակության ամբողջ սիստեմը չփոխեք: Որոշել այդ սահմանը անկարելի է, բայց թե նա կա, նա գոյություն ունի՝ այդ բոլորովին անկասկածելի է»¹⁵:

Ավ. Արասխանյանն անդրադարձել է նաեւ ագրարային հարաբերություններին վերաբերող հարցերի ուսումնասիրությանը: Նա հողային խնդիրը համարում էր քաղաքական, տնտեսական եւ ընկերային զարգացման դժվարությունների հանգույցներից ամենակարեւորը, առավել բարդը, որը միշտ ծառացել է մարդկության առջեւ՝ հասարակության զարգացման բոլոր փուլերում: Նա կարծում էր, թե մարդկային զարգացման անցած փուլերը կմնային մութ ու անհասկանալի՝ առանց հողային հարցի հստակ իմացության: 1880-ականներին Ավ. Արասխանյանը ձգտում էր ագրարային հարաբերությունների խնդիրը դարձնել հասարակական քննարկման առարկա՝ կարելի էր այն հայ իրականության համար: Իր աշխատություններում նա ժխտում էր Արեւելյան Հայաստանում ճորտության եւ ճորտային իրավունքի առկայությունը: Արեւելյան Հայաստանի ագրարային հարաբերությունները պարզաբանելիս Ավ. Արասխանյանը գտնում էր, որ ցարական կառավարության առաջադրած բարեփոխումները, ագրարային հարաբերությունները մի որոշ կայուն օրենքների ենթարկելով հանդերձ, ունեին նաեւ ներքին հակասություններ ու կիսակատար կողմեր, որոնք հողային հարաբերությունների մեջ ստեղծում էին խայտաբղետություն: Նա գտնում էր, որ 1818-1870-ական թթ. ցարական կառավարության հրատարակած հողային օրենքները չէին բխում գյուղացիության շահերից եւ ոչ էլ արտահայտում էին հասարակական կարծիքը: Նա հակված էր պնդելու՝ դրանք Հայաստանում հողային հարցի կատարյալ լուծում չէին, եւ գյուղացու վիճակը ոչնչով չփոխվեց: Բարեփոխումներից հետո հայ գյուղացիության ըն-

¹⁴ Տե՛ս Գ. Շիրմազան, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երեւան, 1962, էջ 35:

¹⁵ Մեջբերումը հետեւյալ գրքից՝ Ռ. Սարխյան, Ավետիք Արասխանյան, Երեւան, 1980, էջ 79:

կերային-տնտեսական հարաբերությունների համակողմանի վերլուծություն էր կատարել Ավ. Արասխանյանը՝ անդրադառնալով պետական գյուղացիության, վաշխառուական կապիտալի, գյուղի շերտավորման, գյուղատնտեսության զարգացման եւ այլ հարցերի:

Ժամանակի գյուղացիության ընկերային վիճակի վերաբերյալ հարուստ վիճակագրական նյութ են տալիս նրա «Հետազոտություն Արեշի գավառի պետական գյուղացիության վերաբերյալ» եւ «Հետազոտություն Նուխվա գավառի պետական գյուղացիության վերաբերյալ» ուսումնասիրությունները:

Ավ. Արասխանյանը հատուկ քննության է առել նաեւ Յարական Ռուսաստանի հողի հարկային համակարգը՝ համարելով, որ այն կամայական ու ձեւական բնույթ ունի. «Հաճախ կարելի է հանդիպել այնպիսի փաստերի, երբ հողով ապահովված համայնքը վճարում է ավելի քիչ հարկ, քան սակավահողը՝ դնելով վերջինիս տնտեսական ծանր պայմանների մեջ»¹⁶: Նա նաեւ նշում էր, որ հաճախ արտադրության միջոցներից գուրկ գյուղացիները հողը տալիս էին վարձակալության՝ դիմացը ստանալով համախառն արդյունքի միայն մի մասը՝ 1/10-ից մինչեւ 1/2-ը, սակայն հարկ էին վճարում ոչ թե ստացած այդ մասի, այլ ամբողջ հողի համար՝ հայտնվելով տնտեսական առավել ծանր կացության մեջ:

Վերը թվարկած բոլոր հիշատակություններն ու աղբյուրները վկայում են, որ Հայաստանում ոչ միայն հնուց ի վեր են զբաղվել հողի սահմանագծման, հողօգտագործման, հողային իրավունքների ու հարաբերությունների կարգավորման հարցերով, այլ նաեւ դրանք միշտ եղել են (անկախ քաղաքական, ընկերային իրավիճակի ծանրության աստիճանից) տվյալ ժամանակի երեւելի հոգեւորականների, սկանավոր հասարակական գործիչների առաջնահերթ մտորումների ծիրում, ուշադրության կենտրոնում, հստակեցվել են կանոնակարգերով ու օրենսգրքերով: Մեր երկրում, ի տարբերություն հարեւան քոչվոր ազգերի, անհիշելի ժամանակներից հասկացել են հողի, դրա մշակության, բարեխիղճ ու խնամքով, քրտնաջան եւ սրտացավ օգտագործման արժեքը, կարեւորությունը, այդ գործում ժողովրդի ունեցած անփոխարինելի ավանդը, անգնահատելի դերը:

PEZIOME

В статье рассматриваются источники, которые свидетельствуют, что в Армении издавна временно только занимались межеванием, землепользованием, упорядочением земельных прав и отношений, но и эти действия всегда /вне зависимости от степени тяжести политической и социальной ситуации/ были

¹⁶ Ռ. Սարինյան, Ավետիք Արասխանյան, էջ 80:

в приоритете раздумий и в центре внимания видных общественных деятелей времени и регулировались законодательством и кодексами. В нашей стране, в отличии от соседних кочевых народов, с незапамятных времен осознали цену и значимость земли, ее возделывания, добросовестного и бережного, усердного пользования, незаменимый вклад и неоценимую роль народа в этом вопросе.

SUMMARY

In the article are given sources, which prove that since ancient times in Armenia not only engaged in survey, land use, regulation of land relations and rights, but also these activities /regardless of political and social processes/ were always in priority of thoughts and in the centre of attention of eminent public figures of the time and were specified by legislations and codes. In our country, in contrast with our nomadic neighbours from immemorial times, realized the importance and the price of land, its cultivation, conscientious and careful, diligent use, an irreplaceable contribution and role of people in this subject is invaluable.



ԽՂՃԻ ԵՒ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը հռչակում է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»¹:

Պետության վրա դրված այս պարտականությունը պահանջում է մարդու եւ պետության հարաբերությունների օրենսդրական կարգավորում: Ահա այս առթիվ էլ անհրաժեշտություն է ծագում օրենսդրորեն սահմանելու մարդու իրավունքների եւ ազատությունների իրացման սահմանները, որոնց շրջանցումը դիտվում է որպես ազատության չարաշահում եւ հանրորեն վնասակար իրողություն: Սահմանադրությամբ ազատության օրենսդրական նման «չափավորումը» ընդունված է անվանել իրավունքների եւ ազատությունների սահմանափակում²:

Ըստ էության, մարդու իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները անխուսափելի են՝ նկատի ունենալով նաեւ այն, որ դրանք պետք է ունենան ձեւական որոշակիություն, իրացման կոնկրետ սահմաններ, ինչպես եւ այն, որ հասարակության մեջ մշտապես հնարավոր են տարբեր անհատների շահերի միջեւ բախումներ, որոնք ենթակա են պետական միջամտության: Այլ կերպ ասած՝ պետության դերը չի կարող սպառվել միայն նշված իրավունքների եւ ազատությունների սահմանափակումների չափորոշիչներ սահմանելով³, որովհետեւ անհրաժեշտության դեպքում նա պարտավոր է օպերատիվորեն

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), 3-րդ հոդված:

² Տե՛ս **В. Агеев**, Правомерность ограничения прав и свобод государственных служащих в РФ: правовая оценка Конституционного Суда, электронный журнал «Вопросы право и политики», № 1, 2013, էջ 166:

³ Իրավունքների եւ ազատությունների չափավոր սահմանափակումը թույլատրելի է՝ դրանց հնարավոր չարաշահումները վերացնելու նկատառումից ելնելով (տե՛ս «Российская правовая политика», под редакцией Н. Матузова и А. Малыцева, Москва, 2003, էջ 109):

արձագանքել անձանց սուբյեկտիվ իրավունքների բախումներին եւ դրանց պատշաճ իրավական գնահատական տալ:

Խոսելով մարդու իրավունքների եւ ազատությունների սահմանադրական սահմանափակումների մասին՝ հարկ է նշել, որ, այնուամենայնիվ, կան այնպիսի սահմանադրական իրավունքներ, որոնք սահմանափակման ենթակա չեն: Այդպիսիք ընդունված է անվանել բացարձակ կամ հիմնական իրավունքներ: Գերմանացի իրավագետ Թ. Մաունցը նշում է. «Հիմնական իրավունքները չեն ստեղծվում պետության կողմից, կարիք չունեն ճանաչվելու եւ չեն կարող սահմանափակվել կամ ընդհանրապես օտարվել, դրանք բնորոշ են յուրաքանչյուր անհատի եւ պաշտպանում են ազատությունը ոչ միայն անօրինական, այլեւ պետության օրինական հարկադրանքից»⁴:

Մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ ազատությունների սահմանադրական սահմանափակումները սահմանվում են համաձայն որոշակի սկզբունքների, որոնցից ելակետային են մարդու օրինական շահերի ճանաչումը, նրա իրավունքների ու ազատությունների անկապտելիությունը, բովանդակային ամբողջականությունը եւ երաշխավորվածությունը: Ավանդ լիովին հիմնավորվում է ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով ամրագրված իրավունքների համակողմանի (ունիվերսալ) սահմանափակումների հիմքերի եւ դրանց նպատակների թվարկմամբ: Մասնավորապես ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով եւ չի խախտում այլոց իրավունքները եւ ազատությունները:

Հետաքրքիր է, որ մինչեւ օրս գիտատեսական քննարկումների հարթությունում շարունակում է վիճահարույց մնալ սահմանադրական իրավունքների եւ ազատությունների սահմանափակումների իրավաչափության հարցը:

Չնայած հարցի վերաբերյալ առկա տարբեր դիրքորոշումներին՝ մեր կարծիքով առավել ընդունելի է այն մոտեցումը, որ իրավունքների եւ ազատությունների իրավաչափ սահմանափակմանը բնութագրական են մի շարք չափորոշիչներ, որոնց առկայության պարագայում միայն հնարավոր է եզրակացություններ անել այդ սահմանափակումների իրավաչափության մասին⁵: Այլ կերպ ասած՝ միասնական չափորոշիչները ուղղակիորեն հնարավորություն են տալիս հստակ սահմանել, թե ինչ շրջանակներում են անձի իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները թույլատրելի եւ իրավաչափ:

⁴ **Т. Маунц**, Государственное право Германии (ФРГ и ГДР), Москва, 1959, էջ 150:

⁵ Սահմանափակումները հաճախ կարող են լինել ոչ իրավաչափ, այդ պատճառով էլ մարդու իրավունքների եւ ազատությունների նկատմամբ կիրառված սահմանափակումները դատական կարգով վիճարկելու հնարավորությունը այդ սահմանափակումների իրավաչափությունը որոշելու կարեւոր չափորոշիչներից մեկն են:

Կարծում ենք, որ նշված չափորոշիչների հստակեցման արդիականությունը կարելի է հատկապես իրավական պետության ստեղծման եւ քաղաքացիական հասարակության կայացման գաղափարների իրագործման համար, որոնց պարագայում մարդու անքակտելի իրավունքները եւ ազատությունները վեր են դասվում նույնիսկ պետությունից:

Զինարկվող չափորոշիչները բնութագրելու նպատակով փորձենք վերլուծել նաեւ ոլորտի միջազգային իրավակարգավորումները: Մասնավորապես «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 29-րդ հոդվածի 2-րդ կետը հռչակում է. «Իր իրավունքները եւ ազատությունները իրականացնելիս յուրաքանչյուր մարդ պետք է ենթարկվի միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով եւ բացառապես նպատակ ունեն ապահովել՝ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների պատշաճ ճանաչումը եւ հարգումը, բարոյականության արդարացի պահանջների բավարարումը, հասարակական կարգը եւ ընդհանուր բարօրությունը ժողովրդավարական հասարակությունում»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) եւս իր իրավական դիրքորոշումներում բազմիցս կարծիք է հայտնել, որ մարդու իրավունքների՝ օրենքով սահմանափակումը թույլատրելի է միայն այն դեպքերում, եթե դա համարվում է «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ»⁶:

«Հ Սահմանադրությունը նույնպես, հավատարիմ լինելով միջազգային իրավունքի սկզբունքներին, 43-րդ հոդվածի 1-ին մասում հռչակում է. «Մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30-ի Ա. հոդվածներով⁷, 32-րդ հոդվածի երրորդ մասով⁸ ամրագրված հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար»:

Ինչպես «Մարդու իրավունքների հռչակագրում», այնպես էլ ՀՀ Սահմանադրության նշված ձեւակերպումներում սահմանափակումների կիրառումը, իսկ ավելի դիպուկ՝ դրանց իրավաչափությունը առաջնահերթորեն կապվում է նման «անիրաժեշտության» հետ: Չնայած որոշ հեղինակների մտահոգության-

⁶ Տե՛ս «Առօրի, խղճի եւ կրոնի ազատություն, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի իրականացման ուղեցույց, Զիմ Սուրդուք», խմբագրությամբ Վ. Ենգիբարյանի, Երևան, 2008, էջ 46:

⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (վիժվիտություններով), 43-րդ հոդվածի 1-ին մաս:

⁸ Տե՛ս անդ, 32-րդ հոդվածի 3-րդ մաս:

նը⁹, կապված «անհրաժեշտության» հասկացության ծավալի անորոշության հետ, կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում պետությունն ինքն է իր անմիջական պատասխանատվությամբ որոշում այդպիսի «անհրաժեշտության»¹⁰ առկայությունը՝ ունենալով խիստ կոնկրետ եւ ծանրակշիռ փաստարկներ, որոնք առաջին իսկ պահանջով պարտադիր պետք է ներկայացվեն հանրությանը: Մի շարք հեղինակներ¹¹ իրավունքների եւ ազատությունների սահմանափակումը ըստ «անհրաժեշտության» կիրառելու իրավաչափության չափորոշիչին նույնարժեք են համարում այդ սահմանափակումների համաչափությունը¹²:

Ընդհանրապես համաչափության սկզբունքը ենթադրում է, որ սահմանափակումներ սահմանող յուրաքանչյուր իրավական ակտ պետք է պիտանի եւ անհրաժեշտ լինի դրված նպատակին հասնելու համար, ինչպես նաեւ ընդունելի տվյալ անձի համար նեղ իմաստով՝ հարմար եւ համաչափ՝ չնայած նրա հիմնական իրավունքների նկատմամբ պետական միջամտության առկայությանը¹³:

Համաչափության սկզբունքը ներառում է չորս հիմնական պահանջներ, որոնք գլխավորապես կապված են սահմանափակումների նպատակների հետ.

1) սահմանափակումների հիմնավորվածությունը՝ «պաշտպանության ենթակա իրավունքների եւ շահերի առկայությունը, սահմանափակումների նպատակների եւ միջոցների միջեւ կապի հստակ մատնանշումը»,

2) սահմանափակումների նպատակների կարեւորությունը. «պաշտպանվող իրավունքների նշանակությունն այն է, որ դրանք մարդու հիմնական իրավունքները, ազատությունները եւ դրանց հետ կապված շահերն են»,

3) իրավունքների սահմանափակումների աստիճանի համապատասխանությունը սահմանափակումների նպատակների հասարակական կարեւորությանը կամ պաշտպանվող իրավունքների նշանակությանը,

⁹ Տե՛ս **А. Смирнов**, К вопросу о критериях ограничения конституционных прав и свобод: принцип компенсации // Статьи по предмету Конституционное право России // <http://justicemaker.ru/view-article.php?id=10&art=85>.

¹⁰ Տե՛ս **К. Экштайн**, Права и свободы человека и гражданина, Москва, 2002, էջ 83-84:

¹¹ Տե՛ս **М. Баглай**, Конституционное право Российской Федерации, Москва, 2001, էջ 167:

¹² Տե՛ս **В. Рохлин, А. Баконин**, Закон и средства массовой информации, Сборник законодательных и нормативных материалов / Постановления Конституционного Суда Российской Федерации от 30 октября 2003 г. N 15-П по делу о проверке конституционности отдельных положений Федерального закона «Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации» в связи с запросом группы депутатов Государственной Думы и жалобами граждан С. Бунтмана, К. Катаняна и К. Рожкова, 2004, էջ 492-506:

¹³ Տե՛ս **И. Рихтер, Г. Шунперт**, Судебная практика по административному праву, Москва, 2000, էջ 270-275:

4) համաչափության սկզբունքի միաժամանակյա կիրառումը հավասարության, օրինականության, խտրականություններ չկիրառելու եւ արդարության սկզբունքների հետ¹⁴:

Մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների սահմանափակումների իրավաչափության այլ չափորոշիչներից կարելի է առանձնացնել այդ սահմանափակումների ժամանակային որոշակիությունը: Մասնավորապես այս սկզբունքը օրենսդրից պահանջում է իրավունքների եւ ազատությունների թույլատրելի սահմանափակումների հստակ եւ ողջամիտ ժամանակային շրջանակների սահմանում, քանի որ այդ սահմանափակումները չեն կարող կիրառվել անորոշ երկար ժամանակ: Իրավունքի եւ ազատության ցանկացած սահմանափակում կարող է թույլատրվել միայն որպես ժամանակավոր միջոց, հսկառակ դեպքում այն կդիտվի որպես տվյալ իրավունքի օտարում, «կորուստ»¹⁵:

Այժմ անդրադառնալով մեր հետազոտության անմիջական առարկային՝ Հայաստանի Հանրապետությունում խղճի եւ դավանանքի ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակումներին:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածը¹⁶ ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը եւ դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների եւ պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը: Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար»¹⁷:

Հատկանշական է, որ, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում հիշատակված հոդվածների հնարավոր սահմանափակումների հիմքերի, ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 2-րդ մասը մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքի սահմանափակման համար նախա-

¹⁴ Տե՛ս **Рунайло**, Специальные административно-правовые режимы в Российской Федерации, Москва, 2004, էջ 114:

¹⁵ Տե՛ս Определение Конституционного Суда Российской Федерации от 14 июля 1998 г. N 86-О по делу о проверке конституционности отдельных положений Федерального закона «Об оперативно-розыскной деятельности» по жалобе гражданки И. Черновой.

¹⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), 26-րդ հոդված:

¹⁷ ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 2-րդ մասի շարադրանքը ամբողջությամբ նույնական է «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ մասի ձեւակերպման հետ:

տեսում է ավելի փոքր թվով հիմքեր¹⁸՝ հասարակական անվտանգությունը, առողջությունը, բարոյականությունը եւ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

Մեր կարծիքով՝ մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը միայն նշված բացառիկ նպատակներով սահմանափակելու ՀՀ Սահմանադրության մոտեցումը պայմանավորված է այս սահմանադրական իրավունքի առանձնահատուկ կարեւորությամբ եւ միջազգային իրավունքի նորմերով անմիջականորեն պաշտպանված լինելու հանգամանքով:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել նաեւ այն հանգամանքին, որ ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 2-րդ մասը, հավատարիմ լինելով միջազգային հանրաճանաչ իրավական ակտերում ամրագրված սկզբունքներին, հատկապես՝ «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածի 3-րդ¹⁹ եւ «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ մասերին, սահմանափակելի համարում է բացառապես մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքի արտահայտումը, այլ ոչ թե այդ իրավունքն ընդհանրապես: Այլ կերպ ասած՝ սահմանափակման ենթակա են միայն դավանանքի կամ համոզմունքների քարոզի եւ դրանք տարածելու ազատության, ինչպես նաեւ կրոնական ծեսերին կամ այլ արարողությունների մասնակցելու իրավունքները, բայց ոչ թե մտքի, խղճի եւ կրոնի ազատությունն առհասարակ: Աշխարհայացքային ընտրության ազատությունը ենթակա չէ սահմանափակման եւ պետության կողմից հսկողության, այն իրացվում է անձի ներաշխարհում (լատ. *forum internum*): Բնական է, որ որեւէ համոզմունք չի կարող համարվել արգելված կամ հանցավոր, քանի դեռ այն գտնվում է մարդու գիտակցության մեջ, եւ որպեսզի այն «հակասության մեջ մտնի» օրենքի հետ, նվազագույնը պետք է արտահայտվի²⁰:

Եվ այսպես՝ ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 2-րդ մասը՝ որպես մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքի սահմանափակման միակ ձեւ, պարտադիր նախատեսում է այդ սահմանափակումների սահմանումը միայն

¹⁸ Տե՛ս **Б. Эбзеев**, Ограничения конституционных прав // Теория и практика ограничения прав человека по российскому законодательству и международному праву: Сб. научных трудов, Н. Новгород, 1998, ч. 1, էջ 8, տե՛ս նաև **А. Шайо**, Самозащита конституционного государства // Конституционное право: Восточноевропейское обозрение, Москва, 2004, № 2, էջ 10, <http://www.polit.ru/article/2004/09/09/shajo/>;

¹⁹ Տե՛ս “Международный акт о гражданских и политических правах”, <http://www.un.org/ru/documents/declconv/conventions/pactpol.shtml>:

²⁰ Տե՛ս **О. Шахов**, Правовые основы деятельности религиозных объединений в РФ, Москва, 2013, էջ 111:

օրենքով²¹: Նախորդ ենթագլխում արդեն նշել ենք, որ սահմանադրական այս ձեւակերպումը յուրահատուկ երաշխիք է քննարկվող իրավունքի իրացման համար, քանի որ դրա սահմանափակումների՝ բացառապես օրենքով սահմանվելու պահանջը անմիջականորեն արգելում է օրենքից ցածր իրավաբանական ուժ ունեցող այլ իրավական ակտի մակարդակով մտքի, խղճի եւ կրոնի ազատության որեւէ սահմանափակման գոյությունը:

Խղճի եւ կրոնի ազատության իրավունքի առանձին սահմանափակումներ պարունակվում են «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում, որի 3-րդ հոդվածի 1-ին մասը²² ամրագրում է. «Քաղաքացու նկատմամբ չի թույլատրվում որեւէ հարկադրանք կամ բռնություն՝ ժամերգություններին, կրոնական ծիսակատարություններին եւ արարողություններին, կրոնի ուսուցմանը մասնակցելու կամ չմասնակցելու հարցերի նկատմամբ իր վերաբերմունքը որոշելիս»: Նույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Կրոնական կազմակերպության գրանցումը կարող է մերժվել գործող օրենսդրությանը նրա հակասելու պարագայում»: Օրենքի 8-րդ հոդվածը²³ հռչակում է Հայաստանի Հանրապետության տարածքում հոգեորսության անթույլատրելիությունը եւ այլն:

ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվող հիմնական սահմանափակումները թույլատրվում են կիրառել՝ հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատառումներից ելնելով:

Խոսելով հասարակական անվտանգությունն ապահովելու՝ պետության ստանձնած պարտականության մասին, հարկ է նշել, որ այդ պարտականության պատշաճ կատարումն առերևույթ է իբրեւ ընդհանուր հասարակության բարօրության եւ անվտանգության հիմնական երաշխիք: Մի շարք հեղինակներ²⁴, խոսելով խղճի եւ դավանանքի ազատության սահմանափակումների մասին, կարծում են, որ հասարակական (կամ պետական) անվտանգության ապահովման հիմքով սահմանափակումների կիրառումն ուղղակիորեն պայմանավորված է դրանց կիրառման «արդարացիությամբ», որովհետեւ մարդու որոշ իրավունքների ծավալի նվազումը բխում է հասարակական շահերից եւ

²¹ Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները:

²² Տե՛ս «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդվածի 1-ին մաս (համար Ն-0333-Ն, 17.06.1991, սկզբնաղբյուր՝ ՀՀԳԽՏ 1991/12):

²³ Տե՛ս անդ, 8-րդ հոդված:

²⁴ Տե՛ս **А. Смирнов**, К вопросу о критериях ограничения конституционных прав и свобод: принцип компенсации // Статьи по предмету «Конституционное право России»//, <http://justicemaker.ru/view-article.php?id=10&art=85>.

ընդհանուր արդարություն²⁵, այդ թվում՝ անվտանգություն հաստատելու անհրաժեշտությունից²⁶: Գ. Լուկյանցեւը կարծում է, որ նույնիսկ ՄԻԵԴ-ի հայտնած իրավական դիրքորոշումների շրջանակներում խղճի եւ դավանանքի ազատության իրավունքի սահմանափակումների գործերով արված որոշակի եզրակացություններ վկայում են պետական շահերին տրվող նախապատվության մասին²⁷:

Մեր կարծիքով նմանատիպ յուրաքանչյուր դեպքում պետական միջատությունը կարող է լիովին արդարացված լինել, եթե ստեղծված իրավիճակում օբյեկտիվ հիմքեր եւ անվիճելի փաստարկներ կան, որ մեկ կամ մի քանի անձի սահմանադրական իրավունքների եւ ազատությունների իրացումն ուղղակիորեն վտանգում է ընդհանուր հասարակական անվտանգությունը եւ սպառնում պետականությանը: Անշուշտ, սա պետության գնահատողական գործառնություն է, որի արդարացիության մասին՝ որպես կիրառվող սահմանափակումների իրավաչափության չափորոշիչ, կարելի է խոսել միայն կոնկրետ հանգամանքների ուսումնասիրությունից հետո:

Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության հիմքով սահմանափակումներ կիրառելուն, ապա այդ դեպքերում եւս պետական միջատությունն առավել քան արդարացված է: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում «անձանց իրավունքների կամ անձի դեմ ոտնձգող միավորումներ կազմելու կամ դեկավարելու համար»: Նշված հոդվածի դիսպոզիցիայում հիշատակվող՝ անձանց քաղաքացիական պարտականություններից հրաժարվելուն դրդելը կարող է դրսևորվել հատկապես զինվորական պարտադիր ծառայությունից խուսափելու²⁸ ուղղությամբ քարոզչական բնույթի գործողություններով: Չնայած նրան, որ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը²⁹ թույլատրում է անձի

²⁵ «Ընդհանուր արդարություն հաստատելու» հասկացության հետ սերտորեն առնչակցվում են հասարակական բարոյականությունը եւ առողջությունը՝ որպես հասարակական կայունության եւ գոյություն ունեցող բարոյական արժեհամակարգերի պաշտպանության երաշխիքներ:

²⁶ Տնն **Л. Воеводин**, Юридический статус личности в России, Москва 1997, էջ 241-248, **Д. Дедов**, Соразмерность ограничения свободы предпринимательства, Москва, 2002, էջ 14, 183:

²⁷ Տնն **Г. Лукьянцев**, Европейские стандарты в области прав человека, Теория и практика функционирования Европейской конвенции о защите прав человека и основных свобод, Москва, 2000, էջ 231:

²⁸ Զինծառայողներն անհամեմատ կարեւոր դեր ունեն պետության պաշտպանության ու անվտանգության ապահովման խնդիրների լուծման գործում՝ դրանով իսկ կայուն հիմք ապահովելով երկրում ժողովրդավարության, մարդու իրավունքների ու ազատությունների գերակայությունը գործնականում իրականացնելու հարցում:

²⁹ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2003 թվականի դեկտեմբերի 17-ին:

կրոնական կամ այլ համոզմունքների եւ զինվորական ծառայության միջեւ անհամատեղելիության հիմքով անցնել այլընտրանքային զինվորական ծառայության, այնուամենայնիվ շարունակում է խիստ արդիական մնալ որոշ կրոնական կազմակերպությունների գործունեության նկատմամբ (մասնավորապես՝ հավատացյալների «կեղծ» անդամակցության առումով) քաղաքացիական հասարակության եւ պետության կողմից վերահսկողության անհրաժեշտությունը:

Որպես այլ անձանց իրավունքների եւ ազատությունների, այդ թվում՝ խղճի եւ կրոնի ազատության իրավունքների դեմ ուղղակի ռոնձգություն կարող են համարվել նաեւ մի շարք կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից արդեն հիշատակված «ոչ պատշաճ պրոգնոզիքալի» տարբեր դրսեւորումները, հատկապես, եթե դրանք զուգորդվում են իրենց կազմակերպության համար նոր անդամներ հավաքագրելու նպատակով արվող նյութական ու սոցիալական աջակցության առաջարկներով, կարիքավոր կամ անապահով մարդկանց վրա անօրինական ներգործությամբ կամ հոգեբանական ճնշմամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով եւ այլն:

Հայաստանի Հանրապետությունում խղճի եւ դավանանքի ազատության մասին իրավունքի սահմանափակումների հիմնահարցի հետազոտման շրջանակներում, որպես միջազգային լավագույն փորձ, ոլորտում առկա խնդիրների լուծման նկատմամբ առաջադեմ եվրոպական մոտեցումների ամբողջական համալիր եւ ազգային օրենսդրության ու դատական պրակտիկայի կատարելագործման իրական հնարավորություն, ուսանելի է հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը:

Ստորեւ հակիրճ կներկայացվեն ՄԻԵԴ-ի կողմից «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով հռչակված՝ մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքի սահմանափակումների (խախտումների) վերաբերյալ քննված գործերով կայացրած առավել նշանակալի որոշումները³⁰:

Մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ բողոքները վարույթ ընդունելիս ՄԻԵԴ-ը խստագույնս առաջնորդվում է հստակ սահմանված հետեւյալ չափանիշներով: Դրանք են.

- 1) արդյո՞ք բողոքը վերաբերելի է Կոնվենցիայի 9-րդ հոդվածի դրույթներին.
- 2) արդյո՞ք առկա է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքի նկատմամբ միջամտություն.

³⁰ Տե՛ս **Օ. Шахов**, Правовые основы деятельности религиозных объединений в РФ, 2013, էջ 116-119:

3) արդյո՞ք կիրառված սահմանափակումների նպատակը համապատասխանում է 9-րդ հոդվածի 2-րդ կետում նշված նպատակներին.

4) արդյո՞ք կիրառված սահմանափակումները հանդիսացել են «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ»:

«Մանուսակիսն եւ այլք ընդդեմ Հունաստանի» գործով 1996 թ. սեպտեմբերի 26-ի որոշումը³¹.

Հայցվորները, լինելով «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամներ, հունական իշխանությունների կողմից հետապնդման են ենթարկվել այն բանի համար, որ կրոնական քարոզի նպատակով օգտագործել են եկեղեցին (աղոթատունը)՝ չստանալով օրենքով սահմանված նախնական թույլտվություն: Հայցվորները դատապարտվել են եռամսյա կալանքի՝ դրամական տուգանք վճարելու այլընտրանքով:

Քննելով գործը՝ դատարանը եկել է այն եզրահանգման, որ չնայած սահմանափակում կիրառելիս պետության կողմից միջամտությունը եղել է օրինական, այն է՝ իրենց ճնշող մեծամասնությամբ ուղղափառ դավանանքին հարող հույների կրոնական ազատության իրավունքի պաշտպանությունը, սակայն առկա է Կոնվենցիայի 9-րդ հոդվածի (կրոնական ազատության իրավունքի) անհամաչափ սահմանափակում, եւ որ հայցվորների դատապարտումը այնքան ուժեղ եւ անմիջական ազդեցություն է ունեցել իրենց կրոնը քարոզելու՝ նրանց ազատության վրա, որ պետության կողմից այդ ազատության իրավական սահմանափակումը չի կարող դիտվել որպես հետապնդվող նպատակին համաչափ, հետեւաբար եւ՝ «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ»:

Պատասխանող պետությունը պարտավորվել է 3 ամսվա ընթացքում հայցվորներին վճարել 4 միլիոն դրահա՝ որպես բարոյական վնասի հատուցում:

«Կալաչն ընդդեմ Թուրքիայի» գործով 1997 թվականի փետրվարի 24-ի որոշումը³².

Հայցվորը, լինելով Թուրքիայի ռազմաօդային ուժերի նախկին սպա, ուղարկվել է հարկադիր թռչակի՝ ֆունդամենտալ իսլամական կազմակերպությանը անդամակցելու պատճառով: Հայցվորը բողոքում է, որ խախտվել է կրոնական ազատության իր իրավունքը:

Քննելով գործը՝ դատարանը դիրքորոշում է հայտնել, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը պաշտպանում է կրոնական կամ այլ համոզմունքներով մոտիվացված կամ ոգեշնչված ոչ բոլոր արարքները: Դատարանը եզրակացրել է, որ Կոնվենցիայի անդամ պետությունները իրավասու են իրենց զինված ուժերում գործողության մեջ դնել հատուկ կարգապահական կանոններ, որոնք արգելում են զինվորական ծառայությանը ներկայացվող պահանջների նկատմամբ

³¹ Տե՛ս <http://jurisprudencies.blogspot.com/2012/05/26-1996.html>.

³² Տե՛ս <http://www.rpqi.narod.ru/echr/translation/translation/kalach.htm>:

թշնամական կամ մերժողական վերաբերմունքը: Այսպիսով՝ հայցվորին հարկադիր թոշակի ուղարկելը կապված է եղել ոչ թե նրա կրոնական համոզմունքների, այլ աշխարհիկ պետությունում զինվորական կարգապահության հետ անհամատեղելի վարքագծի հետ, հետևաբար եւ՝ սույն գործով Կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված կրոնի ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակումներ առկա չեն:

«**Լաուրսին եւ այլք ընդդեմ Իտալիայի**» գործով 2011թ. մարտի 18-ի որոշումը³³.

Հայցվորը՝ Իտալիայի քաղաքացի տիկին Լաուրսին, պնդում է, որ Իտալիայի պետական դպրոցների դասարաններում խաչելության տեսարաններով նկարների առկայությունը խախտում է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 2-րդ կետով պաշտպանվող՝ երեխաներին իր սեփական (աթեիստական) համոզմունքներով դաստիարակելու իրավունքը: Սկզբում ՄԻԵԴ-ը արձանագրել էր 9-րդ հոդվածի խախտումներ, սակայն հետագայում ՄԻԵԴ-ի Բարձր պալատի կողմից գործի կրկնակի քննության ընթացքում նշվեց, որ դպրոցներում խաչելության տեսարանների առկայությունը չի նշանակում սովորողների նկատմամբ որոշակի կրոնական համոզմունքների քարոզ կամ պարտադրանք: Եթե հայցվորն այդ հանգամանքը իր սուբյեկտիվ ընկալմամբ գնահատում է որպես երեխաներին դաստիարակելու իր իրավունքի խախտում, ապա դա անբավարար է, որպեսզի եզրակացություն արվի Կոնվենցիայի դրույթների խախտումների վերաբերյալ: Այսպիսով՝ ՄԻԵԴ-ի Բարձր պալատը բեկանել է նախորդ որոշումը եւ արձանագրել անհամաչափ սահմանափակումների բացակայության փաստը:

«**Փրկության բանակի Մոսկովյան մասնաճյուղն ընդդեմ Ռուսաստանի**» գործով 2006թ. հոկտեմբերի 5-ի եւ «**Մոսկվա քաղաքի Սեանտոլոգիական եկեղեցին ընդդեմ Ռուսաստանի**» գործով 2007թ. ապրիլի 5-ի որոշումները³⁴.

Երկու այս գործն էլ կապված են իշխանությունների կողմից կրոնական կազմակերպությունները վերագրանցելու պահանջը մերժելու հետ: Քննելով գործերը՝ դատարանը եզրակացրել է, որ անթույլատրելի էր կազմակերպություններից պահանջել փաստաթուղթ այն մասին, որ այդ կազմակերպությունները գոյություն ունեն նվազագույնը 15 տարի, որը որեւէ օրենսդրական պահանջ չի հանդիսանում, հետևաբար եւ՝ առկա են Կոնվենցիայի 9-րդ հոդվածի անհամաչափ սահմանափակումներ:

Պատասխանող պետությունը պարտավորվել է սահմանված կարգով վերագրանցել երկու կազմակերպությունները՝ որպես իրավաբանական անձինք:

³³ Տե՛ս <http://docs.pravo.ru/document/view/20089170/18974090/>:

³⁴ Տե՛ս http://www.sclj.ru/court_practice/detail.php?SECTION_ID=152&ELEMENT_ID=1335:

Վերը նշված բոլոր օրինակներում առկա են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի» 9-րդ հոդվածի 2-րդ կետի խախտումներ: Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության, բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների համար: Իսկ մնացյալ դեպքերում մարդու՝ կրոնի և դավանանքի ազատությունը սահմանափակելը անթույլատրելի է:

Այսպիսով՝ բերված օրինակները եւս փաստում են, որ ՀՀ-ում խղճի և դավանանքի ազատության իրավունքի սահմանափակումների հիմնախնդիրը մարդու իրավունքների և ազատությունների հայեցակարգի ձեւաչափով հանդիսանում է այն իրողություններից մեկը, որի պատշաճ սահմանադրաիրավական ամրագրումը լրջագույնա երաշխավորում է այդ իրավունքի իրացման իրական հնարավորությունը:

Ինչպես մարդու և քաղաքացու մյուս հիմնարար սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակումների պարագայում, խղճի և դավանանքի ազատության իրավունքի հնարավոր սահմանափակումները եւս պետք է ամբողջությամբ համապատասխանեն միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով ներկայացվող մի շարք էական պահանջների: Մասնավորապես, այդպիսիք իրավական ձեւի առումով պետք է լինեն պարզորոշ, ընկալման համար՝ միակերպ, ժամանակի և տարածության մեջ գործառության առումով՝ խիստ կանխատեսելի և այլն:

Չնայած մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակումների իրավական հիմքերի հարաբերական կայունությանը (պայմանավորված այդ սահմանափակումները միայն խիստ կոնկրետ նպատակներով կիրառելու թույլատրելիությամբ), ինչպիսիք են՝ հասարակական և պետական անվտանգությունը, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և այլն, սահմանափակումների ամրագրման իրավական ձեւերի կատարելագործման ուղիները և դրանց կիրառման իրավական հետեւանքների հնարավորինս մանրամասնեցումը պետք է գտնվեն ժամանակակից իրավական բոլոր պետությունների ուշադրության կենտրոնում: Խոսքը վերաբերում է հատկապես այդ իրավունքների, և առաջին հերթին՝ խղճի և դավանանքի ազատության իրավունքի սահմանափակումների իրավաչափության պայմանների և միջազգայնորեն ընդունված այլ չափորոշիչներն ազգային օրենսդրության մեջ հստակեցնելու անհրաժեշտությանը, որոնք իրենց համակցության մեջ կապահովեն այս կարեւորագույն իրավունքի արդյունավետ իրացման՝ ներպետական համակարգերի պատշաճ գործառնությունները:

РЕЗЮМЕ

Ограничения прав и свобод человека являются неизбежными, учитывая тот факт, что они должны иметь формальную определенность, конкретные границы реализации, и тот факт, что в обществе всегда возможны конфликты интересов между различными лицами, которые подлежат государственному вмешательству. Другими словами, роль государства не может быть ограничена только установлением критериев ограничений вышеотмеченных прав и свобод, так как при необходимости оно обязано оперативно отреагировать на конфликты субъективных прав лиц и дать им надлежащую правовую оценку. Относительная стабильность правовых основ ограничений конституционных прав и свобод человека (обусловленная разрешением применения этих ограничений только со строго конкретными целями), таких как: общественная и государственная безопасность, защита прав и свобод других и др., пути совершенствования правовых форм закрепления ограничений и детализация правовых последствий их применения должны быть в центре внимания всех современных правовых государств.

SUMMARY

Human freedom and conscience restraints are inevitable, taking into account the fact that these must have formal definiteness, particular borders of implementation, and the fact, that the competitive interests between different persons are always possible, which are subject to government intervention. In other words, the state role couldn't be limited only by determination of criteria of restricting abovementioned rights and freedom, as if necessary, it is obliged to respond immediately to the conflicts of persons subjective rights and give an appropriate legal estimation. The relative stability of legal fundamentals of restraints of human constitutional rights and freedom (conditioned by permission of application of these restraints only for particular aims), such as: social and state security, protection of rights and freedom of others etc., the ways of perfection of legal forms of restraint consolidation and detalization of legal consequence of their administration must be in the limelight of all modern constitutional states.



ՃԵՆԱՊՐԱՆ ԵՒ ՃԵՆԱՊՐԱՆԱԿԱՆՆԵՐ

ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԸ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ

Երուանդ Տեր-Մինասեանը¹ ծնուել է 1879 թուականի նոյեմբերի 19-ին Արթիկի շրջանի Ղփչաղ² գիւղում՝ տէր Գալուստ քահանայի ընտանիքում: Տարրական կրթութիւնն ստացել է տեղի ծխական երկդասեայ դպրոցում, որը բարձր առաջադիմութեամբ աւարտել է 1892 թ.³: Նոյն թուականին ընդունուում է Գէորգեան հոգեւոր ճեմարան⁴: 1900 թ. գերազանցութեամբ աւարտում է Գէորգեան ճեմարանը եւ Մկրտիչ Ա. Վանեցի Կաթողիկոսի տնօրինութեամբ ձեռնադրուում սարկաւագ⁵, մեկնում արտասահման՝ ուսումը կատարելագործելու⁶: 1900-1904 թթ. ուսանում է Լայպցիգի եւ Բեռլինի համալսարաններում: 1904 թ. Բեռլինի համալսարանում, որպէս աւարտաճառ, ներկայացնում է «Հայ Եկեղեցու յարաբերութիւնները ասորոց եկեղեցիների հետ մինչեւ Զ. դարի վերջը»⁷ ուսումնասիրութիւնը եւ ստանում փիլիսոփայութեան դոկտորի աստիճան⁸: Միեւնոյն աշխատութիւնը ներկայացնում է Գիսենի համալսարանի աստուածաբանութեան ֆակուլտետ եւ առանց պահանջուող քննութեան՝ արժանանում աստուածաբանութեան լիցենցիատի կոչմանը:

1904 թ. վերադառնում է հայրենիք: Նոյն թուականին Մկրտիչ Ա. Վանեցի Հայրապետի բարձր տնօրինութեամբ ձեռնադրուում է կուսակրօն քահանայ: 1904-1908 թթ. նա ուսուցչութիւն է անում Էջմիածնի Գէորգեան ճեմարանում:

¹ Երուանդ Տեր-Մինասեանի կենսագրութիւնը տե՛ս **Գէորգ արղյ. Սարոյեան**, Երուանդ վրդ. Տեր-Մինասեանի եկեղեցագիտական գործունէութիւնը, Ս. Էջմիածին, 2012, էջ 43-52:

² Ղփչաղ գիւղը հետագայում՝ 1946 թ., վանքի անունով վերանուանուեց Հառիճ. տե՛ս **Թ. Յակոբեան եւ ուրիշներ**, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 3, Երեւան, 1991, էջ 578:

³ Տե՛ս Հայաստանի Ազգային արխիւ, ֆ. 312, ց. 2, գ. 1624, թ. 3:

⁴ Տե՛ս **Ե. Տեր-Մինասեան**, Յուշեր իմ կեանքից, Երեւան, 2005, էջ 27-28:

⁵ Տե՛ս «Արարատ», 1900, էջ 462:

⁶ Տե՛ս **Ե. Տեր-Մինասեան**, Յուշեր..., էջ 38:

⁷ Մաշտոցի անուան Մատենադարան, Ե. Տեր-Մինասեանի անձնական արխիւ, թղթ. 239. 7, էջ 108:

⁸ **Ե. Տեր-Մինասեան**, Յուշեր..., էջ 51-52:

1907-1910 թթ. Երուանդ վրդ. Տեր-Մինասեանը, Գեորգեան ճեմարանում ուսուցչութեանը զուգահեռ, կաթողիկոսական տնօրինութեամբ ստանձնում է նաեւ Մայր Աթոռի տպարանի կառավարչի պաշտօնը, միաժամանակ վարում «Արարատ»-ի խմբագրի օգնականի պարտականութիւնները⁹: 1908 թ. «Արարատ» ամսագրում Երուանդ վրդ. Տեր-Մինասեանը Հայ Եկեղեցու բարեկարգութեանը վերաբերող երկու յօդուած է հրատարակում՝ «Վերանորոգութեան կարիքը Հայոց Եկեղեցու համար» եւ «Հայոց Եկեղեցու վերանորոգութեան խնդիրը», որոնք նրա անձի ու հայեացքների շուրջ մեծ աղմուկ են յարուցում¹⁰: 1910 թուականի փետրուարի 9-ին Երուանդ Տեր-Մինասեանը, Մատթէոս Բ. Իգմիրլեան Կաթողիկոսին ներկայացրած իր դիմումի համաձայն, հրաժարում է Էջմիածնի միաբանութիւնից եւ դասում Հայ Եկեղեցու աշխարհիկ հաւատացեալների շարքը¹¹:

1910/1911-1917 թթ. Ե. Տեր-Մինասեանը տարբեր ուսումնական հաստատութիւններում զբաղուել է մանկավարժական գործունէութեամբ: 1918-1919 թթ. եղել է Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի անդամ եւ ուսումնական մասի վարիչ (մեկ տարի): 1919-1920 թթ. Երեւանում եւ Ալեքսանդրապոլում պաշտօնավարել է որպէս համալսարանների պրոֆէսոր, 1920-1921 թթ.՝ Վաղարշապատի Բ. աստիճանի դպրոցի ու մանկավարժական ուսումնարանի ուսուցիչ եւ վարիչ¹²:

1921 թ.՝ խորհրդային կարգերի հաստատումից յետոյ, Ե. Տեր-Մինասեանը դառնում է Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի առաջին քարտուղարը (2 տարի):

1930-1931 թթ. նշանակւում է Երեւանի մանկավարժական ուսումնարանի եւ Գիւղատնտեսական ինստիտուտի գերմաներէնի դասախօս: Մանկավարժական տեխնիկումում Ե. Տեր-Մինասեանը պաշտօնավարում է միայն մէկ, իսկ Գիւղատնտեսական ինստիտուտում՝ 17 ուսումնական տարի (1930/31-1946/47 թթ.), որից երկու տարի՝ իբրեւ գերմաներէնի դասախօս, իսկ 15 տարի՝ լեզուների նորաստեղծ ամբիոնի վարիչ եւ գերմաներէնի դասախօս¹³:

1943/44-1947/48 ուս. տարիներին Ե. Տեր-Մինասեանը պաշտօնավարում է Երեւանի պետական համալսարանում իբրեւ օտար լեզուների ամբիոնի վարիչ եւ գերմաներէնի պրոֆէսոր: 1948/49-1949/50 ուս. տարիներին նա ոչ մի հիմնարկում չի աշխատել՝ «Ոսկեդարի հայ գրականութիւնը» զեկուցման հետ կա-

⁹ Տե՛ս «Արարատ», 1907, էջ 791:

¹⁰ Տե՛ս ԼԵ՛, Իմ պատասխանը. «Հորիզոն», 1910, թ. 63, «Տեսակցութիւնից յետոյ». «Հորիզոն», 1910, թ. 281, «Նոր Լիւթերը եւ իր վկան». «Հորիզոն», 1910, թ. 292:

¹¹ Տե՛ս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Ը., Մատթէոս Բ. Իգմիրլեան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1908-1910), էջ 655:

¹² Տե՛ս ՄՄ, Ե. Տեր-Մինասեանի անձնական արխիւ, թղթ. 239. 7, էջ 110:

¹³ Տե՛ս անդ:

պրում՝ նրան մեղադրում էին անցեալը իդեալականացնելու մեջ: 1950-1951 ուս. Տարւանից կարողանում է վերականգնել իր դասախօսական իրաւունքները եւ մինչեւ 1959-1960 ուս. տարուայ վերջը կէս դրոյքով պաշտօնավարել Վ. Բրիւսովի անուան օտար լեզուների ինստիտուտում ու ԵՊՀ-ում:

Երուանդ Տէր-Մինասեանը թողնում է մանկավարժական աշխատանքը եւ անցնում միայն գիտական գործունէութեան՝ դառնալով ՀՍՍՀ Գիտութիւնների Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի գիտաշխատող¹⁴:

Գիտական հասարակութիւնը միշտ էլ բարձր է գնահատել Երուանդ Տէր-Մինասեանի գիտական ու մանկավարժական գործունէութիւնը եւ նրան բազմիցս արժանացրել շնորհակալագրերի: Ծննդեան 90-ամեակի եւ գիտական ու մանկավարժական գործունէութեան 70-ամեակի կապակցութեամբ՝ ԽՍՀՄ կառավարութիւնը 1969 թ. Երուանդ Տէր-Մինասեանին շնորհել է «Աշխատանքային կարմիր դրօշի» բարձր շքանշանը¹⁵:

Երուանդ Տէր-Մինասեանի վաստակը հայ մշակոյթի պատմութեան գանձարանում խոշոր աւանդ է եւ կարեւոր ներդրում: Նա իր մահկանացուն կնքել է 1974 թ. յուլիսի 12-ին:

Ե. Տէր-Մինասեանի «Իմ յիշողութիւնները Կոմիտասի մասին» յուշագրութեան առիթով. Ի. դարի հայագիտութեան նշանաւոր ներկայացուցիչ պրոֆ. Երուանդ Տէր-Մինասեանի տանը պահուող արխիւն ուսումնասիրելիս մեր ձեռքն ընկան նրա անտիպ յուշերը Կոմիտաս Վարդապետի մասին: Առաջին հարցը, որ ծագեց, հետեւեալն էր՝ ինչո՞ւ սոյն վաւերագիրը Երուանդ Տէր-Մինասեանն իր մի շարք այլ անտիպ աշխատութիւնների հետ ժամանակին չէր յանձնել Մատենադարանի արխիւ, որտեղ այսօր պահուում է մեծ երախտաւորի հիմնական ժառանգութիւնը: Խնդրի ուսումնասիրութիւնը մեզ բերեց այն եզրահանգման, որ «Յիշերը» հեղինակի ուշադրութեան կենտրոնում են եղել մինչեւ կեանքի վերջին պահը. ամենայն հաւանականութեամբ, գիտնականը նպատակ է ունեցել դրանք հրատարակութեան յանձնել: Այս իմաստով բնաւ պատահականութեանը չպէտք է վերագրել նաեւ այն փաստը, որ գործը յայտնաբերուել է հեղինակի աշխատանքային պայուսակում. սա ինքնին խօսում է վերն ասումի օգտին: Մահուանից յետոյ գիտնականի արխիւը համախմբելիս, հաւանաբար, որեւէ մէկի մտքով չէր անցել ստուգել նաեւ պայուսակը 95-ամեայ ծերունու՝ մարդու, որ մինչեւ կեանքի վերջին պահը հաւատարիմ մնաց մտաւո-

¹⁴ Տե՛ս անդ, էջ 109:

¹⁵ Տե՛ս անդ, էջ 111:

րականի իր կոչմանը, սպրեց յանուն իր ժողովրդի ու նրա ստեղծագործ հանճարի վերհանման եւ գնահատման բարձր գիտակցութեամբ:

«Յուշերում» ներկայացուած հիմնական եղելութիւնները զարգացել են Մկրտիչ Ա. Խրիմեան Կաթողիկոսի գահակալութեան շրջանում, մասնաւորապէս՝ 1905 թ. յունիս-օգոստոս ամիսներին: Յուշագրութիւնը պահպանուել է ընդամենը մէկ օրինակով. այն կազմուած է մեքենագիր 12 էջից, որտեղ բացակայում են հետագայ նշումների կամ հաւելումների ձեռագիր հետքերը: Սա վկայում է այն մասին, որ նիւթը վերջնական տեսքի է բերուած հեղինակի կողմից:

«Յուշերի» գոյութեան փաստը հայագիտութեան մէջ շրջանառութեան է դրուել վերջերս՝ «Երուանդ վրդ. Տէր-Մինասեանի եկեղեցագիտական գործունէութիւնը եւ գերմանական լիբերալ-բողոքական դպրոցի հետ ունեցած նրա առընչութիւնները» ուսումնասիրութեան միջոցով¹⁶:

Յուշագրութիւնը շարադրուած է խորհրդային ուղղագրութեամբ, սակայն հաշուի առնելով, որ հեղինակը մինչ այդ իր աշխատանքները գրել է դասական ուղղագրութեամբ, այն ընթերցողին է ներկայացուում դասական տարբերակով:

Յուշագրութեան պատմական ճակատագիրը. Կոմիտաս Վարդապետի ու Երուանդ Տէր-Մինասեանի՝ Հառիճում անցկացրած օրերի մասին առաջինը յիշատակել է ինքը՝ անմահ Կոմիտասը, «Անահիտ» պարբերականի թիւ 3-5, 6-9 համարներում՝ «Հայ գեղջուկ երաժշտութիւն»¹⁷ վերնագրով ընդարձակ ուսումնասիրութեան մէջ¹⁸:

Երկարատեւ լռութիւնից յետոյ այս յիշարժան դրուագի մասին Երուանդ Տէր-Մինասեանն է բարձրաձայնում: Նրա դրոշումը, ամենայն հաւանականութեամբ, պէտք է դիտարկել Կոմիտասի հանդէպ աստիճանաբար արթնացող հետաքրքրութեան լոյսի ներքո, երբ փորձ էր արւում ժողովրդի գիտակցութեան մէջ վերականգնել Կոմիտասի մասին յիշողութիւնը: Սա այն շրջանն էր, երբ առաջին քայլերն էին արւում կոմիտասագիտութեան մէջ, նոր ձայներ էին լսւում տարբեր կողմերից՝ թէ՛ հայրենիքում եւ թէ՛ Սփիւռքում: Ասումս արձագանք պէտք է համարել հայ մեծանուն գրող Պ. Մեակի հետեւեալ դիտարկումը. «Մի դար իսկ չի անցել Կոմիտասի ծննդից, բայց ժամանակն արդէն կերպաձեւում է այն վեմը, որը պիտի արձանագցնի նրան: Այս ուղղութեամբ առանձնապէս շատ գործ է արւում վերջին տասնամեակներին՝ ինչպէս Հայաստանում, այնպէս էլ գաղթաշխարհում»¹⁹: 1960 թ. Գ. Գասպարեանը Երեւանում հրատարակում է

¹⁶ Տնն Գեորգ արդյ. Մարոյեան, Երուանդ վրդ. Տէր-Մինասեանի եկեղեցագիտական գործունէութիւնը, էջ 59-60:

¹⁷ Ուսումնասիրութիւնը գրուել է 1906 թուականին՝ նուիրուել Ալեքսանդր Մանթաշեանին. տե՛ս «Անահիտ», 1907, թ. 3-5, էջ 70-73, թ. 6-9, էջ 127-130 (այս հրապարակման մէջ բացակայում են նօտաները): Ինքնագիրը պահւում է ԳԱԹ, ԿՖ, 676, 678. նաեւ տե՛ս Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, գիրք Ա., Երեւան, 2005, էջ 330-399:

¹⁸ Տնն Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, գիրք Ա., էջ 344-346:

¹⁹ Պ. Մեակ, Երկերի ժողովածու, հտ. 3, Երեւան, 1983, էջ 91:

Կոմիտասի մասին առաջին՝ համեմատաբար ամբողջական յուշագրական ժողովածուն՝ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին» վերնագրով: Այստեղ, սակայն, տեղ չի գտնում Կոմիտասի մասին ժամանակակից եկեղեցական որեւէ գործչի յիշողություն (վերջապես Կոմիտասն առաջին հերթին հոգեւորական էր, այդ միջավայրի ծնունդ, նրա մասին ամենաշատն այստեղ կարող էին պատմել): Յիշեալ ժողովածուից հոգեւորականներին դուրս թողնելու պատճառը միանշանակ եկեղեցու հանդէպ խորհրդային հասարակարգի վերաբերմունքով էր պայմանաւորուած՝ աթէիստական կրօնամերժ տրամադրութեամբ: Ժողովածուի կազմողն ու խմբագիրները գրաքննությունից եւ հետագայ բարդություններից խուսափելու համար իրենց աշխատանքում չէին ներգրաւել «անցանկալի անուններ»: Իսկ ինչ վերաբերում է Երուանդ Տէր-Մինասեանին, ապա նա՝ իբրեւ նախկին եկեղեցական, միանշանակ չէր ընդունում խորհրդային հասարակարգի կողմից²⁰: Այս եւ այլ հանգամանքներ եւս նկատի ունէր Պ. Մեւակը, երբ յիշեալ ժողովածուի լոյսընծայման առիթով գրում էր. «Կոմիտասասերներին յայտնի են անտիպ եւ տպագիր ոչ սակաւ նիւթեր էլ (ինչպէս Հայաստանում, այնպէս էլ գաղթաշխարհի պարբերական մամուլում), որ չեն մտել այս ժողովածուի մէջ: Բայց աւելի կարեւոր է այն, որ իր տեսակի մէջ այս հաւաքածուն անհամեմատ հարուստ է նախորդներից: Հարուստ է, բայց ոչ սպառնիչ: Դեռ շատ կան չիրապարակուած յիշողություններ Կոմիտասի մասին, որոնցից, յուսով եմ, լուսագոյնները Գ. Գասպարեանն հաւաքել է, պատրաստել մի այսպիսի հատոր եւս: Այդ հատորն էլ պէտք է հրատարակել, եւ ինչքան շուտ, այնքան լաւ»²¹: Պարոյր Մեւակի ականարկած հատորն այդպէս էլ լոյս չտեսաւ, ինչպէս նաեւ դժուար է ասել՝ ենթադրեալ հատորում արդեօք տեղ կը գտնէ՞ր Երուանդ Տէր-Մինասեանի յոդուածը, թե՞ ոչ: Այնուամենայնիւ, վերջինս փորձում է այլընտրանք գտնել մեծն Կոմիտասի մասին իր յուշերը սերունդներին յանձնելու, իր բաժին խումկը ծխելու, ինչպէս ինքն է բնորոշում՝ «անմահ երգիչ Կոմիտասի պայծառ» յիշատակին:

«Գարուն» ամսագրի 1969 թուականի 4-րդ համարում Հ. Մելքոնեանը «Հաւիճի մենաստան, 1905 թ. ամառ» վերնագրի ներքոյ ներկայացնում է Երուանդ Տէր-Մինասեանի յուշերի մի տարբերակ՝ հարցազոյցի տեսքով²²: Սա գիտնա-

²⁰ Ծիշտ է՝ կային նաեւ նրան գնահատողներ, սակայն փնտլողների բանակն աւելի մեծ էր ու զօրաւոր, իսկ հասարակարգը՝ տրամադրող եւ քաջալերող:

²¹ Անդ, էջ 87-88:

²² Հ. Մելքոնեանի ներկայացրած նիւթը (տե՛ս Հ. Մելքոնեան, Հաւիճի մենաստան, 1905 թ. ամառ. «Գարուն», 1969, թիւ 4, էջ 20-29) հեռու էր ամբողջական լինելուց. համեմատությունը սոյն յուշագրութեան բնագրի հետ ցոյց է տալիս, որ կային թե՛ նմանություններ եւ թե՛ տարբերություններ: Վերջապէս պէտք է նկատի ունենալ նաեւ, որ Հ. Մելքոնեանի ներկայացրած տարբերակը շարադրանքի առումով չէր համապատասխանում հեղինակի ստեղծած բնօրինակին: Հետեւաբար, Երուանդ Տէր-Մինասեանի «Յուշեր Կոմիտասի մասին» աշխատութեան հրատարակությունը դեռեւս մնում էր արդիական կոմիտասագիտութեան համար:

կանին տրուած միակ հնարաւորութիւնն էր, որով կարող էր իր հոգու պարտքը կատարել հարազատ ընկերոջ եւ բարեկամի՝ Կոմիտասի յիշատակի հանդէպ:

Երուանդ Տէր-Մինասեանի թոռնուհու՝ ճարտարապետական գիտութիւնների թեկնածու Անուշ Տէր-Մինասեանի բանաւոր վկայութեամբ՝ պապը, այնուամենայնիւ, գոհ չի մնացել լրագրողի կատարած աշխատանքից:

Յուշագրութեան ստեղծման ժամանակը եւ աղբիւրները. Այս յուշերը, ենթադրաբար, գրուած պէտք է լինեն 1943 թուականից յետոյ, քանի որ այստեղ յիշատակուում է Գարեգին Յովսէփեանցը՝ որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս²³: Ինչ վերաբերում է բովանդակութեանը, ապա Երուանդ Տէր-Մինասեանն իր յուշերն ընդհանուր առմամբ կառուցել է երեք հիմնական աղբիւրների վրայ՝ բանաւոր յիշողութիւններ, գրաւոր նշումներ, արտաքին աղբիւրներ:

ա. Ինչպէս ցանկացած յուշագրութիւն, այս աշխատութեան հիմքը նոյնպէս հեղինակի անձնական յիշողութիւններն են Կոմիտասի մասին, նրա անմիջական տպաւորութիւնները:

բ. Հեղինակի ցուցաբերած ճշգրտութիւնը թուականների, ամսուայ ու օրուայ ժամերի վերաբերեալ առիթ է տալիս ենթադրելու, որ շարադրանքի ընթացքում նա ձեռքի տակ որոշակի նշումներ է ունեցել: Ասումը հաստատուում է այն փաստի հիման վրայ, որ միեւնոյն նիւթի համառօտ տարբերակը հանդիպում է Պ. Մուրադեանի հրատարակած՝ հեղինակի «Յուշեր իմ կեանքից» ինքնակենսագրական ստեղծագործութեան մէջ: Ուստի ճշմարտութիւնից հեռու չէ այն ենթադրութիւնը, որ նաեւ յիշեալ ստեղծագործութեան մէջ հանդիպող յուշերն են հիմք ծառայել հեղինակի համար՝ ձեռնամուխ լինելու աւելի ընդարձակ տարբերակի ստեղծմանը²⁴:

գ. Արտաքին աղբիւրներից աներկբայօրէն կարելի է առանձնացնել Կոմիտասի արդէն յիշուած՝ «Հայ գեղջուկ երաժշտութիւն» վերնագրով ընդարձակ ուսումնասիրութիւնը: Երուանդ Տէր-Մինասեանի յուշերում հանդիպող հետեւեալ տողը հաստատում է, որ նա ծանօթ է եղել այդ յոգուածին. «Ինքը՝ Կոմիտասն այդ մասին առանձին յոգուած է գրել, որ նախապէս տպուել է «Անահիտ» հանդէսում, ապա՝ արտատպուել զանազան ժողովածուներում»²⁵:

²³ Գարեգին Ա. Յովսէփեանը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս է եղել 1943-1952 թուականներին:

²⁴ Ստորեւ մեջբերում ենք Երուանդ Տէր-Մինասեանի եւ Կոմիտաս վարդապետի Հաթիճ կատարած այցելութեան համառօտ տարբերակը. «Այդքան տարիներ հայրենիքում չլինելուց յետոյ ես, բնականաբար, պէտք է գնայի մեր գիւղ՝ ծնողներիս եւ հարազատներիս մօտ հանգստանալու. եւ ես այդպէս էլ արի, բայց իմ Էջմիածնից մեկնելուց առաջ մալարիայով ծանր հիւանդացել էր մեր սիրելի ընկեր Կոմիտասը, եւ ընկերներս խնդրեցին ինձ նրան էլ հետս Ղփչաղ տանել, գուցէ Արագածի լեռնային մարդու օղբ, առհասարակ օղափոխութիւնը բուժի նրան քայքայիչ հիւանդութիւնից: Ես, ի հարկէ, սիրով նրան ինձ հետ տարայ, եւ նա իսկապէս լիովին առողջացաւ եւ 6 շաբաթ Հաթիճի վանքում մնալով՝ բոլորովին կազդուրուած վերադարձաւ Էջմիածնի իր գործին: Հաթիճում միասին անցկացրած մեր կեանքը տեսեց յունիսի 28-ից մինչեւ օգոստոսի 8-10-ը (վեց շաբաթ)». տե՛ս **Երուանդ Տէր Մինասեան**, Յուշեր իմ կեանքից, էջ 54:

²⁵ Տե՛ս բնագիր, էջ 150:

Յուշագրության առանձնայատկությունը. Տպաւորութիւն կարող է ստեղծուել, որ հեղինակը Կոմիտասի դիմանկարը սահմանափակել է որոշակի իրադարձութեան նկարագրութեամբ, քանի որ յուշերում մասնաւոր պատմութիւն կամ դրուագ է ներկայացում. Կոմիտասի՝ մալարիայով հիւանդանալը եւ Հառիճում անցկացրած օրերը: Սակայն սա ընդամենն առաջին տպաւորութիւն կարող է լինել, քանի որ ուշադիր ընթերցումը ցոյց է տալիս, որ Երուանդ Տէր-Մինասեանը մասնաւոր մօտեցում է որդեգրել նիւթի շարադրանքի նկատմամբ, որը յուշագրութեան ժանրի դասական կաղապարներից է: Նա որոշակի դրուագի նկարագրութեան միջոցով ստեղծել է Կոմիտասի մի դիմապատկեր, որն ամփոփում է գլխաւոր հերոսի մասին հեղինակի բոլոր միւս յիշողութիւնների տպաւորութիւնները, որոնք մէկ առ մէկ չեն ներկայացուած, այլ խօսքով՝ մի իրադարձութեան նկարագրութեան միջոցով ներկայացուել է Կոմիտասի ամբողջական, խտացուած պատկերը. այստեղ մեր աչքի առջեւ է յառնում Կոմիտասը՝ երաժիշտն ու մտաւորականը, հոգեւորականն ու ընկերը, տխրող եւ ուրախացող մարդը: Հեղինակի այս մօտեցումը լաւագոյնս բացատրւում է Պ. Մեակի այն պնդմամբ, թէ «Կոմիտասը մի «հերթական» դէմք չէր հայ մշակոյթի պատմութեան մէջ»²⁶, քանզի «կան մեծութիւններ էլ, որոնց դիմանկարի կերտումը վեր է ամեն մի թեկուզեւ հանճարեղ նկարչի հնարաւորութիւններից. մի պատկեր կամ քանդակ չի պարփակում նրանց որքանութիւնը: Դրանց փոքրիշատէ լրիւ պատկերելու համար հարկաւոր է պատկերների ու քանդակների մի ամբողջ շարք»²⁷:

Մի կարեւոր հանգամանք եւս պետք է նշել սոյն յուշերի առընչութեամբ: Երբեմն յուշագրութիւններում գերիշխում է կանխակալ մօտեցումը դէպքերի ու անձերի վերաբերեալ, քանի որ յուշագիրը, ի տարբերութիւն ուսումնասիրողի, աւելի ազատ է իր մեկնաբանութիւնների հարցում: Գեղարուեստական վաւերագրութեան հեղինակը վերջնարդիւնքում ենթակայական (սուբյեկտիւ) դիրքորոշում կարող է ունենալ: Վերջիվերջո գեղարուեստական վաւերագրութիւնը կեանքի լուսանկարչական ճշգրտութեամբ չի ներկայացվում: Ինչպէս նշում է Ալ. Շիրվանզադեն, չկան եւ չեն կարող լինել լուսանկարչական ճշգրտութիւն ունեցող պատկերներ ներկայացնող ստեղծագործութիւններ²⁸:

Ներկայ յուշագրութեան մէջ թերեւս համակողմանի ուսումնասիրութեան կարիք ունի միայն որոշ հեղինակների, այդ թւում նաեւ Երուանդ Տէր-Մինասեանի շեշտած այն տեսակետը, թէ Կոմիտասը Մայր Աթոռից հեռացել է Գեորգ Ե. Սուրենեանց Կաթողիկոսի սառը վերաբերմունքի պատճառով²⁹:

²⁶ Պ. Մեակ, նշվ. աշխ., էջ 88:

²⁷ Անդ, էջ 86:

²⁸ Տեն «Բաֆֆին ժամանակակիցների հուշերում», Երեւան, 1986, էջ 228:

²⁹ Իրականում Կոմիտասի՝ 1913 թուականին Մայր Աթոռից հեռանալու պատճառները դեռեւս բաւարար ուսումնասիրուած չեն:

Մեր առաջադրանքի մաս չի կազմում այստեղ մանրամասն քննության ենթարկել այս հարցը, սակայն նկատի ունենալով վերջին շրջանում շեշտադրուող այդ տեսակետը, երբեմն, ի հարկէ, միտումնաբար, պարզապէս մի համառօտ դիտարկմամբ կուգենայինք այս ներածականի շրջանակում անդրադառնալ դրան՝ հետագայում աւելի մանրամասն խօսելու նպատակով: Պէտք է նկատել, որ այդ շրջանում ընդհանուր գաղափարական անհամաձայնություն կար Գերմանիայում եւ Երուսական այլ համալսարաններում ուսանած ճեմարանական վարդապետների (Կարապետ Տէր-Մկրտչեան, Գարեգին Յովսէփեանց, Յուսիկ Զոհրաբեան, Կոմիտաս, Երուսանդ Տէր-Մինասեան) եւ Գէորգ Ե. Սուրենեանցի կողմնակիցների (Մեսրոպ Մագիստրոս, Մատթէոս վրդ. Մատթէոսեան) միջեւ, որը որոշակի սառնություն ու քննադատական վերաբերմունք էր ծնում մէկը միւսի հանդէպ: Սակայն միեւնոյն ժամանակ չպէտք է մասնաւորեցնել այս փաստն ի դէմս Կոմիտաս Վարդապետի, ասել, թէ նրա հանդէպ յատուկ հալածանք է եղել. դա առնուազն մեղանշում կլինի պատմության դէմ: Պէտք է նկատի առնել այն, որ եթէ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե. Սուրենեանցը որեւէ կերպ ձգտէր խոչընդոտ յարուցել Կոմիտաս Վարդապետի ստեղծագործական աշխատանքի դէմ, ապա իր հայրապետական իրաւասութեան ներքոյ, որպէս Մայր Աթոռի միաբան, որեւէ պաշտօնի կնշանակէր նրան: Սակայն Կաթողիկոսը լիարժէք ազատութիւն էր տուել Կոմիտաս Վարդապետին՝ վարուելու իր ուզածի համեմատ. այս լոյսի ներքոյ աւելորդ շահարկություններ պէտք է համարել բոլոր այն քննադատությունները, թէ Կոմիտասին չեն գնահատել Էջմիածնում. «Արարատ» ամսագիրը լի է նրա յօդուածներով եւ գործունէութեան վերաբերեալ գովարժան գնահատականներով: Աւելին՝ Մայր Աթոռի միաբանությունը միշտ կապ է պահպանել Կոմիտաս վարդապետի յետ: Ասումս լաւագոյն արտայայտությունն է 1920 թ. «Էջմիածին» շաբաթաթերթում «Լուրեր» խորագրի տակ յանդիպող հետեւեալ տեղեկությունը. «Կ. Պօլսից ստացուած նամակով հաղորդում են, որ Մայր Աթոռի միաբան անուանի երաժշտագետ Կոմիտաս վարդապետ հիւանդությունից ապաքինուել է»³⁰: Թերթը հրատարակում էր Ամենայն Հայոց Գէորգ Ե. Կաթողիկոսի հրամանով, խմբագիրն էր նրա մերձաւոր Գիւտ աբեղայ Ղազարեանը: Եթէ Կոմիտասի հանդէպ Կաթողիկոսի կողմից լինէր բացասական տրամադրություն, ապա նրան մոռացութեան կը մատնէին: Հակառակ տեսակետները միակողմանի են եւ ոչ խորքային ուսումնասիրությունների վրայ հիմնուած գնահատականներ:

Յուշագրութեան արդիականությունը. Մոյն վաւերագրի հրատարակութեան արդիականութեան անդրադառնալով՝ պէտք է նկատել, որ վերջինն արժեքաւոր է մի շարք առումներով.

30 «Էջմիածին» շաբաթաթերթ, թ. 4, 1920:

ա. Այն տեղեկություններ է հաղորդում Կոմիտասի մասին այնպիսի մեկի միջոցով, որը ամենօրեայ յարաբերություններ է ունեցել նրա հետ, եղել է թե՛ նրա սանը եւ թե՛ ընկերն ու գործընկերը Ճեմարանում: Ակնյայտ է, որ սա պարզապես առաջին հանդիպման տպավորություններ չեն, որ հեղինակը ոգեւորում յանձնել է թղթին, այլ երկարատեւ յարաբերության արդյունքում ձեւաւորում համոզում,

բ. Նիւթի բովանդակությունը չափազանց կարելու է ոչ միայն կոմիտասագիտության համար, այլեւ՝ Գեորգեան հոգեւոր ճեմարանի, Մայր Աթոռի միաբանության ներքին կեանքի ու դրուածքի, եւ ընդհանրապէս Հայ Եկեղեցու նորագոյն շրջանի պատմության ուսումնասիրության առումով,

գ. Նկատի ունենալով, որ այսօր Ամենայն Հայոց Հայրապետի բարձր տնօրինութեամբ մասնաւոր յանձնաժողով է ձեւաւորելու Կոմիտասի սրբադասման հարցը ուսումնասիրելու վերաբերեալ, կարծում ենք, որ սոյն վաւերագիրը նոյնպէս օգտակար կլինի յանձնախմբի անդամների ուսումնասիրութեանը՝ Կոմիտաս Վարդապետի ամբողջական կերպարը ներկայացնելու համար:

Տ. ԳԷՈՐԳ ԵՊՍ. ՍԱՐԴՅԵԱՆ

Վերատեսուչ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական, բարձրագոյն հաստատությունների, ԳՀՃ տեսուչ

Տ. ԱՐԱՐԱՏ-ՔՀՆՅ. ՊՕՂՈՍԵԱՆ

Ս. Էջմիածնի Մատենադարանի տնօրէն



ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

Ամբիտասին ես ճանաչում եմ 1892 թուականից, երբ նա դեռ նոր Առաքարտել էր Գէորգեան ճեմարանը եւ սարկաւադ ձեռնադրուել Սողոմոն անունով, իսկ ես նոր ընդունուել էի այդ նոյն ճեմարանի երրորդ դասարանը (այն ժամանակ ճեմարանն ունէր երեք դասարան՝ երրորդից մինչեւ վեցերորդ եւ երեք լսարան):

Երբ ես ճեմարան ընդունուեցի 1892/93 ուս. տարուայ սկզբին, այդ ժամանակ ճեմարանի տեսուչ էր առաջադիմական անձնաւորութեան Համբաւ վայելող Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը: Նրա օրով եւ կարծեմ նրա հրաւէրով, իբրեւ երաժշտութեան ուսուցիչ, ճեմարան էր հրաւիրուել յայտնի երաժշտադէտ Կարայ Մուրզան, որը եւ այդ ամբողջ ուսումնական տարին եղաւ մեր երգի ու երաժշտութեան ուսուցիչը ճեմարանում եւ եկեղեցական երգչախմբի ղեկավարը վանքում: Երեմիա եպիսկոպոսի տեղապահութեան օրերն էին, որը մտերիմ բարեկամ էր Սեդրակեանին:

Բայց 1893 թուականի ամռանը նորահաստատ Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեանը («Հայրիկը») արդէն ժամանել էր Էջմիածին եւ ստանձնել իր պաշտօնը: Վանքում արդէն առաջ էլ դժգոհութիւն կար Կարայ Մուրզայի դէմ, եւ նա Էջմիածնի համար անընդունելի էր համարւում՝ իբրեւ խիստ աշխարհիկ երեւոյթներ դրսեւորող անձնաւորութիւն, եւ ահա Էջմիածնի միաբանութեան պահպանողական համարուող մասին յաջողւում է համոզել նորընտիր կաթողիկոսին՝ հեռացնել Կարայ Մուրզային եւ նրա փոխարէն ճեմարանում երգի ու երաժշտութեան ուսուցիչ նշանակել Սողոմոն սարկաւադին՝ ապագայ Կոմիտաս վարդապետին: Ճեմարանի աշակերտների մէջ համակրութիւնը սկզբում Կարայ Մուրզայի կողմն էր, մանաւանդ որ կաթողիկոսի հրամանի համաձայն՝ Կարայ Մուրզային արձակող եւ Սողոմոն սարկաւադին նրա տեղը նշանակող, աշակերտութեան կողմից յարգուած տեսուչ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանն ինքն էլ այդ առթիւ անմիջապէս, իբրեւ ցոյց, հրաժարուել էր ճեմարանի տեսչի պաշտօնից: Աշակերտների մէջ բերնէ բերան էին անցնում տեսչի այդ հրաժարականի լակոնական բառերը. «Ըստ հրամանի Ձերդ Վեհափառութեան՝ արձակեցի զԿարայ

Մուրզայն, կարգեցի ի տեղի նորա զՍողոմոն սարկալագ, վասն որոյ ընկալարուք եւ զիմ զհրաժարական»*:

Մի խօսքով՝ 1893/94 ուս. տարուայ սկզբից Սողոմոն սարկալագը դարձաւ մեր երգի ու երաժշտութեան ուսուցիչը եւ կարճ ժամանակուայ ընթացքում կարողացաւ աշակերտների վստահութիւնն ու համակրութիւնը ձեռք բերել իր մարդամօտ եւ ուրախ ու զուարթ բնավորութեան պատճառով: Յատկապէս նրա երգչախմբի հետ անցկացրած պարապմունքները մեզ՝ աշակերտներին համար շատ ուսանելի եւ հաճելի էին, որի համար եւ բոլորս, կարող եմ ասել անխտիր, յարգում եւ սիրում էինք նրան:

Այդ շրջանում Սողոմոն սարկալագը կամ հետագայի Կոմիտաս վարդապետը միայն մի երկու տարի ինձ ուսուցիչ եղաւ: Հետեւեալ ուսումնական տարին ես հիւանդացայ ծանր մալարիայով եւ ստիպուած եղայ մի տարով արձակուրդ վերցնել եւ գնալ իմ հայրենի գիւղը՝ Ղփչաղ (այժմ Հառիճ)՝ հիւանդութիւնից ազատուելու համար: Այնուհետեւ Կոմիտաս վարդապետը մեկնեց արտասահման՝ Բեռլին, երաժշտութեան ուսմունքի մէջ կատարելագործուելու համար: Երբ նա վերադարձաւ արտասահմանից, ես արդէն վերջին լսարաններում էի, որտեղ երգի ու երաժշտութեան դասեր չկային, բայց այնուամենայնիւ, այդ շրջանում էլ շարունակուեցին մեր բարեկամական եւ մտերմական յարաբերութիւնները՝ մինչեւ իմ ճեմարանն աւարտելը՝ 1900 թուականի մայիսին:

Ինչպէս այսօր յիշում եմ, թէ ինչպէս բոլորս անհամբերութեամբ սպասում էինք կիրակի օրերին, երբ պատարագի վերջին Կոմիտասը հանդէս էր գալիս եկեղեցում որեւէ մի միջնադարեան գեղեցիկ տաղով, որ նա իր սքանչելի ձայնով եւ հմուտ երգով այնպէս էր կենդանացնում, որ հմայում էր բոլոր ունկնդիրներին: Յատկապէս յիշատակութեան արժանի է այս կապակցութեամբ նրա աննման «Յաւիկ մի պայծառ տեսիլ» տաղը:

1900 թուականի հոկտեմբերին ես, ճեմարանի մանկավարժական խորհրդի որոշման համաձայն, մեկնեցի արտասահման (Գերմանիա)՝ ուսումնական նպատակները իրագործելուց յետոյ վերադարձայ հայրենիք՝ 1904 թուականի հոկտեմբերին, եւ սկսեցի իմ պաշտօնավարութիւնը՝ իբրեւ Գեորգեան

* Պատմաբան Լեօն իր «Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի 1838-1913», Թիֆլիս, 1914 թ. աշխատութեան մէջ այլ հանգամանքով է պայմանաւորում, թէ ինչու է Մկրտիչ Ա. Խրիմեան Կաթողիկոսը Կարա-Մուրզային արձակել ճեմարանի եկեղեցական երաժշտութիւն առարկայի ուսուցչի պաշտօնից: Ստորեւ մէջբերում է համապատասխան հատուածը. «Անխնայ երաժշտագետ Քրիստափոր Կարա-Մուրզան, ինչպէս յայտնի է, Խրիմեան Կաթողիկոսի հրամանով հեռացուեց Էջմիածնի ճեմարանից, ուր նա երգեցողութեան ուսուցիչ էր: Հայ ընկալիչան այդ ժամանակ ամբողջ թափով յարձակուեց այդ ազնիւ գործիչի վրայ՝ շահագործելով այն հանգամանքը, թէ նա կաթօլիկ է: Յայտնի է հայ ընկալիչայի ձեւակերպումը. «Աստուած մի է, եկեղեցական երգեցողութիւնն էլ միաձայն պիտի լինի» (էջ 511):

ճեմարանի ուսուցիչ: Այնտեղ շարունակում էր իր ուսուցչական պաշտօնը նաեւ Կոմիտաս վարդապետը, որի հետ վերսկսուեց եւ աւելի ու աւելի ջերմացաւ մեր բարեկամութիւնն ու մտերմութիւնը:

Այդ բարեկամութեան եւ մտերմութեան աւելանալուն սաստիկ նպաստեց մի այլ հանդամանք եւս:

Չորս տարի հայրենիքում չլինելուց եւ ծնողներին ու հարազատներին տեսնելուց զրկուած լինելուց յետոյ ես որոշել էի, բնականաբար 1904/05 ուս. տարին աւարտելուց յետոյ, ամառն անցկացնել իմ հայրենի դիւղում եւ 1905 թ. յունիսի կէսերից յետոյ պատրաստուում էի մեկնել այնտեղ: Այդ օրերին մի երեկոյ յանկարծ ինձ մօտ եկան իմ ընկերներից եւ պաշտօնակիցներից Յոսիկ վրդ. Զոհրաբեանը եւ Գարեգին վրդ. Յովսէփեանը եւ տեսնելով իմ մեկնելու պատրաստութիւնները՝ հարցրին, թէ միթէ ինձ յայտնի չէ Կոմիտասի ծանր վիճակը եւ մալարիայով սաստիկ տառապելը: Ես զարմացած նայեցի նրանց եւ ասացի. «Գիտեմ, բայց ես անձամբ ի՞նչ կարող եմ անել»: Նրանք ինձ պատասխանեցին, թէ դու պատրաստուում ես Հառիճ ամառանոց դնալ. վերցրու հետք տար Կոմիտասին. Հառիճում ոչ ճահիճներ կան եւ ոչ մոծակ. Կոմիտասն այնտեղ, անշուշտ, կը բուժուի մալարիայից, թէ չէ նրա կեանքին վտանդ է սպառնում, եթէ նա ամառը էջմիածնում մնայ: Երկար մտածելու հարկ չկար. հանդամանքներն ստիպողական էին, եւ ես իսկոյն համաձայնեցի արուած առաջարկին, թէ եւ զգում էի այդ առաջարկն իրականացնելու հետ կապուած դժուարութիւնները: Հետեւեալ օրն եւեթ, շուրջ յունիսի 22-ին կամ 23-ին ես հիւանդ Կոմիտասին երթուղի նստեցրի եւ տարայ Ալեքսանդրապոլ (այժմեան Լենինական)՝ այնտեղից Հառիճ փոխադրելու համար, որ դտնւում է Ալեքսանդրապոլից 30 կիլոմետր հեռաւորութեան վրայ՝ Արադածի հիւսիս-արեւմտեան լեռնալանջին: Առաջին դիշերն անցկացրինք տեղի յաջորդ (առաջնորդական փոխանորդ) Կիւրեղ վրդ. Նաւուսեանի մօտ՝ Ալեքսանդրապոլի ընդարձակ յաջորդարանում՝ վայելելով յիշեալ յաջորդի ամենասիրալիր հիւրասիրութիւնը: Հետեւեալ առաւօտը պէտք է կառքով մեկնէինք Հառիճ:

Պատուիրած կառքը (երկճի ֆայտօնը) եկաւ առաւօտեան ժամի 10-ին եւ հետը երկու հրացանաւոր ձիաւոր կազակ՝ մեզ ուղեկցելու համար: Այդ անակնկալը մեզ համար պատրաստել էր Կիւրեղ վրդ. Նաւուսեանը, որը տեղական դաւառապետից խնդրել էր այդ կազակներին՝ մեր ապահով ճամփորդութիւնը երաշխաւորելու համար, թէ եւ մեզ ոչ մի վտանդ չէր սպառնում, քանի որ Շիրակի դաշտի այդ մասում ոչ մի թուրքական դիւղ չկար, իսկ այդ տարին հայ-թուրքական ընդհարումների տարին էր: Մենք այդպէս ճանապարհ ընկանք, մի կազակը կառքի առջեւից, միւսը՝ հետեւից, եւ յաջորդութեամբ հասանք Իլիսիաբի կոչուած դիւղը (այժմեան անունը չգիտեմ), Ալեքսանդրապոլից 10 վերստ հեռաւորութեան վրայ: Այդ դիւղը դտնւում

է մի բաւական մեծ բլրի տակին: Այդ բլրի տակ մեր կառքի ձիերը կանգ առան եւ հրաժարուեցին մեզ հանել բլրի գագաթը: Դրութիւնն անելանելի էր. Կոմիտասն իրեն վատ էր զգում, իսկ մենք առաջ շարժուել չէինք կարողանում: Այդ ժամանակ մեզ օգնութեան հասան կազակները, որոնք իջան իրենց ձիերից, ձիերը լծեցին կառքին եւ մի քանի րոպէում մեզ թուցրին յիշեալ բլրի գագաթը: Այդտեղից մեր դժուար ճանապարհը շարունակելով քարքարոտ, անճանապարհ վայրերով՝ մեծ դժուարութեամբ հասանք, վերջապէս, հռչակաւոր Հառիճ վանքը: Օրն արդէն երեկոյեանում էր, եւ Կոմիտասի հիւանդութիւնը քանի գնում սաստկանում էր: Շտապ անկողին պատրաստեցինք եւ Կոմիտասին պառկեցրինք՝ վրան գցելով մեր ունեցած վերմակները, որովհետեւ սկսուել էր մալարիայի սաստիկ դողը, եւ ոչ մի վերմակ չէր տաքացնում հիւանդին: Ես մոլորուել-մնացել էի եւ չգիտէի՝ ինչ անեմ: Այսպէս շարունակուեց մի երկու ժամ, որից յետոյ դողն անցաւ, եւ սկսեց սաստիկ տաքութիւնը, որի պատճառով հիւանդը հետ էր գցում բոլոր տեսակի վերմակներն ու ծածկոցները: Մի երկու ժամ էլ այս տաքութիւնը շարունակուեց, որից յետոյ Կոմիտասը հանգստացաւ եւ քնեց՝ հնարաւորութիւն տալով մեզ էլ մի փոքր հանգստանալու: Առաւօտեան սպասում էինք, թէ ինչ է լինելու: Սպասում էինք երկիւղով, անհամբեր:

Բայց հետեւեալ առաւօտ Կոմիտասը վեր կացաւ անկողնից բոլորովին առողջ, առանց հիւանդութեան որեւէ նշանի, թէեւ սաստիկ թոյլ ու նիհարած, չօր դարձած: Այդ օրուանից սկսած՝ Կոմիտասը լիովին ազատուեց իրեն տանջող մալարիայից, եւ այդ հիւանդութիւնը նրա մօտ այլեւս հանգէս չեկաւ ոչ միայն 6-7 շաբաթների ընթացքում, որ մենք միասին անցկացրինք Հառիճում, այլեւ՝ հետագայում էջմիածնում միասին ապրած տարիների ընթացքում:

Քանի որ ես յանձն էի առել Կոմիտասին ազատել մալարիայ հիւանդութիւնից եւ նրա քայքայուած առողջութիւնը վերականգնել, այժմ ինձ համար գլխաւոր նպատակ էր դառնում նրա եւ առհասարակ մեր սննդի կազմակերպումը մեր այն ժամանակուայ գիւղական պայմաններում: Այդ պայմաններն այնպէս էին, որ մեր գիւղերում բացի կաթից, մածնից եւ ձուից ուրիշ սննդամթերք չէր ճարուում, իսկ Հառիճի լեռնային ջինջ օդի եւ անուշահամ սառը ջրի ուժեղ ներգործութեան հետեւանքով այդ թեթեւ սննդամթերքները չէին կարող բաւարարել թէ՛ հիւանդութիւնից նոր վեր կացած եւ թէ՛ առողջ մարդու բացուած ախորժակը, ուստի եւ անհրաժեշտ էր առաջին հերթին հոգալ մսի կարիքը: Բարեբախտաբար, հեշտ եղաւ այդ կարիքը բաւարարել: Փետայիս՝ մեծ քրոջս ամուսին Գեղամ Բայբուրդեանին, ուղարկեցի Ղփչաղի եայլաները, որտեղից նա բերեց 10 թէ 12 գառ, որ լիովին բաւարար էր մեր բոլոր կարիքները հոգալու համար այն 6-7 շաբաթների ընթացքում, որ մենք անցկացրինք Հառիճում: Մեր անասունների շատու-

Թեան պատճառով մենք ստիպուած եղանք նոյնիսկ մի հօտաղ վարձել, որ արածեցնում էր մեր «Հոտը» մերձակայ ձորերում եւ հովիտներում: Օգոստոսի առաջին տասնօրեակին մեր գառներն արգէն սպառուած էին եւ մնացել էր միայն մէկը, որը մեծացել, փարթամացել եւ խոյ էր գարձել, այնպէս որ Ղփչաղի գիւղացիներից մէկը եկաւ մեզ մօտ եւ խնդրեց, որ այդ խոյը փոխարինենք մի լաւ գառով, իսկ խոյը տանք իրեն, որ պահի իբրեւ սերունդ առաջացնող կենդանի: Մենք, ի հարկէ, սիրով կատարեցինք նրա խնդիրը:

Մեր կեանքը Հառիճում անցնում էր անգորր, հաճելի պայմաններում: Յաճախ մենք հանգիստաւոր ճաշեր ու ընթրիքներ էինք սարքում, ճառում, երգում եւ ուրախանում: Քանի գնում, այնքան աւելի աշխուժանում էր Կոմիտասը եւ արգէն ինքնաբերաբար երգում իր եւ մեր սիրած երգերը: Երբեմն Կոմիտասը երեկոները բարձրանում էր մեր բնակարանի մօտի շէնքի կտուրը եւ այնտեղից իր քաղցր ձայնը հնչեցնում. այդ ժամանակ շրջակայ տների բնակիչները՝ կին թէ տղամարդ, ջահել աղջիկ թէ տղայ, բարձրանում էին իրենց տների կտուրները եւ այնտեղից սիրով ունկնդրում սիրելի երգչին:

Կոմիտասը գիտէր նաեւ արեւմտահայերի եղանակով խմորեղէն պատրաստել եւ թխել այն ճաշերից յետոյ հանգած, բայց գեւ տաք թօնիրի մէջ: Նա մի քանի անգամ այգալիսի խմորեղէն պատրաստեց, եւ մենք մեծ հաճոյքով վայելեցինք այն հետճաշայ կամ երեկոյեան թէյի հետ. ափսոս, որ բոլորովին մոռացել եմ այդ խմորեղէնի անուշը:

Քանի կազդուրւում էր Կոմիտասը, այնքան աւելի զուարճասէր ու կատակախօս էր գառնում նա: Վերջին օրերից մէկում էլ որոշեցինք մի խաղ խաղալ Հառիճի վանքի վանահայր Արիստակէս վրդ. Զուլոյեանի գլխին: Սա, ի միջի այլոց, խնամքով պահում էր մի քանի սագ, որոնք իրենց տեսքով ու չափաւոր գիրութեամբ շարժում էին մեր ախորժակը: Մեր գառներն էլ արգէն վերջացել էին: Եւ ահա մի օր՝ ճաշից յետոյ, մեր բնակարանի կողքի շէնքի կտուրի վրայ բոլորս հաւաքուած զրուցում էինք. յանկարծ մեր մէջ հարց ծագեց, թէ ինչ անենք այս երեկոյ: Բոլորս էլ հասկանում էինք, որ խօսքը մի համեստ ընթրիք սարքելու մասին է: Յանկարծ հայրս բացականչեց. «Հացն ու պանիրը ինձ վրայ»: Փոքր եղբայրս՝ Աշոտը, թէ՛ «Իւղն ու կարագն էլ ինձ վրայ»: Ես էլ խսկոյն վրայ բերի, թէ՛ «Կոնեակն ու գինին էլ ինձ վրայ»: Երբ գրանից յետոյ Կոմիտասն էլ աւելացրեց, թէ՛ «Երգն էլ ինձ վրայ», բոլորս նայեցինք վանահօրը, թէ նա ինչ պիտի ասի վերջապէս: Նա էլ, ճարը կտրած, ասաց. «Սագն էլ ինձ վրայ, գիտեմ, որ ձեր բոլորի աչքը իմ սագերի վրայ է»: Եւ այսպէս կազմակերպեցինք մի փառաւոր ընթրիք, որի ժամանակ Կոմիտասն իրեն գերազանցեց հրաշալի երգեցողութեամբ: Այստեղ հարկ եմ համարում յիշատակել, որ Կոմիտասը չափազանց զգայուն մարդ էր, եւ այդ բանն արտայայտւում էր մանաւանդ այն ժամանակ, երբ

նա ոչ աւելի, քան մէկ-երկու բաժակ գինի էր խմում: Այդ երեկոյեան նա, իմ կողքին նստած, փաթաթելով էր ինձ, լալիս եւ ասում. «Սիրելի՛ Երուանդ, դու իմ աշակերտն ես». ես էլ աշխատում էի նրան ծիծաղեցնել՝ ասելով, թէ՛ «Լաւ, ի հարկէ, քո աշակերտն եմ, բայց աղոր համար լալո՞ւ է»: Սակայն կարճ էր տեւում նրա այդ տրամադրութիւնը՝ մինչեւ հետեւեալ երգը:

Այդ տարուայ Վարդավառին էր, որ Կոմիտասը, զգուած գոռնի գիլ եւ տհաճ ձայնից եւ ուխտաւորների անկարգ ու խառնակ տօնախմբութիւնից, ուխտաւորների ցրուելուց յետոյ ցանկութիւն յայտնեց տեսնել, թէ հայ աղջիկներն ինչպէս են սկսում եւ զարգացնում իրենց երգն ու պարը: Նրա խնդրով փոքր եղբայրս՝ Աշոտը, գնաց գիւղը, վաճառք բերեց փոքր քրոջս՝ Սոնիկին՝ իր ընկերուհիների հետ, որոնք եւ սկսեցին ձեւաւորել իրենց երգն ու պարը: Կոմիտասն էլ, մի քանի անգամ յիշածս կտրին նստած եւ մեզնով շրջապատուած, ձայնագրում էր այդ երգի ու պարի զարգացումը: Ինքը՝ Կոմիտասն այդ մասին առանձին յօդուած է գրել, որ նախապէս տպուել է «Անահիտ» հանդէսում, ապա՝ արտատպուել զանազան ժողովածուներում:

Այդ ամառուայ մեր կեանքից յիշատակութեան արժանի եմ համարում նաեւ մի ծիծաղաշարժ դէպք: Ես արդէն էջմիածնում եղած ժամանակ կարգադրել էի, որ վաճառական կառավարութիւնը մեզ հասանելիք գինուց երկու տակառ (3 եւ 5 վեդրոյանոց) ուղարկի Ալեքսանդրապոլ՝ Կիւրեղ վրդ. Նաւումեանին. սրան էլ խնդրել էի, որ 3 վեդրոյանոցը վերցնի իրեն, իսկ 5 վեդրոյանոցն ուղարկի մեզ՝ Հառիճ: Նա ստացել էր այդ գինիները եւ իմ խնդրի ճիշտ հակառակն էր կարգադրել. 3 վեդրոյանոցն ուղարկել էր մեզ, իսկ 5 վեդրոյանոցը պահել էր իրեն: Երբ ես կատակով հարցրի նրան դրա պատճառը, նա ասաց. «Համ Հառիճի մաքուրն օդն ու ջուրը վայելէք, համ էլ էջմիածնի գինին դո՞ւք խմէք. ուրախ եղէք, որ գոնէ 3 վեդրոն ձեզ եմ ուղարկել, թէ չէ կարող էի ոչինչ չուղարկել ձեզ»: Որովհետեւ ընթերցողներին կարող է հետաքրքրական լինել, թէ այդքան գինին մեզ որտեղի՞ց, ասեմ հետեւեալը. սովորութիւն էր, որ այն ժամանակները վաճառքի գինեստից ամեն սովորական վարդապետ ստանում էր ձրիաբար մի վեդրոյ գինի, իսկ սինոզի անդամ վարդապետներն ու եպիսկոպոսները մէկուկէսական վեդրոյ գինի: Որովհետեւ մենք 4-5 հոգի էինք, եւ խմողներ մեր մէջ չկային, այդ պատճառով ամիսների ընթացքում հաւաքւում էր մեծ քանակութեամբ գինի, որ մենք ուղարկում էինք մեր բարեկամներին՝ նրանց հիւրընկալութիւնը որոշ չափով փոխարինելու համար:

Այսպիսով՝ վերջացաւ 1905 թուականի ամառը, եւ Կոմիտասը, լիովին առողջացած եւ կազդուրուած, օգոստոսի 10-11-ին հեռացաւ Հառիճի վաճառքից եւ գնաց իր գործին՝ Ալեքսանդրապոլ, Թիֆլիս, էջմիածին: Իսկ ես 15 օր էլ մնացի իմ հայրենիքում եւ ապա օգոստոսի 25-ին վերադարձայ էջմիածին եւ ստանձնեցի իմ պաշտօնը՝ ուսուցչութիւն Գէորգեան ճեմարանում,

որի տեսուչ էր կարդուել այդ տարի, Կ. Կոստանեանի եռամեայ տեսչութեան ժամկէտը լրանալու հետեւանքով, Գարեգին վրդ. Յովսէփեանը:

Մեր ընկերական եւ մտերմական յարաբերութիւնները միմեանց հետ հետզհետէ աւելի ու աւելի էին սերտանում: 1905 թուականի աշնանից սկսած՝ մինչեւ 1908/09 ուս. տարուայ վերջը մենք ապրում էինք հարազատ-ների նման՝ որպէս մի ընտանիքի անդամներ, որպէս եղբայրներ:

Բանն այն էր, որ 1905 թ. յեղափոխութեան պատճառով փակուել էր էջ-միաձնի վանքի միաբանական «սեղանատունը», որտեղ ճաշում եւ ընթրում էին կամ սնունդ էին ստանում էջմիաձնի միաբանները: Կաթողիկոսն ու սինոդը որոշել էին մի չնչին դումարով աւելացնել այդ միաբանների ռոճիկը (կարծեմ 20-25 ու. ամսական) եւ յանձնարարել, որ նրանք իրենք հողան իրենց սննդի մասին: Այդ նեղ դրութիւնից դուրս դալու համար մի քանի ճեմարանական վարդապետներ որոշեցինք միանալ եւ միացեալ ուժերով հոգալ մեր սննդի մասին: Այդ վարդապետներն էին՝ Կոմիտաս վարդապետ, Գարեգին վրդ. Յովսէփեան (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս), Յուսիկ վրդ. Զոհրաբեան (հետագայում՝ Ռումինիայի առաջնորդ արքեպիսկոպոս), Կարապետ վրդ. Տէր-Մկրտչեան (հետագայում՝ եպիսկոպոս եւ Շամախու թեմի առաջնորդ) եւ տողերիս դրող Երուանդ Տէր-Մինասեան: Խմբի տնտես ընտրուեցի ես՝ իբրեւ ամենաերիտասարդը բոլորի մէջ: Մեր ընդհանուր ճաշերն ու ընթրիքները տեղի էին ունենում սկզբի մի երկու ամսին՝ Յուսիկ վրդ. Զոհրաբեանի բնակարանում, իսկ յետոյ որոշուեց այդ կազմակերպել Կոմիտաս վարդապետի բնակարանում, որ, իբրեւ առանձնացած շէնք, այդ նպատակի համար աւելի յարմար էր, մանաւանդ որ նրա տան առջեւ կար նաեւ մի փոքրիկ պարտէզ՝ մի հսկայական բարձրորակ տանձնիւղով: Յունիսից սկսած մինչեւ հոկտեմբեր այստեղ էինք մենք ճաշում եւ ընթրում, իսկ դա աւելի էր մտերմացնում մեզ, որ առանց այն էլ շատ մտերիմ էինք. մանաւանդ ինձ ու Կոմիտասին, քանի որ ես՝ իբրեւ տնտես, դեռ որոշ ժամանակ ստիպուած էի միւսների դնալուց յետոյ մնալ Կոմիտասի մօտ՝ խոհարարի հաշիւներն ընդունելու եւ հետեւեալ օրուայ պատուերները տալու համար:

Այդպէս ապրեցինք մենք, ինչպէս ասացի, մինչեւ 1908/09 ուս. տարուայ վերջը, այնուհետեւ մենք ցրուեցինք ամենքս մի կողմ. Կոմիտասը հեռացաւ էջմիաձնից, անցաւ Կոստանդնուպոլիս եւ Եւրոպա՝ համերդներ կազմակերպելու նպատակով, որ եւ նա կատարում էր ամենամեծ յաջողութեամբ, ինչպէս վկայում են այն ժամանակուայ եւրոպական թերթերի յօդուածները: Ես էլ 1910 թ. սկզբին հրաժարուեցի հողեւոր կոչումից եւ վերջնականապէս հեռացայ էջմիաձնից: Միւս ընկերներն էլ, զանազան պաշտօններով, որը հեռացաւ էջմիաձնից, որը մեկուսացաւ: Բայց մեր բոլորի յիշողութեան մէջ անմոռաց մնացին այդ տարիները, երբ մենք միասին էինք ապրում, եւ մեզ

բոլորիս հոգեկան մեծ հրճուանք ու բաւականութիւն էր պատճառում Կոմիտասն իր սքանչելի երգերով: Շաբաթ չէր լինում, որ մենք չհաւաքուէինք մեր բարեկամներից մէկի տանը, առաւելապէս յաճախ էինք լինում բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանի տանը, որի ընտանիքի անկեղծ հիւրասիրութիւնը Կոմիտասի երգերի հետ միասին մեր ամենամեծ մխիթարութիւնն էր՝ մեր մեկուսացած եւ արտաքին աշխարհից կտրուած կեանքում: Ես ոչ մի գէպք չեմ յիշում, որ Կոմիտասը հրաժարուէր մէկի խնդիրը կատարելուց եւ որեւէ երգ երգելուց: Իր երգը լսել ցանկացողից նա միայն մի պահանջ ունէր՝ «Երկու կոպեկ տո՛ւր, երգեմ», եւ մինչեւ այդ «երկու կոպեկը» չէր առնում, չէր երգում: Դրա համար էլ մենք երկու կոպեկանոցները չէինք ծախսում ոչ մի գէպքում, այլ պահում էինք, որպէսզի կարողանայինք Կոմիտասի պահանջը կատարել եւ նրա երգի «վարձատրութիւնը» տալ: Ինչո՞ւ անպատճառ 2 կոպեկանոց գրամ էր պահանջում Կոմիտասը, մինչեւ վերջն էլ մեզ համար հանելուկ մնաց:

Այսպէս մնաց Կոմիտասի պայծառ կերպարը մեր բոլորի, նրա մտերիմ ընկերների յիշողութեան մէջ, եւ այն երբեք չի ջնջուի:

Կոմիտասին վերջին անգամ ես տեսայ 1913 թուականի ամառը, երբ ես ընտանիքով Ղարաքիլիսայ (այժմեան Կիրովական) ամառանոց էի գնացել, եւ նա եկաւ այնտեղ՝ մեզ վերջին անգամ տեսնելու եւ մնաք բարեւ ասելու: Կոմիտասը եկել էր այդ ամառ էջմիածին, ասում են, այնտեղ մնալու մտադրութեամբ, եթէ նպաստաւոր ընդունելութիւն գտնէր: Բայց ժամանակի Կաթողիկոս Գէորգ է. Սուրէնեանցը ոչ միայն շատ սառն էր ընդունել նրան, այլեւ վիրաւորական ձեւով հարցրել էր նրան. «Վարդապե՛տ, ե՞րբ ես եկել, ե՞րբ ես գնում», որին Կոմիտասը վիրաւորուած պատասխանել էր. «Այսօր եմ եկել, վաղը գնում եմ»: Եւ այսպէս, Կոմիտասը վերջնականապէս հեռացաւ մեզնից: Վրայ հասաւ 1914 թ. համաշխարհային մեծ պատերազմը, տեղի ունեցաւ սոսկալի Եղեռնը հայ ազգի վերաբերմամբ, որին զոհ գնացին նաեւ հարիւրաւոր հայ մտաւորականներ: Այդ աքսորական մտաւորականների մէջ էր նաեւ Կոմիտասը: Անյայտ պատճառով աքսորից ետ է բերւում Կոմիտասը, բայց արգէն ուշ էր. նա կորցրել էր իր հոգեկան հաւասարակշռութիւնը եւ այլեւս ոչինչ չօգնեց նրան, նոյնիսկ Փարիզի հռչակաւոր հոգեբուժարանը, որտեղ եւ Կոմիտասը կնքեց իր մահկանացուն՝ 1935 թուականին:

Սակայն Կոմիտասը պատկանում էր Հայաստանին եւ հայ ժողովրդին: Ներգաղթող հայերը նրա գին 1936 թ. Փարիզից բերին եւ ամփոփեցին մայր հողում՝ Երեւանում՝ իր անունը կրող պուրակում, որտեղ թաղուած են հայ նշանաւորագոյն մտաւորականները՝ սկսած Յովհաննէս Յովհաննիսեանից:

Այդ տխուր արարողութեան միջոցին ամպամած երկնքից մանրամաղ անձրեւ էր տեղում հանգիսականներին եւ Կոմիտասի թարմ շիրիմի վրայ,

իսկ Հայկանոյշ Դանիէլեանը իր քաղցրահունչ ձայնով երգում էր, որպէս մի մեղմօրոր շարական, «Անձրեւն եկաւ շաղալեն» կոմիտասեան ժողովրդական երգը:

Քանի ապրում է Հայ ժողովուրդը, չի մոռացուի նաեւ անմահ երգիչ Կոմիտասի պայծառ անունը:

ԵՐՈՒԱՆԴ՝ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ

РЕЗЮМЕ

В этом издании публикуются неопубликованные воспоминания об Архимандрите Комитасе одного из величайших представителей арменоведения 20-го века проф. Ерванда Тер-Минасяна. Основные события происходят в июнь-август месяцах 1905 года. Остальные до и после события развиваются во круг тех мероприятий, которые происходили в течении этих месяцев, и которые тем или иным способом связаны с историческими событиями или лицами, происходящими в эти дни.

Издание этого документального материала очень важна, так как оно содержит сведения об Архимандрите Комитасе, о исследовании его канонизации, о Семинарии, о внутренней и внешней жизни Первопрестольного Святого Эчмиадзина и в целом о новейшей истории Армянской церкви.

SUMMARY

The unpublished memoir on Archimandrite Komitas by professor Yervand Ter Minasyan, a pioneer of the 20th century armenology is illustrated in this publication. The main events described here have developed from June to August in 1905. The rest of the events which take place over the cases carrying out during these three months to some extent had to do with the historical events taking place during those days.

The publication of this document is quite up-to-date, since it includes some kind of information about Komitas Archimandrite, the question of his canonization, about Gevorgyan Theological Seminary, the internal life and order of congregation of Mother See and, in general, about the new period of the History of Armenian Church.



СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ. БЛАГОСЛОВИТЕЛЬНЫЕ ГРАМОТЫ

Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II во время церемонии поминовения Крка Кркоряна.....	5
---	---

РЕЛИГИЕВЕДЕНИЕ

Проповедь епископа Вардана Навасардяна, читанная в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина на праздник Католикоса св. Эчмиадзина.....	8
СХИ. АРХИМАНДРИТ ТАЧАТ ЯРТЫМЯН - Христианская традиция почитания и поклонения святым и их мощам и обращения к святым с молитвами.....	11

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

ГЕНРИК СВАЗЯН - Церковь Кавказской Албании	22
ВАЗГЕН САФАРЯН - Художественные отклики на эпоху Давид-бека.....	36
АРСЕН АСРЯН - Арам Манукян в годы Армянского Геноцида	56
ОВАНЕС ЗАТИКЯН - Совместная деятельность Турции и США в деле недопущения решения вопроса армянских территорий (1945-1948 гг.).....	69

СООБЩЕНИЯ

ОВСАННА КЕШИШЯН - Об одной миниатюре Саргиса Пицака в греческой рукописи монастыря св. Дионисия.....	83
АРПИНЕ СИМОНЯН - Изобразительный ряд Рождества Христова в гравюрах изданий Товмы Ванандеци.....	91
ТАМАРА МИНАСЯН - Рукописное наследие области Варанда.....	100

НУНЕ ХУДАВЕРДЯН - Вопросы земельного права, земельных отношений и землепользования в армянских источниках	112
ВАГЕ САЯДЯН - Вопросы юридического ограничения свободы совести и религии в Республике Армении	123

СЕМИНАРИЯ И СЕМИНАРИСТЫ

ЕПИСКОП ГЕВОРГ САРОЯН, ИЕРЕЙ АРАРАТ ПОГОСЯН - Воспоминания Ерванда Тер-Минасяна об архимандрите Комитасе	136
--	-----

CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the requiem service in memory of Kirk Kerkorian.....	5
---	---

RELIGIOUS STUDIES

Sermon of H.G. Bishop Vardan Navassardyan delivered during the Divine Liturgy celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin on the occasion of the Feast of Holy Etchmiadzin	8
SENIOR ARCHIMANDRITE DAJAD YARDEMIAN - Christian tradition of venerating and respecting saints and their relics, as well as of praying to them	11

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

HENRIK AIVAZYAN - Church of Aghvank	22
VASKEN SAFARYAN - Artistic reactions of historical era of Davidbekian.....	36
ARMEN ASERYAN - Aram Manoukyan during the years of the Armenian Genocide	56
HOVHANNES ZATIKYAN - Turkish-American collaboration on rejecting Armenian territorial issues (1945-1948)	69

ESSAYS

OVSANNA KESHISHYAN - A miniature by Sarkis Pitsak in a Greek manuscript located in St. Dionysius monastery	83
ARPINEH SIMONYAN - Iconography of Christ's Nativity in engraved images of publications by Thovma of Vanand	91

TAMARA MINASYAN – Manuscript legacy of Varanda province	100
NANEH KHOUDAVERDYAN - Issues of regulating land rights and relations, as well as of land use in Armenian sources	112
VAHE SAYADYAN – Issues concerning legal limitations of freedom of conscience and faith in the Republic of Armenia	123

SEMINARY AND SEMINARIANS

BISHOP GEVORK SAROYAN, FR. ARARAT POGHOSYAN - Yervand Ter-Minassyan's recollections of Archimandrite Komitas	136
---	------------

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբելյան Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը
Քրդ-Քրդությունի հիշարակի ոգեկոչման արարողության առիթով.....5

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

- Տ. Վարդան եպիսկոպոս Նավասարդյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի
Մայր Տաճարում Կաթողիկե Ս. Էջմիածնի Կոնի առիթով8
- Տ. ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԴ. ԵԱՐՏՈՄԵԱՆ** - Սուրբերը եւ սուրբերուն
մասունքները յարգելու, մեծարելու եւ սուրբերուն աղօթելու
քրիստոնեական աւանդոյթը11

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- ՆԵՆՐԻԿ ՍՎԱԶՅԱՆ** - Աղվանից Եկեղեցին.....22
- ՎԱԶԳԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ** - Դավիթբեկյան պարմաշրջանի
գեղարվեստական արձագանքները.....36
- ԱՐՄԵՆ ԱՍՐՅԱՆ** - Արամ Մանուկյանը
Հայոց Մեծ Եղեռնի փարիներին.....56
- ՆՈՎԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ** - Թուրք-ամերիկյան
համագործակցությունը հայկական փարածքային
խնդիրների մերժման գործում (1945-1948 թթ.).....69

ՆԱԴՈՐԴՈՒՄՆԵՐ

- ՕՎԱՆՆԱ ՔԵՇԻՇՅԱՆ** - Սարգիս Պիժակի մի մանրանկար
Ս. Դիոնիսոսի վանքի հունարեն ձեռագրում.....83
- ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ** - Քրիստոսի ծննդյան պատկերագրությունը
Թովմա Վանանդեցու հրապարակությունների փորագրանկարներում.....91

ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍՅԱՆ - Վարանդա գավառի ձեռագրական ժառանգությունը	100
ՆԱՆԵ ԽՈՒԴ-ԱՎԵՐԴ-ՅԱՆ - Հոդային իրավունքի ու հարաբերությունների կարգավորման և հողօգտագործման հիմնահարցերը հայերեն աղբյուրներում	112
ՎԱՏԵ ՍԱՅԱԴ-ՅԱՆ - Խղճի և դավանանքի ազատության իրավական սահմանափակումների հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում	123

ՃԵՄԱՐԱՆ ԵՒ ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ

Տ. ԳԷՈՐԳ ԵՊՍ. ՍԱՐՈՅԵԱՆ, Տ. ԱՐԱՐԱՏ ՔՆՆՅ. ՊՕՂՈՍԵԱՆ - Երուանդ Տէր-Մինասեանի յուշերը Կոմիտաս վարդապետի մասին	136
--	-----

*Նրադարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտությունների երաշխադրութեամբ եւ որոշմամբ*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային եւ Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատվական հանգույցի» ձեւավորման աշխատանքներին:

Այս հանգույցում ի մի են բերվում հայագետների եւ գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչների կողմից տարբեր ժամանակներում հրատարակված հոդվածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցություն են բերում հայաստանյան եւ Սփյուռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչությունները, գրադարանները:

Հանգույցը հասանելի է <http://www.flib.sci.am/arm/node/2> համացանցային հասցեից: Բոլոր նյութերը օգտվողներին հասանելի են ազատ դիտման եւ ներբեռնման կարգավիճակով:

Ունեցե՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտվելով հանգույցից, տարածելով տեղեկատվություն դրա մասին, տրամադրելով թվայնացված նյութեր հանգույցում ներառելու համար:

Հայաստանի Ազգային գրադարան

ԽՄԲԳԲՈՒԹԵԱՆ ՆԱՅԷՆ՝

ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՐԱԴԵՏՈՒԹԻՒՆ, Զ. ՎԱՂԱՐՇԱԴԱՏ,

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇՒՆ

«ԷՋՄԻԱՇՒՆ»

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ-ՆԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆԱՆԴԵՍԻ ԽՄԲԳԲՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Republic of Armenia, Etchmiadzin, Redaction of Review «Etchmiadzin».

Web կայքի հասցեն՝ www.etchmiadzine.am

Էլ. փոստ՝ mayratoriamsagir@gmail.com *կամ* etchmiadzinsagir@gmail.com

Ամսագրի արխիվն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am

Նեո. (+374-10) 517-296/174

Ստորագրում է փապարութեան՝ 07. 07. 2015 թ.

Չափեր՝ 70x100 1/16: Շաալը՝ 10 փպ. մամուլ: Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 400:



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇՒՆԻ ՏՊԱՐԱՆ